

ՀԱՅԿԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՆԴԵՍ



1
2023



*Հրատարակվում է Վ. Բրյուսովի անվան պետական
համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ*



*Հրատարակվում է ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի
«Հեռանկարային ուսումնասիրությունների և նախաձեռնություն-
ների կենտրոն» ծրագրի շրջանակներում*

Համարը պատրաստվել է «Լույս» հիմնադրամի աջակցությամբ

Խմբագրական խորհուրդ՝

Տիգրան Թորոսյան	քաղաքական գիտությունների դոկտոր, ԲՊՀ (գլխավոր խմբագիր), t.tigran@yahoo.com
Գրիգոր Արշակյան	քաղաքական գիտությունների դոկտոր, ԲՊՀ, garshakyan@gmail.com
Վահե Դավթյան	քաղաքական գիտությունների դոկտոր, ԲՊՀ, vahe.davtyan@gmail.com
Լևոն Զեքիեան	փիլիսոփայական գիտությունների դոկտոր, Վատիկանի արևելագիտության ինստիտուտ, Իտալիա zkybhs@unive.it
Արամ Թերզյան	քաղաքական գիտությունների թեկնածու, Եվրասիական հետազոտությունների և վերլուծության ինստիտուտ, ԱՄՆ, ԲՊՀ, aramterzyan@yahoo.com
Մալխազ Մացաբերիձե	քաղաքական գիտությունների դոկտոր, Թբիլիսիի պետական համալսարան, Վրաստան, Malkhaz.matsaberidze@tsu.ge
Անդրեյ Մեդուշևսկի	փիլիսոփայական գիտությունների դոկտոր, Տնտեսագիտության բարձրագույն դպրոց ազգային հետազոտական համալսարան, Ռուսաստան, amedushevsky@mail.ru
Սերգեյ Սինասյան	քաղաքական գիտությունների դոկտոր, Կովկասի ինստիտուտ, sergey@c-i.am
Եժի Յասկիերնիա	իրավաբանական գիտությունների դոկտոր, Յան Կոչանովսկի համալսարան, Լեհաստան, jerzyj@hotmail.pl
Պետրա Շտիկով	քաղաքական գիտությունների դոկտոր, Լյուդվիգ-Մաքսիմիլիան համալսարան, Գերմանիա, petra.stykow@lmu.de
Ռայներ Շուլց	պատմական գիտությունների դոկտոր, Էսսեքսի համալսարան, Մեծ Բրիտանիա, rainer@essex.ac.edu
Իրինա Սեմենենկո	քաղաքական գիտությունների դոկտոր, Ռուսաստանի ԳԱ, semenenko@imemo.ru
Ալբերտ Ստեփանյան	պատմական գիտությունների դոկտոր, ԵՊՀ, bertstepanyan@gmail.com
Թալին Տեր-Մինասյան	պատմական գիտությունների դոկտոր, ԻՆԱԼԿՕ, Ֆրանսիա, taline.terminassian@inalco.fr
Աննա Օհանյան	քաղաքական գիտությունների դոկտոր, Մթոռնհիլ քոլեջ, ԱՄՆ aohanyan@stonehill.edu

ISSN 1829-4286

© Հեռանկարային ուսումնասիրությունների
և նախաձեռնությունների կենտրոն, 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐ	4
ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ	
<i>Տիզրան Թորոսյան</i>	
Միջազգային խաղաղարար գործունեությունը նոր աշխարհակարգի ձևավորման պայմաններում. Արևելյան Թիմորի, Կոսովոյի և Լեռնային Ղարաբաղի դեպքերը	5
<i>Մարգարիտ Պետրոսյան</i>	
Զանգվածային ոճրագործությունների կանխարգելման հնարավորությունները ժամանակակից աշխարհում: Լեռնային Ղարաբաղի հակամարտության դեպքը	45
ՆՈՐ ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳ	
<i>Վահե Դավթյան</i>	
Ռուս-չինական էներգետիկ համագործակցությունը. նոր էներգետիկական աշխարհակարգի ձևավորման մարտահրավերները	79
ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏՐԱՆՑՈՐՄԱՑԻԱ	
<i>Անահիտ Բաբայան</i>	
Եվրոպական ինտեգրման աշխարհաքաղաքական մարտահրավերները հետխորհրդային տարածքում. Հայաստան, Վրաստան և Ուկրաինա	103
ԱՆԴՐԱԴԱՐՁ	
<i>Արմեն Այվազյան</i>	
Ընդդեմ 1724թ. Երևանի հերոսամարտի պատմության աղճատման	127

ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐ

«Հայկական քաղաքագիտական հանդեսը» քաղաքագիտական և քաղաքագիտությանն առնչվող միջգիտակարգային հետազոտությունների արդյունքներ ներկայացնող գրախոսվող գիտական հանդես է: Հանդեսում հրապարակվող հոդվածների հիմնական ուղղություններն են՝

- Հետխորհրդային տրանսֆորմացիա. քաղաքագիտական և միջգիտակարգային հիմնախնդիրներ,
- Նոր աշխարհակարգի ձևավորման գործընթաց և Հարավային Կովկասում աշխարհաքաղաքական մրցակցության հիմնախնդիրներ,
- Հակամարտությունների կարգավորում և լուծում,
- Պետական կառավարում. ժողովրդավարացման դժվարություններ և հեռանկարներ,
- Միջազգային հարաբերությունների հիմնախնդիրներ և հաշտեցման գործընթացներ,
- Ինքնության պահպանման և միջազգային ինտեգրման զարգացման դիլեման,
- Հայրենիք-սփյուռք. փոխշահավետ հարաբերությունների ձևավորման հնարավորություններ ու խոչընդոտներ:

Տպագրության են ընդունվում այլ հանդեսներում չտպագրված (օրիգինալ), գիտական նորույթ ունեցող հոդվածներ՝ հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով:

Հանդեսում տպագրության ներկայացված բոլոր հոդվածներն անցնում են փորձագիտական գնահատման փուլով՝ խմբագրի սկզբնական գնահատման և առնվազն երկու փորձագետի եզրակացությունների հիման վրա:

Խմբագրության հասցեն՝ Երևան, Թումանյան 42, ԲՊՀ, սենյակ 202

Հեռախոս՝ 530272-208, 091402731

Էլեկտրոնային փոստ՝ t.tigran@yahoo.com

Կայք՝ www.arjps.org

DOI: 10.19266/1829-4286-2023-01-05-44

ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

**Միջազգային խաղաղարար գործունեությունը նոր
աշխարհակարգի ձևավորման պայմաններում. Արևելյան
Թիմորի, Կոսովոյի և Լեռնային Ղարաբաղի դեպքերը**

ՏԻԳՐԱՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան

ՄԱԿ-ի խաղաղարար առաքելության գործիքակազմի և ինքնորոշման վեճերի կարգավորման իրավական հիմքերի ձևավորման ուղղությամբ վերջին տասնամյակների ընթացքում միջազգային իրավունքը արձանագրել է էական հաջողություններ: Դա հնարավորություն է տվել կանխել մի շարք վերահաս պատերազմներ ու կարգավորել հակամարտություններ: Ակադեմիական շրջանակները մշակել են մոդելներ, որոնք թույլ են տալիս բացահայտել, թե ինչու է ՄԱԿ Անվտանգության խորհուրդը որոշել միջամտել այդ դեպքերի ընթացքին, սակայն նման որոշումների վրա ազդող ոչ բոլոր գործոններն են լիարժեքորեն ուսումնասիրված: Հոդվածում քննարկվում է նման գործոններից մեկի՝ աշխարհաքաղաքական տրանսֆորմացիաների ազդեցությունը ՄԱԿ-ի խաղաղարար առաքելությունների իրականացման վրա՝ ինքնորոշման վեճերի կարգավորման նպատակով: Առաջարկվում է դա դիտարկել նոր աշխարհակարգի համար մղվող պայքարի եռափուլ մոդելի հիման վրա: Ներկայացվում են այդ փուլերից յուրաքանչյուրում ՄԱԿ խաղաղարար առաքելության իրականացման հնարավորությունները, խոչընդոտներն ու վերջիններիս հաղթահարման ուղիները՝ Արևելյան Թիմորի, Կոսովոյի և Լեռնային Ղարաբաղի հակամարտությունների կարգավորման դեպքերի հիման վրա: Այդ դեպքերն իդեալականորեն համապատասխանում են միմյանց՝ ըստ ինքնորոշման հակամարտությունների պարամետրերի, ինչը թույլ է տալիս ապահովել եզրակացությունների բարձր հավաստիություն: Հետազոտությունը բացահայտել է, որ միջազգային խաղաղարարության համար լուրջ խոչընդոտներ է առաջացնում աշխարհաքաղաքական տրանսֆորմացիաների դինամիկան, հատկապես դրանց վերջին փուլում ՄԱԿ ԱԽ մշտական անդամների շահերի կոշտ բախումները:

Բանալի բառեր

Խաղաղարար առաքելություն, նոր աշխարհակարգ, ցեղասպանություն, Լեռնային Ղարաբաղ

Նախաբան

Աննախադեպ ավերիչ հետևանքներ ունեցած երկրորդ համաշխարհային պատերազմից գրեթե անմիջապես հետո ստեղծված ՄԱԿ-ի նպատակներից մեկը, բնականաբար, պետք է սահմանվեր խաղաղության սպառնալիքների կանխարգելումն ու վերացումը: Հատկապես սառը պատերազմի ավարտից հետո ՄԱԿ-ը զգալի ջանքեր է գործադրում՝ ձգտելով կարգավորել շարունակվող դաժան վեճերը¹, սակայն միջամտություն պահանջող իրավիճակների թիվը չի նվազում: Ավելին, միջազգային հարաբերություններում լարվածության մեծացման՝ հատկապես նոր աշխարհակարգի ձևավորման գործընթացի ակտիվացման ազդեցությամբ սրվում են հակամարտություններն ու վերածվում ռազմական ագրեսիաների ու արյունահեղ պատերազմների:² Պատահական չէ, որ այդ խնդիրների վերաբերյալ մեծաթիվ գիտական հետազոտությունների շարքում՝ նվիրված ճգնաժամերի կարգավորմանը, խաղաղաշինությանը, խաղաղարարությանը, խաղաղության պահպանմանն ու միջնորդությանը, առանձնահատուկ տեղ են գրավում ինքնորոշման իրավունքի կիրառման ժամանակ պատերազմների կանխարգելմանը վերաբերող հոդվածները, քանի որ հայտնի են 145 ինքնորոշման շարժումներ աշխարհի 77 երկրներում, իսկ ուսումնասիրված նման դեպքերի 44 տոկոսը ուղեկցվել են պատերազմներով:³ Այդ դասի նկատմամբ հետաքրքրությունը

¹ **White P., Cunningham D., Beardsley K.** Where, when, and how does the UN work to prevent civil war in self-determination disputes? *Journal of Peace Research*, 2018, 55, 3, 380-394, DOI: 10.1177/0022343317744826

² **Torosyan T. and Vardanyan A.** The South Caucasus Conflicts in the Context of Struggle for the Eurasian Heartland, *Geopolitics*, 2015, 20, 3, 559-582, DOI: 10.1080/14650045.2015.1050717

³ **Marshall, Monty G. & Ted Robert Gurr.** Peace and Conflict 2003: A Global Survey of Armed Conflicts, Self-Determination Movements, and Democracy.

հատկապես մեծ է այն պատճառով, որ դրան պատկանող դեպքերում, որպես կանոն, մետրոպոլիան փորձում է խնդիրը լուծել պատերազմի միջոցով, քանի որ ինքնորոշման իրացման գործընթացի նախաձեռնումը իրական ազդանշան է, որ ինքնորոշվող տարածքը կարող է անջատվել մետրոպոլիայից: Այդ պատճառով շատ հաճախ նման պատերազմներն աչքի են ընկնում հատուկ դաժանությամբ, քանի որ մետրոպոլիան հաճախ նախընտրում է ինքնորոշվող ժողովրդին դուրս մղել ինքնորոշման տարածքից՝ անգամ էթնիկ գտումների կամ ցեղասպանության միջոցով՝ սկզբունքորեն լուծելով այդ տարածքն իր կազմում պահելու հարցը, քան համակերպվել ինքնորոշման փաստի հետ:

Հետևաբար նման ողբերգական հետևանքներից խուսափելու համար պահանջվում է մի կողմից բացահայտել այն դժվարությունները, որոնց բախվում են միջազգային խաղաղարար առաքելությունները, այն խոչընդոտները, որոնք առաջանում են դրանց ստեղծումը նախաձեռնելիս, մյուս կողմից՝ կատարելագործել առկա մեխանիզմները, մոդելներն ու գործիքակազմը՝ այդ առաքելությունների արդյունավետությունն ապահովելու համար:

Քանի որ մեծ թվով հետազոտություններ հաստատում են, որ ուժեղ ուղիղ կապ կա խաղաղության հաստատման և հատկապես ՄԱԿ-ի բարդ խաղաղարար գործողությունների միջև⁴, ապա հողվածի հետագա շարադրանքում կդիտարկվեն հիմնականում ՄԱԿ-ի նման առաքելությունները: Թեև ակնհայտ է, որ ոչ բոլոր պետություններն են պատրաստակամությամբ այդ ջանքերին արձագանքում: Մասնավորապես, նման առաքելությունների փորձի արդյունքում ՄԱԿ անդամ պետությունները դեռևս 2005թ. պարտավորվել են կիրառել կանխարգելիչ դիվանագիտություն՝ ձևավորելու

University of Maryland: Center for International Development and Conflict Management. 2003. <https://cidcm.umd.edu/publications/peace-and-conflict-2003>

⁴ **Howard L.**, Kosovo and Timor-Leste: Neotrusteeship, Neighbors, and the United Nations, *The Annals of The American Academy of Political and Social Science*, 2014, 656, 116-135, DOI: 10.1177/0002716214545308

համար «կանխարգելիչ մշակույթ»⁵, սակայն 2015թ. ընդունված փաստաթուղթն արձանագրում է, որ «կազմակերպությունն ու իր անդամ պետությունները չեն յուրացրել կանխարգելման մշակույթը»⁶: Դժվարությունները կապված են ոչ միայն նոր մեխանիզմների կիրառման հետ:

Թեև ինքնորոշման վեճերի դեպքում պատերազմական գործողությունների վերսկսման կանխմանն ուղղված Անվտանգության խորհրդի (ԱԽ) բանաձևերի ընդունման հանգամանքների ուսումնասիրությունների հեղինակները նկատել են, որ ՄԱԿ-ի գործունեության արդյունավետությունը սահմանափակված է ազդեցիկ տերությունների և ԱԽ մշտական 5 անդամների շահերով, սակայն այդ գործոնի ազդեցությունը չի դիտարկվում ՄԱԿ ջանքերը պայմանավորող գործոնների շարքում:⁷ Բերդսլին ու Շմիդտը⁸ ընդունում են, որ ԱԽ գործողությունները հաճախ պայմանավորված են հինգ մշտական անդամների շահերով, սակայն պնդում են, որ այդ ազդեցությունն ավելի թույլ է, քան միջազգային կայունության լուրջ սպառնալիքներին արձագանքելու ձգտումը: Սակայն մի շարք դեպքերում անգամ անհերքելի փաստերի առկայության ժամանակ ԱԽ-ն չի արձագանքում խաղաղության ակնհայտ սպառնալիքների որոշ մշտական անդամների դիմակայության պատճառով՝ վտանգելով տարածաշրջանային անվտանգությունը և հանգեցնելով մարդասիրական աղետի: Մասնավորապես, այդպիսի օրինակ է Ռուսաստանի դիմադրությունը Սիրիայի վերաբերյալ բանաձևերի ընդունմանը:⁹

⁵ Preventive diplomacy, Delivering Results, <https://www.securitycouncilreport.org/atf/cf/%7B65BFCF9B-6D27-4E9C-8CD3-CF6E4FF96FF9%7D/CPR%20S%202011%20552.pdf>

⁶ UN General Assembly 16 June 2015, Comprehensive review of the whole question of peacekeeping operations in all their aspects, A/70/95-S/2015/446, file:///D:/USER/Downloads/A_70_95--S_2015_446-EN.pdf

⁷ White P., Cunningham D., Beardsley K., 2018

⁸ Beardsley K. & H. Schmidt, Following the flag or following the charter? Examining the determinants of UN involvement in international crises, 1945–2002. *International Studies Quarterly* 2012, 56(1): 33–49.

⁹ White P., Cunningham D., Beardsley K., 2018

Հատկանշական է, որ նման դեպքերում անգամ կարող են համադրվել ԱԽ այն մշտական անդամների գործողությունները, որոնք գտնվում են կոշտ դիմակայության մեջ, ինչպիսին է Ռուսաստանի և Արևմուտքի առճակատումը ռուս-ուկրաինական պատերազմում: Այդ առումով հատկանշական է 2022թ. Ադրբեջանի զորքերի՝ Հայաստանի տարածք ներխուժման կապակցության ԱԽ նախագահող Ֆրանսիայի նախաձեռնությամբ հրավիրված նիստում բանաձևի ընդունման ձախողումը Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի ջանքերով, թեև նշված դիմակայության շրջանակներում Մեծ Բրիտանիան Ֆրանսիայի դաշնակիցն է՝ ընդդեմ Ռուսաստանի:¹⁰ ԱԽ գործունեության նման շեղումները ՄԱԿ գլխավոր նպատակից հաճախ առաջանում են նոր աշխարհակարգի ձևավորման համար ԱԽ մշտական անդամ պետությունների մասնակցությամբ մղվող պայքարի ընթացքում: Հետևաբար անհրաժեշտ է առանձին հետազոտության առարկա դարձնել ՄԱԿ-ի խաղաղարար գործունեության արդյունավետության վրա աշխարհաքաղաքական տրանսֆորմացիաների ազդեցությունը, քանի որ այն հատկապես մեծանում է այդ տրանսֆորմացիաների եզրափակիչ հատվածում:

Այս հոդվածի ներդրումը վերոհիշյալ խնդիրներին նվիրված գիտական հետազոտությունների ասպարեզում աշխարհաքաղաքական տրանսֆորմացիաների տարբեր փուլերում ինքնորոշման հակամարտությունների ժամանակ խաղաղարար առաքելությունների ձևավորման վրա ՄԱԿ ԱԽ մշտական անդամների շահերի ազդեցության բացահայտումն է:

Հետազոտության մեթոդաբանությունն ու կառուցվածքը

ՄԱԿ կանոնադրության 7-րդ գլխի համաձայն հետևյալի կիկտային կառավարման գլխավոր խնդիրը պատերազմի կրկնման

¹⁰ Armenia-Azerbaijan Border Clashes: Meeting under “Any Other Business”, <https://www.securitycouncilreport.org/whatsinblue/2022/09/armenia-azerbaijan-border-clashes-meeting-under-any-other-business.php>, 14 Sep 2022

կանխումն է:¹¹ Դա առանձնահատուկ նշանակություն ունի հատկապես ինքնորոշման իրավունքի կիրառման ժամանակ ծագող հակամարտությունների դեպքում, երբ որոշ մետրոպոլիսներ աչքի են ընկնում առանձնահատուկ դաժանությամբ և, եթե բռնությունները չկանխվեն կամ չդադարեցվեն, կարող են հանգեցնել ինքնորոշվող ժողովրդի ցեղասպանությանը կամ էթնիկ գտումների: Հետևաբար անհրաժեշտ է ուսումնասիրել ինքնորոշման հակամարտությունների ժամանակ խաղաղարար առաքելությունների կիրառման/չկիրառման դեպքերը (ՄԱԿ ԱԽ համապատասխան բանաձևերի ընդունման/չընդունման հանգամանքները)՝ դրանց հաջող կիրառմամբ կանխելու համար նման աղետները: Թեև տասնամյակների ընթացքում արձանագրվել են ՄԱԿ խաղաղարար առաքելությունների կիրառման մի քանի տասնյակ դեպքեր, սակայն սահմանված չէ հաջող առաքելության ընդհանուր բանաձև¹² և դրան նպաստող գործոնների նախընտրելի համախումբ: Իհարկե, հայտնի են ծրագրեր, որոնք ուսումնասիրում են, թե երբ է անխուսափելի բռնի հակամարտության էսկալացիան՝ կանխման ռեսուրսների արդյունավետ բաշխման նպատակով¹³, ինչպես նաև ձևավորվել են տվյալների բազաներ, որոնք օգտագործվում են հակամարտության էսկալացիայի կանխման նպատակով¹⁴: Նաև մշակվել են բռնությունների կանխման կոնցեպտուալացման և

¹¹ **Friedrich J.**, UNMIK in Kosovo: Struggling with Uncertainty, A. von Bogdandy and R. Wolfrum, (eds.), *Max Planck Yearbook of United Nations Law*, 2005, 9, p. 225-293.

¹² **Friedrich J.**, 2005.

¹³ Political Instability Task Force, <https://scip.gmu.edu/political-instability-task-force/>; Integrated Crisis Early Warning System, <https://www.lockheedmartin.com/en-us/capabilities/research-labs/advanced-technology-labs/icews.html>.

¹⁴ **DeRouen K. R. & Goldfinch Sh.**, Putting the numbers to work: Implications for violence prevention. *Journal of Peace Research* 2005, 42(1): 27–45. <https://doi.org/10.1177/0022343305049665>; **Melander, Erik; Frida Moller & Magnus Oberg**, (2009) Managing intrastate low-intensity armed conflict 1993–2004: A new dataset. *International Interactions*, 2009, 35(1): 58–85. <https://doi.org/10.1080/03050620902743887>

դրա արդյունավետության գնահատման շրջանակներ:¹⁵ Ու թեև զգալիորեն մեծացել է այդ երևույթներին նվիրված հետազոտությունների թիվը, սակայն խաղաղարար առաքելությունների արդյունավետության գնահատումը, դրանց ձևավորման որոշ գործոններ միշտ չէ, որ անհրաժեշտ ուշադրության են արժանանում: Նման գործոններից է ինքնորոշման հակամարտությունների դեպքում խաղաղարար առաքելությունների ձևավորման վերաբերյալ բանաձևերի քննարկման ժամանակ ՄԱԿ ԱԽ մշտական անդամ երկրների ներկայացուցիչների դիրքորոշումների բախումը: Քանի որ այդ երկրների շահերն ավելի ընդգծված դրսևորվում են աշխարհաքաղաքական մեծ նշանակություն ունեցող իրավիճակներում, այս հոդվածում ինքնորոշման հակամարտությունների դեպքում կիրառվող միջազգային խաղաղարար գործունեությունը դիտարկվում է նոր աշխարհակարգի ձևավորման համար մղվող պայքարի երեք (սկզբնական, միջանկյալ, եզրափակիչ) փուլերի համատեքստում: Ըստ խորհրդանշական իրադարձությունների, այդ պայքարի սկզբնական փուլը կարելի է համարել 1991-2014 թվականները (խորհրդանշական իրադարձություններն են 1991թ. երկրներ աշխարհակարգի փլուզումը, 2004թ. Եվրամիության ամենամեծ ընդլայնումը, 2007թ. Մյունխենյան անվտանգության համաժողովում Ռուսաստանի նախագահի ելույթը, 2008թ. ռուս-վրացական պատերազմը և այլն), միջանկյալ փուլը՝ 2014-2021 թվականները (2014թ. Ուկրաինայի ռուսամետ նախագահի հեռացումն իշխանությունից և Դոնբասում հակամարտության ծագումը, 2022թ. փետրվարին ռուս-ուկրաինական պատերազմին նախորդած իրադարձությունները), իսկ եզրափակիչ փուլը՝ 2021թ. սկսած: Որպես հակամարտությունների կարգավորման օրինակներ այդ փուլերից յուրաքանչյուրի համար դիտարկվում է ինքնորոշման հակամարտությունների դասին

¹⁵ **George A. L.**, Strategies for preventive diplomacy and conflict resolution: Scholarship for policymaking. PS: *Political Science and Politics* 2000, 33(1): 15–20. <https://doi.org/10.2307/420771>

պատկանող¹⁶ մեկական հակամարտություն՝ համապատասխանաբար Արևելյան Թիմորի, Կոսովոյի և Լեռնային Ղարաբաղի դեպքերը: Թեև դրանք երեքն էլ միջազգային հանրությունը ճանաչել է որպես ինքնորոշման հակամարտություններ, երեքի դեպքում էլ տեղի են ունեցել արյունալի պատերազմներ և դրանց վերսկսում կամ նման փորձեր, սակայն կարգավորման գործընթացի առումով ունեն էական տարբերություններ: Որպես նոր աշխարհակարգի ձևավորման սկզբնական փուլում ՄԱԿ խաղաղարար առաքելության կիրառման օրինակ դիտարկվող Արևելյան Թիմորի դեպքում պատերազմական գործողությունները դադարեցվել են այդ փուլում ՄԱԿ-ի խաղաղարար միջամտությամբ, ապա կարգավորումը հասցվել է ավարտին՝ միջազգային կառավարման վարչակազմի օգնությամբ: Միջանկյալ փուլի բնորոշ օրինակ է Կոսովոյի դեպքը, որտեղ պատերազմական գործողությունները դադարեցվել են միջազգային խաղաղարար առաքելության կիրառմամբ, վերսկսումը 2004թ. արագորեն կանխվել է, վերոհիշյալ սկզբնական և միջանկյալ փուլերի սահմանագծին հակամարտությունը ՄԱԿ-ի ներկայացուցիչները ճանաչել են ինքնորոշման, 2010թ. Արդարադատության միջազգային դատարանը միջազգային իրավունքի տեսակետից իրավականորեն հիմնավոր է ճանաչել անկախության միակողմանի հռչակումը, ապա 100-ից ավելի պետություններ երկկողմ հարաբերությունների մակարդակով ճանաչել են Կոսովոյի անկախությունը, բայց վերջինս դեռևս չի անդամակցել ՄԱԿ-ին: Որպես երրորդ՝ եզրափակիչ փուլի օրինակ դիտարկվում է Լեռնային Ղարաբաղի դեպքը, որը սկզբնական և միջանկյալ փուլերի սահմանագծին ինքնորոշման կարգավիճակ է ստացել, միջանկյալ և եզրափակիչ փուլերի սահմանագծին՝ 2020թ. ենթարկվել է երկրորդ ռազմական ագրեսիայի¹⁷ և վերսկսվել է

¹⁶ Նույն տեղում

¹⁷ Assessing U.S. Policy in the Caucasus, Senate of USA, November 16th, 2022, November 16th, 2022, <https://www.foreign.senate.gov/hearings/assessing-us-policy-in-the-caucasus>; Sénat, Résolution portant sur la nécessité de reconnaître la République du Haut-Karabagh, 26 (2020-2021), 25 novembre 2020, <http://www.senat.fr/leg/tas20-026.pdf> ;

պատերազմը, դրա արդյունքում խափանվել է ԵԱՀԿ Մինսկի խմբի միջնորդական առաքելության 30-ամյա գործունեությունը, 2022թ. դեկտեմբերից ենթարկվել է շրջափակման ու միանգամայն իրական է նոր ագրեսիայի, պատերազմի ու ցեղասպանության սպառնալիքը:

Ակնհայտ է երեք հակամարտությունների կարգավորման գործընթացների երկու էական տարբերություն. Կոսովոյի կարգավորման գործընթացը չի ավարտվել, իսկ Լեռնային Ղարաբաղի դեպքում ՄԱԿ-ի խաղաղարար առաքելություն չի կիրառվել: Հատկապես ուշագրավ է վերջին հանգամանքը, քանի որ այդ դեպքում վերոհիշյալ սպառնալիքները պահպանվում են: Կարելի է նկատել, որ այդ տարբերությունները համապատասխանում են նոր աշխարհակարգի ձևավորման վերոհիշյալ փուլերում լարվածության աճի դինամիկային և կապված են այդ հակամարտությունների համար խաղաղարար առաքելությունների ձևավորման վերաբերյալ ՄԱԿ ԱԽ բանաձևերի ընդունման ժամանակի հետ: Այդ վարկածը կարելի է ստուգել՝ օգտագործելով Ուայթի և մյուսների էմպիրիկ մոդելը, որի համաձայն ՄԱԿ-ում որոշումներ ընդունողները հաշվի են առնում երեք գործոններ՝ հակամարտության ընթացքում բռնության կիրառման պատմություն, տարածաշրջանում տարածվելու ներուժ և հակամարտության բնութագրեր (ինքնորոշվող ժողովրդի աշխարհագրորեն կենտրոնացված բնակություն, այլ պետություններում նույն էթնիկ ծագումն ունեցող հանրություն և այլն):¹⁸ Հակամարտության ընթացքում բռնության կիրառ կիրառման պատմությունը գնահատելիս հաշվի է առնվում, թե տվյալ ինքնորոշման գործընթացի հետ կապված 1946 թվականից ի վեր ծագել է պատերազմ կամ առաջացել է նման

REPORT on the implementation of the Common Foreign and Security Policy – annual report 2020 (2020\2206(INI), https://www.europarl.europa.eu/doceo/document/TA-9-2021-0013_EN.pdf ; Lemkin Institute Statement on Self-Determination of Armenians in Artsakh (South Caucasus): There is No “Peace” or “Prosperity” through Genocide, 24.11.2022, [https://www.lemkininstitute.com/statements-new-page/statement-on-self-determination-of-armenians-in-artsakh-\(south-caucasus\)%3A-there-is-no-peace-or-prosperity-through-genocide](https://www.lemkininstitute.com/statements-new-page/statement-on-self-determination-of-armenians-in-artsakh-(south-caucasus)%3A-there-is-no-peace-or-prosperity-through-genocide)

¹⁸ White P., Cunningham D., 2018

պատերազմի վտանգ: Երկրորդ գործոնի դեպքում հաշվի է առնվում այն երկրների թիվը, որոնցում առկա են եղել նմանատիպ պատերազմական գործողություններ և որոնց մայրաքաղաքների հեռավորությունը դիտարկվող երկրի մայրաքաղաքից չի գերազանցում 900 կիլոմետրը:¹⁹ Մոդելի հեղինակների կարծիքով ՄԱԿ ԱԽ-ն խաղաղարար առաքելություններ ձևավորելիս այդ երեք գործոնները կարևորում է թվարկված հերթականությամբ:

Այդ գործոնները Լեոնային Ղարաբաղի հակամարտության դեպքում ունեցել են հետևյալ դրսևորումները: 2020թ. ռազմական ագրեսիային նախորդած բռնության պատմության առումով (առաջին գործոն) անհրաժեշտ է նշել Լեոնային Ղարաբաղի նկատմամբ 1992-1994թթ. ռազմական ագրեսիան²⁰ և 2016թ. ապրիլին չորս օր տևած լայնածավալ պատերազմական գործողությունները: Տարածաշրջանային գործոնն արտահայտված է ավելի քան ակնհայտորեն՝ 900 կմ չգերազանցող հեռավորության վրա հակամարտությունների առկայության պայմանին բավարարում են Վրաստանում Աբխազիայի և Հարավային Օսիայի հակամարտությունները, Թուրքիայում և Իրաքում քրդերի ինքնորոշման շարժումները և այլն: Ինչ վերաբերում է երրորդ գործոնին, ապա հակամարտության բնութագրերից առնվազն երկուսը (ինքնորոշվող ժողովրդի աշխարհագրորեն կենտրոնացված բնակչություն, այլ պետություններում նույն էթնիկ ծագումն ունեցող հանրություն) նույնպես ակնհայտորեն առկա են. ԽՍՀՄ գոյության ընթացքում Ստալինի թելադրանքով և Ռուսաստանի կոմունիստական կուսակցության որոշումով Ադրբեջանի կազմ մտցված Լեոնային Ղարաբաղի ինքնավար մարզում (ԼՂԻՄ) 1920-ական թվականներին բնակչության 95 տոկոսից ավելին, 1988 թվականին՝ 80 տոկոսից ավելին հայեր էին, որոնք էլ 1991թվականին, երբ Ադրբեջանը

¹⁹ **Weidmann, Nils B, Doreen Kuse & Kristian Skrede Gleditsch**, The geography of the international system: The Shapes dataset. *International Interactions* 2010, 36(1):86–106.

²⁰ **Gor P. W.**, *‘Tis Some Poor Fello’s Skull. Post-Soviet Warfare in the Southern Caucasus*. Lincoln: iUniverse 2008.

հայտարարեց ԽՄԶՄ կազմից դուրս գալու մասին, անցկացրեցին հանրաքվե՝ իրենց ինքնորոշման իրավունքը իրացնելու նպատակով, և դրա արդյունքներով հռչակեցին անկախ պետության ստեղծումը: Ինչ վերաբերում է այլ պետություններում նույն էթնիկ պատկանելության հանրությունների առկայությանը, ապա, ինչպես հայտնի է, գերազանցապես հայաբնակ է Հայաստանը, իսկ հարևան Վրաստանում, Իրանում, Ռուսաստանում, ինչպես նաև Միացյալ Նահանգներում, Ֆրանսիայում և այլ երկրներում առկա են բազմամարդ հայկական համայնքներ:

Ակնհայտ է, որ Լեոնային Ղարաբաղի հակամարտությունը լիովին համապատասխանում է Ուայթի և մյուսների մոդելի պահանջներին և պետք է այդ դեպքում կիրառվեր ՄԱԿ խաղաղարար առաքելություն: Հետևաբար անհրաժեշտ է պարզել, թե

1. ինչո՞ւ դա տեղի չի ունեցել,
2. արդյո՞ք նոր աշխարհակարգի ձևավորման համար ծայրահեղ սրված պայքարում ՄԱԿ ԱԽ մշտական անդամների շահերի բախումների պատճառով,
3. ինչպես նաև աշխարհաքաղաքական տրանսֆորմացիաների տարբեր փուլերում ինչպիսի՞ ազդեցություն ունի ՄԱԿ ԱԽ մշտական անդամների շահերի բախումը ինքնորոշման հակամարտությունների ժամանակ խաղաղարար առաքելությունների կիրառման վերաբերյալ բանաձևերի ընդունման վրա:

Այդ նպատակով հողվածում նախ քննարկվում են նոր աշխարհակարգի ձևավորման երեք փուլերի ընթացքում հակամարտությունների կարգավորման նպատակով խաղաղարար առաքելությունների կիրառման կոնցեպտուալ հիմքերը, ապա՝ այդ փուլերում ՄԱԿ ԱԽ մշտական անդամների շահերի բախումների հիմքերը և ինքնորոշման հակամարտությունների կարգավորման, մասնավորապես, խաղաղարար առաքելությունների ձևավորման վրա դրանց ազդեցությունը, ինչպես նաև դրանցից յուրաքանչյուրի համար բնորոշ հակամարտությունների կարգավորման կոնկրետ

դեպքեր (սկզբնական փուլ՝ Արևելյան Թիմոր, միջանկյալ փուլ՝ Կոսովո, եզրափակիչ փուլ՝ Լեռնային Ղարաբաղ):

Հետազոտության մեթոդաբանությունը կառուցված է ինքնորոշման հակամարտությունների կարգավորման ժամանակ պատերազմների կանխարգելման հաջող կամ անհաջող դեպքերի համար համեմատական վերլուծության սկզբունքների կիրառման վրա:²¹

Ինքնորոշման հակամարտությունների դեպքում խաղաղարար առաքելությունների ձևավորման հայեցակարգային հիմքերը

Խաղաղարար առաքելությունն ու ինքնորոշման սկզբունքը հիմնարար նորմեր են, որոնք ուղղակիորեն արձանագրված են ՄԱԿ կանոնադրության հոդված 1-ում²² ձևակերպված կազմակերպության առաջին երկու նպատակներում: Եթե առաջինը նշվում է որպես «խաղաղության սպառնալիքների կանխարգելում և վերացում ու ագրեսիայի ակտերի ճնշում», ապա երկրորդը «ազգերի միջև բարեկամական հարաբերությունների զարգացումն է ժողովուրդների հավասարության և ինքնորոշման սկզբունքի հիման վրա»: Հետևաբար այս երկու հիմնադրույթներին առնչվող խնդիրների լուծումն առանցքային նշանակություն ունի կազմակերպության արդյունավետության տեսակետից: Այդուհանդերձ, դրանց իրագործումը հանդիպում է լուրջ խոչընդոտների:²³ Ինքնորոշման հակամարտությունների դեպքում մետրոպոլիսները

²¹ **Torosyan T., and M. Petrosyan**, Comparative Analysis of Conflicts: Modeling Problems *Armenian Journal of Political Science*, 2015, 2(3), 121-138, DOI: 10.19266/1829-4286-2015-02-121-138

Torosyan T., Vardanyan A., Conceptualization of the Methodology of Secessions Comparative Analysis. *Polis. Politicheskie issledovaniya*. 2021. 1, 41-57. <https://doi.org/10.17976/jpps/2021.01.04>

²² Charter of the United Nations,

<https://treaties.un.org/doc/publication/ctc/uncharter.pdf>

²³ **Lemay-Hebert N.**, The “Empty-Shell” Approach: The Setup Process of International Administrations in Timor-Leste and Kosovo, Its Consequences and Lessons, *International Studies Perspectives*, 2011, 12, 2, 190-211. <https://doi.org/10.1111/j.1528-3585.2011.00427.x>

փորձում են դիմակայել ոչ միայն ինքնորոշման իրավունքի իրացմանը, այլև խաղաղարար առաքելությունների իրականացմանը՝ հայտարարելով, որ խնդիրը ներպետական է և որևէ մեկն իրավունք չունի միջամտելու, թեև թե միջազգային հարաբերություններում, թե գիտական հետազոտությունների մակարդակում լրջորեն չեն վիճարկվում ՄԱԿ-ի կամ ՄԱԿ ԱԽ համաձայնությամբ որևէ տարածաշրջանային կազմակերպության կողմից խաղաղարար գործունեության իրականացման օրինականությունը կամ ինքնորոշման սկզբունքի կիրառումը հակամարտությունների կրագավորման նպատակով: Ավելին, հաճախ դա համադրվում է ինքնորոշման իրավունքի հիման վրա անկախություն ձեռք բերած պետության կայացմանն աջակցելու նպատակով միջազգային կառավարման մարմինների ստեղծման հետ, որոնք պետք է դիտարկվեն որպես այդ խնդրի լուծման անհրաժեշտ գործիքներ:²⁴

Իհարկե, ԱԽ լիազորությունների ցանկում (ՄԱԿ կանոնադրության 41 և 42 հոդվածներ) նման մարմինների ստեղծման լիազորություն սահմանված չէ, սակայն լիազորությունների ցանկը սպառնիչ չէ:²⁵ Միաժամանակ, կանոնադրության 39-րդ հոդվածը նախատեսում է ԱԽ անսահմանափակ լիազորություն՝ որոշելու խաղաղության ցանկացած սպառնալիքի, խաղաղության ցանկացած խախտման կամ ագրեսիայի առկայություն, ինչպես նաև երաշխավորում կամ որոշում է, թե ինչ միջոցներ պետք է կիրառվեն ՄԱԿ կանոնադրության 41-րդ և 42-րդ հոդվածների համաձայն միջազգային անվտանգության կամ խաղաղության պահպանման կամ վերականգնման համար: Ինչ վերաբերում է

²⁴ **Cunningham K. G.**, Actor fragmentation and civil war bargaining: How internal divisions generate civil conflict. *American Journal of Political Science* 2013, 57(3): 659–672.

²⁵ **Matheson M.J.**, United Nations Governance of Postconflict Societies, *The American Journal of International Law*, 2001, **95**, 1, 76–85, DOI:10.2307/2642038; **Yannis A.**, The UN as Government in Kosovo, *Global Governance* 2004, **10**, 1, 67–81,

զինված ստորաբաժանումների հիման վրա խաղաղարար առաքելությունների ձևավորմանը, ապա դա ուղղակիորեն արձանագրված է 42-րդ հոդվածում: ԱԽ այս լիազորությունների լիարժեք համապատասխանությունը ՄԱԿ կանոնադրությանը հաստատում է նաև Արդարադատության միջազգային դատարանի մշակված լիազորությունների հայեցակարգը:²⁶ Այսպիսով, թեև ՄԱԿ կանոնադրության 41 և 42 հոդվածներում, ի տարբերություն խաղաղարար առաքելություն իրականացնելու համար զինված ստորաբաժանումների ձևավորմանը, ԱԽ-ի համար ուղղակիորեն նախատեսված չէ միջազգային վարչակազմերի ստեղծման իրավասություն, սակայն դրանց ստեղծումը 39-րդ հոդվածով նախատեսված պարտականությունների կատարման անհրաժեշտ պայման է:²⁷

Թեև քաղաքական նկատառումներով ժամանակ առ ժամանակ կիրառվում են տարատեսակ մանիպուլյացիաներ իբր միջազգային իրավունքում ինքնորոշման սկզբունքի անկատարության կամ հակասականության վերաբերյալ, սակայն իրավական առումով անթերի են նաև ինքնորոշման իրավունքի կարգավիճակն ու կիրառման մեխանիզմները: Այն ունի բարձրագույն իրավական նորմի *jus cogens* և *erga omnes* կարգավիճակ և հստակորեն սահմանված են այդ մեխանիզմները:²⁸ Ընդ որում, պետք է հաշվի առնել, որ լուծումների վերաբերյալ տարատեսակ մասնագիտական առաջարկությունները, որոնք դեռևս չեն դարձել միջազգային իրավունքի նորմեր, չեն կարող խաղաղարար առաքելությունների կազմավորման ժամանակ քննարկումների հիմք դառնալ: Մասնավորապես, խոսքը վերաբերում է «արտաքին ինքնորոշում» և «ներքին ինքնորոշում» հասկացություններին²⁹, ինչպես նաև 2000-

²⁶ *Reparation for Injuries Suffered in the Service of the United Nations*, Advisory Opinion, ICJ Reports 1949, 174, <https://www.icj-cij.org/case/4>

²⁷ **von Carlowitz L.**, UNMIK Lawmaking between Effective Peace Support and Internal Self-determination, *Archiv des Völkerrechts*, 2003, **41**, 3, 336-393

²⁸ **Torosyan T., Vardanyan A.**, 2021

Declaration on Principles of International Law concerning Friendly Relations and Co-operation among States in accordance with the Charter of the United, A/RES/2625 (XXV) 24 Oct. 1970. [https://undocs.org/en/A/RES/2625\(XXV\)](https://undocs.org/en/A/RES/2625(XXV))

²⁹ Friedrich J., 2005.

ականների սկզբին ակտիվ տեսական քննարկումների առարկա դարձած երկու՝ «վաստակած ինքնիշխանություն (Earned Sovereignty)»³⁰ և «անհապաղ անջատում (Remedial Secession)»³¹ հասկացություններին: Դրանք որևէ ամրագրում չունեն միջազգային իրավունքում և ոչ թե ինքնուրույն իրավական նորմեր են, այլ այս կամ այն իրավիճակում ինքնորոշման իրավունքի կիրառման ավելի արդյունավետ ձևեր որոնելու փորձեր: Դրանք կարող են հետազոտական բանավեճերի առարկա դառնալ, բայց միջազգային իրավունքը սահմանում է ինքնորոշման իրավունքի միանշանակ իմաստ, որի համաձայն ինքնորոշվող ժողովրդի քաղաքական կարգավիճակը՝ որպես սահմանված 4 տարբերակներից մեկը, որոշվում է այդ ժողովրդի կամքի ազատ արտահայտմամբ, առանց որևէ արտաքին ազդեցության:³²

Խնդրի քննարկումների ժամանակ երկու հանգամանքներ պետք է հաշվի առնվեն: Այն բանից հետո, երբ օրինական միջազգային միջնորդական առաքելությունը հստակորեն կողմնորոշվել է, որ հակամարտության կարգավորման հիմքն ինքնորոշման սկզբունքն է, պետք է անհապաղ լուծել վերջնական կարգավիճակի որոշման խնդիրը: Այդ հարցում հստակության բացակայությունը ստեղծում է լուրջ դժվարություններ միջազգային վարչակազմի և խաղաղարար առաքելության համար³³, քանի որ մետրոպոլիան տեսնում է, որ քիչ ժամանակ ունի անկախության միջազգային ճանաչումը թույլ չտալու համար ու դա կանխելու

³⁰ **Williams P. R. and F. J. Pecci**, Earned Sovereignty: Bridging the Gap Between Sovereignty and Self-Determination, *Stanford Journal of International Law*, 2004, 40, 347-386.

Hooper J.R., and P. R. Williams, Earned Sovereignty: The Political Dimension, *Denver Journal of International Law & Policy*, 2003, **31**, 3, 355-372.

³¹ **Vidmar J.**, Remedial Secession in International Law: Theory and (Lack of) Practice, *St Antony's International Review*, 2010, **6**, 1, 37-56.

³² Declaration on Principles of International Law concerning Friendly Relations and Co-operation among States in accordance with the Charter of the United, A/RES/2625 (XXV) 24 Oct. 1970. [https://undocs.org/en/A/RES/2625\(XXV\)](https://undocs.org/en/A/RES/2625(XXV))

³³ **Korhonen O.**, International Governance in Post-Conflict Situations, *Leiden Journal of International Law*, 2001, **14**, 3, 495 – 529, DOI: <https://doi.org/10.1017/S0922156501000267>

նպատակով կարող է դիմել լայնածավալ բռնաճնշումների, ռազմական ագրեսիայի, անգամ՝ էթնիկ զտումների ու ցեղասպանության: Այդ նույն նկատառումներով անհրաժեշտ է, որ կարգավորման վճռական փուլն իրականացվի ՄԱԿ-ի վերահսկողությամբ՝ որպես առավել օպերատիվ ու արձագանքման հնարավորություն և ռեուրսներ ունեցող կազմակերպություն: Միաժամանակ, ՄԱԿ ԱԽ մշտական անդամները պետք է հաշվի առնեն, որ նման իրավիճակներում սեփական շահերի առաջնորմը՝ կարգավորման գործընթացի դանդաղեցման գնով, կարող է հանգեցնել ռազմական ագրեսիայի կամ պատերազմների վերսկսման՝ ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակով աղետալի զարգացումներով: Հետևաբար մետրոպոլիայի կողմից նման փորձերը պետք է դառնան ակնառու ազդանշան ՄԱԿ ԱԽ անհապաղ միջամտության համար՝ կազմակերպության գործունեության նպատակներից բխող միջազգային խաղաղարար առաքելություն ձևավորելու մասին բանաձևի ընդունումով:

Հարկ է նաև արձանագրել, որ պատերազմի կրկնման կանխման հասնելու համար կարևոր է, որ միջազգային վարչակազմն ունենա քաղաքացիական բնակչության և տեղական իշխանությունների աջակցությունը:³⁴

Այսպիսով, ինքնորոշման սկզբունքը և ՄԱԿ խաղաղարար գործունեությունը փոխկապակցված և միջազգային իրավունքում առանցքային նշանակություն ունեցող նորմեր են, որոնց կիրառումը ինքնորոշման հակամարտությունների դեպքում հաճախ միակ հնարավորությունն է մարդկության դեմ կատարվող հանցագործությունները կանխելու համար: Հետևաբար կարևոր է այս կամ այն հակամարտությունը ինքնորոշման սկզբունքի հիման վրա լուծելու որոշումն ընդունելուց հետո այդ լուծումը հնարավորինս կարճ ժամկետում իրականացնել ու պատերազմի վերսկսման նշանների դեպքում արագորեն արձագանքել խաղաղարար առաքելության

³⁴ Friedrich J., 2005

ձևավորմամբ: Ակնհայտ է, որ երկրորդ նշանը, որը պահանջում է ՄԱԿ ԱԽ անհապաղ միջամտություն, պատերազմի վերսկսումն է:

Հետևաբար անհրաժեշտ է ֆորմալացնել այն նշանների արձանագրումը, որոնք ցույց են տալիս չմիջամտելու դեպքում ադետալի զարգացումների անխուսափելիությունը: Քանի որ ՄԱԿ ԱԽ համապատասխան բանաձևի ընդունման ամենահավանական խոչընդոտը կարող է լինել մշտական անդամներից մեկի կամ մի քանիսի վետոն՝ շահադիտական նկատառումներով, ապա անուղղակի, բայց կարևոր նշան պետք է համարել նաև աշխարհաքաղաքական տրանսֆորմացիաների ժամանակ ազդեցիկ պետությունների, առաջին հերթին՝ ՄԱԿ ԱԽ անդամ պետությունների հակասությունների սրումը: Դա պահանջում է դիտարկել նման տրանսֆորմացիաների, մասնավորապես, նոր աշխարհակարգի ձևավորման փուլերի ընթացքում հակամարտությունների կարգավորման նպատակով միջազգային խաղաղարարության իրականացման խոչընդոտները: Այդ առումով հակամարտությունների կարգավորման գործընթացների դիտարկման ժամանակ առանցքային նշանակություն ունեն հետևյալ գործոնները.

- Հակամարտության սկիզբ,
- Մետրոպոլիայի ռազմական ագրեսիա,
- Պատերազմական գործողությունների դադարեցում,
- Հակամարտության բնույթի որոշում,
- Քաղաքական կարգավիճակի որոշում,
- Միջազգային խաղաղարար առաքելության միջոցով պատերազմական գործողությունների վերսկսման կանխարգելում կամ դադարեցում:

Դրանց հիման վրա ստորև կդիտարկվեն խաղաղարար առաքելության իրականացման հնարավորություններն ու դժվարությունները նոր աշխարհակարգի ձևավորման փուլերում:

Միջազգային խաղաղարարությունն ու ինքնորոշումը նոր աշխարհակարգի ձևավորման սկզբնական փուլում

Այս փուլը կարելի է բաժանել երկու շրջանի՝ ԽՍՀՄ փլուզումից (1991թ.) մինչև նոր աշխարհակարգի ձևավորման սկսիվ պայքարի սկիզբ (2007թ.) և այդ պայքարի սկզբնական հատված (2007-2014թթ.):

1991թ. ԽՍՀՄ փլուզումով փլուզվեց նաև այդ երկրի գլխավորած կոմունիստական գաղափարախոսության վրա կառուցված դաշինքը, հետևաբար և երկրենե աշխարհակարգը: ԽՍՀՄ հեշտ փլուզումը և Ռուսաստանում ներքին բազմաթիվ բարդ քաղաքական, տնտեսական տրանսֆորմացիոն խնդիրների առաջացման պատճառով սկզբնական շրջանում թվում էր, թե հետագա զարգացումները առանց Արևմուտքի մեծ ջանքերի տանելու են դեպի միաբնեռ աշխարհակարգի կայունացում:³⁵ Հավանաբար դա էր պատճառը, որ Միացյալ Նահանգներն այդ շրջանում կտրուկ քայլեր չէր ձեռնարկում հետխորհրդային տարածքում ազդեցության տարածման ուղղությամբ և անգամ երկուստեք որոշ քայլեր էին ձեռնարկվում համագործակցության խորացման ուղղությամբ: Այդուհանդերձ, 2004թ. Եվրամիության ամենամեծ ընդլայնումը և Արևելյան ու Կենտրոնական Եվրոպայի մի շարք երկրների անդամակցությունը ՆԱՏՕ-ին կտրուկ մեծացրեցին ԱՄՆ-Ռուսաստան լարվածությունը, ինչի հրապարակային դրսևորումը եղավ 2007թ. Մյունխենի անվտանգության համաժողովում Ռուսաստանի նախագահի կոշտ հակաամերիկյան ելույթը³⁶: Կարելի է արձանագրել, որ դա դարձավ ռուս-ամերիկյան հարաբերությունների, ինչպես նաև նոր աշխարհակարգի ձևավորման «ռոմանտիկ» շրջանի ավարտի, իսկ հաջորդ տարվա

³⁵ **Huntington S.**, The Third Wave: Democratization in the Late Twentieth Century. Norman. 1991; **Wohlworth W.**, The Stability of Unipolar World, *International Security*, 1999, 24, 1, 5-41. <https://www.jstor.org/stable/2539346>

³⁶ Выступление В. Путина на Мюнхенской конференции по безопасности, 2007г., <http://www.kremlin.ru/events/president/transcripts/24034>

օգոստոսին տեղի ունեցած ռուս-վրացական հնգօրյա պատերազմը՝ կոշտ մրցակցության փուլի սկսման խորհրդանիշ:³⁷

Առաջին շրջանի առանձնահատկություններից էր հակամարտությունների կարգավորման գործընթացների ձևավորումը: Դա մասնավորապես, վերաբերում է Արևելյան Թիմորի, Կոսովոյի և Լեռնային Ղարաբաղի հակամարտություններին: Ստորև կդիտարկվեն Արևելյան Թիմորի հակամարտության կարգավորման գործընթացի վերը նշված առանցքային 6 գործոնները:

Արևելյան Թիմոր: Արևելյան Թիմորը 4 դարերի ընթացքում եղել է պորտուգալական գաղութ: 1974թ. Պորտուգալիայում ավտորիտար վարչակարգի տապալումից հետո Արևելյան Թիմորն անկախություն ստացավ, սակայն սահմանակից Ինդոնեզիան արագորեն ներխուժեց այնտեղ՝ իբր կանխելու համար կոմունիստական գաղափարախոսության տարածումը, իսկ մեկ տարուց էլ քիչ անց այդ տարածքը հայտարարեց իր 27-րդ նահանգի մաս: Մերձավորագույն հարևանը՝ Ավստրալիան, այն երկրների շարքում էր, որոնք ճանաչեցին Ինդոնեզիայի իշխանությունը Արևելյան Թիմորում:³⁸ ԱՄՆ-ն և Արևմուտքի մեծ մասը աջակցում էին Ինդոնեզիայի բռնատիրական վարչախմբին՝ հանուն կոմունիզմի դեմ պայքարին միացած Սուխարտոյի հետ բարեկամական համագործակցության:³⁹ Շատ ասիական երկրներ ևս պաշտպանում էին Ինդոնեզիայի իշխանություններին՝ վախենալով անկախության համար պայքարի տարածումից իրենց պետություններում:⁴⁰

1975թ. դեկտեմբերին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան և ԱԽ-ը դատապարտեցին Ինդոնեզիայի գործողությունները և 24 տարի խնդիրը մնաց Գլխավոր Ասամբլեայի օրակարգում: 1982թ. Գլխավոր Ասամբլեան Գլխավոր քարտուղարին հանձնարարեց դիվանագիտական ջանքեր գործադրել՝ խնդրի լուծում գտնելու

³⁷ **Torosyan T. and Vardanyan A.**, 2015

³⁸ **Dunn J.**, East Timor: A rough passage to independence. Longueville, Australia: Longueville Books. 2003.

³⁹ **Howard L.** 2014

⁴⁰ **Terrall B.**, The UN in East Timor: Lessons for Iraq? *Radical Society*, 2003, 30(3-4): 80-81.

համար: Արևելյան Թիմորի անկախությունը հետևողականորեն պաշտպանում էր Պորտուգալիան, իսկ այնտեղ տեղի ունեցող աղետալի իրադարձություններին փորձում էր արձագանքել ՄԱԿ Գլխավոր քարտուղարի գրասենյակը:⁴¹ Այդուհանդերձ, 24 տարի Բնդոնեզիան Արևելյան Թիմորի ժողովրդին պահեց շարունակական բռնությունների ու հետապնդումների ներքո, որի քառորդ մասը կամ մոտ 200000 հոգի սպանվեցին ռազմական գործողությունների կամ սովի հետևանքով:

1998թ. Սուխարտոյի վարչախմբի տապալումից հետո հաջորդ նախագահը հայտարարեց, որ արևելյան թիմորցիներն իրենք կորոշեն իրենց քաղաքական կարգավիճակը: ՄԱԿ-ի S/RES/1246(1999) բանաձևի հիման վրա 1999թ. օգոստոսին տեղի ունեցած հանրաքվեի արդյունքների (բնակչության 98,6% մասնակցություն, 78,5% կողմ անկախությանը) հրապարակմանը հետևեց Բնդոնեզիայի զինվորականների կազմակերպած հրոսակախմբերի բռնությունների նոր ալիք՝ իրականացնելով «այրված հող» գործողություն, որի ընթացքում ոչնչացվեց ենթակառուցվածքների 70 տոկոսը, այդ թվում՝ ամբողջ էլեկտրացանցերը և բնակարանային ֆոնդը⁴², տեղահանվեց բնակչության 70 տոկոսը, զոհվեց 1500 արևելաթիմորցի:⁴³ Սակայն արդեն սկսել էր փոխվել միջազգային կարծիքը՝ Բնդոնեզիայից Արևելյան Թիմորի անկախության օգտին, տասնամյակների ընթացքում ՄԱԿ-ում թիմորցի քաղաքական առաջնորդների ծավալած լոբիստական գործունեության շնորհիվ:⁴⁴ Նախ, ՄԱԿ Անվտանգության խորհրդի հավանությամբ տարբեր երկրների զինված ստորաբաժանումների հիման վրա և Ավստրալիայի գլխավորությամբ ձևավորվեցին

⁴¹ **Krieger H.** (Ed.) *East Timor and the International Community: Basic Documents*. Cambridge, MA: Cambridge University Press. 1997.

⁴² **Chopra J.**, The UN's Kingdom of East Timor. *Survival*, 2000, 42(3): 27–33.

⁴³ **Smith M., and M. Dee.** *Peacekeeping in East Timor: The Path to Independence*. Boulder: Lynne Rienner. 2003.

⁴⁴ **Bell C.**, East Timor, Canberra and Washington: A Case Study in Crisis Management. *Australian Journal of International Affairs*, 2000, 54(2): 171–176. Doi:10.1080/713613507

Արևելյան Թիմորի միջազգային ուժերը (INTERFET), որոնք պետք է ՄԱԿ կանոնադրության 7-րդ գլխի համաձայն վերջ դնեին բռնություններին և «կարգ ու կանոն հաստատեին բոլոր անհրաժեշտ միջոցների կիրառմամբ»: Հինգ ամսում այդ խնդիրը լուծելուց հետո ձևավորվեց ՄԱԿ-ի բազմակողմ խաղաղարար գործողությունը՝ Արևելյան Թիմորում ՄԱԿ-ի ժամանակավոր վարչակազմ (UNTAET) անունով, հետևյալ ուղղություններով գործունեություն իրականացնելու նպատակով՝

- Ռազմական խաղաղարարություն,
- Կառավարում և պետական վարչարարություն,
- Մարդասիրական խաղաղարարություն և արտակարգ վերականգնում:⁴⁵

2002թ. Արևելյան Թիմորը անդամակցեց ՄԱԿ-ին և ժամանակավոր վարչակազմի օգնությամբ ձեռնամուխ եղավ պետության ինստիտուցիոնալ ձևավորման խնդրի լուծմանը:

ՄԱԿ խաղաղարարները 13 տարվա ներկայությունից հետո Արևելյան Թիմորից դուրս բերվեցին 2012թ. դեկտեմբերին՝ երկու հաջող ընտրությունների արդյունքում արձանագրելով երկրում շարունակական կայունության պահպանումը:⁴⁶ Բռնությունների դադարեցման և հակամարտության լիարժեք կարգավորման հարցում առանցքային նշանակություն ունեցավ ՄԱԿ խաղաղարար առաքելության ձևավորումը, սակայն հարկ է արձանագրել, որ Արևելյան Թիմորն անկախության է հասել առաջին հերթին արևելաթիմորյան ժողովրդի ու նրա առաջնորդների արիության և վճռականության, ինչպես նաև հսկայական դժվարությունները հաղթահարելու պատրաստակամության շնորհիվ:⁴⁷

Այսպիսով, Արևելյան Թիմորի հակամարտության համար վերը բերված 6 գործոնների և դրանց ժամանակագրության

⁴⁵ **Howard L. M.**, 2014

⁴⁶ Timor-Leste: Stability at What Cost? Asia Report N°246, 8 May 2013, International Crisis Group

⁴⁷ **Martin I. and A. Mayer-Rieckh**, The United Nations and East Timor: from self-determination to state-building, *International Peacekeeping*, 2005, 12:1, 125-145, DOI: 10.1080/1353331042000286595

դիտարկումը ցույց է տալիս, որ հակամարտության կարգավորումը լիարժեքորեն իրականացվել է նոր աշխարհակարգի ձևավորման առավել կայուն ու աշխարհաքաղաքական առումով կոշտ դիմակայություններից զերծ «ռոմանտիկ» շրջանում, ՄԱԿ-ի արագ արձագանքման շնորհիվ վերջ դնելով ագրեսիային ու բռնություններին:

Միջազգային խաղաղարարությունն ու ինքնորոշումը նոր աշխարհակարգի ձևավորման միջանկյալ փուլում

Ըստ որոշ մասնագիտական գնահատումների, Կոսովոյում ՄԱԿ-ի խաղաղապահ առաքելության պակաս հաջողությունը, մասնավորապես, Արևելյան Թիմորի համեմատ, առաջին հերթին պայմանավորված է այն հանգամանքով, որ Կոսովոյում այդ գործընթացի ղեկավարումը բաժանված էր երեք կազմակերպությունների՝ ՄԱԿ-ի, ՆԱՏՕ-ի և ԵՄ-ի միջև: Կային դրան նպաստող մի քանի այլ գործոններ ևս՝ հատկապես Կոսովոյի սերբական համայնքի գործունեությունը:⁴⁸ Չմերժելով երկրորդ գործոնի ազդեցությունը կարգավորման գործընթացի վրա, պետք է նկատել, որ Կոսովոյի դեպքում անկախության հասնելու որոշ նախադրյալներ (աշխարհագրական տեղադրություն, վարչական կարգավիճակ, մետրոպոլիայի ավելի մեղմ վերաբերմունք և այլն) ավելի բարենպաստ էին, քան Արևելյան Թիմորի դեպքում, սակայն վերոհիշյալ 6 գործոնների ազդեցությամբ Կոսովոյի անկախության միջազգային ճանաչման գործընթացը (անդամակցություն ՄԱԿ-ին) դեռևս չի ավարտվել: Ստորև այդ գործոններին առնչվող իրադարձությունների քննությունը վկայում է, որ կարևոր է ոչ միայն դրանց առկայությունն, այլև թե աշխարհաքաղաքական տրանսֆորմացիաների որ փուլում են դրանք տեղի ունենում: Մասնավորապես, խոսքը վերաբերում է միջազգային հանրության կողմից հակամարտության բնույթի ճանաչմանը որպես ինքնորոշման:

⁴⁸ **Howard L. M.**, 2014

Կոսովո: Կոսովոյի ինքնավար մարզը ձևավորվել է Հարավ-սլավիայի կազմավորման շրջանում (1945թ.), Սերբիայի հանրապետության կազմում: Կոմունիստական գաղափարախոսության տարատեսակներից մեկը դավանող Հարավսլավիայի փլուզման ընթացքում Սերբիայի նախագահ Միլոշևիչը 1989թ. հանրաքվե անցկացրեց՝ լուծարելու համար Կոսովոյի ինքնավարությունը, ապա ռազմական ուժ կիրառեց Կոսովոյի ալբանացիների նկատմամբ, ինչի արդյունքում տեղահանվեց 460000 մարդ:

1991թ. Կոսովոյի ալբանացիները անլեզալ հանրաքվե անցկացրեցին, որին մասնակցեց բնակչության 87 տոկոսը, որի 99 տոկոսը քվեարկեց Կոսովոյի անկախության օգտին: Թեև սկզբնական շրջանում Կոսովոյի անկախության համար շարժումը որակվել էր որպես խաղաղ շարժում, սակայն 1996թ. ձևավորվեց Կոսովոյի անկախության բանակը և հակամարտությունը թևակոխեց զինված բախումների փուլ:

1999թ. մարտին մարդասիրական աղետը կանխելու նպատակով ՆԱՏՕ-ն՝ առանց ՄԱԿ ԱԽ համաձայնությունը ստանալու, ռազմական գործողություններ սկսեց Սերբիայի նկատմամբ՝ ռմբակոծելով տարբեր ռազմավարական օբյեկտներ: 1999թ. օգոստոսին ստեղծվեց Անկախ միջազգային հանձնաժողով Կոսովոյի վերաբերյալ, որի ներկայացրած զեկույցն արձանագրում էր, որ ՆԱՏՕ-ի գործողությունները Կոսովոյում եղել են «ոչ իրավական, սակայն օրինական»:⁴⁹ Միաժամանակ, զուգահեռաբար միջնորդական փորձեր էին արվում հակամարտության խաղաղ կարգավորման նպատակով, որոնցից առավել հատկանշական են Ռամբույեի բանակցությունները: 1999թ. հունիսին Սերբիայի նախագահը մերժեց ՄԱԿ հովանավորությամբ ու Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի միջնորդությամբ մշակված Ռամբույեի համաձայ-

⁴⁹ Independent International Commission on Kosovo. *The Kosovo Report to United Nations Secretary General Kofi Annan on October 23, 2000.*
<https://reliefweb.int/report/world/kosovo-report>

նագիրը⁵⁰, որով Կոսովոյի համար նախատեսվում էր ավելի լայն ինքնավարություն Սերբիայի կազմում: Սերբիային աջակցություն էր ցուցաբերում Ռուսաստանը, սակայն այն բանից հետո, երբ 1999թ. հունիսին ձախողվեց ռուսական զինուժի փորձը Կոսովոյի մայրաքաղաք Պրիշտինայի մերձակայքում գտնվող օդանավակայանի նկատմամբ վերահսկողություն սահմանելու նպատակով, հակամարտության կարգավորման գործընթացում Մոսկվայի մասնակցությունը սահմանափակվեց Կոսովոյի անկախությանը միտված ԱԽ Բանաձևերի նախագծերի արգելափակմամբ: 1999թ. հունիսի 10-ին ընդունվեց ԱԽ S/RES/1244(1999) Բանաձևը⁵¹ և դրա հիման վրա ՆԱՏՕ-ի ռազմական ստորաբաժանումները փոխարինվեցին ՄԱԿ խաղաղարար առաքելությամբ ու կարգավորման գործընթացում միջնորդական դերակատարություն ստանձնեց ՄԱԿ-ը: Խաղաղության և անվտանգության հասնելու համար միջազգային անվտանգային ներկայությունը Կոսովոյում ուներ երկու գործառույթ՝

1. նոր ռազմական գործողությունների կանխում, փախստականների անվտանգ վերադարձի ապահովում և մարդասիրական օգնության տեղափոխում, ականագերծում և սահմանային մոնիտորինգ,

2. խաղաղության պարտադրման մանդատ՝ կրակի դադարեցման ապահովման նպատակով, և ապառազականացում:⁵²

Վերջին գործառույթի իրականացումը՝ ներքին կարգ ու կանոնի ապահովման մասով, կարող էր համատեղվել ներքին ոստիկանական ուժերի հետ:

2003թ. ՄԱԿ ԱԽ-ն հաստատեց «Նախ՝ չափանիշներ, ապա՝ կարգավիճակ» անունը կրող փաստաթուղթը⁵³, որը նախատեսում

⁵⁰ Rambouillet Accords, <https://www.securitycouncilreport.org/un-documents/document/kos-s-1999-648.php>

⁵¹ UN SC S/RES/1244(1999),

[https://documents-dds-](https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/N99/172/89/PDF/N9917289.pdf?OpenElement)

[ny.un.org/doc/UNDOC/GEN/N99/172/89/PDF/N9917289.pdf?OpenElement](https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/N99/172/89/PDF/N9917289.pdf?OpenElement)

⁵² UN S/RES/1244 (1999) of 10 June 1999, para. 9.

էր նախ Կոսովոյում մի շարք ոլորտներում արմատավորել ժողովրդավարական արժեքները, ապա միայն դրանից հետո որոշել կարգավիճակը, սակայն 2004թ. մարտին սպասումներից հոգնած ալբանացիներն ընդվզեցին ու բաժրացավ բռնությունների նոր ալիք: Դա ևս մեկ անգամ հաստատեց, որ երբ ինքնորոշման հակամարտությունների կարգավորման գործընթացում ինչ որ նպատակով կարգավիճակի որոշման հարցը մղվում է հետին պլան, մետրոպոլիայի համար կտրուկ մեծանում է խնդիրը ռազմական միջոցներով լուծելու գայթակղությունը: Կարգավորման գործընթացը գլխավորեց Կայ Էյդեն /Kai Eide/, ում զեկույցը 2004թ. ահագանգում էր, որ Կոսովոյի կարգավիճակի հարցում կողմերի միջև համաձայնության հասնելու հնարավորություն չկա և իրատեսական լուծումը պետք է հիմնված լինի այդ փաստի վրա: 2005թ. նոյեմբերին փորձ արվեց ներգրավել ավելի փորձառու միջնորդի՝ Մարտտի Ահտիսաարիին /Martti Ahtisaari/, որը նշանակվեց ՄԱԿ Գլխավոր քարտուղարի հատուկ բանագնաց Կոսովոյի հարցով: 2007թ. մարտին Ահտիսաարին Գլխավոր քարտուղարին զեկույց ներկայացրեց, արձանագրելով, որ «Կոսովոյի կարգավիճակի որոշման ժամանակը եկել է, սպառվել է բանակցությունների ներուժը կարգավիճակի հարցում կողմերի համաձայնության հասնելու համար: Միակ կենսունակ տարբերակը անկախությունն է»:⁵³ Գլխավոր քարտուղարը լիովին պաշտպանեց զեկույցը և այն ներկայացրեց Անվտանգության խորհրդին: 2007թ. հունիսին Կոսովոյի անկախության գաղափարը պաշտպանեց նաև ԱՄՆ նախագահը: Սակայն Անվտանգության խորհուրդը չկարողացավ համաձայնության գալ՝ Ռուսաստանը և Չինաստանը դեմ էին Կոսովոյի անկախությանը: 2008թ. փետրվարին Կոսովոյի նախագահը, կառավարությունն ու խորհրդարանը համատեղ

⁵³Standards for Kosovo,

<https://www.securitycouncilreport.org/atf/cf/%7B65BFCF9B-6D27-4E9C-8CD3-CF6E4FF96FF9%7D/Kos%20Standards.pdf>

⁵⁴Letter dated 26 March 2007 from the Secretary-General addressed to the President of the Security Council, <https://www.securitycouncilreport.org/un-documents/document/Kosovo-S2007-168.php>

նիստում վերահռչակեցին Կոսովոյի անկախությունը, որին ի պատասխան 2008թ. սեպտեմբերին Սերբիան դիմեց ՄԱԿ Գլխավոր ասամբլեային՝ ստանալու համար Արդարադատության միջազգային դատարանի խորհրդատվական կարծիքը, թե արդյոք Կոսովոյի անկախության միակողմանի հռչակումը չի՞ հակասում միջազգային իրավունքի նորմերին: 2010թ. հուլիսին Արդարադատության միջազգային դատարանը հրապարակեց խորհրդատվական կարծիքը և արձանագրեց, որ «2008թ. փետրվարի 17-ին անկախության հռչակագրի ընդունումը չի հակասում ընդհանուր միջազգային իրավունքին, Անվտանգության խորհրդի S/RES/1244 (1999) բանաձևին կամ սահմանադրական կառուցվածքին, հետևաբար չի հակասում միջազգային իրավունքի կանոնների որևէ կիրառմանը»⁵⁵: Դրան հետևեցին հարյուրից ավելի երկրների երկկողմ ճանաչումներ: Սակայն, քանի որ Ռուսաստանը, Չինաստանն ու նրանց աջակցող մի շարք երկրներ վճռականորեն ընդդիմանում էին Կոսովոյի ճանաչմանը և անդամակցությանը ՄԱԿ-ին, փորձ արվեց խնդիրը լուծել Սերբիայի և Կոսովոյի միջև համաձայնության ձեռքբերումով՝ նրանց գայթակղելով ԵՄ-ին անդամակցությամբ: Այդ նպատակով նախ գործընթացում ներգրավվեց ԵՄ-ն, ապա՝ ԵԱՀԿ-ն: Սակայն այդպես էլ կարգավորման գործընթացը ավարտին չհասավ: Իհարկե, ՄԱԿ միջազգային խաղաղարար առաքելության միջոցով հաջողվեց կանխել լայնածավալ պատերազմական գործողությունների վերսկսումը, Արդարադատության միջազգային դատարանը համապարփակ կարծիքով սպառնչ պատասխան տվեց խնդրի իրավական բաղադրիչի քննարկմանը, սակայն խորացող աշխարհաքաղաքական մրցակցությամբ պայմանավորված ՄԱԿ ԱԽ անդամ պետությունների անգիջում դիրքորոշումները խափանեցին քաղաքական լուծումը: Հատկանշական է, որ այդ գործընթացին գրեթե զուգահեռաբար Ռուսաստանը երկկողմ ձևաչափով ճանաչեց Աբխազիայի և Հարավային Օսիայի անկա-

⁵⁵ Accordance with International Law of the Unilateral Declaration of Independence in Respect of Kosovo, <https://www.icj-cij.org/sites/default/files/case-related/141/141-20100722-ADV-01-00-EN.pdf>

խությունը, թեև դրանց հետ կապված կային մի շարք իրավական ու ընթացակարգային խնդիրներ: Հեշտ է նկատել, որ դա պայմանավորված չէր տարածաշրջանային առանձնահատկություններով, քանի որ Հարավային Կովկասում մեկ այլ՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության դեպքում Ռուսաստանի վերաբերմունքն այլ էր:

Միջազգային խաղաղարարությունն ու ինքնորոշումը նոր աշխարհակարգի ձևավորման եզրափակիչ փուլում

1921թ. Ռուսաստանի կոմունիստական կուսակցության կովկասյան բյուրոյի ապօրինի որոշմամբ Ադրբեջանի կազմ մտցված Լեռնային Ղարաբաղը խորհրդային տարիներին շարունակաբար գտնվում էր կոմունիստական վարչակարգի պատժիչ մեքենայի ճնշումների ներքո, ինչի արդյունքում մարզից հեռացավ բնակչության զգալի մասը: Այդուհանդերձ, Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը «ապաստեցվեց» 1988թ. փետրվարին, երբ, հավատալով ԽՍՀՄ առաջնորդ Գորբաչովի խոստումներին՝ երկրում հասարակական հարաբերությունների վերակառուցման և ժողովրդավարացման վերաբերյալ, ԼՂԻՄ-ի մարզային խորհուրդը որոշեց դիմել ԽՍՀՄ Գերագույն խորհրդին՝ Ադրբեջանի կազմից մարզը դուրս բերելու և Հայաստանի կազմում ընդգրկելու համար: Ի պատասխան Ադրբեջանի կոմունիստական ղեկավարությունը Ադրբեջանի մայրաքաղաք Բաքվում, Սումգաիթ, Կիրովաբադ քաղաքներում կազմակերպեց այդտեղ ապրող հայերի ջարդեր, որոնց իրականացնողները Ռուսաստանի դատարաններում դատապարտվեցին ազատազրկման:⁵⁶ 1991թ. վերջին, երբ Ադրբեջանը կազմակերպեց հանրաքվե ԽՍՀՄ կազմից դուրս գալու վերաբերյալ, խորհրդային օրենսդրության համաձայն Լեռնային Ղարաբաղում կազմակերպվեց ինքնորոշման հանրաքվե (մասնակցեց ընտրողների 82.2 տոկոսը), որի մասնակիցների 99 տոկոսը

⁵⁶ Cox C. and J. Eibner, *Ethnic Cleansing in Progress: War in Nagorno-Karabakh*. Zurich, London and Washington: Christian Solidarity Worldwide. 1993

քվեարկեց անկախության օգտին: Ի պատասխան դրա 1992թ. Ադրբեջանը նախաձեռնեց լայնածավալ ռազմական ագրեսիա Լեռնային Ղարաբաղի նկատմամբ:⁵⁷ Պատերազմական գործողությունները շարունակվեցին մինչև 1994թ. մայիս, երբ կնքվեց հրադադարի պայմանագիր: 1992թ. ԵԱՀԿ-ն Մինսկում հրավիրեց կոնֆերանս, որը Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման նպատակով ձևավորեց Մինսկի խումբը: Այն ունեցավ երեք համանախագահներ՝ ՄԱԿ ԱԽ հինգ մշտական անդամներից երեքի՝ Ռուսաստանի, Միացյալ Նահանգների և Ֆրանսիայի ներկայացուցիչները, որոնց միջնորդությամբ ծավալվեց կարգավորման գործընթացը, որն ունեցավ կտրուկ շրջադարձ, երբ կարգավորման նախագծի պատրաստման մի քանի անհաջող փորձերից հետո համանախագահները բանակցային գործընթացի հիմքում դրեցին միջազգային իրավունքի երեք սկզբունքները (ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման իրավունք, տարածքային ամբողջականության սկզբունք և ուժի ու ուժի սպառնալիքի չկիրառման սկզբունք), որոնց հիման վրա պետք լուծվի հակամարտությունը, և վեց տարրերը, որոնց վերաբերյալ լուծումները պետք է դառնային բանակցությունների առարկա: Դրանց հիման վրա կազմված «Մադրիդյան սկզբունքներ» անունը ստացած փաստաթուղթը համանախագահները 2007 թվականին Մադրիդում ներկայացրեցին Հայաստանի և Ադրբեջանի արտգործնախարարներին: 2009 թվականին համանախագահող երեք երկրների և Ադրբեջանի ու Հայաստանի արտաքին գործերի նախարարների ստորագրած հայտարարությամբ⁵⁸ այդ փաստաթուղթն ընդունվեց որպես հակամարտության կարգավորման հիմք: Քանի որ Մինսկի խմբի համանախագահներին շարունակաբար իրենց գորակցությունն են հայտնել ՄԱԿ-ը, ԵՄ-ն, Եվրոպայի

⁵⁷ **Gor P. W.**, 'Tis Some Poor Fello's Skull. Post-Soviet Warfare in the Southern Caucasus (Lincoln: iUniverse. 2008.

⁵⁸ Joint Statement by the Heads of Delegation of the Minsk Group Co-Chair Countries and the Foreign Ministers of Azerbaijan and Armenia Athens, December 1, 2009, <https://www.osce.org/cio/40626>

խորհուրդը և այլ միջազգային կազմակերպություններ ու ազդեցիկ երկրներ՝ նշելով որ խնդրի կարգավորումը պետք է իրականացվի այդ ձևաչափով և համանախագահների առաջարկած սկզբունքների հիման վրա, կարելի է արձանագրել, որ 2007թ. միջազգային հանրությունը ճանաչել է Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրավունքը և բանակցություններն ընթանում էին դրա իրացման ու մնացած հարցերի լուծման վերաբերյալ: Բանակցային գործընթացը շարունակվեց մինչև 2018թ., որի ընթացքում քննարկվել են 6 տարրերի համար լուծումների մի շարք տարբերակներ: Դրանք միմյանցից տարբերվում էին առանձին տարրերի լուծումների նրբություններով: Մասնավորապես, վերջին տարբերակը նախատեսում էր. «Ինչ վերաբերում է Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակի խնդրի լուծման տարբերակներին, ապա վերջին տարիներին բանակցությունների սեղանին գտնվող առաջարկները՝ որպես վերջնական նպատակ նախատեսում էին, մեջբերում եմ, «Լեռնային Ղարաբաղի վերջնական իրավական կարգավիճակի որոշումը՝ կողմերի համաձայնեցրած ժամկետներում ՄԱԿ-ի կամ ԵԱՀԿ-ի հովանու ներքո համաժողովրդական քվեարկության անցկացում, որը կարտահայտի Լեռնային Ղարաբաղի բնակչության ազատ կամարտահայտությունը և կունենա իրավականորեն պարտադիր բնույթ՝ միջազգային իրավունքի նորմերի ու սկզբունքների համաձայն: Ընդ որում, քվեարկության դրվող հարցը կամ հարցերը որևէ ձևով չեն սահմանափակվի, իսկ քվեարկության ցանկացած արդյունք կողմերը կհարգեն»⁵⁹:

2016թ. Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևը դժգոհում էր. «Մեզ վրա ճնշումներ են գործադրվում՝ ստիպելու համար, որ մենք

⁵⁹ Ответ российского сопредседателя в Минской группе ОБСЕ, Посла по особым поручениям МИД России И.В.Попова на вопрос СМИ относительно статьи Премьер-министра Армении Н.В.Пашиняна «Истоки 44-дневной войны»,
https://www.mid.ru/ru/foreign_policy/news//asset_publisher/cKNonkJE02Bw/content/id/4519475

համաձայնենք ճանաչել Լեռնային Ղարաբաղի անկախությունը»⁶⁰։ Ահա թե ինչու բանակցային գործընթացը այլ ուղղությամբ շեղելու նպատակով 2016թ. ապրիլին Ադրբեյջանը կազմակերպեց լայնածավալ ագրեսիա Լեռնային Ղարաբաղի նկատմամբ, սակայն միջնորդների, հատկապես Ռուսաստանի միջամտությամբ պատերազմական գործողությունները սկսվելուց 4 օր անց դադարեցվեցին։ Բանակցային գործընթացը շարունակվեց մինչև 2018թ., որի ընթացքում քննարկվել են 6 տարրերի համար լուծումների մի քանի տարբերակներ։ 2018թ. Հայաստանում տեղի ունեցած իշխանափոխությունից հետո նոր վարչապետը հայտարարեց, որ բանակցությունները սկսում է զրոյական կետից, ինչը Ադրբեյջանն օգտագործեց որպես պատրվակ՝ 2020թ. սեպտեմբերին Թուրքիայի աջակցությամբ Լեռնային Ղարաբաղի նկատմամբ ռազմական ագրեսիա սանձադրծելու համար։ Բազմաթիվ վկայություններ կան, որ դրա ընթացքում թույլ են տրվել պատերազմական հանցագործություններ՝ քաղաքացիական անձանց սպանություններ ու քաղաքացիական օբյեկտների և ծիսական շինությունների ունեցած վնասներ, կասեցնելով նաև ֆոսֆորային սպառազինության կիրառում, ինչպես նաև Սիրիայից և այլ երկրներից օտարերկրյա ահաբեկիչների տեղափոխում Լեռնային Ղարաբաղում պատերազմական գործողություններին մասնակցելու համար և այլն։⁶¹

⁶⁰ **Алиев И.**, Азербайджан пытаются заставить признать независимость Карабаха,

<https://easaily.com/ru/news/2016/10/07/aliev-azerbaydzhan-pytayutsya-zastavit-priznat-nezavisimostkarabaha>

⁶¹ Assessing U.S. Policy in the Caucasus, Senate of USA, November 16th, 2022, November 16th, 2022,

<https://www.foreign.senate.gov/hearings/assessing-us-policy-in-the-caucasus>; Sénat, Résolution portant sur la nécessité de reconnaître la République du Haut-Karabagh, 26 (2020-2021), 25 novembre 2020, <http://www.senat.fr/leg/tas20-026.pdf>;

REPORT on the implementation of the Common Foreign and Security Policy – annual report 2020 (2020\2206(INI),

https://www.europarl.europa.eu/doceo/document/TA-9-2021-0013_EN.pdf; Lemkin Institute Statement on Self-Determination of Armenians in Artsakh (South Caucasus): There is No “Peace” or “Prosperity” through Genocide, 24.11.2022, <https://www.lemkininstitute.com/statements-new-page/statement-on-self->

ԵԱՀԿ Մինսկի խմբի բոլոր երեք համանախագահող երկրները միաժամանակ ՄԱԿ Անվտանգության խորհրդի մշտական անդամներ են: Նրանք պարտավոր են 2005թ. ՄԱԿ անդամ երկրների ընդունած «պաշտպանելու պատասխանատվության» սկզբունքի համաձայն Լեռնային Ղարաբաղի «քնակչությանը պաշտպանել ցեղասպանությունից, պատերազմական հանցագործություններից, էթնիկ զտումներից և մարդկության դեմ կատարվող այլ հանցագործություններից»⁶²: Այդ պատասխանատվությունը ենթադրում է կանխարգելման պատասխանատվություն, դրա անբավարար լինելու դեպքում՝ արձագանքման պատասխանատվություն՝ ընդհուպ մինչև ռազմական միջամտություն, ինչպես նաև վերականգնման պատասխանատվություն: Սակայն 44 օր տևած արյունահեղ ագրեսիան, որի ընթացքում զոհվեց 5000 մարդ, տեղահանվեցին տասնյակ հազարավորներ, դադարեցնելու որևէ գործնական քայլ ՄԱԿ ԱԽ-ն չձեռնարկեց: Միգուցե պատճառն այն էր, որ Լեռնային Ղարաբաղի նկատմամբ 1992 և 2016թթ. ռազմական ագրեսիաները դադարեցվել էին առանց ԱԽ միջամտության և հաավանքար ենթադրվում էր, որ այս անգամ էլ կհաջողվի: 2020թ. նոյեմբերի 9-ին, երբ Ռուսաստանի միջնորդությամբ և մասնակցությամբ ստորագրվեց հայտարարություն⁶³, որի համաձայն դադարեցվում էին ռազմական գործողությունները և ռուս խաղաղապահներ էին տեղադրվում Լեռնային Ղարաբաղում շփման գծի և Լաչինի միջանցքի երկարությամբ: Հայտարարությունն ուներ բազմաթիվ թերություններ ինչպես իրավական ձևաչափի, այնպես էլ բովանդակային առումներով:

determination-of-armenians-in-artsakh-(south-caucasus)%3A-there-is-no-peace-or-prosperity-through-genocide

⁶² UN GA Resolution A/RES 60/1,

www.un.org/en/development/desa/population/migration/generalassembly/docs/globalcompact/A_RES_60_1.pdf

⁶³ Statement by the President of the Republic of Azerbaijan, the Prime Minister of the Republic of Armenia and the President of the Russian Federation, 10 November, 2020, https://www.mid.ru/ru/foreign_policy/news/1446283/?lang=en

Այդուհանդերձ, թվում էր, թե հրադադարարի հաստատումից հետո կվերսկսվեն բանակցությունները Մինսկի խմբի ձևաչափով ու թերությունները կշտկվեն: Հատկապես, որ համանախագահները մինչև 2023թ. մարտ մի քանի համատեղ հայտարարություններ էին արել, որ հակամարտությունը դեռևս կարգավորված չէ, անհրաժեշտ է շարունակել բանակցությունները վերոհիշյալ 3 սկզբունքների ու 6 տարրերի հիման վրա, լուծելով մնացած խնդիրները, այդ թվում՝ որոշել Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը:⁶⁴ Այդ տեսակետը պաշտպանում էր նաև միջազգային հանրությունը:⁶⁵ Սակայն Ադրբեջանը պնդում է, որ հակամարտությունը լուծված է և շարունակում ռազմական ագրեսիա: 2022թ. Ադրբեջանը նախաձեռնել է 3 խոշոր ռազմական բախումներ՝ երկուսը՝ մարտին և օգոստոսին, Լեռնային Ղարաբաղում, երրորդը՝ սեպտեմբերի 13-14-ին, երբ ադրբեջանական զինված ուժերը թափանցեցին Հայաստանի սահմանից ներս մի քանի կիլոմետր և մնում են մինչ օրս:⁶⁶ Ռուս խաղաղապահները լարվածության թուլացմանն ուղղված որևէ արդյունավետ քայլ չեն կարողանում անել⁶⁷, քանի որ սահմանված չեն ոչ նրանց կարգավիճակը, ոչ լիազորությունները: Նույն բանը տեղի ունեցավ,

⁶⁴ Joint Statement by the Heads of Delegation of the OSCE Minsk Group Co-Chair Countries, 3 December 2020, <https://www.osce.org/minsk-group/472419>; Statement of the OSCE Minsk Group Co-Chairs, <https://www.osce.org/minsk-group/473649>, 14 December 2020; Statement of the OSCE Minsk Group Co-Chairs, <https://www.osce.org/minsk-group/483416>, 13 April, 2021

⁶⁵ Averting a New War between Armenia and Azerbaijan. *Crisis Group Europe*. Report N°266, 30 January, 2023.

⁶⁶ Averting a New War between Armenia and Azerbaijan. *Crisis Group Europe*. Report N°266, 30 January. Accessed 4 January, 2023. <https://www.crisisgroup.org/europe-central-asia/caucasus/nagorno-karabakh-conflict/266-averting-new-war-between-armenia-and-azerbaijan>.

⁶⁷ Crisis Group Europe Briefing N° 93, *Nagorno-Karabakh: Seeking a Path to Peace in the Ukraine War's Shadow*, 22 April 2022; Olesya Vartanyan, Zaur Shiriyevev and Anita Mihaeljana, "Warding Off Renewed War in Nagorno-Karabakh", Crisis Group Commentary, 9 August 2022;

Department Press Briefing", U.S. State Department, 13 December 2022;

"Armenia/Azerbaijan: Statement by the Spokesperson on the developments around the Lachin corridor", EEAS Press Team,

երբ Լեռնային Ղարաբաղը Հայաստանին կապող միակ՝ Լաչինի ճանապարհը 2022թ. դեկտեմբերից փակեցին Ադրբեջանի հովանավորությունը վայելող «Բնապահպանները» և 120000 մարդ Լեռնային Ղարաբաղում մնաց առանց սննդի ու դեղորայքի:⁶⁸ Ընդ որում, ճանապարհը չբացվեց անգամ այն բանից հետո, երբ Արդարադատության միջազգային դատարանն Ադրբեջանից պահանջեց ապահովել մարդկանց, տրանսպորտային միջոցների ու բեռների անարգել տեղափոխումը Լաչինի միջանցքով:⁶⁹

Հատկանշական է, որ թեև 1992-2020թթ. ընթացքում, անկախ այլ հարցերում ունեցած տարաձայնություններից, ԱՄՆ-ն, Ռուսաստանը և Ֆրանսիան Մինսկի խմբի շրջանակներում արդյունավետորեն համագործակցել են, սակայն 2021թ. երկրորդ կեսից ջանքեր չեն գործադրում խնդրի կարգավորման այդ ձևաչափը վերականգնելու համար: Ճիշտ հակառակը: Այն բանից հետո, երբ 2020թ. նոյեմբերի 9-ի հայտարարությանը հաջորդեցին Ռուսաստանի նախաձեռնությամբ տեղի ունեցած ևս 2 հանդիպումներ ու հայտարարություններ Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարների հետ, առանձին գործընթացներ՝ նախաձեռնեցին նաև Շառլ Միշելն ու Էմանուել Մակրոնը՝ Բրյուսելում, ինչպես նաև ԱՄՆ Պետդեպարտամենտը Վաշինգտոնում: Արդյունքում, խեղաթյուրվել է ոչ միայն բանակցությունների միջազգայնորեն ճանաչված ձևաչափը՝ Մինսկի խմբի շրջանակներում ընթացող բանակցությունները փոխարինվել են առանձին պետությունների կազմակերպած հանդիպումներով, ինչի հետևանքով վերացել են միջնորդների փոխադարձ զսպումների ու հակակշիռների մեխանիզմները, այլև Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հիմնախնդիրը փոխարինվել է Հայաստանի և Ադրբեջանի միջև սահմանային խնդրով:

⁶⁸ Averting a New War between Armenia and Azerbaijan. *Crisis Group Europe*. Report N°266, 30 January, 2023.

⁶⁹ Application of the International Convention on the Elimination of All Forms of Racial Discrimination (Armenia v. Azerbaijan), 22 February 2023, <https://www.icj-cij.org/case/180>

Հայտարարությունները, որ Ադրբեջանն ու Լեռնային Ղարաբաղը պետք է ուղիղ հանդիպումներով քննարկեն իրենց առնչվող խնդիրները, երեսպաշտություն է, քանի որ միջազգայնորեն ճանաչված Մինսկի խմբի ձևաչափը անգործության է մատնված, դրա շրջանակներում 13 տարվա ընթացքում ձևավորված օրակարգն ու բանակցային փաստաթուղթը մի կողմ են դրվել՝ դրանց փոխարեն չստեղծելով ոչինչ:

Կարծիք կա, որ ՄԱԿ-ը ինքնորոշման և խաղաղարար առաքելությունների ձևավորման հետ կապված բանաձևեր է ընդունում, երբ մեծ հավանականություն կա, որ մոտավորապես պատերազմը կարող է խաբիլել տարածաշրջանի անվտանգությունը կամ, երբ վեճը զգալի բռնության պատմություն ունի:⁷⁰ Լեռնային Ղարաբաղի դեպքը վկայում է, որ անգամ այդ դեպքերում ազդեցիկ պետությունները նոր աշխարհակարգի համար պայքարի եզրափակիչ փուլում հաճախ իրենց շահերը գերադասում են մարդասիրական աղետների կանխարգելմանն ուղղված քայլերից: Հետևաբար նման դեպքերում, կատրուկ մեծանում է ՄԱԿ Գլխավոր քարտուղարի, նրա գրասենյակի և մասնագիտական կառույցների գործունեության արդյունավետության նշանակությունը: Իհարկե, խաղաղարար առաքելությունների ձևավորման վերաբերյալ բանաձևերն ընդունվում են ԱԽ մշտական անդամների համաձայնությամբ, սակայն դրա ձևավորման վրա էական ազդեցություն կարող է ունենալ իրավիճակի և դրանից բխող իրական վտանգների վերաբերյալ լիարժեք պատկերի ձևավորումը:

Հնարավոր խաղաղարար առաքելություններ: Հաշվի առնելով առկա իրողությունները և տեսական հնարավորությունները, Լեռնային Ղարաբաղի հակամարտության համար կարող են դիտարկվել խաղաղարար առաքելությունների հետևյալ տարբերակները՝ ՀԱՊԿ, Ռուսաստան, ԵԱՀԿ, ԵՄ՝ ՄԱԿ ԱԽ լիազորությամբ, կամ ՄԱԿ: Առաջին երկուսի դեպքում ԱԽ լիազորություն տրամադրելու հնարավորությունները գործնակա-

⁷⁰ White P., Cunningham D., Beardsley K., 2018

նում գրեթե զրոյական են՝ հաշվի առնելով Արևմուտք-Ռուսաստան ծայրահեղ սրված դիմակայությունը: Միաժամանակ, այդ դեպքում հնարավոր չի լինի ապահովել հավասարակշռող գործոն՝ առաքելությունը միջնորդի շահերին համապատասխան օգտագործելու գայթակղությունից զերծ պահելու համար: 2020թ. պատերազմից հետո Ռուսաստանի միջնորդությունը դրավկայությունն է:

ԵԱՀԿ-ն և ԵՄ-ն վաղուց քննադատվում են իրենց կառուցվածքային և ֆունկցիոնալ սահմանափակվածության համար՝ Հարավային Կովկասում հակամարտությունների կարգավորմանն ու կայուն խաղաղաշինությանը նպաստելու անկարողության, մասնավորապես, 2008թ. օգոստոսին Հարավային Օսիայի և 2016թ. ապրիլին Լեռնային Ղարաբաղի հակամարտությունների «ապաստեցման» առնչությամբ:⁷¹ 2020թ. ստեղծված միանգամայն նոր իրավիճակում դա լիովին տեսանելի է: 2021թ. հոկտեմբերի վերջին Երևանի խնդրանքով ԵԱՀԿ-ն ուղարկել է մեկշաբաթյա առաքելություն՝ հակամարտության վիճակը գնահատելու համար, սակայն դա որևէ արդյունք չտվեց: Երկարաժամկետ առաքելության գաղափարը պաշտպանում են Ֆրանսիան և ԱՄՆ-ն: Ֆրանսիայի ներկայացուցիչը պնդում էր, որ դա ամենաօպտիմալ տարբերակն է, քանի որ բոլոր շահագրգիռ կողմերը ԵԱՀԿ անդամ պետություններ են: Ադրբեյջանը ԵԱՀԿ նախընթաց միջնորդական գործունեությունը Մինսկի խմբի ձևաչափով, համարում է անհաջող և չի տեսնում հիմքեր, որ այն կարող է օգտակար լինել Երևանի հետ հարաբերությունների կարգավորման հարցում:

ԵՄ-ն 2022թ. կարճաժամկետ քաղաքացիական դիտորդական առաքելություն ուղարկեց Հայաստան, սակայն որևէ արդյունք տեսանելի չէ: Չնայած մի շարք մտահոգությունների, ԵՄ-ն 2023թ. հունվարի 23-ին որոշեց երկու տարով Հայաստան ուղարկել մի նոր առաքելություն, որը պետք է «նպաստի կայունությանը սահմանա-

⁷¹ **Andrei Roxana Gabriela**, Nagorno-Karabakh: Why do Peace Processes Fail ‘From the Inside’? *Conflict Studies Quarterly*, 2019, 27, April 2019, 21-38, DOI:10.24193/csq.27.2

մերձ շրջաններում, ... վստահության ամրապնդմանը» և «ապահովի խաղաղ բանակցություններին նպաստող իրավիճակ»:⁷² Ադրբեյջանցի պաշտոնյաները, մատնացույց անելով ռուս խաղաղապահների առաքելությունը Լեռնային Ղարաբաղում, ԵՄ նախաձեռնությունը համարում են ոտնձգություն իրենց ինքնիշխանության նկատմամբ, և ցանկանում են, որ այն դադարեցվի:

Այս առաքելությունն ունի այլ լուրջ դժվարություններ ևս: Խիստ խնդրահարույց է Ռուսաստանի համագործակցությունն այս հարցում, քանի որ Մոսկվան հայտարարել է. «Կրեմլն ավելի ու ավելի է համոզվում, որ պետք է հրաժարվել այն երկրների ու ինստիտուտների հետ համագործակցությունից, որոնք ռազմական օգնություն են ցուցաբերում Ուկրաինային և Ռուսաստանի դեմ կիրառում են պատժամիջոցներ, քանի որ դա կընկալվի որպես Ռուսաստանի նկատմամբ նրանց թշնամական քաղաքականության հաստատում»: Եվս մեկ խնդիր է առաքելության մանդատն ու ֆինանսավորումը: Կարծիք կա, որ ԵՄ նախաձեռնությունը «լավագույն հնարավորություններն է տրամադրում սեպտեմբերյան ռազմական գործողությունների կրկնման կամ ընդլայնման վտանգը նվազագույնի հասցնելու համար»⁷³, սակայն ակնհայտ է, որ անհրաժեշտ է ոչ թե դիտորդական առաքելության տեղակայում Հայաստանում՝ անորոշ խնդիրներով, այլ խաղաղարար առաքելության, քանի որ ցանկացած պահի կարող է կրկին բռնկվել լայնամասշտաբ ռազմական ագրեսիա: Հետևաբար խնդրի իրական լուծում ապահովելու միակ իրական հնարավորությունը ՄԱԿ ԱԽ համապատասխան բանաձևի ընդունումն է և դրա հիման վրա խաղաղարար առաքելության ձևավորումը: Ընդ որում, Կոսովոյում

⁷² Armenia: EU establishes a civilian mission to contribute to stability in border areas, <https://www.consilium.europa.eu/en/press/press-releases/2023/01/23/armenia-eu-sets-up-a-civilian-mission-to-ensure-security-in-conflict-affected-and-border-areas/>

⁷³ Averting a New War between Armenia and Azerbaijan. *Crisis Group Europe*. Report N°266, 30 January. Accessed 4 January, 2023. <https://www.crisisgroup.org/europe-central-asia/caucasus/nagorno-karabakh-conflict/266-averting-new-war-between-armenia-and-azerbaijan>

և Արևելյան Թիմորում խաղաղարար առաքելությունների իրականացման և միջազգային վարչակազմի միջոցով պետության կառուցման փորձը վկայում է, որ այդ գործընթացը հանդիպում է լուրջ խնդիրների, երբ հաշվի չեն առնվում տեղի առանձնահատկությունները՝ կիրառվում է «դատարկ թաղանթի» մոտեցումը:⁷⁴

Եզրակացություն

1. Որպես կանոնադրական նպատակների իրականացման հիմնարար գաղափարներ խաղաղարար առաքելությունների ձևավորումն ու ինքնորոշման սկզբունքը կարևոր տեղ են զբաղեցնում ռազմական ագրեսիաների, պատերազմների ու մարդասիրական աղետների կանխարգելման կամ դադարեցման ՄԱԿ իրավական գործիքակազմում, սակայն դրանց կիրառումը բախվում է լուրջ խոչընդոտների քաղաքական, հատկապես՝ աշխարհաքաղաքական գործոնի ազդեցությամբ:

2. Աշխարհաքաղաքական տրանսֆորմացիաների ընթացքում լարվածության մեծացմանը զուգընթաց զգալիորեն նվազում են հակամարտությունների խաղաղ կարգավորման և բռնությունների ու պատերազմների կանխման հնարավորությունները: Պատերազմների կանխման ու խաղաղարարության ՄԱԿ գործիքակազմը բավարար է կազմակերպության գլխավոր առաքելության իրականացման համար, սակայն ԱԽ մշտական անդամների վետոյի իրավունքի կիրառումը՝ շահերի բախման, հատկապես՝ նոր աշխարհակարգի ձևավորման եզրափակիչ փուլում, հաճախ խոչընդոտում է այդ գործիքակազմի արդյունավետ կիրառմանը:

3. Խաղաղարար առաքելության և ինքնորոշման հակամարտությունների կարգավորման իրականացումը ՄԱԿ-ից բացի այլ միջազգային կազմակերպությունների (ԵԱՀԿ, ԵՄ և այլն) միջոցով ունի խիստ ցածր արդյունավետություն՝ դրանց

⁷⁴ Lemay-Hebert N., 2011

գործիքակազմերի սահմանափակության պատճառով: Հետևաբար կարգավորման գործընթացի ճգնաժամային փուլում սուր հակամարտությունների կարգավորումը պետք է իրականացվի ՄԱԿ գործիքակազմի միջոցով:

4. Աշխարհաքաղաքական տրանսֆորմացիաների, հատկապես նոր աշխարհակարգի ձևավորման եզրափակիչ փուլում ՄԱԿ կանոնադրական նպատակների իրականացման և մարդասիրական աղետների կանխարգելման նպատակով անհրաժեշտ է ակտիվ վերահսկողական գործունեություն ծավալել հատկապես չկարգավորված հակամարտությունների գործընթացների նկատմամբ:

5. Արևելյան Թիմորի, Կոսովոյի և Լեռնային Ղարաբաղի հակամարտությունների կարգավորման գործընթացների տրամաբանությունները լիովին համապատասխանում են աշխարհաքաղաքական տրանսֆորմացիաների դինամիկային: Երբ ինքնորոշվող կողմի քաղաքական կարգավիճակի որոշման քայլերն իրականացվում են արագ և ավարտվում են տրանսֆորմացիայի սկզբնական փուլում, գործընթացը հաջողությամբ ավարտվում է (Արևելյան Թիմորի դեպք): Երբ քայլերն իրականացվում են դանդաղ ու գործընթացը տեղափոխվում է տրանսֆորմացիայի հաջորդ փուլ, այն դանդաղում է ու չի ավարտվում (Կոսովոյի դեպք): Երբ գործընթացը սկսվում է միջանկյալ փուլում ու տեղափոխվում է եզրափակիչ փուլ, գործընթացը հետընթաց է ունենում, կարող է այլասերվել և անգամ հանգեցնել մարդասիրական աղետի (Լեռնային Ղարաբաղի դեպք):

6. Վերջին դեպքում նոր աշխարհակարգի ձևավորման համար ազդեցիկ պետությունների պայքարի եզրափակիչ փուլում ռազմական ագրեսիայի և պատերազմական գործողությունների ծավալման նկատմամբ ՄԱԿ ԱԽ մշտական անդամների ոչ համարժեք արձագանքի բնորոշ օրինակ է Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը: 2020թ. պատերազմական գործողությունների վերսկսումից հետո ստեղծված իրավիճակում անբավարար է Ռուսաստանի միջնորդական ու խաղաղարար գործունեությունը, որը չունի միջազգային իրավունքի ու մեխանիզմների հիման վրա

սահմանված կարգավիճակ ու չի կարող կանխել մարդասիրական աղետը՝ ցեղասպանությունից և էթնիկ գտումներից խուսափելու համար: Այլասերվել է ինչպես հակամարտության հիմնախնդիրն, այնպես էլ միջնորդական ձևաչափը: Իրավիճակի շտկման ու աղետի կանխման միակ հնարավորությունը ՄԱԿ խաղաղարար առաքելության ձևավորումն է՝ կարգավորման գործընթացի համար հիմք ընդունելով ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ձևաչափով ՄԱԿ ԱԽ երեք մշտական անդամների ներկայացուցիչների մշակած սխեման:

International peacekeeping activities under the conditions of the new world order formation: The cases of East Timor, Kosovo and Nagorno-Karabakh

TIGRAN TOROSYAN

Brusov State University

Over the past decades, significant progress has been made in international law towards the formation of the instruments of the UN peacekeeping mission and the legal basis for addressing self-determination conflicts. This has enabled to prevent a number of impending wars and to settle several conflicts. The academic circles have developed various models to identify the reasons why the UN Security Council decided to intervene in those cases. Nevertheless, not all the factors influencing the SC decisions have been fully explored. The article examines the impact of one of these factors, i.e. geopolitical transformations, on the implementation of the UN peacekeeping missions, for the purpose of settling self-determination disputes. It is proposed to consider it on the basis of the three-stage model of the struggle for a new world order. For each of these stages, the article presents the possibilities of the implementation of the UN peacekeeping mission, its obstacles and the ways to overcome them, drawing on the cases of East Timor, Kosovo and Nagorno-Karabakh. These cases ideally match in terms of the parameters of self-determination conflicts, thereby providing for high reliability of the conclusions. The study reveals that the dynamics of geopolitical transformations creates serious obstacles for international peacekeeping, in particular at their final stage regarding the acute conflicts of interests of the permanent members of the UN SC.

DOI: 10.19266/1829-4286-2023-01-45-78

**Զանգվածային ոճրագործությունների կանխարգելման
հնարավորությունները ժամանակակից աշխարհում.
Լեոնային Ղարաբաղի հակամարտության դեպքը**

ՄԱՐԳԱՐԻՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Վ. Բոյունովի անվան պետական համալսարան

Հոդվածում քննարկվում են ժամանակակից աշխարհում զանգվածային ոճրագործությունների դրսևորումներին առնչվող հարցեր՝ պատերազմներն ու զինված հակամարտությունները դիտարկելով որպես բարենպաստ միջավայր կամ իրավիճակի մաս, որոնցում այդ ոճրագործությունները պլանավորվում և իրականացվում են: Զանգվածային ոճրագործությունների դրդապատճառները և զոհերի խոցելիության հավանականությունը նվազեցնելուն միտված գործողությունների շրջանակի վերլուծության նպատակով առանձնակի ուշադրություն է դարձվում նման հանցագործությունների կանխարգելմանն ուղղված միջազգային իրավական հիմքերին ու դրանց ոչ արդյունավետ կիրառման պատճառներին: Հոդվածում նաև առաջարկվում է զանգվածային ոճրագործությունների՝ վաղ փուլում կանխարգելման ռազմավարություն, որը կարող է կիրառվել հակամարտային տարբեր գոտիներում: Որպես օրինակ դիտարկվել է Լեոնային Ղարաբաղի հակամարտությունը, որի զարգացման տարբեր փուլերում միջազգային հանրության կողմից Ադրբեյջանի զանգվածային ոճրագործությունների դրսևորումների չդատապարտված լինելու հանգամանքն ավելի է սաստկացրել այդ պետության ռազմատենչ նկրտումները, ստեղծել ամենաթողության ու անպատժելիության մթնոլորտ՝ չբացատրելով նոր պատերազմի հրահրման ու զանգվածային ոճրագործությունների արձանագրման հավանականությունը:

Բանալի բառեր

Զանգվածային ոճրագործություններ, Լեոնային Ղարաբաղ, հակամարտություն, միջազգային իրավունք, պաշտպանելու պատասխանատվություն

Նախաբան

Ժամանակակից պատերազմներն ու զինված հակամարտությունները բարդ ու ոչ գծային համակարգեր են, որոնք չեն ենթարկվում պատերազմավարության դասական կանոններին, չափազանց անկանխատեսելի են դրանց ելքերը, միտումները կարող են փոփոխվել երկրաչափական պրոգրեսիայով: Դրանց բնույթը թույլ է տալիս համադրել և համաժամանակյա կիրառությունն ապահովել զինված պայքարի տարբեր ձևերի, մարտավարությունների և հնարքների համար՝ ապահովելով բարձր արդյունավետություն և սիներգետիկ ազդեցություն ու հետևանքներ: Ժամանակակից պատերազմների «հիբրիդայնացումը» էապես ջնջել է պատերազմի և խաղաղության միջև սահմանը և «հիբրիդայնացման» հետևանքներից մեկն էլ, ինքնին, ոչ պետական զինված խմբավորումների ներգրավումն է ռազմական գործողություններում¹, ինչը լրջագույն սպառնալիք կարող է հանդիսանալ ոչ միայն պետական (կանոնավոր) զինված ուժերի, այլ նաև խաղաղ բնակչության համար: Այդ «անկանոնությունն» առավել նպաստավոր պայմաններ է ստեղծում զանգվածային ոճրագործությունների իրականացման համար²: Ավելին, քաղաքական ներգործության, միջազգային իրավունքի երկիմաստ մեկնաբանությունների, միջազգային իրավական տարբեր ատյանների կողմից ընդունված որոշումների կատարման հետևողականության բացակայությունը, միջազգային հանրության ոչ պատշաճ, իսկ, երբեմն էլ հանցավոր անտարբերության պայմաններում զինված հակամարտությունները դառնում են նման վայրագություններ իրականացնելու համար լիարժեք նպաստավոր պայմաններ: Իրատեսական չէ նաև զանգվածային ոճրագործությունների տարատեսակ դրսևորումների դիտարկումն ու վերլուծությունը՝ որպես միջազգային քաղաքական

¹ **Petrosyan M.**, The Role of Non-State Actors in Modern Warfare: The Case of Syria and Nagorno-Karabakh, *Journal of Balkan and Near Eastern Studies*, 2023, pp. 1-18, <https://doi.org/10.1080/19448953.2023.2233364>

² Violent Nonstate Actors as Perpetrators and Enablers of Atrocity Crimes, 56th Annual Strategy for Peace Conference, The Stanley Foundation, 2015, pp. 1-8

իրողություններից գատ տեղի ունեցող իրադարձությունների, քանի որ դրանք ոչ միայն սերտորեն փոխկապակցված են, այլ նաև քաղաքական տարբեր իրողությունների դինամիկ ընթացքն ու երբեմն էլ ամենաթողության մթնոլորտն է հանգեցնում նմանատիպ հանցագործությունների իրականացմանը³։ Ավելին, միջազգային իրավունքի զարգացման ամենավաղ փուլերից սկսած միջազգային քրեական արդարադատության համակարգը կրել է քաղաքական գործընթացների ազդեցությունը։ Վերջիններս ոչ միայն խոչընդոտել են միջազգային քրեական իրավունքի կիրարկման գործընթացին, այլ նաև թելադրել արդարադատության յուրօրինակ «սցենարներ»⁴։

Պատերազմներն ու զինված հակամարտությունները որպես զանգվածային ոճրագործությունների իրականացման նպաստավոր պայմաններ

Զանգվածային ոճրագործությունները հիմնականում մեկուսացված կամ պատահական իրադարձություններ չեն։ Ընդհակառակը, դրանք հակված են զարգանալ դինամիկ գործընթացներում։ Սովորաբար բռնության կիրառմանը նախորդում են համապատասխան ներուժի զարգացումը, ռեսուրսների մոբիլիզացումը, նպատակների իրագործման համար նպաստավոր պայմանների ստեղծումը (առաջատար պետություններին, մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպություններին, միջազգային տարբեր կազմակերպությունների համապատասխան ստորաբաժանումներին, անհատ իրավապաշտպաններին և բարձր քաղաքական պաշտոններ զբաղեցնող անհատներին աջակցություն) ստեղծումը, և նպատակին հասնելու համար այլ հասակ քայլերի իրականացումը։ Պետք չէ բացառել նաև, որ զանգվածային ոճրագործություններ իրականացնելու ցանկությունը կարող է ձևավորվել առավել ուշ փուլում՝ հակամարտության

³ **Maogoto J.**, War crimes and Realpolitik: International justice from World War I to the 21st century, 2004, Lynne Rienner Publishers, Boulder, Colo., 2004.

⁴ **Maogoto J.**, 2004

զարգացման գործընթացին զուգահեռ: Այնուամենայնիվ, զանգվածային ոճրագործությունների իրականացման մտադրությունը կարող է բացահայտվել և կանխատեսվել նաև նախընթաց շրջանում, եթե հաշվի են առնվում դրանց իրագործման նախադրյալները, ցուցիչները, աշխարհաքաղաքական նպաստավոր պայմանները, ռազմատենչ հայտարարություններն ու հակամարտության պատմական ասպեկտները: Վերոնշյալն առավել ընդգծված դրսևորումներ ունի հատկապես ցեղասպանության կամ էթնիկ զտման իրականացման դեպքում, որին նախորդում է համապատասխան գաղափարախոսական, կազմակերպական, նախապատրաստական և այլ աշխատանքների իրականացում:

Պատերազմներն ու զինված հակամարտությունները դիտարկելով որպես բարենպաստ միջավայրի կամ իրավիճակի մաս՝ կարելի է կանխատեսել դրանց իրագործման հավանական սցենարները, ժամկետները, մեխանիզմները, շրջանակը: Զանգվածային ոճրագործությունների դրդապատճառները և զոհերի խոցելիության հավանականությունը նվազեցնելուն միտված գործողությունների բնույթը փոխելու համար անհրաժեշտ է, որ ՄԱԿ-ը, միջազգային ու տարածաշրջանային կազմակերպությունները և ազգային կառավարություններն առաջնորդվեն բացառապես միջազգային իրավական սկզբունքներով և գործեն անաչառ: Այլ կերպ՝ հանցագործությունների կատարումը կանխելու համար կարող է պահանջվել հրաժարում կողմերի նկատմամբ կողմնակալ վերաբերմունքից: ՄԱԿ-ն այս երկընտրանքի հետ բախվել է անցյալում տարբեր ճգնաժամերի համատեքստում (հատկապես Բալկաններում 1990-ականների սկզբին⁵ և Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունում խաղաղապահ առաքելության իրականացման ժամանակ⁶): Անկողմնակալությունից հրաժարումը կարող է էապես ազդել տարածաշրջանային և

⁵ **Pilch F., Derdzinski J.**, The UN Response to the Balkan Wars Reflections on the Balkan Wars: Ten Years After the Break Up of Yugoslavia, 2004, pp 93-117.

⁶ **Lee B.**, Peacekeeping, the Congo, and zones of peace, *Peace Review*, 1997, 9, 2, pp. 189-191.

միջազգային կազմակերպությունների ընկալվող օրինականության վրա և սահմանափակել փոխզիջումների կամ քաղաքական կարգավորման հնարավորությունները: Երկրորդ՝ զանգվածային ոճրագործությունների կանխարգելումը (հատկապես նպատակաուղղված միջոցառումների միջոցով) պահանջում է պատրաստակամություն և կարողունակություն, քանի որ անհրաժեշտություն կա աշխատելու ոչ միայն և ոչ այնքան ինքնիշխան պետությունների (նաև չճանաչված պետությունների), այլ անհատների հետ՝ որպես հանցագործ կամ հավանական զոհ⁷:

Զանգվածային ոճրագործությունների նախապատրաստման և իրականացման, ինչպես նաև կանխարգելիչ միջոցառումների ճշգրիտ պլանավորման համար առանցքային նշանակություն ունի նախորդող գործընթացներին և, մասնավորապես, այդ ոճրագործությունների էսկալացիային նպաստող գործոնների հաշվառումը: Բռնության աճման այդ գործընթացը բնորոշելու համար առանձնացվում են երեք փուլեր⁸:

1. Զանգվածային ոճրագործությունների իրականացման հիմնական ռիսկային գործոնների առկայություն կամ զարգացում: Նմանատիպ ռիսկերի շարքին են դասվում նախկինում կատարված ոճրագործությունների դեպքերը, ամբողջատիրական և ավտորիտար վարչակարգերի առկայությունը, օրենքի գերակայության բացակայությունը, մարդու իրավունքների պաշտպանության հետ կապված խնդիրները, կոնֆլիկտայնության բարձր մակարդակը տվյալ պետության տարածքում և այլն:

2. Ցնցումների և մոբիլիզացիայի փուլ: Այս փուլում զանգվածային ոճրագործությունների իրականացման վտանգը վերածվում է սպառնալիքի: Այսինքն, ճգնաժամային իրավիճակի՝ զանգվածային բռնության կիրառման եղանակներով լուծելու հավանականությունը վերածվում է իրական հնարավորության: Մա

⁷ **Reike R., Sharma S., Welsh J.**, A Strategic Framework for Mass Atrocity Prevention, Paper 03, 2013, <https://www.acmc.gov.au/sites/default/files/2018-11/3-2013-A-Strategic-Framework-for-Mass-Atrocity-Prevention.pdf>

⁸ **Reike R., Sharma S., Welsh J.**, 2013

ենթադրում է, որ այդ ոճրագործությունների իրագործման ընթացքում կարող են կիրառվել տվյալ պետության ՁՈԻ-ը, այլ ուժային կառույցներ (Ազգային անվտանգության ծառայություն, Ոստիկանության զորքեր և այլն), ներգրավվել ոչ պետական զինված դերակատարներ, հանցավոր խմբերի ներկայացուցիչներ և այլն: Այլ կերպ ավտորիտար վարչակարգերը չեն կարողանա «դիմակայել ոչինչի մշտական բարձր մակարդակին»⁹:

3. Արտակարգ իրավիճակի հասունացման փուլը բնորոշվում է առճակատումներով, զանգվածային ոճրագործությունների ապագա գոհերի վրա համակարգված հարձակումներով և բնության տարբեր այլ ձևերի կիրառմամբ: Խոցելի խմբերի ինքնապաշտպանության փորձերը հանգեցնում են բախումների թվի և ինտենսիվության մակարդակի մեծացման՝ ստեղծելով մասսայական բռնությունների կիրառման համար նպաստավոր պայմաններ:¹⁰

Մրանք հստակ նշաններ են, որ եթե կանխարգելիչ միջոցներ չձեռնարկվեն, ապա զանգվածային վայրագություններ են սկսվելու: Որոշ դեպքերում այս փուլում ձեռնարկվող գործողությունները հիմնականում ուղղված են լինելու բռնության էսկալացիայի կանխմանը, որն արդեն դրսևորվել է ոչ այնքան համակարգված ձևով:

Զանգվածային ոճրագործությունների տեսակներն ու դրանց իրավական ամրագրումները

2005թ. ՄԱԿ-ի համաշխարհային գազաթնաժողովի ժամանակ պետությունների և կառավարությունների ղեկավարները ճանաչեցին յուրաքանչյուր պետության պատասխանատվությունը՝ պաշտպանելու այդ պետությունների բնակչությանը չորս հանցագործություններից՝ ցեղասպանություն, պատերազմական հանցա-

⁹ **Bellamy A.**, Mass Atrocities and Armed Conflict: Links, Distinctions, and Implications for the Responsibility to Prevent, The Stanley Foundation, 2011, p. 12

¹⁰ **McLoughlin, Bellamy A.**, Preventing Genocide and Mass Atrocities: Causes and Paths of Escalation, 2009, p. 50

գործություններ, մարդկության դեմ հանցագործություններ և էթնիկ զտումներ: Առաջին երեք հանցագործությունները իրավաբանորեն սահմանված են տարբեր միջազգային իրավական փաստաթղթերում, ինչպիսիք են 1948 թվականի Յեդասպանության հանցագործությունը կանխելու և պատժելու մասին կոնվենցիան¹¹, 1949 թվականի Ժնևի կոնվենցիաները և 1977 թվականի դրանց լրացուցիչ արձանագրությունները¹² և 1998 թվականի Հռոմի միջազգային քրեական դատարանի կանոնադրությունը¹³: Դրանց՝ որպես միջազգային հանցագործություններ կարգավիճակը հիմնված է այն համոզմունքի վրա, որ դրանց հետ կապված գործողությունները ազդում են մարդու արժանապատվության վրա ինչպես խաղաղ, այնպես էլ պատերազմական ժամանակներում:

Յեդասպանությունը գործողություն է, որը կատարվել է ցանկացած ազգային, էթնիկ, ռասայական կամ կրոնական խմբի ամբողջությամբ կամ մասամբ ոչնչացնելու մտադրությամբ, ներառյալ՝ խմբի անդամների սպանություն, խմբի անդամներին լուրջ մարմնական կամ հոգեկան վնաս պատճառելը, կենսապայմանների կանխամտածված վատթարացումը և այլն: 1948թ. դեկտեմբերի 9-ին, ՄԱԿ-ի նախաձեռնությամբ ընդունվեց «Յեդասպանության հանցագործության կանխման և դրա համար պատժի մասին» կոնվենցիան: Ըստ կոնվենցիայի, այն ստորագրող պետությունները պարտավորվում են կանխել, ինչպես նաև պատժել ցեղասպանություն իրականացնողներին: Եվ, որպեսզի հանցագործությունը ճանաչվի որպես ցեղասպանություն, հանցագործների կողմից պետք է լինի ազգային, էթնիկ, ռասայական կամ կրոնական խմբի ֆիզիկական ոչնչացման ապացուցված մտադրություն:

¹¹ Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide, <https://ihl-databases.icrc.org/en/ihl-treaties/genocide-conv-1948> (01.05.2023)

¹² The Geneva Conventions of 1949 and their Additional Protocols, <https://www.icrc.org/en/doc/war-and-law/treaties-customary-law/geneva-conventions/overview-geneva-conventions.htm> (01.05.2023)

¹³ Rome Statute of the International Criminal Court, <https://www.icc-cpi.int/sites/default/files/RS-Eng.pdf>, (01.05.2023)

Պատերազմական հանցագործությունները կարող են իրականացվել ինչպես ռազմական գործողություններին անմիջական մասնակցություն ունեցող անձանց, այնպես էլ քաղաքացիական բնակչության նկատմամբ: Դրանք կարող են արձանագրվել և միջազգային, և ոչ միջազգային զինված հակամարտությունների ժամանակ: Հակամարտության՝ միջազգային և ոչ միջազգային չափումները հստակեցնելն ունի առանցքային նշանակություն, քանի որ դրանով պայմանավորված փոխվում են նաև պատերազմական հանցագործությունների տարրերն ու այդ խնդիրներին վերաբերող միջազգային իրավական շրջանակները: Պատերազմական հանցագործությունների վերաբերյալ առավել տարբերակված շրջանակ է ներկայացված Հռոմի ստատուտում, որում առանձնացվում են պատերազմական հանցագործությունների չորս հիմնական կատեգորիաներ: Միջազգային զինված հակամարտությունների պարագայում՝ 1949թ. Ժնևի կոնվենցիաների կոպիտ խախտումներ (դիտավորալ սպանություն, խոշտանգում, անմարդկային վերաբերմունք, ռազմական անհրաժեշտությամբ չհիմնավորված և ապօրինի դիտավորությամբ գույքի խոշոր չափերի ոչնչացում և յուրացում և այլն), օրենքների և սովորույթների այլ լուրջ խախտումներ (կանխամտածված հարձակումներ խաղաղ բնակչության վրա, քաղաքացիական օբյեկտների և բնակավայրերի թիրախավորում և այլն), իսկ ոչ միջազգային զինված հակամարտությունների պարագայում՝ 1949թ. Ժնևի կոնվենցիաների ընդհանուր 3-րդ հոդվածի լուրջ խախտումներ (կյանքի և անձանց նկատմամբ բռնություն), օրենքների և սովորույթների այլ լուրջ խախտումներ (կանխամտածված հարձակում խաղաղ բնակչության վրա, կանխամտածված գործողություններ կրոնի, կրթության, պատմամշակութային ժառանգության դեմ, հիվանդանոցների և հիվանդների թիրախավորում և այլն) :

Հիմնական միջազգային իրավական փաստաթուղթը, որում ամրագրված են մարդկության դեմ ուղղված հանցագործությունների գործողությունները և տեսակները Միջազգային քրեական դատարանի Հռոմի ստատուտն է: Այդ կատեգորիայում ներառվում

են հանցագործություններ, ինչպիսիք են՝ սպանությունը, բնաջնջումը, բնակչության տեղահանումը կամ բռնի տեղափոխումը, խոշտանգումները, ապարտեիդը, բռնի տեղահանումը և այլն: նմանատիպ գործողությունները չեն կարող պատահական լինել, այլ մեկ ընդհանուր, պլանավորված ծրագրի մաս են կազմում, կարող են տարածվել մեծ աշխարհագրական տարածքներում: Միջազգային իրավունքում տեսանկյունից հստակության և իրավական հիմքերի տեսանկյունից առավել խոցելի է բռնիկ գտումներներն են, քանի որ այն միջազգային իրավունքում ճանաչված չէ որպես անկախ հանցագործության տեսակ: Առաջին անգամ այս եզրույթը կիրառվել է ՄԱԿ-ի ԱԽ և Գլխավոր ասամբլեայի բանաձևերում Հարավսլավիայում 1990-ականների տեղի ունեցած գործընթացներին վերաբերելի մասում: Այն նաև ամրագրվել է նախկին Հարավսլավիայի միջազգային քրեական տրիբունալի մեղադրական եզրակացության մեջ: Ընդհանուր առմամբ, բռնիկ գտումները բնորոշվում են որպես «մեկ էթնիկ կամ կրոնական խմբի կողմից մշակված կանխամտածված քաղաքականություն՝ բռնության և ահաբեկչության միջոցով մեկ այլ էթնիկ կամ կրոնական խմբի քաղաքացիական բնակչությանը որոշակի աշխարհագրական տարածքներից հեռացնելու համար»: Այդ գործողությունները կարող են տարբեր դրսևորումներ ունենալ՝ սպանություն, կամայական ձերբակալություն, խոշտանգում, սեռական ոտնձգություններ, քաղաքացիական բնակչության թիրախավորում և խոցում և այլն: Այս համատեքստում անդրադարձ կա նաև բժշկական անձնակազմի, այդ թվում՝ Կարմիր խաչի աշխատակիցների նկատմամբ իրականացվող բռնի գործողություններին:

Քրեական պատասխանատվության մեխանիզմները զանգվածային ոճրագործությունների համատեքստում

Ինչ վերաբերում է զանգվածային ոճրագործությունների իրականացման պարագայում քրեական պատասխանատվության

մեխանիզմներին, ապա այն ունի երկու հիմնական չափում՝ անհատական և պետական պատասխանատվություն¹⁴։ Իհարկե, չեն բացառվում նաև համատեղ պատասխանատվության դեպքերը, ինչն էլ, իր հերթին, կարելի է դիտարկել երկու ուղղությամբ։ Առաջին կատեգորիան ներառում է համատեղ կամ համաձայնեցված գործողությունների արդյունքում առաջացած զանգվածային ոճրագործությունների համար համատեղ պատասխանատվություն։ Կարելի է խոսել երկու կամ ավելի պետությունների, պետության և մեկ այլ պետության զինված խմբավորումների քաղաքական կամ ռազմական առաջնորդների, ինչպես նաև բազմաթիվ անհատների համատեղ գործողությունների մասին։ Երկրորդ կատեգորիան ներառում է այն դեպքերը, երբ չկան համաձայնեցված գործողություններ, օրինակ, երբ զանգվածային ոճրագործություններ են կատարվում մի պետությունում, իսկ մյուս պետությունները չեն կատարում դրանք կանխելու իրենց պարտականությունները, ինչպես Սիրիայի դեպքում էր¹⁵։ Այս կատեգորիան կարելի է վերագրել նաև Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցած զանգվածային ոճրագործությունների դրսևորումներին հակամարտության զարգացման տարբեր փուլերում։

Ակնհայտ է, որ զանգվածային ոճրագործությունների համար պատասխանատվությունը չի կարող դիտվել բացառապես որպես պետական պատասխանատվության կամ անհատական քրեական պատասխանատվության խնդիր, քանի որ միջազգային կազմակերպությունները կամ այլ ոչ պետական դերակատարներ կարող են տարբեր աստիճանով ներգրավվել կամ դիտորդներ լինել գործընթացներում։ հետևաբար, առավել ճշգրիտ կլինի հավաքական ոճրագործությունների իրագործում եզրույթը՝ հաշվի առնելով նաև պատասխանատվության կիսման անհրաժեշտությունը։ Այս պարագայում պատասխանատվությունը կարող են կիսել

¹⁴ **Zyberi G.**, Responsibility of States and Individuals for Mass Atrocity Crimes, In book: *The Practice of Shared Responsibility in International Law*, 2017, pp.236-262

¹⁵ **Nikoghosyan H.**, Government Failure, Atrocity Crimes and the Role of the International Criminal Court: why not Syria, but Libya, *The International Journal of Human Rights*, 2015, **19**, 8, 1240-1256.

անհատները, պետությունները, միջազգային կազմակերպությունները, ոչ պետական դերակատարները և այլն: Ուստի, զանգվածային ռճրագործությունների կանխարգելումը պետք է ներառի համակցված ջանքեր՝ տարբեր դերակատարների ներգրավմամբ:

Այնուամենայնիվ, զինված հակամարտությունների ժամանակ կատարված զանգվածային ռճրագործությունների փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ անհատական և պետական պատասխանատվության դրսևորումները շատ տարբեր են, իսկ տարբերությունները մեծապես պայմանավորված են աշխարհաքաղաքական տարբեր գործընթացներով, համապատասխան քաղաքական կամքի դրսևորմամբ կամ դրա բացակայությամբ, միջազգային իրավունքի նորմերի ու մեխանիզմների հնարավորություններով և այլն: Բայց և այնպես, անհերքելի է այն փաստը, որ պատասխանատվության առումով առավել պարտավորություններ ունեն պետությունները, քանի որ տիրապետում են նման հանցագործությունների կանխարգելման գործիքակազմին, ավելին, ունեն հստակորեն ամրագրված միջազգային պարտավորություններ՝ ոչ միայն զերծ մնալու նման հանցագործությունների իրականացումից, այլ նաև պաշտպանել քաղաքացիական բնակչությանը դրանց իրականացումից:

Անհերքելի է, սակայն, որ զանգվածային ռճրագործությունների իրագործումը սովորաբար պահանջում է պետական կառույցների առնվազն նվազագույն մասնակցություն կամ «լուռ համաձայնություն»: Պետությունների և անհատների՝ ռճրագործությունների իրականացման հարցում պատասխանատվության կիսման դեպքերը բազմաթիվ են՝ Հարավսլավիա, Ռուանդա, Կամբոջա, Սուդան, Սիրիա և այլն: Այնուհանդերձ, վիճահարույց հարցերից զխավորը կապված է նմանատիպ իրադարձություններին արձագանքի և պատժի մեխանիզմներին կիրառման հետ: Տարբերակված մոտեցումներ կան նաև յուրաքանչյուր առանձին

դեպքում պատասխանատվության օբյեկտի (անհատ, թե պետություն) ընտրության վերաբերյալ¹⁶:

Միջազգային քրեական դատարանի Հռոմի ստատուտը հստակորեն սահմանում է, որ մարդկության դեմ ուղղված հանցագործությունների թվին է դասվում նաև բնակչության տեղահանումը կամ բռնի տեղափոխումը մշտական բնակչության վայրից: Այս պարագայում բռնի եզրույթը ենթադրում է ոչ միայն ֆիզիկական բռնությունը, այլ նաև դրա սպառնալիքը, հոգեբանական ներագդեցությունը, իշխանության չարաշահման միջոցով վախի կամ հարկադրանքի կիրառումը և այլն: Հարկադիր տեղահանումը վերաբերում է իրավիճակին, երբ անձը չունի ազատ կամ իրական ընտրություն՝ մնալու այն տարածքում, որը համարվել է իր մշտական բնակչության վայրը: Հետևաբար մարդկության դեմ կատարված հանցագործությունների իրագործման ժամանակ այդ ասպեկտի անտեսումը կարող է անդամալի հետևանքներ ունենալ և և միջազգային իրավական ատյանները պետք է հաշվի առնեն բոլոր հանգամանքներն ու տեղահանության հիմնական պատճառները, միջավայրն ու դրա փոփոխության վրա ազդող գործոնները իրավական ճշգրիտ գնահատական հնչեցնելու և նման հանցագործություններ իրականացնող անհատներին ու պետություններին միջազգային իրավունքի համապատասխան պատժի ենթարկելու նպատակով: Վերոգրյալը հստակորեն վերաբերում է Սուդանի արևմուտքում գտնվող Դարֆուր շրջանում տեղի ունեցած իրադարձություններին, որոնց արդյունքում 2.5-3 մլն. մարդ լքեց իր մշտական բնակչության վայրերը, իսկ ավելի քան 300000-ը զոհվեցին: 2008թ. Միջազգային քրեական դատարանը Սուդանի առաջնորդ Օմար ալ-Բաշիրին ձերբակալելու թույլտվություն է տվել Դարֆուրում իրականացված ցեղասպանության և էթնիկ զտումների

¹⁶ **Zyberi G.**, Responsibility of States and Individuals for Mass Atrocity Crimes, In book: The Practice of Shared Responsibility in International Law, 2017, pp.236-262

համար¹⁷: Այնուամենայնիվ, դատարանի կողմից ներկայացված սանկցիաները չեն իրագործվել, իսկ ալ-Բաշիրը շարունակել է պաշտոնավարել Սուդանում մինչև 2019 թ.¹⁸:

2005թ. ՄԱԿ անդամ պետությունները քննարկեցին և շրջանառության մեջ դրեցին «Պաշտպանելու պատասխանատվություն» (Responsibility to Protect, R2P) սկզբունքը՝ մարդասիրական միջամտության համար: Սկզբունքը ստեղծում է հիմքեր մարդասիրական միջամտության համար՝ նպատակ ունենալով կանխել ցեղասպանությունները, պատերազմական հանցագործությունները, էթնիկ զտումները և մարդկության առջև կատարված հանցագործությունները¹⁹: Սկզբունքը ենթադրում է երեք հիմնական քայլեր՝ կանխարգելել, արձագանքել, վերակառուցել²⁰: Այսպիսով, նախ սահմանվում է, որ յուրաքանչյուր պետության պատասխանատվությունն է պաշտպանել սեփական բնակչությանը ցեղասպանությունից, պատերազմական հանցագործություններից, էթնիկ զտումներից և մարդկության դեմ կատարվող այլ հանցագործություններից: Երկրորդ, միջազգային հանրությունը պետք է խրախուսի և աջակցի պետություններին՝ իրականացնելու այդ պատասխանատվությունը: Միջազգային հանրության պատասխանատվությունը՝ Կանոնադրության VI և VIII գլուխներին համապատասխան: Եվ երրորդ, պետությունը պետք է օգտագործի դիվանագիտական, մարդասիրական և այլ խաղաղ միջոցներ՝ բնակչությանը վերը նշված հանցագործություններից պաշտպա-

¹⁷ AL Bashir Criminal Case., <https://www.icc-cpi.int/darfur/albashir> , Warrant of Arrest for Omar Hassan Ahmad Al Bashir, <https://www.icc-cpi.int/court-record/icc-02/05-01/09-1> (12.06.2023)

¹⁸ **Shabas W.**, Atrocity crimes (genocide, crimes against humanity and war crimes), In W. Schabas (Ed.), *The Cambridge Companion to International Criminal Law*, Cambridge Companions to Law, 2015, pp. 199-213.

¹⁹ **Simon D.**, Building State Capacity to Prevent Atrocity Crimes: Implementing Pillars One and Two of the R2P Framework, Policy Analysis Brief, 2012, pp. 1-12.

²⁰ **Berdal M.**, Revisiting the “Responsibility to Protect” and the Use of Force, *Asian Journal of Peacebuilding*, 2019, 11, 2, 239-264

նելու համար²¹: Անհրաժեշտության դեպքում, երբ խաղաղ միջոցները բավարար չեն, իսկ ազգային իշխանություններն ակնհայտորեն ի վիճակի չեն վերոհիշյալ չորս հանցագործություններից պաշտպանել սեփական բնակչությանը, միջազգային հանրությունը՝ հաշվի առնելով հստակ հանգամանքները և համագործակցելով համապատասխան տարածաշրջանային կազմակերպությունների հետ, կարող է Անվտանգության Խորհրդի միջոցով ժամանակին և վճռականորեն ձեռնարկել հավաքական գործողություններ՝ ՄԱԿ կանոնադրությանը համապատասխան՝ այդ թվում VII գլխի հիման վրա²²:

2008թ. ռուս-վրացական պատերազմից հետո ՌԴ հայտարարեց, որ միջամտությունը համապատասխանում է միջազգային իրավունքի նորմերին և լիովին տեղավորվում է Պաշտպանելու պատասխանատվությունը սկզբունքի շրջանակներում: Այնուամենայնիվ, սկզբունքը ենթարկվել է նաև խիստ քննադատության 2010թ. Լիբիայում տեղի ունեցած իրադարձություններից հետո: Սկզբունքի՝ գործնականում կիրառելու փորձերը բազմաթիվ են՝ Լիբիա՝ 2011թ. (իշխող վարչակարգի կողմից քաղաքացիական բնակչությանն ուղղված ճնշումներ)²³, Սիրիա, Քենիա 2007-2008թթ. (Էթնիկ լարվածություն նախագահական ընտրություններից հետո): Պաշտպանելու պատասխանատվությունը բավարար պատասխան չի տալիս այն առանցքային հարցին, թե ինչպե՞ս լավագույնս կանխել և, եթե կանխարգելումը ձախողվի, արձագանքել մարդու

²¹ The Responsibility to Protect and The Organization of American States: A Path Forward For Atrocity Prevention And Response in The Americas, <https://www.oas.org/fpdb/press/R2P-and-the-OAS.pdf> (11.15.2023)

²² **Մուրադյան Լ.**, Կանխարգելման պատասխանատվության կիրառման խնդիրներն ու հնարավորությունները, *Հայկական քաղաքագիտական հանդես*, 2021, 1, 05-26:

²³ **Nganje F.**, The rhetoric and practice of the international responsibility to prevent mass atrocities: Reflections on South Africa's peacebuilding role in South Sudan (2005–2013), *African Security Review*, 2017, 1, 1-18.

իրավունքների լայնածավալ խախտումներին և սպանություններին²⁴:

2007 թվականի փետրվարի 27-ին Արդարադատության միջազգային դատարանը կարևոր որոշում է կայացրել «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և պատժելու մասին կոնվենցիայի կիրառման մասին» Բոսնիա և Հերցեգովինան ընդդեմ Սերբիայի և Չեռնոգորիայի գործով: Դատարանը հայտարարեց, որ «կանխարգելելու» պարտավորությունը՝ համաձայն «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժելու մասին» կոնվենցիայի, պարտադրում է տարածքային առումով չսահմանափակված պարտավորություն: Ըստ Դատարանի, յուրաքանչյուր պետություն, որն ունի «կարողություն արդյունավետ կերպով ազդելու այն անձանց գործողությունների վրա, ովքեր ամենայն հավանականությամբ կկատարեն ցեղասպանություն», նույնիսկ եթե գտնվում են իր սահմաններից դուրս, պարտավոր է «օգտագործել իր համար ողջամտորեն հասանելի բոլոր միջոցները ցեղասպանությունը կանխելու համար»: Այս բոլոր իրավական պարտավորությունների և մեկնաբանությունների վրա հիմնված է «Պաշտպանության պատասխանատվություն» սկզբունքը, որը հաստատում է պետության առաջնային պատասխանատվությունը՝ պաշտպանելու իր բնակչությանը վայրագություններից: 2005 թվականի Համաշխարհային զագաթնաժողովի արդյունքների 138-րդ կետում ասվում է, որ պետությունները պարտավոր են կանխել ցեղասպանության, պատերազմական հանցագործությունների, էթնիկ զտումների և մարդկության դեմ հանցագործությունների կատարումը, ինչպես նաև այդ գործողությունների դրդումը: 139-րդ բաժինը հետագայում ընդգծում է միջազգային հանրության պատասխանատվությունը՝ կանխելու վայրագությունները՝ օգնելով պետություններին զարգացնել իրենց բնակչությանը պաշտպանելու կարողությունները և օգնելով ճգնաժամի մեջ գտնվող պետու-

²⁴ **Pingeot L.,** Obenland W., In whose name? A critical view on the Responsibility to Protect, Report, Global Policy Forum, 2014, p. 47.

թյուններին «մինչ ճգնաժամի և հակամարտությունների բռնկումը»: Այն դեպքերում, երբ պետությունները «բացահայտորեն ձախողել են» բնակչությանը զանգվածային հանցագործություններից պաշտպանելու իրենց պատասխանատվությունը, միջազգային հանրությունը նաև հայտարարում է իր պատրաստակամությունը «ժամանակին և վճռական կերպով» ձեռնարկել հավաքական գործողություններ՝ բնակչությանն այդ հանցագործություններից պաշտպանելու համար՝ օգտագործելով բոլոր առկա միջոցները՝ հաշվի առնելով ՄԱԿ-ի կանոնադրության և միջազգային իրավունքի սկզբունքները:

Ցեղասպանության կանխարգելման և պաշտպանության պատասխանատվության հարցերով ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի հատուկ խորհրդականները՝ տարբեր, բայց փոխլրացնող մանդատներով, միասին աշխատում են՝ առաջ մղելու ազգային և միջազգային ջանքերը՝ բնակչությանը ցեղասպանությունից, պատերազմական հանցագործություններից, էթնիկ զտումներից և մարդկության դեմ հանցագործություններից պաշտպանելու համար: Ցեղասպանության կանխարգելման հարցերով հատուկ խորհրդականը հանդես է գալիս որպես վաղ նախազգուշացման մեխանիզմի համակարգող՝ զգուշացնելով ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին և նրա միջոցով Անվտանգության խորհրդին իրավիճակների մասին, որոնցում կա ցեղասպանության վտանգ և համապատասխան առաջարկություններ է անում: Հատուկ խորհրդականը նաև պաշտպանում և մոբիլիզացնում է ՄԱԿ-ի համակարգը, անդամ պետությունները, տարածաշրջանային մեխանիզմները և քաղաքացիական հասարակությունը՝ համապատասխան կանխարգելիչ միջոցներ ձեռնարկելու համար: Աշխատելով Ցեղասպանության կանխարգելման հարցերով հատուկ խորհրդականի ընդհանուր ղեկավարության ներքո՝ Պաշտպանության պատասխանատվության հարցերով հատուկ խորհրդականը ղեկավարում է ՄԱԿ-ի, անդամ պետությունների կողմից պաշտպանության սկզբունքի և դրա իրականացման պատասխանատվության հայեցակարգային, քաղաքական, ինստիտուցիոնալ և գործառնական մշակումը,

տարածաշրջանային մեխանիզմներ և քաղաքացիական հասարակություն: Հարկ է նշել, որ կան ՄԱԿ-ի այլ գերատեսչություններ և կառույցներ, որոնց մանդատները վերաբերում են զանգվածային ոճրագործությունների կանխարգելմանը²⁵:

Առավել կարևոր հանգամանքներից մեկը հետաքննությունների մեխանիզմների ստեղծմանն աջակցելուն ուղղված գործողություններն են (մոբիլիզացիա), որը պահանջում է զգալի քաղաքական կամք ՄԱԿ-ի անդամ պետություններից, բացի այդ, երբեմն, մանդատի երկարաձգումը հաճախ հակասական է: Ստեղծվելուց հետո քննչական մեխանիզմները բախվում են նաև ապացույցներ հավաքելու մի շարք խոչընդոտների: Շատ դեպքերում հետաքննության մեխանիզմները ստեղծվում են ոչ թե զանգվածային ոճրագործությունների տեղի ունենալուց հետո, այլ խիստ անկայուն և բարդ օպերատիվ միջավայրերում, ոճրագործությունների իրականացման նախընթաց ժամանակաշրջանում, դրա ընթացքում կամ հետո: Ավելին, զանգվածային ոճրագործությունների հետաքննության մեխանիզմների ձևավորումը երբեմն իրակացվում է առանց համապատասխան պետությունների կառավարությունների համաձայնության: Բացի այդ, այդ կառավարությունները հաճախ խոչընդոտում կամ խափանում են փորձագետների և հանձնաժողովների աշխատանքը: Վերոգրյալն ուղղակիորեն վերաբերում է Սուդանում, Սիրիայում, Եմենում տեղի ունեցած իրադարձություններին: Առավել հետաքրքրական է Մյանմարի դեպքը, որտեղ ռոհինջանների նկատմամբ իրականացված բռնություններից հետո միջազգային հանրությունը քանիցս

²⁵ Framework of Analysis for Atrocity Crimes A tool for prevention, https://www.un.org/en/genocideprevention/documents/about-us/Doc.3_Framework%20of%20Analysis%20for%20Atrocity%20Crimes_EN.pdf (12.06.2023); **Aksenova M.**, Introduction: Breaking the Cycle of Mass Atrocities: Criminological and Socio-Legal Approaches to International Criminal Law. *Breaking the Cycle of Mass Atrocities: Criminological and Socio-Legal Approaches in International Criminal Law*. Ed. Marina Aksenova, Elies van Sliedregt and Stephan Parmentier. Oxford, Hart Publishing, 2019, pp. 3–26; **Dieng A., Welsh J.**, Assessing the Risk of Atrocity Crimes, *Genocide Studies and Prevention: An International Journal*, 2016, 9, 3, 4–12.

մեծացրեց այստեղ իրականացված զանգվածային ոճրագործություններից հետո դրանց համար պատասխանատու բարձրաստիճան քաղաքական գործիչների, պաշտոնյաների միջազգային քրեական հետապնդման պահանջը: Ավելին, 2018թ. ՄԱԿ-ի փորձագետների հրապարակած զեկույցի համաձայն Մյանմարի կառավարությունն ունեցել է ակնհայտ ցեղասպանական մտադրություններ ևս այդ նպատակով իրականացրել է նպատակաուղղված քաղաքականություն²⁶: Եվ սա այն դեպքում, երբ հանցագործների խումբն (պետություն) ունի զանգվածային ոճրագործություններ կատարելու շարժառիթ, դիտավորություն և հնարավորություն, իսկ զոհերի խումբը չունի սպառնալից հանգամանքներից պաշտպանվելու հնարավորություններ²⁷:

Զանգվածային ոճրագործությունների կանխարգելման ռազմավարությունը

Զանգվածային ոճրագործությունների կանխարգելումը բարդ և բազմագործոն գործընթաց է, որը սերտորեն կապված է ոչ միայն ներպետական ու տարածաշրջանային գործընթացների, այլ նաև միջազգային քաղաքական գործընթացների զարգացման դինամիկայի, աշխարհաքաղաքական տարբեր դերակատարների՝ կոնկրետ տարածաշրջաններում հետապնդած շահերի համադրման կամ հակադրամ գործընթացների հետ և այլն: Առանձնակի բարդ է նաև հակամարտությունների ընթացքում տեղի ունեցող զանգվածային ոճրագործությունների կանխարգելումը, քանի որ այդ դեպքում էական ազդեցություն է ունենում ոչ միայն հակամարտության բնույթը, զարգացման ընթացքը, ներգրավված տարածաշրջանային և արտատարածաշրջանային դերակատարների ազդեցությունը, այլ

²⁶ **Ware A., Laotides C.**, Myanmar's 'Rohingya' Conflict: Misconceptions and Complexity, *Asian Affairs*, 2019, **50**, 1, 60-79.

²⁷ **Atkins A.**, Atrocity Prevention and Response During Armed Conflict: Closing the Capability Gap, *APOJ*, 2016, **16**, 2, 1-15; Prevention and Mitigation of Genocide and Mass Atrocities Focus on East and Central Africa and the Islamic World, 2010, pp. 19-26

նաև թշնամանքի մթնոլորտը և հակամարտության կողմերի՝ հակառակորդի նկատմամբ վարվող տեղեկատվական և հիբրիդային պատերազմի ընթացքը: Վերջինիս դեպքում որպես հիմնական բնութագրիչ գծեր առանձնացվում են տեղեկատվական տեխնոլոգիաների, գերձգրիտ սպառազինության կիրառումը, ոչ պետական զինված դերակատարների ներգրավվածության և ազդեցության աճումը, հոգեբանական ներազդեցությունը²⁸, որոնք արդի փուլում զանգվածային ոճրագործությունների կիրառման ուղեկցող, երբեմն էլ նաև բարենպաստ միջավայր ստեղծող գործոններ են համարվում:

Զանգվածային ոճրագործությունների կանխարգելումը շարունակական գործընթաց է, որը պահանջում է մշտական ջանքեր՝ բարելավելու հասարակության դիմադրողականությունը նման հանցագործությունների նկատմամբ՝ ապահովելով օրենքի գերա-կայությունը և մարդու իրավունքների պաշտպանությունը՝ հիմնվելով խտրականության վերացման, օրինական և հաշվետու ազգային ինստիտուտների ստեղծման, կոռուպցիայի վերացման, ուժեղ և բազմազան քաղաքացիական հասարակության ձևավորման և բազմակարծիք լրատվամիջոցների աջակցություն վրա²⁹:

Ոճրագործությունների հիմնական պատճառների ու նախադրյալների վերհանումը կարող է հնարավորություն ընձեռել բացահայտելու ռիսկի գործոնները, որոնք կարող են հանգեցնել կամ հնարավորություն տալ դրանց կատարմանը, բացահայտել այն միջոցները, որոնք կարող են ձեռնարկվել պետությունների և միջազգային հանրության կողմից՝ դրանք կանխելու համար: Որքան ավելի վաղ հայտնաբերվեն ռիսկի գործոնները, այնքան ավելի մեծ է վաղ նախազգուշացման հնարավորությունը: Ժամանակի ընթացքում կանխարգելիչ գործողությունները դառնում են ավելի բարդ և

²⁸ Պետրոսյան Մ., Նորագույն տեխնոլոգիաների ազդեցությունը ժամանակակից պատերազմների և զինված հակամարտությունների հիբրիդային բնույթի վրա, *Հայկական բանակ*, 2022, (113), 85-99:


²⁹ Framework of Analysis for Atrocity Crimes A tool for prevention, https://www.un.org/en/genocideprevention/documents/about-us/Doc.3_Framework%20of%20Analysis%20for%20Atrocity%20Crimes_EN.pdf (12.06.2023)

թանկ: Եթե, օրինակ, բնակչության որոշակի խմբի նկատմամբ բռնության աճի դրդապատճառը ռիսկային ճանաչվի վաղ փուլում, ապա պետությունը կամ միջազգային հանրությունը պետք է մշակի ռազմավարություն՝ ուղղված այդ շարժառիթների վերացմանն ու թուլացմանը:

Այդ գործընթացը ֆորմալացնելու, հետևաբար դրա կազմակերպման ու իրականացման նպատակով առաջարկվում է կիրառել զանգվածային ոճրագործությունների կանխարգելման ռազմավարություն, որը բերված է Գծապատկեր 1-ում:

Առաջարկվող ռազմավարությունը ենթադրում է որոշակի հաջորդական քայլերի իրականացում, որոնք թույլ կտան վերլուծել նման հանցագործությունների իրականացման համար նպաստավոր պայմանների, միջավայրի ձևավորման վրա ազդող հիմնական գործոններն ու դրանց կանխման իրավական ու քաղաքական գործիքակազմերի կիրառման հնարավորությունները: Այս համատեքստում, թերևս, առաջնային նշանակություն ունի, միջազգային և տարածաշրջանային քաղաքական իրադարձությունների մշտադիտարկումը, ազդակների վերհանումը կամ «ախտորոշումը» որն առավել արդիական է հակամարտային գոտիներում և այն տարածաշրջաններում, որտեղ լարվածության մակարդակը բավական բարձր է, իսկ ճգնաժամային իրավիճակները՝ ոչ եզակի երևույթներ: Մշտադիտարկման արդյունքում հնարավոր է վերհանել իրավիճակների զարգացման օրինաչափությունները, վերլուծել դրանք և ներկայացնել հիմնական կանխատեսումները: Այս պարագայում կանխատեսումներն առավել առարկայական ու հիմնավորված կլինեն, քանի որ մշտադիտարկման փուլում կառանձնացվեն բոլոր հիմնական ազդող գործոնները, իսկ բացթողումների հավանականությունն առավել նվազ կլինի:

Գծապատկեր 1



Հաջորդ քայլը զանգվածային ոճրագործությունների իրակա-նացման ցուցիչների վերհանումն է (ըստ ռիսկի գործոնների): Խոսքը զանգվածային ոճրագործությունների վերլուծության շրջանակի³⁰ մասին է, որը մշակել է ՄԱԿ-ը 2014թ.: Ընդհանուր առմամբ, շրջանակը ներառում է վարքագծի մոդելներ, հանգամանքներ կամ տարրեր, որոնք ստեղծում են նպաստավոր միջավայր զանգվածային ոճրագործությունների իրագործման համար: Դա պահանջում է մի շարք գործոնների գնահատում՝ կապված ոչ միայն զինված հակամարտությունների ռիսկի, այլև ցանկացած այլ իրավիճակի հետ, որը կարող է ստեղծել «նպաստավոր» պայմաններ զանգվածային ոճրագործությունների համար³¹: Հատուկ ռիսկի գործոնները պայմանավորված են նրանով, որ յուրաքանչյուր հանցագործություն ունի տարրեր և պրեկուրսորներ, որոնք ընդհանուր չեն բոլոր երեք հանցագործությունների համար: Օրինակ՝ ցեղասպանության հանցագործությանը բնորոշ տարրերից մեկը ազգային, էթնիկ, ռասայական կամ կրոնական խմբին ամբողջությամբ կամ մասնակի ոչնչացնելու մտադրությունն է: Նման մտադրության նշանների կամ ապացույցների առկայությունը ցույց է տալիս ցեղասպանության ռիսկի աճ: Այսպիսով, համակարգում հայտնաբերված հատուկ ռիսկի գործոնները արտացոլում են հանցագործությունների իրավական սահմանումները, թեև դրանք չեն սահմանափակվում դրանցով բառի խիստ իմաստով և չեն հավակնում լինել դրանց գոյության քրեաիրավական ապացույցներ: Շրջանակի օգտագործմամբ կոնկրետ իրավիճակում բռնի հանցագործության ռիսկը գնահատելու համար դիտորդը կամ վերլուծաբանը պետք է օգտագործի ռիսկի գործոններ և ցուցիչներ՝ տեղեկատվության հավաքագրումն ու գնահատումը ուղղորդելու համար: Հավաքա-

³⁰ Framework of Analysis for Atrocity Crimes A tool for prevention, https://www.un.org/en/genocideprevention/documents/about-us/Doc.3_Framework%20of%20Analysis%20for%20Atrocity%20Crimes_EN.pdf (12.06.2023)

³¹ **Կիրակոսյան Մ.**, Զանգվածային ոճրագործությունների կանխարգելումը և ինքնորոշման հակամարտությունները, *Հայկական քաղաքագիտական հանդես*, 1, 2021, էջ 49-78:

գրված ամբողջ տեղեկատվության վերլուծությունը թույլ կտա պարզել, թե արդյոք որոշակի պետությունը և նրա բնակչությունը կարող են բռնության ենթարկվել կամ կան արդյոք պայմաններ զանգվածային ոճրագործությունների իրականացման համար:

Զանգվածային ոճրագործությունների վերլուծության շրջանակում ներառված են 14 գործոններ (Աղյուսակ 1):

Աղյուսակ 1 Զանգվածային ոճրագործությունների վերլուծության շրջանակ

Զանգվածային ոճրագործությունների վերլուծության շրջանակ	
Ընդհանուր ռիսկի գործոններ	
Ռիսկի գործոն 1	Զինված բախումներ կամ անկայունության այլ ձևեր
Ռիսկի գործոն 2	Մարդու իրավունքների, միջազգային իրավունքի և մարդասիրական իրավունքի լուրջ խախտումների արձանագրում
Ռիսկի գործոն 3	Պետական կառույցների թուլություն
Ռիսկի գործոն 4	Շարժառիթներ կամ խթաններ
Ռիսկի գործոն 5	Զանգվածային ոճրագործություններ կատարելու կարողություն
Ռիսկի գործոն 6	Մեղմացուցիչ գործոնների բացակայություն
Ռիսկի գործոն 7	Նպաստավոր հանգամանքներ կամ նախապատրաստական գործողություններ
Ռիսկի գործոն 8	Հրահրող գործոններ
Հատուկ կամ լրացուցիչ ռիսկի գործոններ (ըստ հանցագործության տեսակի)	
Ցեղասպանություն	
Ռիսկի գործոն 9	Միջխմբային լարվածություն կամ պաշտպանության տակ գտնվող խմբերի նկատմամբ խտրականության տարբեր դրսևորումներ

Ռիսկի գործոն 10	Պաշտպանության տակ գտնվող խմբին ամբողջությամբ կամ մասամբ ոչնչացնելու մտադրության նախանշաններ
Մարդկության դեմ ուղղված այլ հանցագործություններ	
Ռիսկի գործոն 11	Քաղաքացիական բնակչության դեմ լայնամասշտաբ կամ համակարգված հարձակման նշաններ
Ռիսկի գործոն 12	Խաղաղ բնակչության վրա հարձակման ծրագրի կամ քաղաքականության առկայության նշաններ
Պատերազմական հանցագործություններ	
Ռիսկի գործոն 13	Լուրջ սպառնալիքներ միջազգային մարդասիրական իրավունքով պաշտպանված անձանց համար
Ռիսկի գործոն 14	Լուրջ սպառնալիքներ մարդասիրական կամ խաղաղապահ գործողությունների համար

Որոշակի ռիսկի գործոնների առկայությունը հաստատող տեղեկությունը երբեմն ավելի դժվար է ձեռք բերել վաղ փուլում: Երկրորդ, որքան շատ են ռիսկի գործոնները (և ավելի շատ համապատասխան ցուցանիշներ), այնքան մեծ է վայրագություն կատարելու ռիսկը: Բացի այդ, որքան մեծ է տվյալ ռիսկի գործոնի գնահատականը, այնքան բարձր է տվյալ գործոնի նշանակությունն ու դերը կոնկրետ իրավիճակում: Երրորդ, ռիսկի գործոնները և ցուցանիշները չեն դասակարգվում, քանի որ դրանց հարաբերական նշանակությունը կախված է կոնկրետ իրավիճակից: Նույնիսկ եթե զինված հակամարտությունը ճանաչվել է որպես ամենաուժեղ կամ ամենակարևոր ռիսկի գործոնը, զինված հակամարտությունը նախապայման չէ բոլոր ոճրագործությունների համար. ցեղասպանությունը և մարդկության դեմ հանցագործությունները կարող են տեղի ունենալ խաղաղ ժամանակ: Իհարկե, որոշ ռիսկային գործոններ ավելի մեծ քաջ ունեն, քան մյուսները, կամ ավելի հաճախ են տեղի ունենում, քան մյուսները: Այնուամենայնիվ,

դրանք բոլորն էլ նպաստում են ոճրագործություններ կատարելու ռիսկի մեծացմանը³²:

Այս փուլում առանցքային նշանակություն ունի հաշվառելը, որ ռիսկի գործոններից անգամ մեկի առկայության պարագայում քանիցս մեծանում է դրա իրականացման հավանականությունը և կարող է նպաստավոր պայմաններ ստեղծել այ ռիսկի գործոնների առաջացման կամ զարգացման համար:

Հաջորդ փուլում հարկ է առանցնացնել առաջացած ռիսկերի ու խնդիրների կարգավորման միջազգային իրավական հիմքերն ըստ շրջանակում ներառված գործոնների համախմբի՝ յուրաքանչյուր անգամ հստակեցնելով ռիսկերի գործոնների համախումբն ու դրանց միջև առկա փոխկապվածությունը: Այս փուլն անմիջականորեն կապված է խնդիրների կարգավորման քաղաքական (աշխարհաքաղաքական) բաղադրիչի վերհանման հետ, որն իրավացիորեն կարելի է համարել ամենաբարդը՝ հաշվի առնելով ազդեցության տարբեր ձևերն ու խնդիրների չափազանց լայն շրջանակը:

Իրավիճակի զարգացման հնարավոր սցենարների մշակման փուլում պետք է հաշվի առնվեն բազմաթիվ փոփոխականների համակցված ազդեցությունները: Մշակված սցենարի հավաստիությունը կախված է մի քանի հիմնական չափանիշներից, ինչպես, օրինակ, համապատասխանություն, հավաստիությունը և տարբերակումը: Ազգային անվտանգության ապահովումը, ազգային շահերի պաշտպանությունը, բնակչությանը զանգվածային ոճրագործություններից պաշտպանելը կենսական խնդիրներ են, որոնց ապահովումն ուղիղ ու անմիջական կապ ունի ռազմավարական վերլուծության հետ: Փոփոխվող և անկայուն ռազմավարական միջավայրը, որտեղ կոնկրետ սպառնալիքներն ու խնդիրները դժվար է կանխատեսել, պահանջում է մարտահրա-

³² Framework of Analysis for Atrocity Crimes A tool for prevention, https://www.un.org/en/genocideprevention/documents/about-us/Doc.3_Framework%20of%20Analysis%20for%20Atrocity%20Crimes_EN.pdf (12.06.2023)

վերների արդյունավետ հաշվառմամբ պլանավորման իրականացում: Նման միջավայրում սցենարային պլանավորման իրականացումը անփոխարինելի արդյունավետություն կարող է ունենալ: Ավելին, հիբրիդային սպառնալիքների, նորագույն տեխնոլոգիաների, անհամաչափ գործողությունների պայմաններում սպառնալիքներին դիմակայելն ու բնակչության զանգվածային ոճրագործությունների տարատեսակ դրսևորումներից պաշտպանելը առավել արդյունավետ կլինի սցենարային պլանավորման հիման վրա հավանական իրադարձությունների կանխատեսման միջոցով: Սցենարային պլանավորումը, սակայն, ինքնանպատակ գործընթաց չէ: Դրա իրականացման նպատակը ճգնաժամային իրավիճակներում ռազմավարական որոշումների կայացման հեռանկարի ամրապնդումն է՝ իրավիճակային լուծումների և որոշումների փոխարեն: Սցենարներն, ինքնին, պետք է ներառեն նաև «գործողությունների պլաններ», որոնք տվյալ սցենարի իրականացման պարագայում ճանապարհային քարտեզի գործառույթ կիրականացնեն՝ բաշխելով պատրականությունների շրջանակն ըստ պատասխանատու գերատեսչությունների՝ հնարավորություն ստեղծելով առավելագույնս երաշխավորել բնակչությանը զանգվածային ոճրագործություններից:

Եվ, վերջապես, վերջին փուլը ենթադրում է գործողությունների մոդելավորման իրականացում, այն է՝ արդյունավետ քաղաքականության մշակում՝ հիմնվելով քաղաքական նախընթաց գործընթացները արդյունավետ վերլուծության վրա: Այդ վերլուծություն թույլ կտա վեր հանել վարվող քաղաքականության բացերն ու մշակել զանգվածային ոճրագործությունների կանխարգելման առավել գործուն մեխանիզմներ:

Զանգվածային ոճրագործությունների իրականացման հնարավորությունները Լեռնային Ղարաբաղում

Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման ձգձգումն իրական վտանգ է ներկայացնում ինչպես Լեռնային Ղարաբաղի, այնպես էլ տարածաշրջանի կայունության և անվտանգության

համար: 1994թ. կնքված հրադադարից հետո կողմերի դիրքորոշումներում իրական փոփոխություններ տեղի չեն ունեցել, իսկ Ադրբեջանը դիտարկում է ռազմական գործողությունները, որպես հակամարտության կարգավորման միակ հեռանկար: Դրա վառ ապացույցը 2016թ. ապրիլին, ապա նաև 2020թ. սեպտեմբերին ադրբեջանական կողմի սանձազերծած պատերազմն էր, որով խախտվեց առանց այդ էլ փխրուն հրադադարը, ինչպես նաև 2021 թ. մարտին Փառուխ գյուղի մոտակայքում տեղի ունեցած իրադարձությունները, արդեն պարբերական դարձած հարձակումները ՀՀ ինքնիշխան տարածքի նկատմամբ և այլն: Լեոնային Ղարաբաղի դեմ ադրբեջանաթուրքական ագրեսիայի ընթացքում կիրառված մի շարք գործողություններ ու միջոցներ լիովին համապատասխանում են միջազգային իրավունքի փաստաթղթերով սահմանված պատերազմական ու մարդկության դեմ ուղղված հանցագործությունների չափանիշներին³³:

Քանի որ Լեոնային Ղարաբաղի հակամարտության զարգացման տարբեր փուլերում միջազգային հանրությունը չի դատապարտել Ադրբեջանի կողմից իրականացված զանգվածային ոճրագործությունների դրսևորումները, ավելի է սաստկացել այդ պետության ռազմատենչ նկրտումները:

ԼՂՀ միջազգային ճանաչման բացակայության պայմաններում մշտապես շատ բարձր է նոր զանգվածային ոճրագործությունների կատարման հավանականությունը: Ադրբեջանի սանձազերծած ռազմական գործողությունների ընթացքում արձանագրված զանգվածային ոճրագործությունների ի հայտ եկած դեպքերն ու միջազգային հանրության կողմից համապատասխան քաղաքական և իրավական գնահատական չտալու հանագամանքն ամենաթողության ու անպատժելիության մթնոլորտ է ստեղծել՝ չբացառելով նոր պատերազմի հրահրման ու զանգվածային ոճրագործությունների արձանագրման հավանականությունը:

³³ Պետրոսյան Մ., Զանգվածային ոճրագործությունների ազդեցությունը հակամարտությունների կարգավորման գործընթացի վրա. Լեոնային Ղարաբաղի դեպքը, *Հայկական քաղաքագիտական հանդես*, 2022, 1, 91-123:

Ուստի Լեռնային Ղարաբաղի հակամարտության համատեքստում արձանագրված զանգվածային ոճրագործությունների դեպքերի վերլուծությունն ու նմանատիպ ոճրագործությունների կանխարգելման գործուն ու արդյունավետ մեխանիզմների հստակեցումը, հնարավոր զարգացումների կանխատեսումն ու դրանց հակազդման արդյունավետ մեխանիզմների մշակումը խիստ արդիական ու կարևոր է՝ պայմանավորված սպառնալիքների վաղ ախտորոշման ու հակազդման հրամայականով:

Ադրբեջանի հակահայկական քաղաքականության ծայրահեղ դրսևորումներից հերթականը եղավ 2022 թ. դեկտեմբերի 12-ից Լեռնային Ղարաբաղը Հայաստանին կապող միակ ճանապարհի փակումը, որն ուղեցվեց գազի մատակարարման պարբերական դադարեցումներով, բեռների, դեղորայքի տեղափոխման արգելքով և այլն: Լաչինի միջանցքի արգելափակման հարցը ՀՀ նախաձեռնությամբ երկու անգամ քննարկվել է Արդարադատության միջազգային դատարանում: 2023 թ. փետրվարի 22 Արդարադատության միջազգային դատարանը հրապարակեց «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» միջազգային կոնվենցիայի շրջանակներում Հայաստանի և Ադրբեջանի կողմից ներկայացված հրատապ միջոցների կիրառման մասին միջնորդությունների վերաբերյալ փետրվարի 22-ին կայացված որոշումները: Այսպես, դատարանն իրավաբանորեն պարտավորեցնող որոշում էր կայացրել Ադրբեջանի դեմ՝ միաժամանակ մերժելով Ադրբեջանի հակընդեմ հայցը: Որոշմամբ³⁴ դատարանը սահմանում էր, որ առկա է հայերի իրավունքներին անդադնալի վնաս հասցնելու անմիջական վտանգ և Ադրբեջանը պարտավոր է ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները, որոնցով հնարավոր կլինի ապահովել Լաչինի միջանցքով անձանց, տրանսպորտային միջոցների և բեռների անխափան տեղաշարժը երկու ուղղություններով: Վերոնշյալ որոշման չիրականացմանը զուգահեռ

³⁴ Application of the International Convention on the Elimination of All Forms of Racial Discrimination (Armenia v. Azerbaijan), <https://www.icj-cij.org/node/202552>, (12.04.2023)

Ադրբեջանը անցակետ տեղադրեց Լաչինի միջանցքում: Արդեն այդ խնդրի լուծման նպատակով 2023թ. հուլիսի 6-ին Արդարադատության միջազգային դատարանը Հայաստանի հայցի հիման վրա հրապարակեց երկրորդ վճիռը³⁵, որով վերահաստատեց է փետրվարի 22-ի որոշումը, որով պարտավորեցրել էր Ադրբեջանին՝ ձեռնարկել բոլոր միջոցները երաշխավորելու Լաչինի միջանցքով քաղաքացիների, տրանսպորտային միջոցների և բեռների՝ երկու ուղղություններով անխափան տեղաշարժը:

Լաչինի միջանցքի փակումից ի վեր ակտիվ քննարկվում էր Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտում զանգվածային ոճրագործությունների իրականացման հավանականությունը: Մտավախությունները տեղին էին և դրսևորվեցին 2023թ. սեպտեմբերի 19-ին, երբ մի քանի օրվա ընթացքում ադրբեջանական զինված ստորաբաժանումների հարձակումներից հետո Արցախից հեռացավ ամբողջ բնակչությունը: Նման հանցագործությունների դրսևորումներ արձանագրվել են ոչ միայն Արցախյան երկու պատերազմների ընթացքում, այլ նաև հետընթաց գործընթացներում՝ ուղեկցվելով մարդկանց առևանգելու և խոշտանգելու գործողություններով, գերիների խոշտանգման դեպքերով և այլն: Այնուամենայնիվ, հարկ է նախ հասկանալ, թե ինչ գործոններ են ազդում այս տարածքում զանգվածային ոճրագործությունների իրականացման ռիսկերի մեծացման վրա: Առաջին նախապայմանը, թերևս, հասկանալն է, թե սովորաբար ինչ գործոններ են կապված լինում զանգվածային ոճրագործությունների իրականացման հավանականության հետ: Որոշիչ գործոնների ըմբռնումը անհրաժեշտ է նաև համապատասխան արձագանքի մեխանիզմներ մշակելու համար՝ ինչպես կարճաժամկետ՝ ուղղված հետևանքների մեղմացմանն ու կասեցմանը, այնպես էլ երկարաժամկետ հետանկարում՝ նպաստելով

³⁵ Application of the International Convention on the Elimination of All Forms of Racial Discrimination (Armenia v. Azerbaijan) Request for the modification of the Court's Order indicating a provisional measure, <https://www.icj-cij.org/sites/default/files/case-related/180/180-20230714-pre-01-00-en.pdf>, (07.07.2023)

դրանց: Զանգվածային ոճրագործությունների իրականացման պատճառների ու հավանականության վերլուծությունը սովորաբար կապված է երեք հիմնական հարցերի պատասխանների հետ.³⁶

1. Որո՞նք են զանգվածային ոճրագործությունների իրականացման ռիսկի մակրո պատճառները: Մակրո պատճառները սովորաբար չափվում են պետության մակարդակով և վերաբերում են այնպիսի հարցերի, ինչպիսիք են քաղաքական վարչակարգի տեսակը, հասարակության էթնիկ կազմը, սոցիալ-տնտեսական խնդիրները, տարածաշրջանային իրավիճակը, ԶՈՒ կազմն ու չափը և դրա կիրառման պատրաստակամությունը:
2. Որո՞նք են կարճաժամկետ դրդապատճառները, որոնք կարող են նախորդել զանգվածային ոճրագործությունների իրականացմանը: Կարճաժամկետ դինամիկան վերաբերում է ցեղասպանության կամ զանգվածային վայրագությունների անմիջապես նախորդող կամ վաղ փուլերում գտնվող ժամանակաշրջաններին, կարող են վերաբերել անվտանգության մթնոլորտի ձևավորմանը, ռազմատենչ հայտարարություններին, իրավիճակի պարբերական սրացումներ, հրադադարի ռեժիմի խախտումներ, մարտական դիրքերի փոփոխություններ և այլն: Այս ամենն, իհարկե, կարող է նպաստել լարված հարաբերությունների կամ բախումների ինտենսիվության մեծացմանը ինչպես տեղային, այնպես էլ տարածաշրջանային կամ միջազգային մակարդակներում:
3. Որո՞նք են բռնության դրդապատճառներն ու դինամիկան միկրո, անհատական և խմբային մակարդակներում: Ովքե՞ր են հանցագործները և ինչու են նրանք բռնություն գործադրում³⁷:

³⁶ **Straus S.**, Fundamentals of Genocide and Mass Atrocity Prevention, US Holocaust Memorial Museum, 2016, pp. 53-91

³⁷ **D'Alessandra F., Raj Singh Sh.**, Operationalizing Obligations to Prevent Mass Atrocities: Proposing Atrocity Impact Assessments as Due Diligence Best Practice, *Journal of Human Rights Practice*, 2022, 14, 769–793.

Ինչ վերաբերում է զանգվածային ոճրագործությունների կանխարգելման ազգային մեխանիզմներին, ապա դրանց առանձնահատկությունները պայմանավորված են նախ տվյալ պետության ազգային ու քաղաքական առանձնահատկություններով և չեն կարող ամբողջապես կրկնվել մեկ այլ պետության դեպքում: Ավելին, դրանց նույնական կիրառումը կարող է ունենալ անկանխատեսելի հետևանքներ, քանի որ կարող են անտեսվել մեկ այլ պետությանը, տարածաշրջանին, բնակչությանը բնորոշ գործոններ (օրինակ, քաղաքական, էթնիկ, կրոնական, տնտեսական, քաղաքակրթական, մշակութային և այլն): Թեև առկա բազմաթիվ տարբերություններին, կարելի է առանձնացնել չորս հիմնական ուղղություններ³⁸, որոնք կարող են կիրառելի լինել բոլոր պետությունների պարագայում: Առաջին ուղղությունը ներառում է ռիսկերի գնահատման ու վաղ նախազգուշացման փուլ, որը ներառում է նաև տվյալների հավաքագրումն ու վերլուծությունը՝ խոցելիության օրինաչափությունների բացահայտման ու ոճրագործությունների վաղաժամ հակազդման համար: Երկրորդ ուղղությունն ունի ռազմավարական կարևորագույն նշանակություն, քանի որ վերաբերում է կադրերի պատրաստման ու վերապատրաստման նպատակով իրականացվող միջոցառումներին: Այդ կադրերը ունակ կլինեն իրենց ներուժն օգտագործել կանխարգելիչ գործողությունների մշակման և տեղական, ազգային, տարածաշրջանային ու միջազգային մակարդակով դրանց ներկայացման համար: Երրորդ, մշակել և ներդնել համապատասխան քաղաքականություններ խոցելի բնակչությանը զանգվածային ոճրագործությունների ռիսկերից պաշտպանելու նպատակով: Եվ չորրորդ, տարածաշրջանային և միջազգային կազմակերպությունների հետ սերտ ու ակտիվ ջանքերի գործադրում զանգվածային ոճրագործությունների կանխարգելմանն առնչվող հարցերի շուրջ:

³⁸ **Capicotto S., Scharf R.**, National Mechanisms for the Prevention of Atrocities: National Mechanisms for the Prevention of Atrocities, *Genocide Studies and Prevention: An International Journal*, **11**, 3, 6-19.

Եզրակացություն

- Կարևորագույն նախապայման է զանգվածային ոճրագործությունների հավանականության դիտարկումը տարածաշրջանային և միջազգային զարգացումների համատեքստում՝ որպես մեկ ընդհանուր գործընթացի մաս, քանի որ հնարավոր չէ դիտարկել այդ գործընթացների կանխարգելման հնարավորությունները՝ չդիտարկելով ներհամակարգային կապերն ու դրանց միջև փոխկապվածությունը (միջազգային հարաբերությունների համակարգ, տարածաշրջան, պետություն է այլն): Միջազգային հանրության, միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև առանձին պետությունների կողմից քաղաքացիական բնակչությանը նման պաշտպանություն և երաշխիքներ չտրամադրելը կարող է պայմաններ ստեղծել վայրագությունների իրականացման համար:
- Ակնհայտ է, որ վերջին տարիների ՄԱԿ-ի և միջազգային իրավական տարբեր կառույցների կողմից ստեղծվել են համապատասխան իրավական բոլոր հիմքերը զանգվածային ոճրագործությունների կանխարգելման նպատակով, սակայն այդ մեխանիզմների՝ արդյունավետորեն կյանքի կոչման հիմնական խոչընդոտը շարունակում է համարվել համապատասխան միջազգային քաղաքական կամքի բացակայությունը: Դրանց իրագործման անհնարինության պայմաններում միջազգային ասպարեզում անպատժելիության մթնոլորտն առավել քան ընդգծվում է՝ հանգեցնելով նման հանցագործությունների իրականացման շղթայական գործընթացների մեկնարկի՝ քանիցս մեծացնելով զանգվածային ոճրագործությունների իրականացման հնարավորությունները որոշ տարածաշրջաններում և հակամարտային գոտիներում: ատարված հանցագործությունների նկատմամբ պատժի մեխանիզմների սահմանումը նախ և առաջ կարող է ունենալ կանխարգելիչ հետևանքներ՝ ստիպելով

պետությունների ու ոչ պետական դերակատարներին զերծ մնալ զանգվածային ոճրագործությունների իրականացնելու հեռանկարից:

- Լեռնային Ղարաբաղի ժողովրդին իր բնակության վայրեր վերադարձնելու, հակամարտության գոտում հնարավոր հետագա զանգվածային ոճրագործությունների իրագործումը կանխարգելելու նպատակով անհրաժեշտ է մեկտեղել ազգային, տարածաշրջանային և միջազգային ջանքերը՝ առանձնահատուկ դերակատարություն վերապահելով նաև Մփյուռքին: Սա թույլ կտա արձագանքման մշակույթը փոխարինել կանխարգելման մշակույթով՝ քանիցս մեծացնելով տարբեր դերակատարների (տարածաշրջանային և արտատարածաշրջանային դերակատարներ, միջազգային կազմակերպություններ, հակամարտության կողմեր և աջակցող խմբեր, միջազգային հանրություն և այլն) գործունեության արդյունավետությունն ու նպաստել Լեռնային Ղարաբաղում անվտանգային միջավայրի ապահովմանն ու զանգվածային ոճրագործությունների կանխարգելմանը:

**The possibilities of preventing mass crimes in the modern world.
The case of the Nagorno-Karabakh conflict**

MARGARIT PETROSYAN

Brusov State University

The article discusses issues related to the manifestations of mass crimes in the modern world, considering wars and armed conflicts as a favorable environment or part of the situation in which these crimes are planned and carried out. In order to analyze the motives of mass crimes and the scale of actions aimed at reducing the likelihood of vulnerability of victims, special attention is paid to the international legal framework aimed at preventing such crimes and the reasons for their ineffective application. The article also suggests a strategy for preventing mass crimes at an early stage, which can be applied in various conflict zones. The Nagorno-Karabakh conflict was considered as an example, the fact that the international community at various stages of development did not condemn the mass crimes of Azerbaijan, further aggravated the militant aspirations of this state, created an atmosphere of permissiveness and impunity, not excluding the possibility of unleashing a new war and committing mass crimes:

DOI: 10.19266/1829-4286-2023-01-79-102

**ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԱԴԱՍՍԱՎՈՐՈՒՄՆԵՐ
Ռուս-չինական էներգետիկ համագործակցությունը. Նոր
էներգետիկական աշխարհակարգի ձևավորման
մարտահրավերները**

ՎԱՀԵ ԴԱՎԹՅԱՆ

Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան

Հոդվածում ուսումնասիրվել են ռուս-չինական էներգետիկ օրակարգի առանցքային ուղղությունները: Ռուսաստանի և Չինաստանի էներգետիկ համակարգերի կառուցվածքային վերլուծության միջոցով բացահայտվել են դրանց առաջնահերթությունները, գնահատվել է այդ երկրների աշխարհաքաղաքական «զինանոցում» էներգետիկ գործոնի կարևորությունը: Ռուս-չինական էներգետիկ համագործակցությունը ուսումնասիրվել է Ռուսաստանի էներգետիկ անվտանգության ռազմավարական փաստաթղթերի հիմնադրույթների համատեքստում, գնահատվել է իրականացվող քաղաքականության համապատասխանությունը դրանցում արձանագրված հայեցակարգային մոտեցումներին ու սկզբունքներին: Այդ պրիզմայի միջով վերլուծվել է ասիական տրոն էներգետիկ աշխարհակարգի ձևավորման հեռանկարները: Հատուկ ուշադրություն է դարձվել ռուս-չինական էներգետիկ կապերին Ուկրաինայում ընթացող պատերազմի մեկնարկից ի վեր: Մասնավորապես, գնահատվել են էներգետիկ առևտրի ծավալները, ինչպես նաև դրանում ապադրյալացման ռազմավարության իրակա-նացման հնարավորությունները: Գնահատվել են «Միբիրի ուժը» և «Միբիրի ուժը-2» գազամուղների նշանակությունը և հեռանկարները ռուս-չինական էներգետիկ համագործակցության զարգացման համար:

Բանալի բառեր

Ռուսաստան, Չինաստան, էներգետիկա, անվտանգություն, աշխարհաքաղաքականություն, «Միբիրի ուժը», Ուկրաինա

Նախաբան

Ժամանակակից միջազգային հարաբերություններում էներգետիկ գործոնը շարունակում է մնալ առանցքայիններից մեկը՝ ստեղծելով ռիսկեր, ինչպես նաև մարտահրավերներ միջազգային անվտանգության ապահովման, ինչպես նաև կայուն զարգացման համար:

«Էներգետիկ աշխարհաքաղաքականություն» նոր միջգիտակարգային հետազոտական ուղղության ձևավորումը Էներգետիկ գործոնի համալիր քաղաքական գնահատման անհրաժեշտության ուղիղ արգասիքն է¹: Դրա ուշադրության կենտրոնում են նաև «Էներգետիկ վերափոխման»՝ ավանդականից վերականգնվող էներգետիկայի անցման, խնդիրները², ինչպես նաև տարածաշրջանային անվտանգության վրա էներգետիկ գործոնի ազդեցության գնահատումը³, որի կարևոր դրսևորումներից են ռուս-չինական էներգետիկ հարաբերությունները: Դրանք շարունակում են կարևոր դերակատարություն ունենալ միջազգային էներգետիկ ճարտարապետության ձևավորման գործում՝ հաշվի առնելով կողմերի երկարաժամկետ էներգետիկ զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների առկայությունը՝ արտահայտված ածխաջրածինների պաշարների, տնտեսական աճի ու լոգիստիկ հնարավորություններով: Միաժամանակ, այդ կապերը առանձնանում են աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական բովանդակությամբ և ուղղված են վերաձևավորելու համաշխարհային էներգետիկ շուկան՝ դարձնելով այն ավելի ասիակենտրոն:

Ռուսաստանի և Չինաստանի էներգետիկ համակարգերի ընդհանուր բնութագիրը

¹ *The Geopolitics of Global Energy: The New Cost of Plenty* (edited by Timothy C. Lehmann). Lynne Rienner Publishers, 2017.

² **Siddi M.** *The Geopolitics of the Energy Transition: Global Issues and European Policies Driving the Development of Renewable Energy*. Finnish Institute of International Affairs, December 2021 / https://www.fiia.fi/wp-content/uploads/2021/12/bp326_marco-siddi_the-geopolitics-of-the-energy-transition.pdf; *A New World: The Geopolitics of the Energy Transformation*. IRENA, 2019 / https://www.irena.org/-/media/files/irena/agency/publication/2019/jan/global_commission_geopolitics_new_world_2019.pdf

³ *Energy and Security: The Geopolitics of Energy in the Asia-Pacific* (Manjeet Singh Pardesi Amitav Acharya Premarani Somasundram and others). Institute of Defence and Strategic Studies, Nanyang Technological University, 2006. <https://www.files.ethz.ch/isn/26447/E%20&%20S%20book.pdf>

Ռուսաստան. Ռուսաստանի էներգետիկ համալիրը աշխարհում խոշորագույններից մեկն է: Ռուսաստանը համաշխարհային շուկայում էներգառեսուրսների մատակարարման առանցքային երկրներից է. զբաղեցնում է առաջին տեղը վառելիքային հանքային ռեսուրսների արտադրողների շարքում:

Վառելիքաէներգետիկ համալիրը կարևոր տեղ է զբաղեցնում Ռուսաստանի տնտեսության մեջ՝ էներգետիկային բաժին է ընկնում ՀՆԱ-ի մոտ 25%-ը, արդյունաբերական արտադրության ծավալի 30%-ը, դաշնային բյուջեի եկամուտների 50%-ը և արտահանումից ստացվող եկամուտների 65%-ը: Ռուսաստանի էներգետիկ հաշվեկշիռը բնութագրվում է բնական գազի բարձր տեսակարար կշռով՝ էներգիայի առաջնային աղբյուրների սպառման ընդհանուր ծավալում՝ գրեթե 55% (նավթի և նավթամթերքի մասնաբաժինը 19% է, ածխինը՝ 15%, հիդրոէներգիայինը՝ 6%, ատոմային էներգիայինը՝ 5%): Էլեկտրաէներգետիկայում գազի մասնաբաժինը ավելի բարձր է, այն հասնում է մոտ 70%-ի (առանձին շրջաններում՝ գրեթե 90%)⁴:

Նավթի պաշարներով Ռուսաստանը աշխարհում 7-րդն է՝ 10 մլրդ տ, կամ նավթի համաշխարհային ապացուցված պաշարների 6,2%-ը: Սակայն Ռուսաստանի նավթի երկրաբանական պաշարների պոտենցիալ գնահատումները 4-5 անգամ ավելի բարձր են: Միաժամանակ, գազի ոլորտում Ռուսաստանը համաշխարհային առաջատար է բոլոր հիմնական ցուցանիշներով՝ բնական գազի ապացուցված պաշարների ծավալը 47 տրլն խմ է, կամ բնական գազի համաշխարհային պաշարների 25%-ը, արդյունահանումը՝ 607 մլրդ խմ, արտահանումը՝ ավելի քան 200 մլրդ խմ, մայրուղային խողովակաշարերի երկարությունը՝ 155 հազ. կմ:

Ինչ վերաբերում է ածխային արդյունաբերությանը և էլեկտրաէներգետիկային, ապա այս ոլորտներում Ռուսաստանը առաջատար դիրքեր է զբաղեցնում: Ածխի ապացուցված պաշարներով Ռուսաստանը զբաղեցնում է աշխարհում երկրորդ տեղը՝ ԱՄՆ-ից հետո (այդ պաշարները կազմում են մոտ 160 մլրդ տ), իսկ ածխի

⁴ Олейнов А. Г., Топливо-энергетический комплекс мира. М.: Навона, 2008.

ընդհանուր երկրաբանական պաշարների ծավալով այն առաջին տեղում է՝ 5,3 տրլն տ կամ համաշխարհային պաշարների 30%-ը: Ռուսաստանն ունի աշխարհի խոշորագույն էլեկտրաէներգետիկ համակարգերից մեկը՝ 890 էլեկտրակայաններ՝ 215 ԳՎտ հզորությամբ (4-րդ տեղը աշխարհում՝ ԱՄՆ-ից, Չինաստանից և Ճապոնիայից հետո)⁵:

Չինաստան: Չինաստանում առկա տնտեսական աճը էներգառեսուրսների և էներգակիրների ներկրման շարունակական ավելացում է ենթադրում: Դրանով էլ պայմանավորված է Պեկինի կողմից իրականացվող էներգետիկ համակարգի բազմազանեցումը, որի արդյունքները ակներև են թե արտաքին էներգետիկ կապերի հաստատման ու զարգացման, թե ներքին արտադրության ոլորտներում⁶: Մինչև 1993թ. Չինաստանը գտնվում էր էներգառեսուրս արտահանողի կարգավիճակում (մասնավորապես, նավթի արտահանումը առավելապես իրականացվում էր Հարավային Կորեա և Ճապոնիա): Սակայն խորքային երկրաբանական հետազոտությունների և տեխնիկական արդիականացման ծրագրերի բացակայության պատճառով 1994 թ. ի վեր Չինաստանը սկսեց հանդես գալ որպես նավթի նետո-ներկրող⁷: 2003 թ. նավթ ներկրող երկրների ցանկում այն զբաղեցրեց երկրորդ տեղը՝ զիջելով ԱՄՆ-ին (ներկրումն իրականացվում է հիմնականում Մերձավոր Արևելքից, Աֆրիկայից, Ռուսաստանից): Դա չի նշանակում, որ Չինաստանում ամբողջությամբ դադարեցվել է նավթի արդյունահանումը. այն շարունակվում է հիմնականում Սինցզյան-Ույգուրյան շրջանում: Այնուամենայնիվ, արդյունահանվող նավթի ինքնարժեքը բավական բարձր է, ինչի պատճառով արտադրվող նավթամթերքի գինը մոտ

⁵ Նույն տեղում:

⁶ **Guilhot L.**, An analysis of China's energy policy from 1981 to 2020: Transitioning towards to a diversified and low-carbon energy system . *Energy Policy*. **162**, 2022, <https://doi.org/10.1016/j.enpol.2022.112806>

⁷ *Energy and Environment-References for Energy Policy and Planning*, Vol. 8, edited by Wang Qingyi. Ministry of Energy and Chinese Energy Research Society, February 1992.

40-50%-ով բարձր է ներկրվող նավթամթերքի գնից⁸: Այսօր Չինաստանի ներկրման բաժինը նավթի համաշխարհային շուկայում հասնում է 20%-ի, ինչը լուրջ աշխարհաքաղաքական հիմքեր է ձևավորում Պեկինի համար՝ թույլ տալով ազդեցություն ունենալ համաշխարհային էներգետիկ անվտանգության ճարտարապետության ձևավորման վրա⁹:

Չինաստանի էներգետիկ հաշվեկշռում առանցքային տեղ է զբաղեցնում ածուխը (մոտ 70%), որը հիմնականում օգտագործվում է արդյունաբերության մեջ: Սակայն այս ոլորտում ևս 1990-ականներին Չինաստանը որդեգրեց ներկրման քաղաքականությունը, ինչը ածխի ներքին շուկայում իրականացված ազատականացման արգասիք էր: Դրա արդյունքում չինական ածխի գինը մոտ 10 ԱՄՆ դոլարով գերազանցում է միջազգային շուկայում վաճառվող ածխի գինը: Վերջին շրջանում ածխի արդյունահանման տարեկան ցուցանիշներով Չինաստանը առաջ է անցել ԱՄՆ-ից, հավանաբար էկոլոգիական վնասների ու մարդկային կորուստների հաշվին: Բավական է նշել, որ տարեկան Չինաստանի ածխի հանքերում մահանում է մոտ 6000 մարդ: Հաճախ դա բացատրվում է ոլորտի ազատականացմամբ, ինչից հմտորեն օգտվում են մի շարք փոքր ու դեռ 19 դարի տեխնիկա շահագործող ընկերությունները: Ներկայումս Չինաստանում սպառվող ածխի հիմնական մասը ներկրվում է Ավստրալիայից ու Ինդոնեզիայից¹⁰:

Չինաստանում էլեկտրաէներգիայի արտադրությունն ունի հետևյալ կառուցվածքը.

⁸ China's Energy Conditions and Policies. Information Office of the State Council of the People's Republic of China December 2007 / <https://en.ndrc.gov.cn/policies-/202105/P020210527780237298276.pdf>

⁹ **Ferriggi K.**, *Security of Oil Supply in China*. Clingendael International Energy Programme, 2020, https://www.clingendaelenergy.com/inc/upload/files/CIEP_Briefing_Paper_2020-01_web_1.pdf

¹⁰ Coal Report 2020 / Asia Pacific Energy Research Centre (APERC) Institute of Energy Economics, Japan, 2020, https://aperc.or.jp/file/2020/10/9/2020_Coal_Report.pdf

- ածուխ՝ 67,5%,
- նավթ՝ 18%,
- հիդրոէներգիա՝ 7%,
- գազ՝ 5%,
- միջուկային էներգիա՝ 1%,
- վերականգնվող էներգիայի աղբյուրներ՝ 1,5%:¹¹

Դժվար չէ կռահել, որ այս պատկերը զգալիորեն նպաստում է CO₂ արտանետումների ավելացմանը՝ վտանգներ ստեղծելով Չինաստանի էներգետիկ ու էկոլոգիական անվտանգության համար: Գիտակցելով այս ռիսկը՝ դեռևս 2010թ. Պեկինը որդեգրել է էներգետիկ համակարգում համեմատաբար մաքուր վառելիքի՝ բնական գազի կշռի ավելացման քաղաքականությունը, ինչի իրականացումը խոշոր ենթակառուցվածքային ու միաժամանակ արտաքին քաղաքական լուծումներ է պահանջում: Կանխատեսվում է, որ առաջիկա տարիներին Չինաստանում բնական գազի սպառումը կազմելու է 200 մլրդ խմ, որից մոտ 120 մլրդ պետք է ապահովվի ներքին արդյունահանման միջոցով: Ուստի, ներկրման ուղիների զանազանեցման հետ մեկտեղ անհրաժեշտ է զարգացնել բնական գազի արդյունահանումը: Վերլուծությունները ցույց են տալիս, որ նշված սպառման կառուցվածքում շարունակաբար ավելանալու է՝ հեղուկացված գազի մասնաբաժինը: Դրա պահանջարկը Չինաստանում ու, հատկապես, արդյունաբերական առաջատար շրջաններում՝ Գուանդունում և Ֆուցզյանում, շարունակաբար աճում է¹²:

Ասիական տրոն էներգետիկ աշխարհակարգի ձևավորման նախադրյալները

2000-ականներից ի վեր Ասիան և ավելի լայն՝ Ասիական-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանը համաշխարհային էներգակիրների շուկայում հանդես է գալիս որպես գլխավոր սպառող, ինչը թույլ է տալիս տարածաշրջանի առանձին երկրներին ուղիղ

¹¹ **Кашин В.Б., Пятачкова А.С., Смирнова В.А., Поташев Н.А.,** *Развитие энергетики КНР в период 14-ой пятилетки (аналитическая записка)*, Высшая школа экономики, Москва, 2020. 24 с.

¹² **Сяньюй В.,** *Торгово-экономическое взаимодействия Китая и России в сфере поставок природного газа*, Диссертация... к-та э.н., СПб, 2021. 178 с.

ազդեցություն ունենալ համաշխարհային էներգետիկ անվտանգության ճարտարապետության ձևավորման վրա¹³։ Ավելին, առանցքային սպառողի կազավիճակն այդ երկրները հաճախ օգտագործում են որպես աշխարհաքաղաքական գործիք՝ տարածաշրջանից դուրս առանձին ռազմավարական խնդիրներ լուծելու համար։ Այդ երկրների շարքում նախ անհրաժեշտ է առանձնանցել Չինաստանն ու Հնդկաստանը, որոնք հատկապես կիրառվող միջազգային տնտեսական պատժամիջոցների պայմաններում օգնում են Մոսկվային շարունակել առանցքային դիրքեր զբաղեցնել համաշխարհային նավթագազային հատվածում։ Չինաստանը գնալով բազմազանեցնում է Ռուսաստանի հետ գազատրանսպորտային հաղորդակցությունը՝ միաժամանակ ավելացնելով ածխաջրածինների ներկրումը տնտեսական պատժամիջոցների ներքո գտնվող Իրանից։ Իր հերթին, 2022թ. ի վեր, Հնդկաստանը դարձել է Ռուսաստանից ներկրված նավթի վերամշակող՝ արտահանելով ստացված նավթամթերքը երրորդ երկրներ, այդ թվում՝ Եվրոպա¹⁴։

Ընդ որում, հարկ է ընդգծել, որ թե Չինաստանի, թե Հնդկաստանի աճող դեկալատարությունը համաշխարհային էներգետիկ շուկաներում պայմանավորված չէ բացառապես Ուկրաինայում ընթացող պատերազմի հետևանքով Մոսկվայի արտաքին էներգետիկ քաղաքականության զանազանեցման ռազմավարությամբ։ Որպես դինամիկ աճող տնտեսություններ՝ Չինաստանն ու Հնդկաստանը առաջիկայում ավելի մեծ ծավալի էներգիայի կարիք են զգալու՝ չսահմանափակվելով միայն ածխաջրածիններով, այլ շարունակաբար զարգացնելով միջուկային

¹³ Taghizadeh-Hesary F., Rasoulinezhad E., Yoshino N., Sarker T., Mirza N., Determinants of the Russia and Asia-Pacific Energy Trade. *Energy Strategy Reviews*. 2021, 38, DOI: 10.1016/j.esr.2021.100681

¹⁴ Kulik L., Russia-India Economic Cooperation: Current Trends and Promising Directions. *MGIMO Review of International Relations*. 2022, 16(2), 159-175.

էներգետիկան, ինչպես նաև վերականգնվող էներգետիկ աղբյուրների հիման վրա իրականացվող էլեկտրագեներացիան¹⁵:

Ասիական տրոն էներգետիկ աշխարհակարգի ձևավորման առկա նախադրյալների մասին է վկայում դեռևս 2015 թ. Միջազգային էներգետիկ գործակալության (ՄԷԳ) հրապարակած զեկույցը: Դրա համաձայն՝ 2040 թվականին, 2016թ. համեմատ, աշխարհում էներգիայի սպառումն աճելու է 30%-ով: ՄԷԳ-ի համաձայն՝ այդ ցուցանիշն առավելապես ապահովվելու է Չինաստանի ու Հնդկաստանի, ինչպես նաև Մերձավոր Արևելքի ու մասամբ՝ Աֆրիկայի ու Լատինական Ամերիկայի շնոհիվ: Հատկապես ընդգծվում է «ասիական վագրերի»՝ Ինդոնեզիայի, Մալայզիայի և Վիետնամի դերը: Հատկանշական է, որ ՄԷԳ-ը կանխատեսում է միջուկային էներգետիկայի տեսակարար կշռի կտրուկ աճ նշված երկրներում: Կանխատեսումների համաձայն՝ նույն ժամանակահատվածում էներգասպառման կրճատում է արձանագրվելու ԱՄՆ-ում, Եվրոպայում և Ճապոնիայում¹⁶:

Ասիական տրոն էներգետիկ աշխարհակարգի հիմքում է ընկած նաև միջազգային ֆինանսական հոսքերի շարունակական կենտրոնացումը ասիական «ֆինանսական մայրաքաղաքներում»՝ Շանհայում, Սինգապուրում, Հոնկոնգում, Պեկինում և այլն:

1. Այս ամենն առաջիկայում նոր լիցք է հաղորդելու հատկապես Հարավ-Արևելյան ու Հարավային Ասիայում ընթացող աշխարհա-քաղաքական մրցակցությանը, որի դրսևորումներն առկա են արդեն այսօր: Մասնավորապես, Չինաստանի «Գոտի և ճանապարհ» մեգանախագիծը (որը նաև էներգա-տրանսպորտային բաղադրիչ է պարունակում), G20-ի նախաձեռնած «Մերձավորարևելյան միջանցքը» (Հնդկաստան-Մերձավոր Արևելք-Եվրոպա), Հարավ-Արևել-

¹⁵ Young Chan-Kim., *China-India Relations: Geo-political Competition, Economic Cooperation, Cultural Exchange and Business Ties*. Springer, 2020.

¹⁶ World Energy Outlook 2015. International Energy Agency, 2015, <https://iea.blob.core.windows.net/assets/5a314029-69c2-42a9-98ac-d1c5deeb59b3/WEO2015.pdf>

յան Ասիայի երկրների ասոցիացիայի (ASEAN) նախաձեռնած ինտեգրման-ենթակառուցվածքային նախագծերը և այլն:

Ասիական տրոն էներգետիկ աշխարհակարգն բախվում է նաև մի շարք ռիսկերի, որոնք նշված աշխարհաքաղաքական մրցակցության ածանցյալներից են: Կարելի է առանձնացնել, մասնավորապես, Հարավչինական ծովի շուրջ լարվածության պարբերական մեծացումը, Մալակկայի ջրանցքում Չինաստանի ու ԱՄՆ-ի շահերի բխումը, ինչը նաև հետևանք է Սպրատկի կղզիների շուրջ լարվածության¹⁷: Այս շարքից է նաև Թայվանի խնդիրը, ինչպես նաև ԱՄՆ, Մեծ Բրիտանիայի և Ավստրալիայի AUKUS անվտանգության մասին պակտը՝ տարածաշրջանում Չինաստանի ազդեցությունը զսպելու նպատակով¹⁸: Նշված ռիսկերի հաղթահարման համար Չինաստանը ռազմավարական նոր որակ է հաղորդում Ռուսաստանի հետ հարաբերություններին՝ ձգտելով պահել ռուս-չինական երկխոսությունը ռազմավարական մակարդակում՝ եվրասիական երկու առանցքային դերակատարների շահերը սինխրոնիզացնելու, ասիական տրոն էներգետիկ աշխարհակարգում սեփական ազդեցությունը մեծացնելու նպատակով: Պեկինի այս ռազմավարությունն օբյեկտիվորեն գնահատելու նպատակով հարկ է անդրադառնալ ռուս-չինական հարաբերությունների զարգացման ընթացքին ու առանձնահատկություններին 2022 թ. առաջ և հետո:

Ռուս-չինական հարաբերություններ. ռազմավարական խորացում հայեցակարգային հակասությունների ներքո

Ժամանակակից ռուս-չինական հարաբերությունները Մոսկվան ու Պեկինը պաշտոնապես սահմանում են որպես «նոր

¹⁷ **Mitchell M.**, The South China Sea: A Geopolitical Analysis. *Journal of Geography and Geology*. 2016, 3, 14-25.

¹⁸ **Mickiewicz P.**, AUKUS as an Effective Response to the Prospective Limitation of American Domination in the Indo-Pacific, *Torun International Studies*, 2023, 1(18), 25-38.

դարաշրջան թեակով՝ համապարփակ գործընկերության և ռազմավարական փոխգործակցության հարաբերություններ»¹⁹, որի հիմնական սկզբունքներն ու զարգացման ուղղությունները արտացոլված են Ռուսաստանի և Չինաստանի միջև 2001թ. հուլիսի 16-ին կնքված բարիդրացիության, բարեկամության և համագործակցության մասին պայմանագրում: Ընդհանուր առմամբ, առ այսօր Մոսկվայի ու Պեկինի միջև կնքվել են ավելի քան 300 միջկառավարական պայմանագրեր և համաձայնագրեր, որոնք վերաբերում են համագործակցության գրեթե բոլոր ոլորտներին, ներառյալ ամենաբարձր մակարդակով ինտենսիվ շփումները, առևտրային, տնտեսական և հումանիտար կապերը, համագործակցությունը միջազգային ասպարեզում, ներառյալ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում հաճախ միասնական դիրքերից հանդես գալը, համատեղ մասնակցությունը միջազգային և տարածաշրջանային կազմակերպություններին (Համագործակցության շանհայան կազմակերպություն, BRICS) և այլն: Ռուսաստանի և Չինաստանի առաջնորդները հանդիպել են 40 անգամ, ընդ որում՝ ՌԴ նախագահ Վ. Պուտինը Չինաստան կատարած այցերի քանակությամբ գերազանցում է աշխարհի բոլոր քաղաքական առաջնորդների ցուցանիշները²⁰:

2005թ. երկու երկրների միջև վիճելի սահմանային հարցերի լուծման մասին համաձայնագիր կնքվեց, որի արդյունքում Չինաստանը ստացավ մի շարք վիճելի տարածքներ՝ 337 քառակուսի կիլոմետր տարածքով: Այնուամենայնիվ, Ռուսաստանի և Չինաստանի միջև միջսահմանային հարցի վերջնական լուծման անհրաժեշտությունը շարունակում է արդիական մնալ²¹: 2023թ.

¹⁹ Договор о добрососедстве, дружбе и сотрудничестве между Российской Федерацией и Китайской Народной Республикой (16 июля 2001 г.) // <http://www.kremlin.ru/supplement/3418>

²⁰ О российско-китайских отношениях стратегического партнерства // https://www.mid.ru/ru/foreign_policy/vnesnepoliticeskoe-dos-e/dvustoronnie-otnosenij-rossii-s-inostrannymi-gosudarstvami/strategiceskoe-partnerstvo-s-kitaem/

²¹ Bolt P., Sino-Russian Relations in a Changing World Order. *Strategic Studies Quarterly*. Winter, 2014. 48-70.

օգոստոսին Պեկինի կողմից պաշտոնակապես հաստատված նոր քաղաքական քարտեզում Ռուսաստանի որոշ տարածքներ, մասնավորապես՝ Ամուր գետի վրա գտնվող Մեծ Ուսսուրիական կղզին ներառվեց Չինաստանի կազմում (չնայած, որ 2008թ. կողմերը համաձայնագիր են կնքել կղզին երկու մասին բաժանելու վերաբերյալ)²²: Այսպիսով, տարածքային խնդիրները կարևոր տեղ են զբաղեցնում ռուս-չինական հարաբերություններում, ինչը, սակայն, չի խանգարում կողմերին շարունակել խորացնել ռազմավարական երկխոսությունը²³:

2022թ. ռուս-չինական հարաբերություններում տեղի ունեցան իրադարձություններ, որոնք վկայում են երկու պետությունների ռազմավարական մերձեցման մասին: Այն բանից հետո, երբ Չինաստանը հրապարակայնորեն պաշտպանեց Ռուսաստանի դիրքորոշումը եվրոպական անվտանգության երաշխիքների վերաբերյալ, փետրվարի 4-ին Վ.Պուտինն ու Սի Յզինպինը Պեկինում ստորագրեցին համատեղ հայտարարություն, որում Ռուսաստանը պատրաստակամություն դրսևորեց աջակցելու Չինաստանին մի շարք զգայուն տարածաշրջանային ու անվտանգային հարցերում: Մասնավորապես, Ռուսաստանը և Չինաստանը ամրագրեցին իրենց հավատարմությունը «մեկ Չինաստանի» սկզբունքին՝ մերժելով «որևէ ձևաչափով» Թայվանի անկախության գաղափարը²⁴: Նույն դիրքորոշումը Մոսկվան ունի նաև Տիբեթի պատկանելության մասին:

Երկկողմ հարաբերությունների կարևորագույն բաղադրիչը Ռուսաստանի և Չինաստանի միջև առևտրատնտեսական փոխգործակցությունն է: 2010թ. ի վեր Չինաստանը Ռուսաստանի խոշորագույն առևտրային գործընկերն է: Այսօր Մոսկվան և Պեկինը

²² **Dmochowski T.**, The Settlement of the Russian-Chinese Border Dispute, *Polish Political Science Yearbook*. 2015, **44**, 56-74.

²³ **Freire M.R.**, China-Russia relations in a framework of strategic containment. *Relações internacionais*. Special Issue, 2021, 53-68.

²⁴ Китай поддержал российские требования о нерасширении НАТО. С какими еще требованиями Москвы солидаризировался Пекин, <https://www.rbc.ru/politics/04/02/2022/61fcf1839a79475376a6f40b>

նպատակ են դրել կրկնապատկել ապրանքաշրջանառությունը երկու երկրների միջև՝ արդեն 2024թ. այն հասցնելով 200 միլիարդ դոլարի: Հարկ է ընդգծել, որ այսօր միջսահմանային վճարումների 70%-ն իրականացվում է ազգային արժույթներով՝ ռուսական ռուբլով և չինական յուանով²⁵:

Ուկրաինական հակամարտության հենց սկզբից Չինաստանը հավասարակշռված դիրք զբաղեցրեց՝ հանդես գալով խաղաղ կարգավորման կողմնակից: Միամանակ, Չինաստանի պաշտոնական ներկայացուցիչները բազմիցս հրապարակայնորեն հայտարարել են, որ հասկանում են հակամարտության իրական արմատական պատճառները՝ մատնանշելով ԱՄՆ-ի և նրա արբանյակների կործանարար դերը հակամարտությունը հրահրելու գործում և կոչ են արել հաշվի առնել ներգրավված բոլոր կողմերի անվտանգային շահերը:

Այնուամենայնիվ, 2022թ. ի վեր ավելի ու ավելի նկատելի է դառնում Ռուսաստանի ու Չինաստանի ռազմավարական մերձեցումը, ինչը, թերևս, պայմանավորված է նոր աշխարհակարգի ձևավորման մարտահրավերներով²⁶: Վերջինս, հավանաբար, կյանքի է կոչվելու G2 ձևաչափով, որում Վաշինգտոնն ու Պեկինը հանդես են գալու որպես առանցքային գլոբալ խաղացողներ՝ հավակնելով նոր երկրներության ձևավորմանը: Այդպիսի ճարտարապետության ներքո առավել արդյունավետ ու մրցունակ լինելու համար Պեկինին անհրաժեշտ է էլ ավելի խորացնել հարաբերությունները Մոսկվայի հետ՝ կայանալու համար որպես եվրասիական գերտերություն: Դա հստակ հասկանում է նաև ռուսական կողմը՝ ձգտելով Չինաստանի հետ հարաբերությունները կառուցել՝ սեփական երկարաժամկետ շահերից ելնելով: Այսպես, 2023թ. մարտին հաստատված ՌԴ արտաքին քաղաքականության հայեցակարգում առաջին անգամ Մոսկվան հավասարության նշան

²⁵ **Aksenov G., Ronglin Li, Qamar A., Fambo H.,** *Development of Trade and Financial-Economical Relationships between China and Russia: A Study Based on the Trade Gravity Model / Sustainability.* 15, 2023. 39 p.

²⁶ **Peters M.,** *Russia-China/China-Russia: Sino-Russian relations in the post-Soviet era, Educational Philosophy and Theory,* 55:14. 2023. 1664–1671.

է դնում ռուս-չինական և ռուս-հնդկական հարաբերությունների միջև (հոդվածներ 51-54)²⁷: Այսպիսի հավասարակշռության ապահովման ներքո է դիտվում այսպես կոչված «Մեծ Եվրասիական տարածության» ձևավորումը, որում Մոսկվան փորձելու է դիրքավորվել որպես հավասարակշռող ուժ Չինաստանի և Հնդկաստանի միջև՝ դրանով իսկ ամրապնդելով սեփական դիրքերը Եվրասիական անվտանգային ճարտարապետության մեջ: Մոսկվայի առաջարկած ուժերի այսպիսի դասավորությունը, բնականաբար, չի ողջունի Պեկինը՝ հատկապես հաշվի առնելով Հնդկաստանի հետ չլուծված խնդիրները:

Այսպիսով, ռուս-չինական հարաբերությունները թեև առանձնանում են զարգացման բարձր դինամիկայով ու փոխգործակցության խորացմամբ առանցքային ռազմավարական ուղղություններով, այնուամենայնիվ, կողմերի միջև առկա են որոշ տարաձայնություններ, որոնցից հատկապես հարկ է առանձնացնել տարածքային չլուծված հարցերը, ինչպես նաև Մեծ Եվրասիայում աշխարհաքաղաքական նոր հավասարակշռության ձևավորման վեկաբերյալ նրանց մոտեցումները:

Ասիական ուղղությունը՝ Ռուսաստանի էներգետիկ անվտանգության ռազմավարական փաստաթղթերի լեյտմոտիվ

2019թ. մայիսի 13-ին ընդունվեց Ռուսաստանի Դաշնության էներգետիկ անվտանգության նոր դոկտրինը²⁸: Թեև դրանում կրկնվում են նախորդ՝ էներգետիկ անվտանգությանը նվիրված ռազմավարական փաստաթղթերում ներառված մի շարք հիմնադրույթներ, սակայն այն առանձնանում է նոր մոտեցումներով, որոնք էական ազդեցություն ունեն այդ փաստաթղթի քաղաքական էության վրա, քանզի փորձ է արվում սահմանել Ռուսաստանի

²⁷ Концепция внешней политики Российской Федерации (утверждена Президентом Российской Федерации В.В.Путиным 31 марта 2023 г.) // <https://www.mid.ru/ru/detail-material-page/1860586/>

²⁸ Доктрина энергетической безопасности Российской Федерации / Утверждена указом Президента РФ от 13 мая 2019 г. № 216.

էներգետիկ աշխարհաքաղաքականության հիմնական՝ ասիական վեկտորը:

Ռուսաստանի էներգետիկ անվտանգության մարտահրավերների շարքում դիտարկվում է համաշխարհային շուկայում էներգա-ռեսուրսների նոր խաղացողների ու, մասնավորապես, արտահանողների ի հայտ գալը: Դրանց թվում է ԱՄՆ-ն, որը 2017-ից ի վեր որդեգրել է համաշխարհային նավթագազային շուկայում կշիռն ավելացնելու ռազմավարություն: Մրցակցությունը հիմնականում արտահայտվում է եվրոպական ուղղությամբ, հատկապես՝ Ուկրաինայում պատերազմի մեկնարկով պայմանավորված:

Դոկտրինը կանխատեսում է համաշխարհային տնտեսական աճի տեղափոխումը Ասիա-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջան: Այս մեզաթբենդի ընկալումը որպես Ռուսաստանի էներգետիկ անվտանգության մարտահրավեր ընդգծում է Մոսկվայի արտաքին էներգետիկ քաղաքականության ասիական-խաղաղօվկիանոսյան վեկտորի շրջանակներում չինական վեկտորի առանցքային դերը: Հայտնի է, որ Չինաստանն աշխարհում LNG-ի գլխավոր սպառողն է, որն, ինչպես արդեն նշվեց, գնալով ավելացնում է իր էներգասպառման կառուցվածքում «երկնագույն վառելիքի» կշիռը:

Ինչ վերաբերում է 2009թ. ընդունված «Մինչև 2030 թ. Ռուսաստանի էներգետիկ ռազմավարությանը», ապա դրանում Չինաստանը հիշատակվում է չորս անգամ: Մասնավորապես, փաստաթղթում առանձնանում են հետևյալ կանխատեսումներն ու ծրագրերը: Մինչև 2030թ.՝

-Եվրոպական ուղղությամբ Ռուսաստանից արտահանվող էներգակիրների ծավալը գնալով նվազելու է՝ արևելյան ուղղությամբ (Չինաստան, Ճապոնիա, Կորեա, Ասիական-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջան) արտահանման ավելացման հետևանքով:

-Արևելյան Սիբիրում և Հեռավոր Արևելքում գազի մատակարարման միասնական համակարգի ծրագրի իրագործման շրջանակներում աստիճանաբար ձևավորվելու է գազա-

տարների համակարգ Ասիական-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի երկրներ ու, մասնավորապես, Չինաստան և Կորեայի Հանրապետություն բնական գազի տեղափոխման նպատակով՝ մատակարարման միասնական համակարգին այդ երկրների հնարավոր միացմամբ:

-կրկնակի կավելանա Ռուսաստանից Չինաստան, Ճապոնիա և Կորեայի Հանրապետություն բնական գազի արտահանումը:

-կսկսվի Ռուսաստանից Չինաստան էլեկտրաէներգիայի արտահանումը²⁹:

2020 թ. ընդունված «Մինչև 2035թ. Ռուսաստանի Դաշնության էներգետիկ ռազմավարության» մեջ արդեն նկատելի է ասիական տրոն քաղաքականության հստակ ընդգծում՝ աշխարհագրության էական ընդլայնմամբ ու առանձին նախագծերի ընդգծմամբ: Փաստաթղթում խոսվում է չինական, հնդկական, վիետնամական, մալայզիական էներգետիկ շուկաներում դիրքերի ամրապնդման, միջուկային էներգետիկայի նախագծերում ակտիվ մասնակցության (Տյանվանի ԱԷԿ), Չինաստանի հետ էլեկտրաէներգետիկ կապերի զարգացման (Ջեյսկի ՀԷԿ-Ամուրսկայա-Խեյխե 500 կՎ էլեկտրահաղորդման գիծ), ԵԱՏՄ հետ Չինաստանի համագործակցության ակտիվացման և այլ ուղղությունների մասին: Կարմիր թելով անցնում է այն միտքը, որ Չինաստանի և Հնդկաստանի էներգետիկ շուկաներում դիրքավորումը պետք է դիտարկվի որպես էներգետիկ ռազմավարության առանձնահերթություն՝ հաշվի առնելով վերջիններիս կողմից էներգակիրների սպառման աննախադեպ աճն ու ազդեցության մակարդակը գլոբալ էներգետիկ համակարգում³⁰:

²⁹ Энергетическая стратегия России на период до 2030 года. Утверждена распоряжением Правительства РФ от 13 ноября 2009 г. N 1715-р.

³⁰ Энергетическая стратегия Российской Федерации на период до 2035 г. Утверждена распоряжением Правительства РФ от 9 июня 2020 г. N 1523-р.

Ռուս-չինական էներգետիկ համագործակցությունը ռուս-ուկրաինական պատերազմի մեկնարկից ի վեր

2022թ. ի վեր Ռուսաստանի և Չինաստանի միջև էապես ակտիվացավ «էներգետիկ երկխոսությունը»³¹: Ներկայումս Մոսկվան ու Պեկինն ակտիվորեն իրականացնում են նոր համատեղ էներգետիկ նախագծեր: ՌԴ նախագահ Վ. Պուտինի՝ 2022 թվականի փետրվարի սկզբին Չինաստան կատարած այցի ժամանակ կողմերը ստորագրեցին երեք համաձայնագրեր՝ ուղղված նավթա- և գազատարների աշխատանքների կայունության ապահովմանը՝ չինական շուկա ռուսական գազի և նավթի մատակարարման ծավալները հետագայում ավելացնելու նպատակով: Որպես նավթի առքուվաճառքի պայմանագրի հավելված կնքվեց համաձայնագիր՝ Արևմտյան Չինաստանի նավթավերամշակող գործարաններից նավթի մատակարարումներ ապահովելու համար: Դրան զուգահեռ չինակա CNPC-ի և ռուսական «Ռոսնեֆտի» միջև փոխըմբռնման հուշագիր ստերագրվեց³²:

Թեև Ռուսաստանը ստիպված է Չինաստան էներգակիրներ արտահանել զգալի զեղչով՝ պատժամիջոցների, էմբարգոյի և «գնային առաստաղների» պատճառով, այնուամենայնիվ, վերջին շրջանում էներգակիրների արտահանման արժեքը զգալիորեն աճել է: Պատերազմի սկզբից ի վեր Չինաստանը Ռուսաստանից 86 մլրդ եվրո արժողությամբ էներգակիրներ է ներմուծել, որից մոտ 67 մլրդ եվրոն բաժին է ընկել ներկվող նավթին: Հարկ է ընդգծել, որ 2022թ. Ռուսաստանից Չինաստան արտահանված նավթի, ածխի, հեղուկացված գազի և խողովակաշարային գազի արտահանման արժեքը 56%-ով գերազանցել է 2021 թ. ցուցանիշները³³:

³¹ Skalamera M., The Geopolitics of Energy after the Invasion of Ukraine, *The Washington Quarterly*. 2023, 46:1, 7-24.

³² Rosneft and CNPC agreed to cooperate in the field of low carbon development / <https://www.bloomberg.com/press-releases/2022-02-04/rosneft-oil-company-rosneft-and-cnpc-agreed-to-cooperate-in-the-field-of-low-carbon-development>

³³ Новак сообщил, что добыча угля в РФ в 2022 г. выросла на 0,3%, экспорт упал на 7% / <https://www.interfax.ru/business/880326>

Այսպիսով, Չինաստանը պատերազմի սկզբից ի վեր ռուսական էներգակիրների ամենախոշոր ներկրողն է: Միաժամանակ, կողմերի էներգետիկ հարաբերություններում անհավասարա-կշռությունը կտրուկ աճ արձանագրեց: Այսպես, Չինաստանի մասնաբաժնի արժեքը ռուսական էներգակիրների արտահանման մեջ կրկնապատկվել է՝ 15%-ից հասնելով 30%-ի, մինչդեռ Ռուսաստանի մասնաբաժինը չինական ներմուծման մեջ աննշան է աճել³⁴:

Ռուս-չինական էներգետիկ յամագործակցության առանցքում շարունակում է գտնվել դեդոլարիզացման ռազմավարությունը: Այսօր կողմերը էներգետիկ առևտուր են իրականացնում բացառապես ազգային արժույթով, ինչը հատկապես բխում է Մոսկվայի շահերից, քանի որ հնարավորություն է ստանում պահպանելու ռուբլու հարաբերական կայությունը:

Ազգային արժույթներով հաշվարկների իրականացման ռազմավարության տիրությունը նշանակալի քայլ էր 2022թ. «Ռոսնեֆտ» ընկերության պարտատոմսերի թողարկումը չինական յուաններով՝ 15 մլրդ ռուբլի ընդհանուր գումարով: Ռուսական շուկայի նորագույն պատմության մեջ դա կորպորատիվ պարտատոմսերի ամենամեծ թողարկումն է համարվում³⁵:

Ռուսաստանի կախվածությունը մեկ հիմնական սպառողից մեծ ռիսկեր է ստեղծում ուժերի հավասարակշռության և, ի վերջո, Ռուսաստանի արտաքին էներգետիկ ռազմավարության զանազանեցման համար: Ավելին, չինական ներմուծումները, հավանաբար, չեն կարողանա փոխարինել Ռուսաստանի կորուստները եվրոպական նավթի և գազի շուկաներում: Միաժամանակ, Պեկինի տեսանկյունից՝ ռուսական էներգակիրներն ունեն ռազմավարական

³⁴ **Wachtmeister H.**, Russia-China energy relations since 24 February: Consequences and options for Europe, NKK & SCEEUS, 2023, <https://www.ui.se/globalassets/ui.se-eng/publications/sceeus/russia-chinaenergy-relations-since-24-february.pdf>

³⁵ Игорь Сечин выступил с ключевым докладом на открытии IV Российско-Китайского энергетического бизнес-форума / <https://www.rosneft.ru/press/news/item/212757/>

առավելություն, մասնավորապես՝ ցամաքային (խողովակաշարային) առաքումը և «Հյուսիսային ծովային երթուղու» օգտագործումը կարող է նվազեցնել Չինաստանի կախվածությունը էներգակիրների ներկրումից, որը ներկայումս իրականացվում է անվտանգության առումով խոցելի հարավային լոգիստիկայով:

«Միբիրի ուժ» և «Միբիրի ուժ-2» («Ալթայ») գազամուղների գեոտնտեսական նշանակությունը

Հաշվի առնելով Ասիական-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում ու հատկապես Չինաստանում ածխաջրածնային էներգառեսուրսների սպառման շարունակական աճը՝ Մոսկվան դեռ 2009-2010թթ. սկսեց նոր լոգիստիկ երթուղիներ մշակել՝ վերոնշյալ շուկաներում սեփական դիրքերն ամրապնդելու համար: 2009թ. Մոսկվան և Պեկինը կնքեցին «վարկ նավթի դիմաց» միջպետական պայմանագիրը, որի համաձայն Ռուսաստանին տրամադրվող վարկային միջոցները կազմեցին 25 մլրդ ԱՄՆ դոլլար, որից մոտ 15 մլրդ-ը պետք է ստանար «Ռոսնեֆտը», իսկ 10 միլիարդը՝ պետական նավթատրանսպորտային «Տրանսնեֆտը»: Որոշվել էր, որ վարկի մարման նպատակով Ռուսաստանը 2011-2030թթ. մոտ 300 մլն տ նավթ կարտահանի Չինաստան (միջին տարեկան ծավալը՝ 15 մլն տ կամ մոտ 110 մլն բարել)³⁶:

Որպես ռուս-չինական «էներգետիկ երկխոսության» մեկ այլ կարևոր դրվագ կարելի է առանձնացնել չինական ընկերությանը Արևելյան Սիբիրում գտնվող երկու հանքավայրերում գազի արդյունահանման արտոնագրի տրամադրումը, ինչպես նաև Մոսկվայի հետ վարվող բանակցությունները՝ Ռուսաստանից ածխի երկարաժամկետ ներկրման վերաբերյալ:

Այսօր ռուս-չինական էներգետիկ համագործակցության առանցքային դրսևորումներից է «Միբիրի ուժը» գազամուղը (տես նկար 1), որով Յակուտիայում արդյունահանվող բնական գազը

³⁶ **Петелин Е.**, Энергомонолог Китая в Центральной Азии, *Индекс безопасности*, 2011, 17, 4 (99), 35-57.

արտահանվում է Ասիական-Խաղաղօվիակոսյան տարածաշրջան: «Սիբիրի ուժը» «Գազպրոմի» և չինական «CNPC» ընկերության համատեղ նախագիծն է, որի արժեքն ի սկզբանե գնահատվում էր մոտ 800 մլրդ ռուբլի, ավելի ուշ՝ 2018թ.՝ 1,1 տրլն ռուբլի: Գազամուղի թողունակությունը կազմում է տարեկան 38 մլրդ խմ³⁷: Այն շահագործման հանձնվեց 2018թ. դեկտեմբերին:

Նախագծին նոր շունչ հաղորդեց 2014 թ. Մոսկվայի և Պեկինի միջև կնքված 30-ամյա պայմանագիրը: Դրա համաձայն՝ Մոսկվան պարտավորվում էր տարեկան մոտ 40 մլրդ խմ գազ արտահանել Չինաստան: Պայմանագրի ընդհանուր արժեքը կազմում է 400 մլրդ ԱՄՆ դոլլար³⁸:

Այսպիսով, «Սիբիրի ուժը»՝ ստացավ հստակ առևտրային ուրվագիծ՝ Մոսկվայի համար ապահովելով «երկնագույն վառելիքի» արտահանման կայուն ու հեռանկարային ուղղություն, իսկ Պեկինի համար ստեղծելով էներգետիկ բազմազանեցման ու անվտանգության մեծացման հուսալի մեխանիզմ: Հաշվի առնելով ներկրման նախատեսվող մեծ ծավալները՝ չինական կողմը որոշեց դիմել հետաքրքիր մանևրի՝ առաջարկելով Մոսկվային 25 մլրդ ԱՄՆ դոլլար վարկ՝ «Սիբիրի ուժը» նախագծի որոշ ենթակառուցվածքային խնդիրների լուծման համար: Հասկանալով, որ նման վարկային պայմանագիրը ապագայում կարող է պարտավորեցնել Մոսկվային շուկայականից ցածր գնով գազ վաճառել Չինաստանին՝ «Գազպրոմ» հրաժարվեց առաջարկից:

Միաժամանակ, Չինաստանն ու Ռուսաստանն այս նախագծի շրջանակներում ավելի լայն աշխարհատնտեսական շահեր են հետապնդում³⁹: Մասնավորապես, նախատեսվում է, որ

³⁷ **Пляскина Н.И., Харитонова В.Н., Вижина И.А.**, «Сила Сибири» – драйвер или угроза газохимическим кластерам востока России? *Эко*, 2015, 4, 54-71.

³⁸ Соглашение между Правительством Российской Федерации и Правительством Китайской Народной Республики о сотрудничестве в сфере поставок природного газа из Российской Федерации в Китайскую Народную Республику по "восточному" маршруту. Ратифицировано Федеральным законом от 02.05.2015 N 106-ФЗ.

³⁹ **Yamato S.**, Energy trade relations between Russia and China. *Krakowskie Studia Małopolskie*, 2023, 2 (38), 62-71.

«Սիբիրի ուժը» գազ է մատակարարելու նաև ռուսաստանյան գազավերամշակման կայաններ, որտեղ արտադրվող LNG-գազը կարտահանվի Ճապոնիա: Վերջինս, ինչպես հայտնի է, ատոմակայանների կոնսերվացումից հետո էներգակիրների ներկրման նոր ուղիներ է փնտրում (դրանով է, թերևս, պայմանավորված Տոկիոյի կրավորական կեցվածքը հակառուսական տնտեսական պատժամիջոցների նկատմամբ և Ռուսաստանից հեղուկացված գազի ներկրումը): Այսպիսով, Մոսկվայի և Պեկինի համար նոր ու հեռանկարային շուկա կարող է բացվել⁴⁰:

Հայտնի է, որ «Սիբիրի ուժը» գազամուղի հետ Մոսկվան կյանքի է կոչում «Սիբիրի ուժը-2» («Ալթայ») գազամուղի նախագիծը: Այս ենթակառուցվածքով Արևմտյան Սիբիրից նախատեսվում է տարեկան մոտ 80 մլրդ խմ գազ արտահանել Չինաստանի արևմտյան հատվածում գտնվող Մինցզյան-Ույգուրյան ինքնավար շրջան: Ենթադրվում է, որ այնուհետև գազամուղը կմիանա չինական «Արևմուտք-Արևելք» գազամուղին՝ հասնելով Շանհայ⁴¹:

Այնուամենայնիվ, թեև 2014թ. Մոսկվան և Պեկին հուշագիր ստորագրեցին Ռուսաստանից բնական գազի ներկրումը «Ալթայ» գազամուղով կրկնապատկելու վերաբերյալ, նախագիծն իրականացվում է դանդաղ տեմպերով: Մինչդեռ պարզ է, որ «Սիբիրի ուժը-2» նախագծի ընդգրկումը ռուսական էներգետիկ քաղաքականության օրակարգ վկայում է, որ մոտակա տասնամյակի ընթացքում Ռուսաստանի արտաքին էներգետիկ քաղաքականության վեկտորը կտեղափոխվի Եվրոպայից Ասիա:

⁴⁰ **Земченков А. С.**, Поставки СПГ в Японию: оценка потенциала российских энергетических компаний, *Газовая промышленность*. 2019, 9. 130-133.

⁴¹ **Железняк М. Н., Сериков С.И., Шац М. М.**, Современный этап создания ГТС "Сила Сибири-2": проблемы и перспективы, *Известия АО РГО*. 2021. 2(61). 27-39.

Եզրակացություն

1. Ռուս-չինական համագործակցությունը էներգետիկ ու, մասնավորապես, նավթագազային ոլորտում զարգացման մեծ ներուժ է պարունակում՝ պայմանավորված, մի կողմից, Ռուսաստանի հարուստ ածխաջրածնային պաշարներով ու ենթակառուցվածքային-լոգիստիկ նախագծերով, մյուս կողմից՝ Չինաստանում շարունակաբար աճող պահանջարկով: Միաժամանակ, Ռուսաստանի և Չինաստանի կողմից ձևավորվող էներգետիկ օրակարգն առանձնանում է բազմաթիվ խնդիրներով, որոնցից հարկ է առանձնացնել համաշխարհային էներգետիկ շուկայում առկա բարդ զարգացումներն ու տուրբուլենտությունը, որն իր ուղիղ ազդեցությունն է ունենում ինչպես վերոնշյալ նախագծերի իրականացման, այնպես էլ պահանջարկի կանխատեսելիության վրա:
2. Ռուս-չինական էներգետիկ կապերի զարգացումն արդի փուլում անհրաժեշտ է դիտարկել ասիակենտրոն էներգետիկ աշխարհակարգի ձևավորման համատեքստում: Վերջինս պայմանավորված է հատկապես Ասիական-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական ու ֆինանսական ներուժի շարունակական աճով, ինչը, իր հերթին, հանգեցնում է այդտեղ էներգառեսուրսների հանդեպ շարունակաբար աճող պահանջարկին:
3. Ուկրաինայում տեղի ունեցող գործընթացները, իհարկե, խնդիրներ են ստեղծում Ռուսաստանի էներգետիկ քաղաքականության համար՝ հաշվի առնելով պատժամիջոցների կիրառման արդյունքում տեխնոլոգիաների փոխանցման սահմանափակումները, էներգակիրների գների կտրուկ տատանումները և այլն: Սակայն ստեղծված իրավիճակը նաև հնարավորություններ է ստեղծում ռուս-չինական էներգետիկ համագործակցության համար, մասնավորապես՝

նավթագազային շուկայի կոնյունկտուրայի խարքային վերաձևավորման տեսանկյունից:

4. Ռուս-չինական «Էներգետիկ երկխոսության» խորացումը նաև որոշ ռիսկեր է պարունակում Ռուսաստանի Էներգետիկ անվտանգության համար, քանի որ վերջինս ստեղծված պայմաններում առավել քան կախված է դառնում դեպի Չինաստան մատակարարումներից: Պետք չէ բացառել, որ այս հանգամանքը պատեհ պահին Չինաստանը կօգտագործի առանձին աշխարհաքաղաքական խնդիրներ լուծելու համար: Ակնհայտ է, որ կախվածությունը չինական շուկայից զրկում է Ռուսաստանին մատակարարումների բազմազանեցման հնարավորություններից՝ ամբողջությամբ չփոխատուցելով եվրասիական էներգետիկ շուկաների կորստի հետևանքով կրած կորուստները: Հարկ է ընդգծել, որ թեև ռուս-չինական հարաբերությունները զարգացման դրական դինամիկա են դրսևորում, այնուամենայնիվ, կողմերի միջև առկա են խորքային տարաձայնություններ Եվրասիայի աշխարհաքաղաքական ապագայի վերաբերյալ: Միաժամանակ, ռուս-չինական էներգետիկ հարաբերությունների առանցքային նպատակներից է շուկայի ապադոլարացումը, ինչը, հաշվի առնելով համաշխարհային շուկայում Չինաստանի դիրքը՝ որպես առանցքային սպառող, ուղղված է գլոբալ էներգետիկ համակարգի արմատական վերանայմանը:
5. Որպես ռուս-չինական էներգետիկ կապերի զարգացման առանցքային մարտահրավեր հարկ է դիտարկել հեղուկացված գազի հանդեպ պահանջարկի շարունակական աճը, ինչը թելադրում է Ռուսաստանին նոր արտադրական հզորություններ ստեղծել՝ բազմազանեցնելով էներգակիրի արտահանման ուղիները դեպի չինական շուկա: Հաշվի առնելով LNG-ի հանդեպ համաշխարհային պահանջարկի շարունակական աճը, ինչպես նաև դրա մատակարարման լոգիստիկ առավելությունները՝ գազի հեղուկացման,

վերագազայնացման ուղղություններով, ինչպես նաև LNG-նավատորմի զարգացումը պետք է դիտարկել որպես Ռուսաստանի էներգետիկ անվտանգության առանցքային մարտահրավերներից մեկը:

6. «Միբիրի ուժը» և «Միբիրի ուժը-2» մեգառազմերի իրագործումը վկայում է Ռուսաստանի կողմից ասիական տնտեսական էներգետիկ քաղաքականություն իրականացնելու միտումների մասին, ինչը պայմանավորված է Ասիական-Խաղաղօվկիանոսյան երկրենում ու, մասնավորապես, Չինաստանում «երկնագույն վառելիքի» սպառման շարունակական ինտենսիվ աճը: Հատկանշական է, որ ասիական տնտեսության սկզբունքը ամրագրվել էր դեռևս 2009թ. ընդունված ՌԴ էներգետիկ ռազմավարության մեջ ու վերահաստատվել է ինչպես 2020թ. ռազմավարության, այնպես էլ 2019թ. էներգետիկ անվտանգության դոկտրինի մեջ: Ուկրաինական ուղղությամբ ընթացող զարգացումներն ու դրանց հետևանքով Մոսկվայի շարունակական դուրսմղումը եվրոպական էներգետիկ շուկաներից ասիական տնտեսական էներգետիկ քաղաքականության զարգացումը առանցքային հեռանկար են դարձնում Ռուսաստանի էներգետիկ անվտանգության համար:

Russian-Chinese energy cooperation: the challenges of forming the new energy world order

VAHE DAVTYAN
Brusov State University

Key directions of the Russian-Chinese energy agenda are presented. Through the structural analysis of the energy systems of Russia and China, their priorities are revealed, the importance of the energy factor in the geopolitical "arsenal" of these countries is assessed. The Russian-Chinese energy cooperation is studied in the context of the principles of the Russian energy security strategic documents; the compliance of the implemented policy with the conceptual approaches and principles recorded in them is evaluated. Through that prism, the prospects for the formation of an Asia-centric energy world order are analyzed. Special attention is paid to Russian-Chinese energy ties since the start of the war in Ukraine. In particular, the volumes of energy trade, as well as the possibilities of implementing the de-dollarization strategy are evaluated. The importance and prospects of the "Power of Siberia" and "Power of Siberia-2" gas pipelines for the development of Russian-Chinese energy cooperation are assessed.

ՀԵՏԽՈՐՀՐԴԱՑԻՆ ՏՐԱՆՍՖՈՐՄԱՑԻԱ**DOI: 10.19266/1829-4286-2023-01-103-126****Եվրոպական ինտեգրման աշխարհաքաղաքական
մարտահրավերները հետխորհրդային տարածքում.
Հայաստան, Վրաստան և Ուկրաինա****ԱՆԱՀԻՏ ԲԱԲՍՅԱՆ***Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան*

Հոդվածում ուսումնասիրվում են եվրոպական ինտեգրման աշխարհաքաղաքական մարտահրավերները հետխորհրդային տարածքում, մասնավորապես Հայաստանի, Վրաստանի և Ուկրաինայի դեպքերը: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել արտաքին դերակատարների, հատկապես նոր աշխարհակարգի ձևավորման մրցակցությունում ներգրավված հիմնական պետությունների ազդեցությանն այդ երեք երկրներում կատարվող իրադարձությունների վրա, ինչպես նաև ազդեցությունը եվրաինտեգրման գործընթացի վրա: ԵՄ Արևելյան գործընկերության ծրագրում ընդգրկված երեք պետությունների առջև ծառացած մարտահրավերների վերլուծությունը ցույց է տալիս, որ թեև այդ երկրները դիտարկվում են որպես եվրոպական ինտեգրում իրականացնող պետություններ, սակայն դրանց ուղիները եվրոպական ինտեգրման միանգամայն տարբերվող դեպքեր են, գտնվում են ինտեգրման ճանապարհի տարբեր փուլերում և մակարդակներում, զարգացումները կախված են միանգամայն տարբեր գործոններից ու կարող են հանգեցնել միանգամայն տարբեր արդյունքների: Դիտարկվող մարտահրավերներն ազդում են ոչ միայն այդ երկրների ընթացքի վրա, այլև այդ շրջանում ԵՄ գործունեության բնույթի վրա՝ այն արժեքային հիմքից շեղելով դեպի շահերով պայմանավորված որոշումներ:

Բանալի բառեր

Եվրոպական ինտեգրում, Հայաստան, Ուկրաինա, Վրաստան, աշխարհաքաղաքական մարտահրավերներ

Նախաբան

Խորհրդային միության փլուզումը հետխորհրդային տարածքի նորանկախ պետություններին տվեց ոչ միայն զարգացման

հնարավորություններ, այլև առաջադրեց լուրջ մարտահրավերներ՝ ի դեմս պետության կառուցման ու կայացման բարդ խնդիրների: Եվրոպական ինտեգրման գործընթացների ակտիվացումը, հետխորհրդային տարածքում նոր ինտեգրման կառույցների ի հայտ գալը կարող էին դառնալ այդ խնդիրների լուծման այլընտրանքային հնարավորություններ: Դեռևս հետխորհրդային տրանսֆորմացիայի սկզբնական շրջանում որոշ նորանկախ պետություններ, մասնավորապես, Հայաստանը, Վրաստանը և Ուկրաինան, փորձում էին առաջ շարժվել ինտեգրման հնարավորությունների համադրման (բազմավեկտոր) քաղաքականությամբ: Մի կողմից եվրոպական կառույցներն ավելի նախընտրելի էին՝ որպես կայացած ինտեգրման միջավայրեր, որոնք ձևավորվող պետությունների համար ունեին նաև քաղաքակրթական գրավչություն: Միաժամանակ, հնարավոր չէր նաև հաշվի չառնել հետխորհրդային տարածքի հետ կապերի կտրուկ խզման լուրջ հետևանքները: Սակայն այդ երկու միջավայրերի արժեքների և շահերի էական տարբերությունները ժամանակի ընթացքում ավելի ու ավելի էին նվազեցնում համադրման հնարավորությունները, ինչի հետևանքով համադրումն աստիճանաբար փոխարինվում էր միավեկտոր քաղաքականությամբ: 2004թ. Եվրամիության (ԵՄ) ամենամեծ ընդլայնումից հետո ակնհայտ դարձավ, որ Ուկրաինան, Վրաստանն ու Մոլդովան վճռականորեն ընտրել են եվրոպական ինտեգրումը՝ փաստորեն մերժելով եվրասիական ինտեգրումը: Հայաստանը մնաց միակ հետխորհրդային պետությունը, որը փորձում էր պահպանել համադրման քաղաքականությունը, թեև ժամանակ առ ժամանակ բախվում է եվրոպական և եվրասիական ինտեգրումների հակոտնյա մարտահրավերներին, ինչպես նաև առավել չափով կրում այդ երկու ինտեգրման միջավայրերի արժեքների և շահերի բախման հետևանքները: Մարտահրավերներն այլ բնույթ ունեին Վրաստանի և Ուկրաինայի դեպքերում: Միավեկտոր արտաքին քաղաքականության ձգտումը՝ դեպի եվրոպական ինտեգրում, այդ երկրների համար դարձավ կոշտ հակամարտությունների խթան՝ հանգեցնելով լուրջ կորուստների ու դժվարությունների, սակայն դեռևս չտեսնելով նպատակակետին տանող ուղին: Այսօր, երբ թնակոխել է աշխարհաքաղաքական

մրցակցության կոշտ փուլը, միայն Հայաստանն է ինչ-որ չափով պահպանել համադրման քաղաքականությունը, թեև վերջին մի քանի տարիներին ակնհայտ է Ռուսաստանի հետ հարաբերությունների արդյունավետության որակական անկումը: Այդ ընթացքում Հայաստանը ևս կրել է ահռելի կորուստներ՝ առանց օգուտների հեռանկարի: Բազմաթիվ անորոշությունների առկայությունը և ընտրված ուղիների ոչ միանշանակ հնարավոր ելքերը արդիականություն են հաղորդում այդ երեք երկրների ընտրած ինտեգրման ուղիների համեմատական վերլուծությանը և կարող են հնարավորություն տալ մեծացնել այդ ուղիների ճշգրտման ուղղությամբ հնարավոր քայլերի հավանական արդյունավետության գնահատման հավաստիությունը:

Արժեքների և շահերի բախումը եվրոպական ինտեգրման միջավայրում

ԽՍՀՄ փլուզումը թելադրում էր նոր արժեքային համակարգի ձևավորում, նոր ինքնանույնացում՝ ներքին (ինքնության արդիականացում ու ամրապնդում) և արտաքին (միջազգային ինտեգրում) չափումներում, ընդ որում այդ երկու գործընթացները՝ ինքնության արդիականացումն ու ինտեգրումը, փոխկապակցված գործընթացներ են, որոնց հիմքում արժեքներ են¹: Հետևաբար, երկու գործընթացների արդյունավետությունն ապահովելու համար պահանջվում է դրանց օպտիմալ համադրում: Իրավիճակն էլ ավելի է բարդացնում այն հանգամանքը, որ ծայրահեղ լարված աշխարհաքաղաքական մրցակցությունում շահերի առաջնորդումը արժեքների ու սկզբունքների հաշվին բացահայտ դրսևորումներ է ստանում անգամ Եվրամիության գործունեության մեջ, որի հաջողությունը հիմնված է եղել արժեքների գերակայության վրա: Այդ հանգամանքը չափզանց բարդացնում է վերոհիշյալ երեք պետությունների գործը արտաքին հարաբերություններում, որտեղ

¹Թորոսյան Տ., Հասարակական համակարգի հետխորհրդային տրանսֆորմացիա, ՀՀ ԳԱԱ Գիտություն, Երևան, 2006, էջ 180:

փորձի ու համապատասխան գիտելիքների պակասը կարող է հանգեցնել անուղղելի սխալների:

Քաղաքակրթական և արժեքային գործոնները զարգացումների վրա մեծ ազդեցություն են ունեցել դեռևս հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրորդ՝ արժեքային համակարգի հիման վրա ուղիների տարամիտման փուլում: Այդ գործընթացում գտնվող արևմտյան քաղաքակրթությանը պատկանող բայթյան երկրներն ընտրեցին եվրոպական ինտեգրման ճանապարհն ու, ի վերջո, անդամակցեցին Եվրամիությանը, իսլամական քաղաքակրթությանը պատկանող երկրներն ընտրեցին կոշտ ավտորիտար, իսկ որոշ դեպքերում՝ ամբողջատիրական վարչակարգեր, իսկ այն երկրները, որոնք պատկանում էին կամ մի քանի դար գտնվում էին ուղղափառ քաղաքակրթության միջավայրում, հայտնվեցին երկրորդ՝ սպասման, խմբում և կանգնեցին դժվար քաղաքակրթական ընտրության առաջ²: Այդ խմբի երկրների թվին են դասվում Հայաստանը, Վրաստանը, Ուկրաինան, Մոլդովան: Այս շարքից կարելի է առանձնացնել Մոլդովան, որի թե աշխարհագրական դիրքը, թե սահմանակցությունն էթնիկ ընդհանրություն ունեցող ԵՄ անդամ Ռումինիայի հետ մտցնում են էական տարբերություններ, որոնց ազդեցությունը հետագա զարգացումների վրա կարող է լինել վճռական: Այդ պատճառով դիտարկվող խնդիրը կքննարկվի մյուս երեք երկրների՝ Հայաստանի, Վրաստանի և Ուկրաինայի համար: Այդ երկրները դասվեցին հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրորդ՝ սպասման խմբում, ի վերջո պետք է կատարեին իրենց ընտրությունը, քանի որ նոր աշխարհակարգի ձևավորման պայքարի ավարտին հնարավոր չէր չափազանց բարդ, միուցե և անհնարին կլինեին համադրման ուղին շարունակելը: Պատահական չէ, որ հետխորհրդային տրանսֆորմացիայի երրորդ՝ աշխարհաքաղաքական գործոնի գերիշխանության, փուլը դիտարկվում է միայն սպասման խմբի երկրների համար³: Ակնհայտ է, որ այդ երկրների համար եվրոպական ինտեգրումը հարկ է

²Թորոսյան Տ., Սուքիասյան Հ., Հետխորհրդային տրանսֆորմացիայի երեք փուլերը, երեք խմբերը և երեք հարացույցները, *Հայկական քաղաքագիտական հանդես*, 1 (1), 2014, էջ 29:

³Նույն տեղում, էջ 32:

դիտարկել երկու չափումներով՝ ինտեգրում Եվրոպայի խորհրդի (ԵԽ) շրջանակներում և ինտեգրում ԵՄ շրջանակներում:

ԵԽ հիմնարար արժեքները՝ մարդու իրավունքներ, ժողովրդավարություն, օրենքի գերակայություն, հավասարաչափ պարտադիր են բոլոր անդամ պետությունների համար⁴ և անդամ պետությունների ստանձնած հանձնառությունների և պարտավորությունների կատարումը վերահսկում է խորհրդարանական վեհաժողովի Դիտարկման հանձնաժողովը: Միևնույն ժամանակ Եվրոպայի խորհուրդը, չնայած իր համեմատաբար մեծ կազմակերպական կառուցվածքին, ունի թույլ քաղաքական ազդեցություն: Դա պայմանավորված է նրանով, որ այս դասական միջկառավարական ինստիտուտը իրական մեխանիզմներ չունի անդամ պետություններին որոշումներ պարտադրելու համար անդամ պետությունը կարող է այս կամ այն պատրվակով խուսափել կատարումից՝ առանց իրենց կարծիքով էական կորուստների: Միաժամանակ, որոշ շահագրգռված խմբեր համագործակցում են միմյանց հետ՝ ամրապնդելու իրենց դիրքերը քաղաքական գործընթացներում՝ ձգտելով ակտիվ մասնակցություն ունենալ խորհրդի որոշումների կայացման գործընթացում:⁵ Ավելին, Եվրամիության կտրուկ ակտիվացումը աշխարհաքաղաքական գործընթացներում նվազեցրեց ԵԽ ազդեցությունը եվրաինտեգրման հետ կապված: Վրաստանը և Ուկրաինան, որ այնքան էլ ակտիվ չէին անդամակցության ժամանակ ստանձնած պրտավորությունների ու հանձնառությունների կատարման առումով, 2004 թվականից գրեթե չեն զբաղվում այդ հարցով, քանի որ Եվրամիության անդամության թեկնածու երկրի կարգավիճակ ստանալու կապակցությամբ դադարեցվեց Թուրքիայի նկատմամբ մշտադիտարկման գործընթացը: Ակնհայտ է, որ այն բանից հետո, երբ աշխարհաքաղաքական նկատառումներով 2023թ. Մոլդովային և Ուկրաինային շնորհվեց թեկնածու երկրի կարգավիճակ և ավելի ուշ նույն խոստացվեց Վրաստանին, կարելի

⁴Council of Europe, White Paper on Intercultural Dialogue, Living Together As Equals in Dignity, Strasbourg, 2008, p. 19.

⁵**Trommer S., Chari R.**, The Council of Europe: Interest Groups and Ideological Missions ?, *West European Politics*, 29 (4), 2006, p. 683.

է չկասկածել, որ այդ երեք երկրները համարելու են իրենց նկատմամբ մշտադիտարկման գործոնթացն ավարտված:

Հայաստանի և Ադրբեջանի պարագայում հատկանշական է Լեռնային Ղարաբաղի խնդրի նկատմամբ ԵՄ վերաբերմունքը:

2020թ. սեպտեմբերի 27-ի ադրբեջանական ռազմական ագրեսիային ԵՄ առաջին արձագանքը համարժեք էր՝ կոչ էր անում դադարեցնել ռազմական գործողություններ և աջակցություն հայտնում ԵԱՀԿ Մինսկի խմբին, որպեսզի այդ շրջանակներում հակամարտությունը լուծվի խաղաղ ճանապարհով:⁶ Ավելին, ԵՄ-ին անդամակցելիս Հայաստանը և Ադրբեջանը պարտավորվել էին հետամուտ լինել հակամարտության միայն խաղաղ ճանապարհով կարգավորմանը, միջազգային և ներքին հակասությունները կարգավորել խաղաղ միջոցներով ու միջազգային իրավունքի սկզբունքներին համաձայն (պարտավորություն, որը պարտադիր է Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունների համար)՝ վճռականորեն մերժելով հարևանների նկատմամբ ուժի սպառնալիքի որևէ դրսևորում:⁷ Ինչպես 2020թ. ադրբեջանաթուրքական ռազմական ագրեսիայի ընթացքում այն կազմակերպող ԵՄ անդամ երկրները՝ Ադրբեջանն ու Թուրքիան, այնպես էլ 2023թ. սեպտեմբերի Լեռնային Ղարաբաղի ողջ բնակչության նկատմամբ էթնիկ զտումներ իրականացրած Ադրբեջանը համարժեք արձագանք չստացան: Թեև պետք է արձանագրել, որ Հայաստանի ներկայացուցիչները դրա համար անհրաժեշտ նախաձեռնություն չցուցաբերեցին:

Հարկ է նշել, որ եվրաինտեգրման առաջատար կառույցի՝ ԵՄ-ի արձագանքը ևս սկզբնական շրջանում միանգամայն համարժեք էր 2020թ. ռազմական ագրեսիային⁸, սակայն 2021թ. երկրորդ կեսից սկսված զարգացումներում Բրյուսելի դիրքորոշումը հակասում էր

⁶Council of Europe, Nagorno-Karabakh: Secretary General calls for immediate end to hostilities, <https://www.coe.int/en/web/portal/-/nagorno-karabakh-secretary-general-calls-for-immediate-end-to-hostilities>, (28.05.23).

⁷PACE Resolution 1416 (2005), The conflict over the Nagorno-Karabakh region dealt with by the OSCE Minsk Conference, <https://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid=17289&lang=en>, (28.05.23).

⁸

որդեգրած հիմնարար արժեքներին և, իրենց ձևակերպմամբ, բխում էր շահերից:

ԵՄ գործունեության մեջ աշխարհաքաղաքական գործոնի ազդեցության մեծացումը և արժեքների հիման վրա դրա կառուցման միտումներն առավել պարզ երևում են երկու գործընթացների զարգացումները քննարկելիս՝ էներգետիկ պաշարների ներկրման ուղիների և արտահանման աղբյուրների բազմազանեցման ու դեպի արևելք ընդլայնման ծրագրերի մշակում և իրականացում:

Եթե անցած դարի 90-ականներին ԵՄ-ի ֆինանսավորած «ՏՐԱՍԵԿԱ» և «ԻՆՈԳԵՅԹ» ծրագրերը հիմնականում տեխնիկական աջակցություն տրամադրելու ուղղվածություն ունեին և աշխարհաքաղաքական բաղադրիչն ընդգծված չէր, ապա «մեծ ընդլայնումից» հետո իրականացվող ծրագրերում այն ակնհայտորեն դառնում էր ավելի ու ավելի գերիշխող աշխարհաքաղաքական մրցակցության ինտենսիվության դինամիկային զուգահեռ: Դա հատկապես ընդգծվեց Արևելյան գործընկերություն ծրագրում՝ որտեղ որպես առանձին բաղադրիչ ներկայացված է էներգետիկան: Թեև ծրագրի անդամ երկրների միջև առկա խնդիրները լուրջ խոչընդոտ են այդ շրջանակում իրականացվող քայլերի համար: Այս երկրների իշխանություններն ունեն ժողովրդավարության, մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ իրենց «յուրահատուկ» պատկերացումները, տարածաշրջանային խնդիրների լուծման տարբեր մոտեցումներ: Բավական սահմանափակ են տնտեսական համագործակցության հնարավորությունները, քանի որ նրանց միջև առկա առևտրատնտեսական կապերն աչքի չէին ընկնում խորությամբ և բազմակողմանիությամբ: Էներգետիկ համագործակցության հեռանկարներն էլ հստակ չէին, ինչպես գործող, այնպես էլ քննարկման փուլում գտնվող խողովակաշարերը և տարանցման ուղիները չէին ընդգրկում բոլոր մասնակից երկրներին⁹: Առավել ցցուն էր այն հանգամանքը, որ եթե վեց երկրներից չորսին հնարավոր է խմբավորել ըստ ժողովրդավարացման արժեքների, ապա Բելառուսն ու Ադրբեյջանը ոչ մի կերպ

⁹Աբրահամյան Լ., Զոհրաբյան Է., Տետեյան Ա., Արևելյան գործընկերություն նախաձեռնությունը և Հարավային Կովկասի պետությունները, *Հրաբեր հասարակական գիտություններ*, 2016, 3 (648), էջ 38:

չեն տեղավորվում այդ հարթությունում: Դրա գազաթնակետը կարելի է համարել «Հարավային գազային միջանցք» ծրագրի ստեղծումը: ԵՄ էներգետիկ անվտանգության քաղաքականության հարավային չափման համատեքստում Հարավային Կովկասը ձեռք է բերում ինքնուրույն նշանակություն, իսկ, մասնավորապես, «Հարավային գազային միջանցք»-ը սնուցող Ադրբեյջանը՝ «ռազմավարական կարևորություն»՝ դառնալով տարածաշրջանում ԵՄ ռազմավարական էներգետիկ գործընկերը¹⁰: Եթե նման «գաղափարներով» Մ. Բրայզայի ոգևորությունն արտառոց չէ՝ որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի նախկին համանախագահ նրա արկածախնդիր և սադրիչ գործունեության բնական շարունակություն, ապա Եվրոպական պաշտոնյաների «դարակազմիկ» հայտարարությունները հնարավոր է բացատրել միայն տգիտության հաամատաարած դրսևորումների հետ անձնական խիստ շահագրգռվածության համադրումով: Ընդ որում, տարաշխարհիկ աշխարհաքաղաքական սխեմաների կառուցման հարցում ԵՄ բարձրաստիճան պաշտոնյաներն այնքան են ոգևորվում, որ կորցնում են ողջամտությունն ու տրամաբանությունը՝ «չնկատելով» անգամ պարզ ճշմարտությունները: ԵՄ-ն ու Ադրբեյջանը 2022թ. հուլիսի 18-ին ստորագրել են կասպյան էներգակիրների ներմուծումը Եվրոպա կրկնապատկելու մասին հուշագիր, ըստ որի մինչև 2027 թվականը Հարավային գազային միջանցքի թողունակությունը կրկնապատկվելու է՝ տարեկան առնվազն 20 միլիարդ խորանարդ մետր ԵՄ մատակարարելու համար: Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ֆոն դեր Լեյենն ասել է. «Այսօր փոխըմբռնման այս նոր հուշագրով մենք և Ադրբեյջանը նոր գլուխ ենք բացում էներգետիկ համագործակցության համար: Ադրբեյջանը կարևոր գործընկեր է ռուսական հանածո վառելիքից հեռանալու մեր ջանքերի համար: Մենք ոչ միայն ձգտում ենք ամրապնդել մեր գոյություն ունեցող գործընկերությունը, որը երաշխավորվում է Հարավային գազային միջանցքի միջոցով՝ ԵՄ-ին գազի կայուն և հուսալի մատակարարում իրականացնելով: Մենք նաև երկարաժամկետ գործընկերության հիմք ենք դնում էներգաարդյունավետության և մաքուր էներգիայի համար,

¹⁰ **Bryza M.**, A Tale of Two Pipelines: Why TAP has Won the Day, *International Centre for Defence and Security*, 2013, p. 3.

քանի որ երկուսս էլ հետապնդում ենք Փարիզի համաձայնագրի նպատակները: Սակայն էներգետիկան միայն այն ոլորտներից մեկն է, որտեղ մենք կարող ենք ընդլայնել մեր համագործակցությունը Ադրբեյջանի հետ, և ես անհամբեր սպասում եմ մեր հարաբերությունների ողջ ներուժն օգտագործելուն»¹¹: Ինչպես ամրագրված է ԵՄ էներգետիկ անվտանգության ռազմավարության մեջ, էներգետիկ անկախության ապահովումը ԵՄ-ի համար առաջնահերթություն է և ադրբեյջանականը դիտարկվում է այլընտրանք ռուսական գազին¹², ինչն էլ հետին պլան է մղում արժեքները՝ հիմնվելով էներգետիկ շահի վրա: Բայց արդյո՞ք Ադրբեյջանն ունի այդքան պաշարներ և կարո՞ղ է արդյոք ադրբեյջանական գազը դառնալ այլընտրանք ռուսական գազին: Մեփականատերերի խոստովանությամբ, Շահ Դենիզ հանքավայրը չունի անգամ մինչև 10 միլիարդ խորանարդ մետր գազ ավելացնելու հնարավորություն՝ լրացուցիչ գազի բացակայության պատճառով, և ամենայն հավանականությամբ մի քանի տարի անց «Հարավային գազային միջանցք» նախագիծը կդադարեցվի, ինչպես դա եղավ «Նաբբուկո» նախագծի դեպքում հենց այդ պատճառով¹³: Առավել ևս, որ անգամ 20 միլիարդ խորանարդ մետր գազ ԵՄ առաքելու դեպքում այն կկազմի պահանջարկի միայն 2 տոկոսը, երբ ռուսական գազն ապահովում էր դրա գրեթե կեսը: Ընդ որում, հուն այդ կեղծ գաղափարների ԵՄ պաշտոնյաները աչք են փակում Եվրոպական հիմնական արժեքների նկատմամբ Ադրբեյջանի ընդգծված քամահրական վերաբերմունքի վրա: Եվրոպական արժեքների ստորադասումը կասկածելի շահերին ԵՄ-ն նախընտրեց նաև ռուս-ուկրաինական պատերազմի առնչությամբ: Այս պատերազմը

¹¹European Commission, EU and Azerbaijan enhance bilateral relations, including energy cooperation, https://ec.europa.eu/commission/presscorner/detail/en/IP_22_4550 (01.06.23).

¹²Թորոսյան Հ., Անվտանգության ոլորտում ՀՀ-ԵՄ հարաբերությունների խորացման հնարավորության մասին, *21-րդ դար*, 4 (68), 2016, էջ 94:

¹³ Թորոսյան Տ., Նոր աշխարհակարգի ձևավորման ազդեցությունը դարաբաղյան հակամարտության կարգավորման վրա. ինքնորոշում, թե՞ ցեղասպանություն, *Հայկական քաղաքագիտական հանդես*, 1 (17), 2022, էջ 19:

աննախադեպ էր նրանով, որ ԵՄ-ն մի կողմ դնելով իր որդեգրած արժեքները, ակնհայտորեն սկսեց զինել հակամարտող կողմին՝ օգտագործելով Եվրոպական խաղաղության հիմնադրամի միջոցները Ուկրաինային ռազմական օգնություն ցուցաբերու համար¹⁴:

ՀՀ Եվրոպական ինտեգրման մարտահրավերները

Հետխորհրդային տրանսֆորմացիայի ընթացքում տևական ժամանակ Հայաստանի Հանրապետությունը փորձում էր վարել բազմավեկտոր արտաքին քաղաքականություն՝ անդամակցելով հետխորհրդային տարածքում ձևավորվող միջազգային ինտեգրման կառույցներին, մինչև ժամանակ անդամ լինելով Եվրոպայի խորհրդին ու արդյունավետ համագործակցային հարաբերություն հաստատելով Եվրոպական միության հետ: Այդպիսի փոխլրացնող քաղաքականությունը հնարավորություն էր տալիս Հայաստանին ընդլայնել մանևրելու իր կարողությունը և թույլ չտալ ավելի խորանալ ռուսական ազդեցության ուղեծրում¹⁵: Սակայն ակնհայտ էր, որ այդպիսի քաղաքականությունը չէր կարող անվերջ շարունակվել և նոր աաշխարհակարգի ձևավորման համար մրցակցության լարվածության մեծացմանը զուգահեռ աճում էին մարտահրավերները:

Նախ, 2013թ. ԵՄ-ի հետ Ասոցացման համաձայնագրի ստորագրումից հրաժարումից և Եվրասիական տնտեսական միությանն անդամակցումից հետո, թվում էր, թե կխզվեն ԵՄ-ի հետ հարաբերությունները, բայց Հայաստանը կարևորում էր այդ համագործակցությունն ու պատրաստ էր, արտաքին հարաբերություններում հաստատված նոր իրողությունները հաշվի առնելով, կնքել նոր համաձայնագիր, ինչը իրականացվեց 2017թ. նոյեմբերին՝ Համապար-

¹⁴ **Trenkov-Wermuth C., Zack J.**, Ukraine: The EU's Unprecedented Provision of Lethal Aid is a Good First Step, United States Institute of Peace, October 2022, <https://www.usip.org/publications/2022/10/ukraine-eus-unprecedented-provisionlethal-aid-good-first-step>.

¹⁵ **Terzyan A.**, The Evolution of Armenia's Foreign Policy Identity: The Conception of Identity Driven Paths. *Friends and Foes in Armenian Foreign Policy Discourse, Values and Identity As Sources of Foreign Policy in Armenia and Georgia*, 'UNIVERSAL', p. 153.

փակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) կնքմամբ: Այն ուժի մեջ է մտել 2021թ. մարտի 1-ից և այժմ Հայաստան-ԵՄ հարաբերությունները կարգավորվում են այդ համաձայնագրով: Հատկա-նշանական է, որ ԵՄ-ն մերժեց հայկական կողմի առաջարկած «Բացառության դրույթը», ինչը թույլ կտար Հայաստանին հրաժարվել ՀԸԳՀ-ով ամրագրված պարտավորությունների կատարումից այն ոլորտներում, որոնցում Եվրասիական տնտեսական միությունը կարող է ընդունել նոր դրույթներ¹⁶: Սա նշանակում է, որ ՀԸԳՀ-ի շուրջ բանակցողները հիմնվել են ձախողված ԵՄ-Հայաստան Ասոցացման համաձայնագրի նախագծի տեքստի վրա՝ այն համապատասխանեցնելով ԵՄ-Հայաստան հարաբերությունների նոր ձևաչափին: Բացառության դրույթի մերժումը ԵՄ-ի կողմից կարելի է դիտարկել որպես «զգուշացում» Հայաստանին, որ ՍԵՊԱ-ի իրականացման գործընթացը չպետք է ստորադասվի հայ-ռուսական հարաբերություններին, մասնավորապես ՀՀ-ԵԱՀԿ ինտեգրման գործընթացների: Այս հարցում Հայաստանը պետք է ցուցաբերի հետևողականություն, քանի որ ընտրել է «և-և» քաղաքականությունը, ինչն էլ նշանակում է ամեն ջանքի գործադրում երկկողմ հարաբերությունների պահպանման համար՝ և՛ Ռուսաստանի Դաշնության, և՛ Եվրոպական միության հետ: Եվ, ինչպես նշում է Պլամեն Պանտևը. «Փոքր պետություններն են որոշում ինչպես արձագանքել արտաքին մարտահրավերներին ու օգտագործել առկա հնարավորությունները»¹⁷: Բայց չպետք է մոռանալ նաև այն հանգամանքը, որ Հայաստանի արտաքին քաղաքականության վրա մեծապես ազդում է այլ պետությունների աշխարհաքաղաքական ազդեցությունը տարածաշրջանում ու դրա արդյունքում ձևավորված միջավայրը, անվտանգության առջև ծառացած մշտական սպառնալիքները և ազդեցության լծակները ՌԴ-ի կողմից: Եվ կարելի է ասել, որ Հայաստանի արտաքին քաղաքական վարքագիծը իրավիճակային է: Եվրոպական միությունն էլ ընդունելով Հայաստանի ընտրությունը,

¹⁶Kostanyan H., Giragosian R., EU-Armenian Relations: Charting a Fresh Course. *CEPS Research Report*, № 14, 2017, p. 7.

¹⁷Pantev P., The Fluid Nature of Smallness: Regulation of the International System and the Challenges and Opportunities of Small States. *Small States in Europe. Challenges and Opportunities*. Ed. Robert Steinmetz and Anders Wivel. 2010, p. 104.

միաժամանակ հաշվի է առնում Հայաստանի շարունակական ձգտումը խորը երկկողմ կապեր հաստատելուն, փորձում է ճկունություն ցուցաբերել իր քաղաքականությունը պետության ընտրած ուղուն հարմարեցնելու հարցում, որի վառ ապացույցը ՄԵՊԱ-ն է¹⁸։ ԵՄ-ն նաև հաշվի է առնում, որ այդ համաձայնագիրը անդամակցության չձգտող պետության հետ է, ի տարբերություն Վրաստանի, Ուկրաինայի և Մոլդովայի, որոնք ցանկանում են անդամակցել ԵՄ-ին, որը Հայաստանի պարագայում հանդես է գալիս որպես արդիականացման գլխավոր գործընկեր¹⁹։

Չպետք է մոռանալ նաև, որ ԵՄ-ի հետագա քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ կախված է լինելու ՀՀ կառավարության կողմից բարեփոխումների իրականացման հարցում ունեցած վճռականությունից և կատարման տեմպից, քանի որ ԵՄ երկրները ԱլԳ մասնակիցների նկատմամբ իրենց քաղաքականությունը հաճախ պայմանավորում են բարեփոխումների և փոխադարձաբար ձեռք բերված պայմանավորվածությունների պատշաճ կատարմամբ։ Այստեղ էլ կան հակասություններ՝ կապված փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտների հետ։ Նախ, տնտեսական ոլորտի առնչությամբ համաձայնագրում նշվում է. «Հայաստանի Հանրապետությունը պետք է լրացուցիչ քայլեր ձեռնարկի՝ արդյունավետ գործող շուկայական տնտեսություն զարգացնելու և իր տնտեսական ու ֆինանսական կարգավորումներն ու քաղաքականությունները սույն Համաձայնագրով համաձայնեցված դեպքերում Եվրոպական միության տնտեսական ու ֆինանսական կարգավորումներին ու քաղաքականություններին աստիճանական մոտարկելու ուղղությամբ»։ Իսկ ԵԱՀԿ համաձայնագրում նշվում է. «Տնտեսության այլ ոլորտներում անդամ պետությունները պետք է ձգտեն իրականացնել համակարգված կամ համաձայնեցված քաղաքականություն՝ Միության հիմնական սկզբունքներին և

¹⁸ **Delcour L., Ghazaryan N.**, Armenia: A Precarious Navigation between Eurasian Integration and the European Union, *Principled Pragmatism in Practice*, 2021, 19, 161.

¹⁹ **Delcour L., Wolczuk K.**, 'The EU's Unexpected "Ideal Neighbour"? The Perplexing Case of Armenia's Europeanisation' *Journal of European Integration*, 2015, 37(4), 500.

նպատակներին համապատասխան»: Սա ցույց է տալիս, որ անդամ պետությունները այլ կողմի հետ տնտեսական հարաբերություններ կառուցելիս պետք է հաշվի առնեն ԵԱՏՄ պարտավորությունները: Բացի այդ, ՌԴ-ն համարվում է Հայաստանի հիմնական տնտեսական գործընկերը նաև էներգակիրների մատակարարումների առումով²⁰:

Մյուս, թերևս ամենակարևոր խնդիրը անվտանգության մարտահրավերն է, որն ավանդական Հայաստանին կախվածության մեջ է պահել ՌԴ-ից: Անվտանգության երաշխիքների փնտրտուքն է Հայաստանին ստիպում իր արտաքին քաղաքականությունը դարձնել իրավիճակային: Եթե մյուս մարտահրավերների դեպքում Հայաստանը կաշկանդվում է մեկ առանձին ոլորտում, ապա այս դեպքում անվտանգությունը ազդում է ՀՀ արտաքին քաղաքականության վրա: Անվտանգությունը այն մարտահրավերն է, որը ստիպում է Հայաստանին կախվածության մեջ մնալ Ռուսաստանից: Թեև Հայաստանը փորձում է բազմազանեցնել իր անվտանգության երաշխիքների միջավայրը, այնուամենայնիվ հիմնական երաշխավորը մնում է Ռուսաստանը²¹: Եվ, եթե տնտեսական ու անվտանգային ոլորտները Հայաստանը «զիջել է» Ռուսաստանին, ապա մյուս ոլորտներում՝ ժողովրդավարություն, մարդու իրավունքներ, քաղաքացիական հասարակություն, շրջակա միջավայր և կլիմա, սպառողների շահերի պաշտպանություն, միգրացիա, տեղեկատվական հասարակություն, սոցալիական քաղաքականություն, կրթություն և գիտություն, մշակույթ, առողջապահություն, տարածքային զարգացում և վիճակագրություն, հարաբերությունները զարգացնում է ԵՄ-ի հետ՝ փորձելով հասնել հավասարակշռման ու խուսափել ամբողջությամբ մեկ պետության գերակա ազդեցությունից: Այնուամենայնիվ Հայաստանին նույնիսկ մեկ առանձին ոլորտն է խիստ խոցելի

²⁰ **Markarov A.**, Armenia's Foreign Policy Priorities. Are There Any Major Changes Following the Spring 2018 Political Transformation?, <https://css.ethz.ch/en/services/digital-library/articles/article.html/af3b99c5-d29e-4ace-a7c7-2e5663fe5932>

²¹ **Ghazaryan N., Delcour L.**, From EU Integration Process to the Eurasian Economic Union: The Case of Armenia, Post-Soviet Constitutions and Challenges of Regional Integration, In P. Van Elsuwege, & R. Petrov (Eds.), *Post-Soviet constitutions and challenges of regional integration*. Routledge, 2018, p. 5-6.

դարձնում, առավել ևս անվտանգայինը: Մեծ տերությունները փոքրերի համար դառնում են և՛ հովանավոր, և՛ սպառնալիք, քանի որ նրանց միջև եղած տարբերությունը հանգեցնում է կախվածության և ինչպես նշում է Քրիստոս Քասիմերիսը, ա) հովանավոր մեծ պետությունն ապահովում է հաճախորդ փոքր պետության անվտանգությունը (օրինակ՝ տարածքային ամբողջականությունը)՝ դրա դիմաց հաճախորդից ստանալով այլ ծառայություններ (օրինակ՝ ռազմական օրյեկտներ), բ) հաճախորդ պետությունը կարող է մեծ պահանջներ ներկայացնել իր հովանավորին, բայց մեծ տերությունն ունի սակարկման ավելի մեծ ներուժ, ու թեև գ) նրանց հարաբերությունները հիմնված չեն հարկադրանքի վրա, այդուհանդերձ սպառնալիքի կիրառումը մեծ տերության կողմից չի բացառվում, դ) հաճախորդը չի ձգտի դուրս գալ հովանավորի ազդեցության գոտուց, որպեսզի չգրկվի մեծ տերության տրամադրած «վահանից»²²: Իսկ այդ ամենը ստեղծում է անկայուն հավասարակշռություն, որը կարող է ցանկացած պահի ծածուկվել, ինչպես դա տեղի ունեցավ Լեռնային Ղարաբաղի խնդրի առնչությամբ:

Շարունակաբար հաջորդ կարևոր մարտահրավերը եղել է Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը, որը սերտորեն կապված է անվտանգության մարտահրավերի հետ: Մի քանի գործոնների ազդեցությամբ 2020թ., Թուրքիայի անմիջական աջակցությամբ Ադրբեյջանի ռազմական ագրեսիայից հետո ստեղծվեց միանգամայն նոր իրավիճակ: Թուրքիայի աջակցությունն Ադրբեյջանին դրսևորվել է բոլոր հնարավոր միջոցներով՝ ռազմական, քաղաքական, տեղեկատվական, դիվանագիտական և այլն՝ մեկ ազգ, երկու պետություն կարգախոսով, անգամ ներգրավելով Սիրիայից տեղափոխված վարձկան-ահաբեկիչներ²³: 2021թվականի երկրորդ կեսից միանգամայն փոխվեց հակամարտության կարգավորման ձևաչափը՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի փոխարեն, որը կարգավորման սխեմայի հիմքում դրել էր միջազգային իրավունքի երեք հիմնական սկզբունքներ՝ այդ թվում ինքնորոշման իրավունքը, այլևս խնդիրը փորձում են լուծել

²² **Kassimeris C**, The foreign policy of small powers. *International Politics* , 2009, 46, 1, 2009, p. 94-95.

²³ **Thomas De Waal**, The Nagorny Karabakh Conflict in Its Fourth Decade, CEPS Working Document No. 2021-02, 2021, p. 5.

Ռուսաստանը, Եվրամիությունը և Միացյալ Նահանգներն առանձին-առանձին՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման խնդիրը փոխարինելով Հայաստանի և Ադրբեջանի միջև խնդրով: Այդ զարգացումների գագաթնակետը դարձավ Լեռնային Ղարաբաղի ողջ բնակչության դուրս մղումն Արցախից՝ ֆիզիկական ոչնչացման սպառնալիքներով: Այդ երեք միջնորդներից յուրաքանչյուրը փորձում է հայկական կողմի շարունակական զիջումների հիման վրա հասնել այսպես կոչված «խաղաղության պայմանագրի» ստորագրման, ինչը ոչ մի իրական խնդիր չի լուծելու Հայաստանի համար: Հակառակը Ադրբեջանը շարունակում է իր հակահայկական քաղաքականությունը՝ սադրանքներ իրականացնելով ՀՀ ինքնիշխան տարածքում՝ խախտվում են մարդկանց իրավունքները, թիրախավորվում է խաղաղ բնակչությունը, փորձում են հայաթափել սահմանամերձ գյուղերը: Այդ քաղաքականությունը հանգեցնում է մարդկային զոհերի, խաթարում տարածաշրջանային անվտանգությունը և խաղաղությունը, հանգեցնում մարդասիրական աղետների: Թե Ռուսաստանը, թե Եվրամիությունը շահունակում են իրենց սիրախաղերը Ադրբեջանի հետ՝ Հայաստանի հաշվին զիջումների հիման վրա: Եւ-ն այս դեպքում էլ մի կողմ դրեց հակամարտությունների կարգավորման համար սահմանված միջազգային իրավունքի հանրահայտ սկզբունքներն ու ասպարեզ բերելով դրա հետ բացարձակապես ոչ մի կապ չունեցող Ալմաթիի հռչակագիրը ամեն ինչ վերածել է Ադրբեջանի հետ պարզունակ առևտրի՝ անիրական գազային հոսքերի ներգրավման: Հերթական անգամ Հայաստանը ներքաշվեց օտար խաղերի մեջ՝ հանուն դրա զոհաբերելով ամենաթանկը, չշահելով ոչինչ ու բազմապատկելով մարտահրավերները:

Եվրոպական ինտեգրման մարտահրավերները. Վրաստանի դեպքը

«Վարդերի հեղափոխության» հաղթանակը հիմք դարձավ արևմտյան կողմնորոշումով Վրաստանի արդիականացման համար: Հետագայում պարզ դարձավ, որ հեղափոխության նախաձեռնողների հիմնական մասը, այդ թվում նոր իշխանությունը ձևավորած

պաշտոնյաների մեծ մասը Արևմուտքում սովորած անձինք էին²⁴։ Արևմուտքն էլ ստանձնեց հեղափոխության հովանավորի դեմակատարությունը՝ մշտապես աջակցելով այն իրականացրած Սաակաշվիլուն։ Է. Շևարնազադեի հրաժարականից 10 օր անց, ԱՄՆ պետքարտուղար Քոլին Փաուերը հրապարակային ելույթ ունեցավ, որում քննադատեց Ռուսաստանին և պահանջեց վերջինիս զորքերը դուրս բերել Վրաստանի տարածքից։ Այս հայտարարությունից հետո, ԱՄՆ պաշտպանության նախարար Դոնալդ Ռամսֆելդը այցելեց Թբիլիսի՝ ի նշան աջակցության։ Պատահական չէ ԱՄՆ-ի հետաքրքրությունը Վրաստանի աշխարհագրական դիրքի՝ Սև և Կասպից ծովերի միջև տեղադրվածության նկատմամբ, որը, մշտապես ազդեցիկ տերությունների հետաքրքրության կենտրոնում է եղել։ Խորհրդային միության փլուզումից հետո ԱՄՆ-ն փորձեց ամեն կերպ օգտագործել ընձեռված շանսը՝ տարածաշրջանում Ռուսաստանի ազդեցության թուլացման և իր դերի բարձրացման համար²⁵։ 2004թ. Մ. Սաակաշվիլին հրապարակավ հայտարարեց, որ Վրաստանի քաղաքականությունը լինելու է ամերիկամետ և եվրոպամետ։ Երկրում սկսեցին մշակել արտաքին քաղաքականության նոր ուղղությունները՝ արևմտամետ շեշտադրումներով։ Կառավարության կառուցվածքում ստեղծվեց եվրոպական և եվրատլանտյան ինտեգրման հարցերով պետական նախարարի պաշտոն, իսկ նույն թվականի դեկտեմբերի 31-ին՝ պետնախարարի աշխատակազմը։ Արդյունավետ աշխատանքի և առաջադրված խնդիրների իրագործման նպատակով նոր կառույցում ստեղծվեցին երեք վարչություններ՝ եվրոպական ինտեգրման, եվրատլանտյան ինտեգրման և ԵՄ ծրագրերի համակարգման համար։ 2005թ. հիմնվեց երկու պետական հանձնաժողով՝ ՆԱՏՕ-ին ինտեգրվելու պետհանձնաժողովը և ԵՄ-ին ինտեգրվելու պետհանձնաժողովը²⁶։ Երկրի ներսում եվրատլանտյան ինտեգրման գաղափարի տարածման համար Վրաստանի նախագահի հրամանով ստեղծվեց

²⁴Саакашвили о необходимости внедрения Грузии меритократии, <https://www.apsny.ge/2011/pol/1296008916.php> (07. 06.23).

²⁵Barry G., Volkov V., World Socialist Web Site, 2003, [online] Available at: <https://www.wsws.org/en/articles/2003/12/geor-d05.html>

²⁶Office of the State Minister on European and Euro-Atlantic Integration, <http://www.eu-nato.gov.ge/> (10.06.23).

նաև ՆԱՏՕ և ԵՄ գծով տեղեկատվական կենտրոն²⁷: Վրաստանի մայրաքաղաքում գլխավոր գրասենյակից բացի կենտրոնն ութ ներկայացուցչություն ունի երկրի շրջաններում: Այս կառույցի նախագծերը ֆինանսավորվում են ինչպես Վրաստանի պետությունից, այնպես էլ ՆԱՏՕ-ի և ԵՄ-ի կողմից: Վրաստանը 2005թ. հրապարակեց իր Ազգային անվտանգության նոր հայեցակարգը, որտեղ նշվում էր, որ ԱՄՆ-ն իր ռազմական դաշնակիցն է, և իրենք աշխատելու են ՆԱՏՕ և ԵՄ անդամ դառնալու ուղղությամբ²⁸:

Այս ամենին զուգահեռ, վատանում էին հարաբերությունները Ռուսաստանի Դաշնության հետ: ՌԴ-ն փորձեց Վրաստանին պատժել ավանդական միջոցներով, որոնք լուրջ ազդեցություն ունեցան Վրաստանի տնտեսության վրա²⁹: Սա առաջացրել էր վրացիների դժգոհության: Վրաստանում առկա հիմնական խնդիրներից էր նաև երկրում տեղակայված ռուսական ռազմակայանները, որոնց դուրս բերման ժամկետների հարցը քննարկումների առարկա էր դարձել միջազգային մակարդակով: Այս խնդրի լուծմամբ շահագրգռված էին ԱՄՆ-ն և ԵՄ-ն, քանի որ կթուլանային Ռուսաստանի ռազմավարական և քաղաքական դիրքերը ոչ միայն Վրաստանում, այլև ամբողջ Հարավային Կովկասում: Վրաստանի վառ արտահայտված եվրատլանտյան ուղղվածություն ունեցող արտաքին քաղաքականությունը և հակառուսական հոետորաբանության շարունակական սաստկացումը ժամանակի ընթացքում էլ ավելի էին բարդացնում Վրաստանի նոր դեկլարության առանց այդ էլ չստացված փոխհարաբերությունները Ռուսաստանի Դաշնության հետ: Վատթարացած ներքաղաքական իրավիճակը, ռուսական շուկայի փակումը՝ վրացի աշխատանքային միգրանտների և ապրանքների համար, նպաստեցին բնակչության դժգոհության աճին: Հակառուսական քաղաքականության գագաթնակետը դարձավ 2008թ. օգոստոսի ռուս-վրացական պատերազմը, որի

²⁷ Information Centre on NATO and EU, <http://www.natoinfo.ge/ge/struqtura> (10.06.23).

²⁸ National Security Concept of Georgia, http://www.parliament.ge/files/292_880_927746_concept_en.pdf (10.06.23).

²⁹ **Mackedon J.**, Russian Economic Pressure has Georgia Thinking about Life Outside the CIS, Eurasianet, Business and Economics, 2006, <https://eurasianet.org/russian-economic-pressure-has-georgia-thinking-about-life-outside-the-cis>

արդյունքում Ռուսաստանը ճանաչեց Աբխազիայի և Հարավային Օսիայի անկախությունը, խզվեցին դիվանագիտական հարաբերությունները Ռուսաստանի հետ: Հակառակ դրան, ակտիվացան ԵՄ-Վրաստան հարաբերությունները՝ էապես տարբերվելով մինչ պատերազմը եղած վիճակից: Կառավարությունը նույնիսկ սկսեց իրականացնել օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումներ, որոնք ամրագրված էին Գործընկերության ու համագործակցության համաձայնագրով և Եվրոպական հարևանության քաղաքականության ծրագրով: Նոր փուլը Վրաստանի համար նշանավորվեց Արևելյան գործընկերությանն անդամակցությամբ և 2013թ. Ասոցացման համաձայնագրի ստորագրումով՝ ներառյալ Խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագիրը: Սակայն, ինչպես Հայաստանն է բխվել ՄԵՊԱ-ի իրականացման խնդրին, այնպես էլ Վրաստանը՝ Ասոցացման համաձայնագրի, ինչը դարձավ լուրջ մարտահրավեր: Վրաստանի համար հիմնական խնդիրը կառուցվածքային բարեփոխումների իրականացումն է, տնտեսության բազմազանեցումը ու արդիականացումը, ֆինանսական ենթակառուցվածքների բացերի լրացումը, ուժեղ կառավարումը, քաղաքացիական հասարակության զարգացումը, կոռուպցիայի դեմ պայքարը, տրանսպորտային և էներգետիկ ցանցերի ստեղծումը և այլն: Այդ խնդիրներն է մշտապես մատնանշում Եմ-ն՝ ի պատասխան անդամակցության ցանկությունների բարձրաձայնումի:

Ռուս-ուկրաինական պատերազմի սկսումից հետո Վրաստանը անընդհատ շեշտում է անդամակցության գործընթացի անհրաժեշտությունը՝ 2022թ. մարտի 3-ին ներկայացրելով ԵՄ-ին անդամակցելու դիմում: Հունիսի 17-ին Եվրոպական հանձնաժողովը անդրադարձել է դիմումին՝ նշելով, որ Վրաստանը կդառնա թեկնածու պետություն այն ժամանակ, երբ լիովին համապատասխանի Կոպենհագենյան չափանիշներին և անդրադառնա հիմնական առաջնահերթություններին: Ի տարբերություն Վրաստանի, Ուկրաինան և Մոլդովան արդեն թեկնածու պետություններ են: Հատկանշական է, որ ի տարբերություն Վրաստանի, Ուկրաինան ունի լուրջ դժվարություններ՝ կապված կոռուպցիայի և հանցավորության վերահսկման ու կանխարգելման, օրենքի գերակայության և այլ խնդիրների հետ: Մասնավորապես,

կոռուպցիայի մակարդակի տվյալներով Ուկրաինան շատ ավելի վատ ցուցանիշներ ունի, քան Վրաստանը հայտնի ինդեքսի ցուցանիշների համաձայն³⁰: Հեշտ է նկատել, որ եթե ռուս-ուկրաինական պատերազմը որոշիչ նշանակություն ունեցավ Ուկրաինայի անդամակցության հարցում, ապա Վրաստանի դեպքում դարձավ մերժման հիմնական գործոնը: Պատերազմի սկսումից հետո Արևմուտքը և ԵՄ-ն սկսեցին պատժամիջոցներ կիրառել Ռուսաստանի դեմ՝ ակնկալելով նման արձագանք նաև Վրաստանից, բայց Վրաստանը դրանց միացել է միայն մասնակիորեն: Վստահորեն կարելի է պնդել, որ Վրաստանում չեն մոռացել 2008թ. ռուս-վրացական հնգօրյա պատերազմի արդյունքները, որը նույնպես հրահրել էր Միացյալ Նահանգները: Արևմուտքն ակնկալում էր, որ Վրաստանը Ռուսաստանի դեմ 2-րդ ճակատ կբացի արխագական և հարավօսական հակամարտությունների պատրվակով, բայց Վրաստանը չի շտապում ինչ-որ քայլեր անել և սրել հարաբերությունները Ռուսաստանի հետ, քանի որ տեսնում է թե ինչ աղետալի վիճակում է հայտնվել Ուկրաինան, որը վրացի ժողովրդի համար ցավալի հիշողություններ է առաջացնում: Ռուսաստանն ինչքան էլ որ կենտրոնացած լինի 1-ին ճակատում, միևնույն է ժամանակ կունենա Աբխազիայի և Հարավային Օսիայի համար: Ռուսական զորքերը շարունակում են տեղակայված մնալ Աբխազիայում ու Ցխինվալիում: Հատկանշական է, որ Վրաստանի զսպվածությունն ի վերջո արդյունք տվեց: Թբիլիսին ոչ միայն չներքաշվեց արկածախնդրության մեջ, այլև հետևողական ջանքերով հասավ այն բանին, որ 2023թ. դեկտեմբերին ԵՄ-ն խոստացավ շուտով քննարկել անդամության թեկնածու պետության կարգավիճակ շնորհելու հարցը:

Եվրոպական ինտեգրման մարտահրավերները. Ուկրաինայի դեպքը

Ուկրաինայում տեղի ունեցած շրջադարձային դեպքերը՝ Նարնջագույն հեղափոխություն, Մայդան, Դոնբաս և Մինսկի երկու

³⁰ Corruption Perceptions Index, <https://www.transparency.org/en/cpi/2021/index/ukr> (12.06.23).

համաձայնագրերի ձախողում³¹, Ուկրաինան հրաժարվել է ոչ բլոկային պետության կարգավիճակից, ՆԱՏՕ-ին ու ԵՄ-ին անդամակցելը հռչակել երկրի արտաքին քաղաքականության առաջնահերթություն, ինչպես նաև նպատակ դրել խորացնել ԱՄՆ-ի հետ ռազմական համագործակցությունը:

Ուկրաինայում եվրոպականացման նոր փուլի մեկնակետը սկսվում է 2014թ. նախագահ Յանուկովիչին պաշտոնանկ անելուց և Ասոցացման համաձայնագրի ստորագրումից, որը դարձավ կողմերի համար քաղաքական ասոցացման և տնտեսական ինտեգրման իրավական հիմք, ներառելով նաև Խոր և համապարփակ ազատ առևտրի գոտու վերաբերյալ համաձայնագիրը: Համաձայնագրի ստորագրումը Ուկրաինայի արտաքին քաղաքականության համար եղավ շրջադարձային՝ պետության աշխարհաքաղաքական ու տնտեսական ինտեգրման վերջնական կողմնորոշում³²: Միաժամանակ, եվրոպականացումը պետք է լինի լրջորեն գիտակցված ընտրություն, քանի որ այն պահանջում է ինտեգրման գործընթացի ճանապարհին և դրանից հետո էլ ստեղծված բարդ մարտահրավերների հաղթահարում: Ինչպես վկայում է Ուկրաինայի դեպքը, այդ մարտահրավերներն այնքան ավելի բարդ են, որքան ավելի վճռական են եվրաինտեգրման, հատկապես՝ եվրաատլանտյան ինտեգրման ջանքերը:

Ուկրաինայի համար Ասոցացման համաձայնագրի լիարժեք իրականացումն այն մարտահրավերն է, որի գործարկումը շոշափելի կդարձնի ԵՄ անդամակցության հեռանկարը: Ուկրաինան խնդիրներ ունի կապված տնտեսական աճի, ֆինանսական կայունության, ինստիտուցիոնալ միջավայրի բարելավման, քաղաքացիական հասարակության, կոռուպցիայի կանխարգելման և այլ ոլորտային խնդիրներ, որոնք պետք է լուծվեն համաձայնագրին համապատասխան:

ԵՄ-ն տարբեր միջոցներով աջակցում է Ուկրաինային առկա խնդիրների հաղթահարման համար: Ուկրաինան, Հայաստանի և Վրաստանի նման, անդամ է ԵՄ մի շարք ծրագրերի՝ սկսած

³¹ **Dronova K.**, Minsk Protocol is a Big Failure?, <https://voxukraine.org/en/minsk-protocol-is-a-big-failure>

³² **Odyseas S.**, The EU-Ukraine Association Agreement As A Framework Of Integration Between The Two Parties, *Procedia Economics and Finance* 9, 2014, p. 258.

Եվրոպական հարևանության քաղաքականությունից մինչև Արևելյան գործընկերություն: Սակայն, հատկապես կարևոր գործոն է հասարակության վերաբերմունքը ԵՄ-ի նկատմամբ: Դեռևս 2019թ. անցկացված հարցումները ցույց են տվել, որ ուկրաինացիների 69 տոկոսը աջակցում է ԵՄ-ին միանալու Ուկրաինայի ձգտումներին, ինչը բավական բարձր ցուցանիշ է նախորդ տարիների համեմատ³³ (թեև կարելի է ենթադրել, որ այդ ցուցանիշը գրանցվել է առանց Դոնբասի մասնակցության, որի բնակչության ճնշող մեծամասնությունը նախագահական ընտրությունների ժամանակ քվեարկել է ոչ թե արևմտամետ, այլ ռուսամետ թեկնածուի օգտին): Հասարակության վերաբերմունքը դեպի ԵՄ և ԵՄ արժեքներ էլ ավելի ակտիվացել է այն պահից սկսած երբ 2022թ. փետրվարին Ռուսաստանը պատերազմ սկսեց Ուկրաինայի դեմ: Եվ 2022թ. հունիսի 30-ին որպես «խրախուսանք» Ուկրաինան ստացավ ԵՄ թեկնածու պետության կարգավիճակ: Սակայն Ուկրաինան շատ թանկ գին է վճարել դրա համար՝ մարդկային ու նյութական ահռելի կորուստների գնով շարունակում է պատերազմը, մինչդեռ չի երևում, թե Կիևն ինչպես պետք է հաղթի այդ կործանարար պատերազմում: Միաժամանակ, տեսանելի է Արևմուտքում աճող դժկամությունը Ուկրաինային տրամադրվող հսկայական աջակցության նկատմամբ: Իսկ պատերազմի այլ ելքի դեպքում դժվար է պատկերացնել որևէ տանելի լուծում Ուկրաինայի համար:

Կիևի միակ ձեռքբերումը՝ թեկնածու պետության կարգավիճակի շնորհիվ, հղի է լուրջ մարտահրավերներով և՛ ԵՄ-ի, և՛ Ուկրաինայի համար: Անկախ պատերազմի ելքից, Ուկրաինան գտնվում է տնտեսապես խիստ քայքայված վիճակում և, բնականաբար, չի կարողանալու արժանապատիվ տեղ զբաղեցնել ԵՄ միասնական շուկայում: Ակնհայտ է, որ պատերազմից առաջ էլ Ուկրաինան չէր համապատասխանում Կոպենհագենյան չափանիշներին, իսկ այժմ խնդիրներն էլ ավելի են բարդացել: Բնականաբար, ստեղծված իրավիճակում Ուկրաինային տնտեսական կամ նման այլ խնդիրներ առանձնապես էլ չեն հետաքրքրում, քանի որ եվրաինտեգրումը

³³**Viktoriia S.**, Problems of Ukraine's Integration into the European Union, *Organization and Management Series No. 146*, 2020, p. 472.

Ուկրաինայի համար դարձել է ավտանգության ապահովման երաշխիք:

Հատկանշական է, որ Ուկրաինայի եվրաինտեգրման մարտահրավերներից գլխավորն այն է, որ Ռուսաստանն այդ գործընթացը դիտարկում է որպես հարված իր կենսական շահերին: Դեռևս 2021թ. դեկտեմբերին ՌԴ նախագահ Վ. Պուտինը հայտարարել էր Ռուսաստանի անվտանգության «օրինականորեն ամրագրված երաշխիքներ» մշակելու համար միջազգային բանակցություններ «հրատապ» և «անհապաղ» սկսելու անհրաժեշտության մասին, ինչպես նաև նշել, որ պետք է «բացառվեն դեպի արևելք ՆԱՏՕ-ի ցանկացած առաջխաղացում և զենքի տեղակայում Ռուսաստանի հարևան երկրներում, առաջին հերթին՝ Ուկրաինայում»³⁴: Բայց հեշտ է համոզվել, որ տեղի է ունենում հակառակը՝ Արևմուտքը և ԵՄ-ն դարձել են հակամարտող կողմ և ըստ էության պատերազմը ոչ թե Ռուսաստանի և Ուկրաինայի միջև է, այլ Ռուսաստանի և Արևմուտքի, որի ավարտը կհանգեցնի նոր իրողությունների սկզբի և կդառնա նոր աշխարհակարգի հիմքը և մեկնակետը:

Եվ չի բացառվում, որ այլ պետություններ ևս ԵՄ-ին անդամակցությունը դիտեն որպես անվտանգության երաշխիք, ինչի հետևանքով ԵՄ-ն կկորցնի իր երբեմնի իսկական դերն ու նշանակությունը:

Եզրակացություն

Հետխորհրդային տարածքում՝ Հայաստանի, Վրաստանի և Ուկրաինայի օրինակով, եվրոպական ինտեգրման աշխարհաքաղաքական մարտահրավերների վերլուծությունը ցույց է տալիս, որ

1. Եվրոպական ինտեգրման աշխարհաքաղաքական մարտահրավերները հետխորհրդային տրանսֆորմացիայի երրորդ փուլում որակական ազդեցություն են ունեցել ոչ միայն այդ գործընթացում ներգրավված պետությունների ընթացքի վրա,

³⁴Заявление МИД России о диалоге с США и другими странами Запада относительно выработки гарантий безопасности, https://mid.ru/ru/press_service/spokesman/official_statement/1789855/ (01.07.23).

այլն ԵՄ-ի վրա: Դա դրսևորվում է ինչպես ԵՄ արտաքին քաղաքականության մեջ, որում որոշումների ընդունումն ավելի ու ավելի հաճախ է հիմնվում աշխարհաքաղաքական շահերի վրա՝ դուրս մղելով արժեքները, այլն անդամակցության ձգտող երկրների հաջողություններն ու ձախողումները գնահատելիս՝ որպես գլխավոր գործոն:

2. Եվրոպական ինտեգրումը՝ անդամակցությունը ԵՄ-ին, այսօր պետությունները դիտարկում են ոչ թե որպես քաղաքակրթական ընտրություն, այլ անվտանգության երաշխիք, ինչն աստիճանաբար հանգեցնում է ԵՄ արժեքների և ԵՄ-ին որպես արժեքների հիման վրա գործող ինտեգրման ինստիտուտի իրական դերի երկրորդ պլան մղվելուն, առաջնային պլան բերելով աշխարհաքաղաքական շահը: Այդ միտումները, համադրվելով լիբերալ ժողովրդավարության ճգնաժամի հետ, լուրջ սպառնալիք են դառնում եվրոպական քաղաքակրթության ապագայի համար:
3. ԵՄ ընկրկումն արժեքակենտրոն գործունեությունից դեպի աշխարհաքաղաքական շահերի գերակայություն, սկսվեց դեռևս 2004թ. մեծ ընդլայնումից: Արժեքների վրա հիմնված գլխավոր ինստիտուտի բնույթին ոչ լիովին պատրաստ երկրների անդամակցությունը, ինչպես նաև աշխարհաքաղաքական գործոնի ահագնացող ազդեցությունը անդամ պետությունների գործողությունների վրա ԵՄ-ին զրկում է իր գրավչությունից ու քաղաքակրթական ամենակարևոր գործիքից:
4. Դիտարկված երեք պետությունների դեպքերը ցույց են տալիս, որ թեև դրանց եվրաինտեգրման ուղիները, ինչպես նաև դրանք անցնելու ընթացքում առաջացող մարտահրավերներն ու հաղթահարման գործիքակազմը տարբեր են, սակայն միտումներն ընդհանուր են:

The geopolitical challenges of European integration in the post-Soviet space. Cases of Armenia, Georgia, and Ukraine

ANAHIT BABAYAN

Brusov State University

The article examines the geopolitical challenges of European integration in the post-Soviet space, in particular, in Armenia, Georgia, and Ukraine. Special attention was paid to the influence of external actors, especially the main states involved in the competition for the formation of a new world order, on the events taking place in these three countries, as well as their influence on the process of European integration. An analysis of the challenges faced by these three states that are part of the EU Eastern Partnership program shows that although these countries are considered as states implementing European integration, their paths to European integration are completely different cases, they are at different stages and levels of integration, and the development of events depends on completely different factors and can lead to completely different results. The challenges under consideration affect not only the course of these countries, but also the nature of the EU's activities during this period, shifting it from a value basis to decisions driven by geopolitical interests.

ԱՆԴՐԱԴԱՐՁ

DOI: 10.19266/1829-4286-2023-01-127-170

Ընդդեմ 1724թ. Երևանի հերոսամարտի պատմության աղճատման

ԱՐՄԵՆ ԱՅՎԱԶՅԱՆ

«Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի
գիտահետազոտական ինստիտուտ

Քննական վերլուծության է ենթարկված Ա. Ս. Եղիազարյանի «Երևանի 1724 թվականի ինքնապաշտպանությունը» հոդվածը: Եզրակացվում է, որ XVIII դարի 20-ական թվականների պատմահետազոտական ասպարեզ մուտք գործելու հեղինակի փորձը լիովին ձախողվել է, քանի որ չի ուղեկցվել պատշաճ աղբյուրագիտական, պատմագիտական և մեթոդաբանական պատրաստվածությամբ: Գրախոսվող հոդվածում կիրառված մեթոդաբանությունը թերի է, «հիմնավորումները»՝ կամայական, եզրակացությունները՝ բռնազբոսիկ և անտրամաբանական: Ըստ այդմ՝ Երևանի 1724 թ. հերոսամարտի պատմության վերաբերյալ առաջարկված բոլոր փոփոխություններն ու «նորամուծություններն» անհիմն են և սխալ: Մասնավորապես, աղավաղված է պատմական իրադարձությունների ժամանակագրությունը: Ներկա գրախոսությունը վերահաստատում է 1724 թ. Երևանի պաշտպանության և հարակից իրադարձությունների ժամանակագրությունն ու ընթացքն այնպես, ինչպես դրանք որոշվել են վերջին երեք տասնամյակներում հրապարակված ուսումնասիրություններում: Օսմանյան բանակը սկսել է Երևանի պաշարումը 1724 թ. հունիսի 24-ին: Հունիսի 26-ին թուրքերը գրավել են բերդին հարող Երևանի որոշ արվարձանները: Հայերի մեծ մասը կենտրոնացել է շահավետ պաշտպանական դիրք ունեցող Ձորագյուղ և Կոնդ թաղամասերում: «Քաղաքի» (այն է՝ այս թաղամասերի) և բերդի պաշարումը իրականացվել է միաժամանակ: Երևանի Ալի-կուլի (Յիցիշվիլի) խանի հրամանով «քաղաքի» պաշտպանությանը մասնակցել են նաև Երևանի փոքրաթիվ մահմեդականները, սակայն օգոստոսի 14-ին, երբ օսմանյան զորքերը մեծ գրոհ են ձեռնարկել, նրանք լքել են իրենց դիրքերը և ապաստանել բերդում: Այդ օրվանից Ձորագյուղի և Կոնդի պաշտպանությունն իրականացրել են միայն հայերը, որոնք հաջողությամբ հետ են մղել ինչպես այդ հնգօրյա հարձակումը (օգոստոսի 18), այնպես էլ ենիչերիների՝ Կոնդի վրա հետագա կատաղի գրոհը (օգոստոսի 19-ից 24-ն ընկած ժամանակահատվածում): 1724 թ. սեպտեմբերի 8-ին, նոր մեծ համալրումների ժամանումով,

օսմանցիներն ամբողջությամբ գրավել են «քաղաքը»: Բերդում տեղակայված պարսկական կայազորի հետ մարտերը շարունակվել են մինչև սեպտեմբերի 16-ը: Այդ օրը սկսված բանակցություններն ավարտվել են 1724 թվականի սեպտեմբերի 23-ին ամրոցի հանձնումով:

Բանալի բառեր

Աբրահամ Երևանցի, Երևանի հերոսամարտ, աղավաղում, աղբյուրագիտություն, մեթոդաբանություն

Նախաբան

2024 թ. լրանում է օսմանյան զավթիչների դեմ Երևանի եռամսյա հերոսամարտի 300-ամյակը: Թեև վերջին երեք տասնամյակներում այդ նշանակալի իրադարձության պատմաքննական հետազոտությունը հանգել է հիմնավոր արդյունքների, սակայն հայագիտական որոշ շրջանակներում դրանք դեռևս ամբողջովին չեն յուրացվել: Դա էլ հնարավոր է դարձրել պատմական փաստերի կոպիտ աղճատման ստորև քննվող դեպքը:

Արդ, 1991 թ. հրապարակված հոդվածով՝ հայկական, օսմանյան, ռուսական և եվրոպական սկզբնաղբյուրների համեմատական վերլուծությամբ, ճշտվել է 1774 թ. Երևանի պաշտպանության գլխավոր անցքերի ժամանակագրությունը¹: 2006 թ. շարունակվել և խորացրել ենք այդ հերոսամարտի մանրակրկիտ քննությունը՝ նոր բացահայտումներով ամրապնդելով և վերահաստատելով 1991 թ. հետազոտության արդյունքները²: 2022 թ. հրապարակված ուսումնասիրությամբ պարզվել են նաև 1724 թ. Երևանի և շրջակա գյուղերի բնակչության ընդհանուր թվաքանակը, ինչպես նաև Երևանի պաշտպանությունը մասնակցած հայ աշխարհագորայինների թվա-

¹ Այվազյան Ա. Մ, Երևանի 1724 թ. պաշտպանության ժամանակագրության մասին: *Պատմա-բանասիրական հանդես (այսուհետ՝ ՊԲՀ)*, 1991, 1, էջ 93-100:

² Այվազյան Արմեն, 1724 թ. Երևանի պաշտպանությունը հայ ազատագրական շարժման և պարսից իշխանությունների հարաբերությունների թնշուկում. *Արևելագիտության հարցեր, հ. VI*: Երևան. ԵՊՀ հրատ., 2006, էջ 51-77:

կազմը՝ ըստ քաղաքի չորս թաղամասերի և շրջակա ութ գյուղերի կազմած գորախմբերի³:

Առաջին հոդվածում (1991 թ.), մասնավորապես, որոշվել են Երևանի պաշարման տևողությունը՝ 1724 թ. հունիսի 24-ից մինչև սեպտեմբերի 23-ը, ինչպես նաև այդ ամիսներին տեղի ունեցած ճակատամարտերի և որոշ այլ կարևոր իրադարձությունների ամսաթվերը: Պատճառաբանվել էր, որ Աբրահամ Երևանցու բանաքաղական բնույթի երկում Երևանի պաշտպանության ժամանակագրական (իսկ ավելի ստույգ՝ ամսաթվերին վերաբերող) տվյալները չեն կարող հավաստի համարվել ինչպես միմյանց, այնպես էլ պատմական գուգահեռ տեղեկություններին ակնհայտորեն հակասելու պատճառով: Համապատասխանաբար, մերժվել էին մինչ այդ հայկական պատմագիտության մեջ շրջանառվող (Աբրահամ Երևանցու «ամսաթվային» տվյալների վրա մասամբ կամ ամբողջությամբ հիմնվող) երեք տեսակետները, ըստ որոնց՝ Երևանի պաշարումը շարունակվել էր.

ա) երկու ամիս՝ 1724 թ. ապրիլի սկզբից (ավելի ստույգ՝ ապրիլի 7-ից) մինչև հունիսի 7-ը⁴.

³ **Այվազյան Արմեն**, *Արևելահայության ժողովրդագրությունը XVII–XVIII դարերում և հայոց գործի թվակազմը 1720-ական թվականներին*: Եր.: ՆՏ Հովիթինգ, 2022, էջ 198–228:

⁴ **Աբրահամ Երևանցի**, *Պատմութիւն պատերազմացն 1721-1736 թոյի*. Յառաջաբան, բնագիր, խմբագիր օրինակ եւ ծանոթագրութիւններ, պատրաստեց Սահակ վրդ. Ճեմճեմեան. Վենետիկ–Ս. Ղազար, 1977, էջ 31 («խմբագիր օրինակը», այն է՝ Աբրահամ Երևանցու երկի խմբագրված տարբերակը գետեղված է նույն գրքի 91–174 էջերում, այն պատրաստել է Մխիթար Մեքաստացու աշակերտ Մատթեոս Եվդոկիացին, էջ 20, 91): **Լեո**, *Երկերի ժողովածու (տասը հատորով)*, *Հայոց պատմություն*, հ. 3, գիրք 2, Երևան, 1973, էջ 153–157: **Հակոբյան Թ. Խ.**, *Երևանի պատմությունը (1500–1800 թթ.)*: Երևան. ԵՊՀ հրատ., 1971, էջ 78–89: **Ա. Միրզոյան**, Երևանի 1724 թ. հերոսական պաշտպանությունը թյուրքական զավթիչներից. *ՀՆՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.)*, 1953, 3, էջ 94–96: *Դաւիթ Բէկ կամ «Պատմութիւն Ղաւիանցոյն»*, աշխատասիրեց Սամվել վրդ. Արամյան, Վենետիկ–Ս. Ղազար, 1978, էջ 46: **Սարգսյան Ե.**, Հին Երևանի հիշատակությունը հայ մատենագիրների մոտ. *Էջմիածին*, 1983, Ա, էջ 40: **Арутюнян П. Т.**, *Освободительное*

բ) հինգ ամիս՝ 1724 թ. ապրիլից մինչև սեպտեմբերի վերջ, ընդ որում՝ քաղաքի՝ բերդից դուրս գտնվող թաղամասերն իբր ընկել էին հունիսի 7-ին, իսկ բերդն անձնատուր էր եղել սեպտեմբերի 22-ին⁵.

գ) երեքուկես ամիս. Աշոտ Հովհաննիսյանը, առանց տարբերակելու Երևան «քաղաքի» և Երևանի բերդի գրավումները, «Հայ ժողովրդի պատմություն» ակադեմիական բազմահատորյակում հպանցիկ նկատել էր. «Երևանի պաշարումը սկսվեց հունիսի 7-ին և տևեց երեք ամիս...: Սեպտեմբերի 26-ին պաշարված քաղաքը անձնատուր եղավ»⁶: Այսպիսի թվագրման համար, սակայն, անվանի պատմաբանը որևէ հիմնավորում չէր առաջարկել⁷: Երևանի պաշտպանության տևողությունը հունիսի 7-ից մինչև սեպտեմբերի վերջ թվագրելու հարցում Աշոտ Հովհաննիսյանին անքննադատաբար և դարձյալ առանց հիմնավորման հետևել է Վալտեր Դիլոյանը, թեև նա մի շարք կարևոր դրվագներ շարադրել է 1991 թ. հրապարակված վերոհիշյալ հոդվածի հիման վրա⁸: Ընդ որում, այդ սխալ տեսակետը տեղ է գտել արդեն «Հայոց պատմություն» ակադեմիական նոր բազմահատորյակում՝ 2010 թ.: Նույն տեսակետն է արտահայտված նաև դպրոցական դասագրքերում⁹: Եվ դա այն դեպքում, որ 1991 և 2006

движение армянского народа в I-ой четверти XVIII века. Москва: изд-во АН СССР, 1954, с. 168.

⁵ **Մարտիրոսյան Վ. Մ.**, Անդրկովկասի ժողովուրդների համագործակցությունը և Երևանի 1724 թվականի պաշտպանությունը: *ՊԲՀ*, 1965, 2, էջ 189-190: **Հակոբյան Վ. Ա.**, Ժամանակագրական մի փաստի ճշտման շուրջը: *Հրաբեր հասարակական գիտությունների* (այսուհետ՝ *ՀՀԳ*), 1974, 5, 81: **Կաթալետյան Մ. Մ.**, Բնակչության էթնիկ կազմը և էթնիկ պրոցեսները Երևանում 1724-1800 թթ. *ՊԲՀ*, 1987, 3, էջ 97:

⁶ *Հայ ժողովրդի պատմություն: Հ. IV. «Հայ ժողովուրդը ֆեոդալիզմի վայրէջքի ժամանակաշրջանում ԺԴ-ԺԸ դդ.»*: Պատ. խմբ.՝ Լ. Ս. Խաչիկյան: Երևան. ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1972, էջ 157 (հմմտ. էջ 632):

⁷ **Հակոբյան Վ. Ա., 1974**, էջ 78-79 (ծնթ. 7):

⁸ *Հայոց պատմություն: Հ. III*, գիրք Ա. «XVII դարի երկրորդ կես-XIX դարի վերջ»: Պատ. խմբ.՝ Աշ. Մելքոնյան: Երևան. «Զանգակ», 2010, էջ 40-42:

⁹ *Հայոց պատմություն. 2021 թ. պետական ավարտական և միասնական քննությունների թեստային առաջադրանքների շտեմարան*. Գիրք Բ (վերահրատարակություն): Խմբ. կազմ՝ Աշոտ Մելքոնյան և այլք: Երևան. «Զանգակ», 2021, էջ 4, 334:

թթ. հրապարակված վերոհիշյալ հատուկ ուսումնասիրություններով, ինչպես նաև 1992 թ. պաշտպանած թեկնածուական ատենախոսությամբ խնդիրն արդեն հանգամանորեն քննվել և լուծվել էր¹⁰: Ավելին, 1991 թ. մինչև 2022 թ. այդ հետազոտությունների արդյունքները որևէ քննադատության չեն ենթարկվել ու չեն մերժվել:

2022 թ. Ա. Եղիազարյանը հրապարակել է մի հոդված (իր ձևակերպմամբ՝ «սկզբնաղբյուրային նոր քննությամբ»), որում փորձ է արված մերժել 1991 թ. վերոհիշյալ հետազոտության արդյունքները և վերադառնալ վերը նշված հին (և սխալ) տեսակետներից երկրորդին¹¹: Ա. Եղիազարյանի ամփոփիչ եզրակացությամբ, «Երևանի հայության ինքնապաշտպանությունը սկսվել է ապրիլի 9-ին և ավարտվել հունիսի 7-ին՝ տևելով 60 օր, ...որից հետո երեք ամիսների ընթացքում բերդը պաշարված է եղել: Այն հանձնվել է Հայոց Աստվածատուր Ա. Համադանցի կաթողիկոսի (1715-1725) միջնորդությամբ 1724 թ. սեպտեմբերի 21-ին»¹²: Ըստ այսմ էլ հոդվածում առաջարկվում են նաև Երևանի պաշարման ընթացքում տեղի ունեցած մարտերի նոր թվագրումներ:

Ի՞նչն է, այնուամենայնիվ, Ա. Եղիազարյանն ընտրել որպես գլխավոր կռվան՝ դարձյալ հավաստի հայտարարելու համար Երևանի պաշարման տևողության մասին Աբրահամ Երևանցու՝ արդեն իսկ գիտականորեն հերքված «ամսաթվային» տվյալները: Բանն այն է, որ Ա. Եղիազարյանն Աբրահամ Երևանցուն ավանդաբար և սխալ-

¹⁰ **Այվազյան Ա. Մ.** «Ղափանցվոց պատմությունը» և 1720-ական թվականների հայ ազատագրական շարժման ուսումնասիրությունը (դիսերտացիա պատ. գիտ. թեկնածուի գիտական աստիճան հայցելու համար). Երևան, 1992, էջ 89-101. հմմտ. **Айвазян А. М.** «История капанцев» и исследование армянского освободительного движения 1720-х годов. Специальность: 07.00.02 – Отечественная история. Автореферат диссертации на соискание ученой степени канд. историч. наук. Ереван, 1992, с. 10-12:

¹¹ **Եղիազարյան Ա.** Երևանի 1724 թվականի ինքնապաշտպանությունը. *Հայագիտության հարցեր*, 2022, 2, 55-75:

¹² Նույն տեղում, էջ 74:

մամբ հռչակում է 1724 թ. Երևանի հերոսամարտի «ականատես» հեղինակ¹³: Նրա կարծիքով՝

«Աբրահամ Երևանցու տեղեկություններին... չվստահելու հիմքեր իրականում չկան»¹⁴, «Քաղաքի պաշտպանության մասին հեղինակի (Աբրահամ Երևանցու – Ա.Ա.) մանրամասն տեղեկությունները՝ հաճախ շաբաթվա օրերի, մարտիկների քանակի և այլնի վերաբերյալ նշումներով, որն է հնարավորություն չեն ընձեռում կասկածի ենթարկելու նրա ներկայացրած ժամանակագրական տեղեկությունները, քանի որ իրավիճակի վերաբերյալ նման խորքային տեղեկությունների տիրապետող հեղինակը անհնար է, որ չտիրապետեր դեպքերի ժամանակագրությանը»¹⁵ (ընդգծումը՝ Ա.Ա.):

Այս կարծիքն է ընկած Ա. Եղիազարյանի վերլուծության հիմքում, որի սխալաշատ հետևանքները կբացահայտվեն ստորև:

Աբրահամ Երևանցին ականատես հեղինակ չէ

Նախ, մեթոդաբանական սխալ է կարծելը, թե մանրամասն տեղեկությունների շարադրումն ինքնըստիքյան նշանակում է, որ ուշմիջնադարյան պատմիչը, տվյալ դեպքում՝ Աբրահամ Երևանցին, իր նկարագրած իրադարձությունների ականատեսն է եղել: Եթե այդպես լիներ, ապա նրան պետք է ականատես համարենք նաև 1720-1730-ական թթ. Իրանում և Այսրկովկասում տեղի ունեցած բազմաթիվ ուրիշ զարգացումներին ու առանձին իրադարձություններին՝ հաստատ իմանալով, որ այդպես չէ: Օրինակ, Աբրահամ Երևանցին պատմում է, թե ինչպես է մի գիշեր շահ Թահմասպ Բ-ին (1723-1732) գաղտնի այցելել նրա վեց հայ զորահրամանատարներից մեկը՝ Դավիթ-բեկը (չմոռել 1722-1728 թթ. Սյունյաց առաջնորդի հետ) և նախազգուշացրել Թահմասպ-կուլի խանի (ապագա Նադիր շահի) նենգ մտադրությունների մասին. «Թագայորն ողջ լինի, Թահմազ խանն քեզ ներհաք այ, քեզ գը բռնայ, քոյ թաքայորութիւնն կը

¹³ Նույն տեղում, էջ 74: Թ. Հակոբյանը ևս Աբրահամ Երևանցուն սխալմամբ համարում էր «ականատես» պատմիչ (Հակոբյան Թ. Խ., 1971, էջ 79):

¹⁴ Եղիազարյան Ա., 2022, էջ 67:

¹⁵ Նույն տեղում, էջ 63-64:

տիրայ»¹⁶: Եթե կիրառվի Ա. Եղիազարյանի առաջարկած մեթոդաբանությունը, ապա Աբրահամ Երևանցին ևս այս «ծածկաբար» կատարված գիշերային այցի մասնակիցն է եղել և անձամբ է լսել Դավիթ-բեկի և շահի զրույցը: Բայց համատեքստից հասկանալի է, որ 1738-1750 թթ. միջև իր երկը շարադրած¹⁷ Աբրահամ Երևանցին այդ հանդիպմանն անձամբ ներկա չի եղել: Իրականում, նա իր տեղեկություններն ինչպես այս ու բազմաթիվ այլ դեպքերի, այնպես էլ Երևանի պաշտպանության մանրամասների մասին, ուղղակիորեն կամ միջնորդների միջոցով, գրավոր կամ բանավոր եղանակով, ժողովել է իրական ականատեսներից ու մասնակիցներից:

Հատկանշական է, որ Ա. Եղիազարյանը ծանոթ չէ Երևանի պաշտպանությունը քննող՝ 2006 թ. հրապարակված վերոհիշյալ հոդվածին, որտեղ վերջնականապես հաստատվել է, որ Աբրահամ Երևանցին առնվազն 1716-1724 թթ. Երևանում չի գտնվել¹⁸: Այս եզրակացության համար հիմք են ծառայել հետևյալ (համառոտաբար վերաշարադրվող) փաստերն ու հիմնավորումները: Աբրահամ Երևանցին կատարում է մի շարք այնպիսի ակնհայտ սխալներ, որոնք ականատես հեղինակը թույլ տալ չէր կարող: Այսպես՝

1) նա 1724 թ. Երևանը պաշարած օսմանյան զորքերի գլխավոր հրամանատար սխալմամբ համարում է «Քօփոօղլի Աբդուլլայ» փաշային¹⁹, մինչդեռ մյուս սկզբնաղբյուրներից հաստատ հայտնի է, որ պաշարումը ղեկավարում էր դեռևս 1723 թ. աշնանը *սերասքեր* (գլխավոր հրամանատար) նշանակված Դիարբեքիրի վալի Արիֆի-

¹⁶ Աբրահամ Երևանցի, էջ 64:

¹⁷ Նույն տեղում, էջ 8:

¹⁸ Այվազյան Ա., 2006, էջ 51-77 (հատկապես՝ էջ 53-61, 76-77): 1724 թ. հետո էլ նա հազիվ թե երբևէ Երևան այցելած լիներ, համենայն դեպս՝ դրա հավանականությունը չնչին է 1724-1735 թթ. օսմանյան ռազմական օրոք՝ քաղաքի ավերվածության, տարածաշրջանում մշտական պատերազմական գործողությունների և ճանապարհների անապահովության պայմաններում:

¹⁹ Աբրահամ Երևանցի, էջ 23, 26, 30:

Ահմեդ փաշան²⁰: Ա. Եղիազարյանը կրկնում է Աբրահամ Երևանցու սխալը և Քյոփրուլու Աբդուլահ փաշային հռչակում Եղվարդից Երևանի վրա արշաված օսմանյան բանակի հրամանատար²¹: Ընդ որում, Ա. Եղիազարյանը չի հիշատակում հակառակը փաստող պատմական հաղորդումները՝ 1721-1736 թթ. Կ. Պոլսում ռուս դեսպան Ի. Նեպլյուևի զեկուցագիրը մեջբերելիս պարզապես դուրս թողնելով Թավրիզի ուղղությամբ արշավող օսմանյան բանակի հրամանատար Աբդուլահ փաշայի և Երևանը պաշարած բանակի հրամանատար Արիֆի-Ահմեդ փաշայի անունները: Ահա թե ինչպես է Ա. Եղիազարյանն օգտագործել պատմաբան Վահրամ Մարտիրոսյանի հոդվածից՝ դիվանային վավերագրերի հիման վրա գրված համապատասխան հատվածը.

Վ. Մարտիրոսյան

«Նեպլյուևը հաղորդում է, որ *Աբդուլլահ փաշան* Խոյը գրավելուց հետո չի շարժվել Թավրիզի վրա, քանի դեռ Երևանը չէր գրավվել: Նույն փաշան գրել է Բարձրագույն Դռանը, որ ինքը մտադիր է եղել միանալ *սերասքեր Արիֆի-Ահմեդ փաշայի* հետ Երևանի մոտ, որովհետև *Արիֆի-Ահմեդ փաշան* ի վիճակի չէ գրավել Երևանը, քանի որ

Ա. Եղիազարյան

«Ըստ Կոստանդնուպոլսի ռուսական դիվանագիտական ներկայացուցիչ Ի. Նեպլյուևի 1724 թ. սեպտեմբերի 1-ի տեղեկագրի՝ Պարսկաստանում գործող զորքերի փաշան գրել է Բարձր դռանը, որ ցանկանում է միանալ Երևանը պաշարած զորքին, քանի որ այն ի վիճակի չէ գրավելու հայերի, պարսիկների և մի խումբ վրացիների հա-

²⁰ *Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին*: Հ. Ա. Երևան. ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1961, էջ 141-142: **Jonas Hanway**. *A Historical Account of the British Trade over the Caspian Sea*. The second revised and corrected ed., vol. II, London, 1754, p. 211: **Lockhart, Laurence**. *The Fall of the Safavi Dynasty and the Afghan Occupation of Persia*. London: Cambridge University Press, 1958, pp. 260-261. **Shay, Mary L.** *The Ottoman Empire from 1720 to 1734. As Revealed in Despatches of the Venetian Baily*. Urbana: The Univ. of Illinois Press, 1944, էջ 117: **Դանեղյան Լ.**, ԺԸ դարի նորահայտ հայկական աղբյուր իրանա-թուրքական պատերազմների և Հայաստանի պատմության վերաբերյալ: *Արևելյան աղբյուրագիտություն*: Հ. 1, Երևան, 1988, էջ 176:

²¹ **Եղիազարյան Ա.**, 2022, էջ 58, 71:

Երևանում պարսիկները և հայերը, մատեղ ուժերով պաշտպանվող ինչպես նաև որոշ քանակի վրացիներ, ամեննին էլ չեն ցանկանում թուրքերին հպատակվել և համառորեն պաշտպանվում են»²² (ընդգծումը՝ Ա.Ա.):

Ա. Եղիազարյանի վերաշարադրման մեջ Աբդուլահ և Արիֆի-Ահմեդ փաշաների անունները միտումնավոր դուրս թողնելու նպատակը պարզ է՝ առիթ չտալ ընթերցողին կասկածելու Աբրահամ Երևանցու «ականատեսությանը»:

2) Ըստ Աբրահամ Երևանցու, Երևանի բերդը անձնատուր է եղել 1724 թ. օգոստոսի 20-ին, այնինչ բոլոր մյուս աղբյուրները, միմյանց հաստատելով, հստակ նշում են, որ բերդը հանձնվել է 1724 թ. սեպտեմբերի 22/23-ին: Ա. Եղիազարյանն այդ սխալը փորձում է «սրբագրել»՝ այն «ձեռագրական վրիպակ» հայտարարելով (այդ մասին ավելի առարկայորեն՝ ստորև):

3) Աբրահամ Երևանցին 1724 թ. պաշտպանության օրոք Երևանի խան սխալմամբ համարում է Մեհր-Ալի խանին («Միհրալի խան»²⁴): Այնինչ 1719-1724 թթ. Երևանի Սեֆյան իշխանությունը գլխավորել է Ալի-կուլի (Ալլահ-կուլի) խանը, ով կրոնափոխ վրացի էր՝ Ցիցիշվիլիների իշխանական տոհմից²⁵: Իսկ Մեհր-Ալի խանը Երևանում իշխել է մոտավորապես 1709-1716 թթ.: Ա. Եղիազարյանը Աբրահամ Երևանցու այդ սխալն էլ է կրկնում²⁶:

Հարկ է նկատել, որ վերջին կետի մանրակրկիտ քննության արդյունքները ժամանակին (2006 թ.) պատշաճորեն ամփոփվել են՝ վերհանված պատմական փաստերի օգտագործումն առավել դյուրացնելու նպատակով.

²² Մարտիրոսյան Վ. Անդրկովկասի ժողովուրդների համագործակցությունը և Երևանի 1724 թվականի պաշտպանությունը. *ՊԲՀ*, 1965, 2, 189-190:

²³ Եղիազարյան Ա., 2022, էջ 59:

²⁴ Աբրահամ Երևանցի, էջ 24, 25, 29, 34, 98, 100, 108, 110:

²⁵ Այվազյան Ա., 2006, էջ 53-61:

²⁶ Եղիազարյան Ա., 2022, էջ 55, 56, 58, 59:

«Մինչև 1717 թ. Երևանի խան, անհայտ տնտեսությամբ, եղել է ոմն Միրզա Մահմուդ բեյը: 1718-1724 թթ. Երևանում իբրև խան պաշտոնավարել է շիա ուղղության մահմեդականությունն ընդունած Ալի-կուլի (Ալլահ-կուլի) խանը՝ վրացի Ցիցիշվիլիների տոհմից: Սակայն նրա պաշտոնավարության օրոք՝ 1722-1724 թթ., Երևանի խան (Չուխուր Մադի բեկլարբեկի) են եղել ծագումով վրացի երկու այլ հավատափոխներ ևս. Մուհամմադ-կուլի խանը (նույն ինքը Կախեթի թագավոր Կոնստանտինը)՝ մոտավորապես 1722 թ. մայիսից մինչև 1724 թ. առաջին կեսը, և Ալի-կուլիի եղբայր սիփահսալար Մանսուր-խանը՝ ամենաուշը 1724 թ. հուլիս-օգոստոսին: Այս երկուսն էլ ֆիզիկապես գտնվել են ու գործել Երևանից դուրս: Մուհամմադ-կուլի խանը նշանակել է Ալի-կուլիին իր փոխանորդի՝ «նայիբ»-ի պաշտոնում մոտավորապես 1722 թ. մայիսից մինչև սեպտեմբերի 30-ն ընկած միջոցին: Ալի-կուլի խանը, հետևելով շահ Թահմասպի Բ-ին, 1722-1723 թթ. հայության դեմ իրականացրել է դաժան բռնամիջոցների քաղաքականություն: 1724 թ. սկզբին, սակայն, օսմանյան ներխուժմանը հակազդելու անհրաժեշտությունից դրդված, հայերի նկատմամբ նրա վերաբերմունքը առերեսորեն փոխվել է և 1724 թ. ապրիլի երկրորդ կեսին Երևանի հայության և շիա իշխանության միջև հակասումանյան դաշնություն է կնքվել, սակայն ընդամենը հայերին օգտագործելու, ապա Կարբիի ու Երևանի ինքնապաշտպանությունների ժամանակ դավաճանաբար լքելու վերջնական արդյունքով:

Աբրահամ Երևանցին սխալվել է ինչպես օսմանյան բանակի գլխավոր հրամանատարի, այնպես էլ Երևանի խանի ինքնության հարցում. առաջինն Արիֆի-Ահմեդն էր (ոչ Աբդուլլահ փաշան)²⁷, երկրորդը՝ Ալի-կուլի խանն էր (ոչ Մեհր-Ալի/Միհրալի խանը, ինչպես նշվում է նրա «Պատմության» մեջ): Աբրահամ Երևանցու այս սխալները վկայում են, որ նա անձամբ 1724 թ. դեպքերի ականատեսը չի եղել, այլ քաղել է իր տեղեկությունները տարբեր աղբյուրներից, ավելի ստույգ՝ տարբեր լրատուներից: Հետևաբար, Աբրահամ Երևանցին բացակայել է Երևանից ոչ միայն 1724 թ., այլև առնվազն այն ամբողջ ժամանակահատվածում, երբ ավարտվել էր Մեհր-Ալի

²⁷ Այվազյան Ա., 1991, էջ 94 (ծնթ. 11):

խանի պաշտոնավարությունը, այսինքն՝ ամենաուշը 1716 թ. սկսած»²⁸:

Ա. Եղիազարյանը պարտավոր էր տեղյակ լինել դեռևս 2006 թ. բացահայտված այս առանցքային պատմական փաստերին, որպեսզի ոչ ինքը սխալների և թյուրիմացությունների ուղին բռներ, ոչ էլ ընթերցող հանրությանը ապակողմնորոշեր²⁹:

Այս առումով թերացել են նաև նրա հոդվածը հրատարակության երաշխավորած՝ ԵՊՀ-ի «Հայագիտության հարցեր» հանդեսի խմբագրությունն ու հոդվածի գրախոսները: Իհարկե, Ա. Եղիազարյանը XVIII դարի ու հատկապես խառնակ 1720-ական թթ. մասնագետ չէ, բայց չէ՞ որ խնդրո առարկա ծավալուն հոդվածը հրապարակվել է ոչ այլուր, քան նույն ԵՊՀ-ի «Արևելագիտության հարցեր» քույր հանդեսում և, բացի թղթային տարբերակից, շուրջ մեկուկես տասնամյակ հասանելի էր նաև համացանցում³⁰:

Կատարված քննության անտեսում

Դեռևս 1991 թ. հրապարակված հոդվածում համեմատական վերլուծության են ենթարկվել, մի կողմից, օսմանցի պատմագիր Չելեբի-զադեի, մյուս կողմից՝ եվրոպական, ռուսական ու հայկական

²⁸ Այվազյան Ա., 2006, էջ 76-77:

²⁹ Ա. Եղիազարյանի սխալական հոդվածն արդեն իսկ հայտնվել է գիտական շրջանառության մեջ (**Միրիջանյան Դ., Հարությունյան Ա., Դավթյան Դ., Գրիգորյան Ա., Բաբաջանյան Ա.**, Երևանի քաղաքաշինության առանձնահատկությունները պարսկական իշխանության շրջանում. *ԼՀԳ*, 2022, 3, էջ 325, 330, 344 (հոդվածը գետնադրվել է նաև հետևյալ կայքում՝ <https://orbeli.am>, 2023-01-04), ինչպես նաև վերահրատարակվել ԵՊՀ պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի երաշխավորությամբ լույս տեսած ժողովածուում («Երեվանի միջնադարի ու նոր ժամանակների պատմությունը և աղբյուրների կեղծարարությունը»: Գիտական հոդվածների ժողովածու: Խմբագիր՝ Ա. Եղիազարյան: Երևան. «Մեկնարկ», 2023, էջ 83-122): Այս գրքի տիտղոսաթերթի վրա նշված է. «Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-6A043 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում»:

³⁰ Տե՛ս www.hayq.org, <https://matenadaran.academia.edu/ArmenAyvazyan>:

աղբյուրների զուգահեռ ժամանակագրական տեղեկությունները Երևանի 1724 թ. պաշարման մասին՝ ընդամին ապացուցելով, որ դրանք միմյանց հաստատում են: Մասնավորապես.

«Չելեբի-զադեն հայտնում է, որ Երևանի բերդի բանալիները հանձնվում են թուրքերին 1724 թ. սեպտեմբերի 23-ին (հիջր. 1137 թ. Մուհարրեմ ամսի 15-րդ օրը)³¹: Չելեբի-զադեի մանրամասն և հետևողական ժամանակագրությունը վկայում է, որ հեղինակն օգտվել է պետական և բանակային վավերական աղբյուրներից. այս առթիվ հիշատակելի է, որ նա զբաղեցրել է Շեյխ-ուլ-իսլամի բարձրաստիճան պաշտոնը³²:

Անգլիացի ճանապարհորդ և վաճառական Ջոնաս Հանվեյը գրում է, որ օսմանյան բանակն անցել է Արաքսը 1724 թ. հունիսի կեսերին և հասել Երևանի մատույցներին հունիսի վերջին³³, դրանով իսկ հաստատելով Չելեբի-զադեի տեղեկությունների հավաստիությունը: Ըստ Հանվեյի, Երևանի բերդը հանձնվել է թուրքերին հոկտեմբերի առաջին օրերին³⁴: Եթե նկատենք, որ եվրոպացի հեղինակները գործածել են նոր՝ գրիգորյան տոմարը, որի տարբերությունը հուլյան տոմարից 1720-ականներին կազմում էր 11 օր, ապա պարզ կդառնա, որ Չելեբի-զադեի, Ի. Նեպյունի (ռուսները պահպանել էին հին տոմարը) և Ջ. Հանվեյի հաղորդումները Երևանի բերդի գրավման ժամանակի մասին ճշգրիտ կերպով համընկնում են 1724 թ. սեպտեմբերի 22-23-ի հետ:

Չելեբի-զադեի տվյալները Երևանի պաշտպանության *տևողության* վերաբերյալ (հունիսի 24-ից մինչև սեպտեմբերի 23-ը, որն անում է 91 օր) յուրահաստուկ ձևով հաստատվում են Կ. Պոլսում Վենետիկի դեսպանի՝ «բեյլոյի» մի հաղորդմամբ. վերջինս 1724 թ. հոկտեմբերի 29-ին (հին տոմարով՝ հոկտեմբերի 18-ին) ծանուցում էր, որ «Երևանն անձնատուր եղավ 90 օր դիմադրելուց հետո»³⁵: Այս

³¹ Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի..., հ. Ա, էջ 150:

³² Նույն տեղում, էջ 128:

³³ Hanway, Jonas. *A Historical Account of the British Trade over the Caspian Sea*, vol. II, p. 211.

³⁴ Նույն տեղում, էջ 213:

³⁵ Shay, Mary L. *The Ottoman Empire from 1720 to 1734*, p. 120.

ամենին միանում է նաև մի անանուն հայ հիշատակագրի հստակ տեղեկությունը, որն իր հոդվածում մեջբերել էր Վ. Ա. Հակոբյանը. «Թվին ՌՃՀԳ (1724) առին Երևան սեպտեմբեր ամսոյն»³⁶:

Ինչպես տեսնում ենք, Երևանի պաշարման ժամանակագրության վերաբերյալ Չելեբի-զադեի տեղեկությունները կարելի է ստույգ համարել»³⁷:

Ա. Եղիազարյանը շրջանցում է կատարված համեմատական քննության այս մատչելի հատվածը: Վերոբերյալ տեղեկությունները (ոչ բոլորը) նա ներկայացնում է անջատ-անջատ՝ ցրելով դրանք իր հոդվածի շարադրանքում³⁸, ինչի արդյունքում ընթերցողի համար դժվար է նկատել պատմական տարատեսակ աղբյուրների խաչաձև և հավաստի համընկնումները: Նա պարզապես անտեսում է այն փաստը, որ Չելեբի-զադեի ժամանակագրական տվյալները փոխադարձաբար հաստատվում են Կ. Պոլսում Ռուսաստանի և Վենետիկի դեսպանների, 1750-ական թթ. անգլիացի անվանի հեղինակի, ինչպես նաև հայ հիշատակագրի հաղորդումներում: Օրինակ, նա չի փորձում հերքել Ջոնաս Հանվելի այն հաղորդումը, ըստ որի՝ օսմանյան բանակը հասել է Երևանի մատույցներին 1724 թ. հունիսի վերջին, ինչը ճշգրիտ կերպով համապատասխանում է Չելեբի-զադեի տեղեկություններին:

Փոխարենը, Ա. Եղիազարյանը՝ Չելեբի-զադեի ժամանակագրական տեղեկությունների նկատմամբ անվստահություն ներշնչելու նպատակով, անհիմն մերժում է մեր դիտարկումն առ այն, որ օսմանցի պատմիչն «օգտվել է պետական և բանակային վավերական աղբյուրներից»: Ըստ Ա. Եղիազարյանի, «Ա. Այվազյանը հավաստի է համարում *իբրև թե* օսմանյան պաշտոնական փաստաթղթերից օգտված թուրք հեղինակ Չելեբի-զադեի ժամանակագրական տվյալները» (ընդգծումը՝ Ա.Ա.)³⁹:

³⁶ Հակոբյան Վ. Ա., 1974, էջ 81. հմմտ. Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 3602, էջ 366ա:

³⁷ Այվազյան Ա., 1991, էջ 95-96:

³⁸ Եղիազարյան Ա., 2022, էջ 58-60, 63, 68-70:

³⁹ Նույն տեղում, էջ 62-63:

Եթե Ա. Եղիազարյանն իրոք մտածում է, որ Օսմանյան կայսրությունում կրոնական գծով (խալիֆ-սուլթանից հետո երկրորդ) *բարձրագույն պետական պաշտոնյան*՝ Շեյխ-ուլ-իսլամը, այն է՝ սուննիների գլխավոր *մուֆթին*, չէր կարող օգտվել պետական դիվաններից ու փաստաթղթերից, ապա նա պարտավոր է հիմնավորել իր այդ տարօրինակ տեսակետը գիտական փաստարկներով, այլ ոչ թե հարցը փակված համարել «իբրև թե» քամահրական եղանակավորմամբ։ Մինչդեռ Բարձր Դռան և օսմանյան բանակի կապերը Շեյխ-ուլ-իսլամի հետ մասնագետներին քաջ հայտնի են. մասնավորաբար՝ պատերազմների ժամանակ, անձամբ սուլթանի հայցմամբ, Շեյխ-ուլ-իսլամն արձակում էր զորքի վարքագիծը կանոնակարգող կրոնաիրավական-շարիաթական հատուկ որոշումներ՝ *ֆայզլաներ*⁴⁰։ Միայն այսքանն արդեն բավարար է համոզվելու համար, որ, իբրև բարձրաստիճան պաշտոնյա անձ, Չելեբի-զադեն լայն հնարավորություններ է ունեցել «պետական և բանակային վավերական աղբյուրներից» (այդ թվում՝ Երևանի 1724 թ. պաշարման մասին գեկուցագրերից) օգտվելու համար։

Կամայականության հաղթարշավ («Օգոստոսի 20-ը այնքան էլ ճիշտ չէ»)

Ա. Եղիազարյանը խախտում է իր իսկ առաջադրած վերոհիշյալ (պատմագիտական առումով խիստ անկատար) մեթոդաբանական թեզերը, ըստ որոնց՝ «խորքային տեղեկությունների տիրապետող հեղինակը (իմա՝ Աբրահամ Երևանցին – Ա.Ա.) անհնար է, որ չտիրապետեր դեպքերի ժամանակագրությանը»։ «Քաղաքի պաշտպանության մասին հեղինակի մանրամասն տեղեկությունները... որևէ հնարավորություն չեն ընձեռում կասկածի ենթարկելու նրաներկայացրած ժամանակագրական տեղեկությունները» և «դրանց չվստահելու հիմքեր իրականում չկան»։

⁴⁰ **Aivazian Armen M.** *The Armenian Rebellion of the 1720s and the Threat of Genocidal Reprisal*. Yerevan. American University of Armenia, 1997, pp. 33-36. հմմտ. **Այվազյան Ա.**, 2022, էջ 188, 232, 557:

Իրականում, այս «մեթոդաբանությունն» Ա. Եղիազարյանի հոդվածում կիրառված է երկակի չափանիշներով: Նա ընտրովի մոտեցում է ցուցաբերում Աբրահամ Երևանցու ժամանակագրական բնույթի հաղորդումներին՝ դրանց մի մասը (ամսաթվերը, այն էլ՝ ոչ բոլորը) ընդունելով որպես ստույգ, իսկ մյուս մասը (ներառյալ մեկ ամսաթիվ)՝ որպես սխալ, ըստ այդմ՝ կամայական վերաձևման, այն է՝ աղճատման ենթակա: Այսպես, Ա. Եղիազարյանը պնդում է, որ Աբրահամ Երևանցու երկում քաղաքի պաշարման առաջին ու վերջին օրերը նշված են ճիշտ (1724 թ. ապրիլի 9-ը և հունիսի 7-ը)⁴¹, իսկ բերդի գրավման օրը (օգոստոսի 20-ը)՝ սխալ (իրականում՝ երեք ամսաթվերն էլ անստույգ են): Բացի այդ, Ա. Եղիազարյանը չի ընդունում նաև Աբրահամ Երևանցու՝ ժամանակագրական իրարահաջորդության սկզբունքով շարադրված հստակ դիպաշարը (սյուժե), որի համաձայն՝ մասնավորապես, Երևանի պաշարմանը նախորդել է Կարբի գյուղաքաղաքի 40-օրյա ինքնապաշտպանությունը:

Նախ, արժե քննել, թե ինչպես է Ա. Եղիազարյանը «սրբագրում» Աբրահամ Երևանցու այն անստույգ հաղորդումը, ըստ որի՝ Երևանի բերդն անձնատուր է եղել իբր 1724 թ. օգոստոսի 20-ին: Ահավասիկ.

«Ի վերջո, անդրադառնալով [Ա. Այվազյանի] այն պնդմանը, թե Աբրահամ Երևանցու երկում Երևանի բերդի գրավման թվականը սխալ է, հարկ է նշել, որ դա այնքան էլ ճիշտ չէ: Ավելին, հեղինակի տեղեկությունն այն մասին, թե հունիսի 7-ին՝ քաղաքի անկումից հետո, Երևանի բերդը շարունակեց պաշտպանությունը մինչև օգոստոսի 21-ը, որևէ ուսումնասիրող չի քննարկել: Միայն Ա. Այվազյանն է, որ այդ վկայությանն անդրադարձել է, այն էլ՝ ցույց տալու համար Աբրահամ Երևանցու ժամանակագրական տեղեկությունների հա-

⁴¹ Աբրահամ Երևանցին նախ նշում է, որ քաղաքի պաշտպանությունը տևել է 60 օր (**Աբրահամ Երևանցի**, էջ 25), ապա նշում է նրա գրավման օրը՝ 1724 թ. հունիսի 7-ը (էջ 31): Այս ոչ ստույգ ելակետային տվյալների պարզ հաշվարկն Ա. Եղիազարյանին բերում է այն սխալ եզրակացության, որ քաղաքի պաշարումը սկսվել է 1724 թ. ապրիլի 9-ին (**Եղիազարյան Ա.**, 2022, էջ 71), թեև մի ուրիշ տեղ, անուշադիր գտնվելով իր հաշվարկի նկատմամբ, այդ սկիզբը դնում է ապրիլի 7-ին (նույն տեղում, էջ 69):

վաստի չլինելը⁴²: Մինչդեռ, եթե ընդունենք, որ Երևանի բերդի հանձնման ամսաթիվը՝ օգոստոսի 21-ը, ձեռագրական վրիպակ է, որն իրականում սեպտեմբերի 21-ն է, ապա ամեն ինչ կլինի իր տեղում, քանի որ կստացվի, որ Աբրահամ Երևանցին ևս ճշգրիտ է հիշատակում բերդի անկման ամսաթիվը: Եթե առաջարկված ճշգրտումը հավանական է, ուրեմն կարելի է համարել, որ գուցե իրականում բերդը հանձնվել է հենց սեպտեմբերի 21-ին և ոչ թե 22-ին, ինչպես նշում է Ի. Նեպյունը: Ի դեպ, Կոստանդնուպոլսում գտնվող ռուսական դիվանագիտական ներկայացուցչի սխալվելու հավանականությունն ավելի մեծ է, քան ականատես Աբրահամ Երևանցուն: Կարելի է փաստել, որ ուսումնասիրողները լիովին անտեսել են Աբրահամ Երևանցու երկում ներկայացված ժամանակագրությունը հիմնավորող տեղեկությունը⁴³:

Այս «հիմնավորումները» տեղին է ենթարկել կառուցվածքային-իմաստաբանական վերլուծության՝ առավել պարզ պատկերացնելու համար Ա. Եղիազարյանի «հետազոտական աշխատանոցը»: Տեքստը բաժանել ենք 6 իմաստային բաղադրամասերի.

1) **Ա. Եղիազարյան.** «Ի վերջո, անդրադառնալով [Ա. Այվազյանի] այն պնդմանը, թե Աբրահամ Երևանցու երկում Երևանի բերդի գրավման թվականը սխալ է, հարկ է նշել, որ դա այնքան էլ ճիշտ չէ»:

Ի՞նչ է նշանակում «դա այնքան էլ ճիշտ չէ» առաձգական արտահայտությունը: Աբրահամ Երևանցին Երևանի բերդի՝ օսմանցիների վերահսկողության տակ անցնելու օր է համարում օգոստոսի 20-ը. «Թվին ՌՃՀԳ-ումն (=1724), օգոստոսի Ի-մին (=20), եղավ վերջ, հանդարտեցավ օսմանցին, միչ ի նոեմբերն»⁴⁴: Իսկ իրականում բերդը, ինչպես վերն արդեն ցույց է տրվել, հանձնվել է 1724 թ. սեպտեմբերի 22-23-ին (իսկ ըստ հենց Ա. Եղիազարյանի՝ 1724 թ. սեպտեմբերի 21-ին): Ուրեմն, ինչպե՞ս կարելի է ասել, որ այս ամսաթվի հարցում Աբրահամ Երևանցու սխալվելու մասին եզրակացությունը «այնքան էլ ճիշտ չէ», երբ այն 100 տոկոսով ճիշտ է:

⁴² Այվազյան Ա., 1991, էջ 93:

⁴³ Եղիազարյան Ա., 2022, էջ 58-60, 63, 73-74:

⁴⁴ Աբրահամ Երևանցի, էջ 34-35:

2) **Ա. Եղիազարյան.** «Ավելին, հեղինակի (Աբրահամ Երևանցու) տեղեկությունն այն մասին, թե հունիսի 7-ին՝ քաղաքի անկումից հետո, Երևանի բերդը շարունակեց պաշտպանությունը մինչև օգոստոսի 21-ը, որևէ ուսումնասիրող չի քննարկել: Միայն Ա. Այվազյանն է, որ այդ վկայությանն անդրադարձել է, այն էլ՝ ցույց տալու համար Աբրահամ Երևանցու ժամանակագրական տեղեկությունների հավաստի չլինելը»:

Առաջին նախադասությամբ Եղիազարյանը, փաստորեն, ընդունում է, որ Աբրահամ Երևանցին օգոստոսի 20-ը (Եղիազարյանի սխալ ընթերցմամբ՝ օգոստոսի 21-ը) իսկապես նշել է որպես բերդի անկման օր: Իսկ երկրորդ նախադասությամբ ու հատկապես «ավելին» շեշտադրումով նա, ըստ էության, ընթերցողի մեջ ցանկանում է տպավորություն ստեղծել, որ Ա. Այվազյանը վատ բան է արել, քանի որ «որևէ ուսումնասիրող չի քննարկել» Աբրահամ Երևանցու այդ սխալը, և «միայն Ա. Այվազյանն է, որ այդ վկայությանն անդրադարձել է»: Փաստորեն, ըստ Ա. Եղիազարյանի, Աբրահամ Երևանցու սխալ վկայություններին անդրադառնալ չի կարելի: Իսկ թե այդ դեպքում ինչ պետք է անի պատմաբանը, նա ասում է հաջորդ նախադասության մեջ:

3) **Ա. Եղիազարյան.** «Մինչդեռ, եթե ընդունենք, որ Երևանի բերդի հանձնման ամսաթիվը՝ օգոստոսի 21-ը, ձեռագրական վրիպակ է, որն իրականում սեպտեմբերի 21-ն է, ապա ամեն ինչ կլինի իր տեղում, քանի որ կստացվի, որ Աբրահամ Երևանցին ևս ճշգրիտ է հիշատակում բերդի անկման ամսաթիվը»:

Պարզվում է, ինքնագիր (!) սկզբնաղբյուրի հստակ հաղորդումը պատմաբանը կարող է իր ուզած կերպ փոխել՝ հայտարարելով, թե ուղղագրական տեսակետից լիովին ճիշտ գրված մեկ ամբողջ բառ... «ձեռագրական վրիպակ» է: Իրականում, «ձեռագրական վրիպակ» կարող են համարվել մեկ բառում կատարված այնպիսի տառասխալները, որոնք, այնուամենայնիվ, հնարավորություն են տալիս հասկանալու այդ բառի նախնական, ճիշտ ուղղագրությունն ու նշանակությունը: Տվյալ դեպքում Ա. Եղիազարյանը փորձում է հավատացնել ընթերցողին, թե Աբրահամ Երևանցին իր ձեռքով «սեպտեմբերի» փոխարեն «օգոստոս» է գրել՝ արհամարհելով այն փաստը, որ «սեպտեմբեր» և «օգոստոս» բառերում համընկնում են ընդա-

մենը երկու տառ, այն էլ՝ տարբեր դիրքերում: Ասել է թե՛ «սեպտեմբեր» գրել ցանկացողը ոչ մի կերպ «օգոստոս» գրել չի կարող: Սա արդեն գիտությունն է, առավել ևս՝ աղբյուրագիտությունն է: Այլապես շատ ու շատ ուրիշ տեղեկություններ նույնպես կարելի է ձեռագրական վրիպակ հոչակել, որից հետո, ինչպես ասում է Ա. Եղիազարյանը, «ամեն ինչ կլինի իր տեղում»: Կարելի է հայտարարել, օրինակ, որ Աբրահամ Երևանցին ուզեցել է գրել «Ալի-կուլի» կամ «Ալի-դուլի», բայց ձեռագրական վրիպակ է թույլ տվել և գրել է «Միհրալի»: Կամ ուզեցել է գրել «Արիֆի-Ահմեդ», բայց վրիպել և գրել է «Աբդուլլա»: Բարեբախտաբար, պատմական աղբյուրագիտությունը մերժում է նման հնարքները:

Բացի այդ, Աբրահամ Երևանցին գրել է ոչ թե օգոստոսի 21, ինչպես կարծում է Ա. Եղիազարյանը, այլ օգոստոսի 20՝ «Թվին ՌՃՀԳ-ումն» (=1724), օգոստոսի Ի-մին (=20)»: Հայկական տառերով պարզ և բարդ թվերն առհասարակ ճիշտ արտահայտող Աբրահամ Երևանցին (օրինակ, ԻԹ=29, ԺԲ=12, ՃԾԸ=158, ԾԵ=55, ԻԵ=25, ԹՌԴ=9423, ԲՃԼԴ=234, ՌԳՃ=1300⁴⁵ և այլն), բնականաբար, չէր դժվարանալու 21-ը ևս գրել իր ճիշտ ձևով՝ «ԻԱ», այլ ոչ թե «Ի մին»⁴⁶: Իսկ «ՌՃՀԳ-ումն»-ի «ումն»-ը և «Ի-մին»-ի «մին»-ը ընդամենը բարբառայնություններ են, որոնցով Աբրահամ Երևանցու ինքնագիրը լեցուն է:

4) **Ա. Եղիազարյան.** «Եթե առաջարկված ճշգրտումը հավանական է, ուրեմն կարելի է համարել, որ գուցե իրականում բերողը հանձնվել է հենց սեպտեմբերի 21-ին և ոչ թե 22-ին, ինչպես նշում է Ի. Նեպյունը»:

Այս նախադասությամբ Ա. Եղիազարյանն ընդունում է, որ իր առաջարկած կամայական «լուծումը» կարող է նաև անհավանական

⁴⁵ **Աբրահամ Երևանցի,** էջ 25, 28, 29, 36, 43:

⁴⁶ «Ի մինը» թյուրիմացաբար 21 է վերծանել նաև Աբրահամ Երևանցու ինքնագրի խմբագրված տարբերակի (նույն տեղում, էջ 91-169) հեղինակը՝ XVIII դարում ապրած մխիթարյան միաբան Մատթեոս Եվդոկիացին (էջ 110), սակայն գրքի տպագրության ժամանակ նրա սխալն ուղղել է բազմավաստակ հայագետ Սահակ վ. Ճեմճեմյանը՝ «Ի»-ն վերծանելով ինչպես հարկն է՝ 20, իսկ «մին» մասնիկի կողքին դնելով «sic» նշանը՝ ցույց տալու համար այդպիսի գործածման անսովոր և անճիշտ ձևը (էջ 35):

դիտվել, բայց, այնուամենայնիվ, դրա հիման վրա կատարում է ևս մեկ սխալ ենթադրություն:

5) **Ա. Եղիազարյան.** «Ի դեպ, Կոստանդնուպոլսում գտնվող ռուսական դիվանագիտական ներկայացուցչի սխալվելու հավանականությունն ավելի մեծ է, քան ականատես Աբրահամ Երևանցունը»:

Իսկ այս նախադասությամբ Ա. Եղիազարյանն իր քիչ առաջ թեական համարած բռնագրոսիկ ենթադրությանը շնորհում է առավել հաստատուն ճշմարտության կարգավիճակ: Այս առումով հարկ է ընդամենը կրկնել, որ Աբրահամ Երևանցին 1724 թ. Երևանի պաշտպանության ականատես չի եղել:

6) **Ա. Եղիազարյան.** «Կարելի է փաստել, որ ուսումնասիրողները լիովին անտեսել են Աբրահամ Երևանցու երկուս ներկայացված ժամանակագրությունը հիմնավորող տեղեկությունը»:

Սա Ա. Եղիազարյանի հոդվածի եզրափակիչ նախադասությունն է, որով Աբրահամ Երևանցու *օգոստոսի 20-ը սեպտեմբերի 21-ով* անընդունելի փոխարինումն ներկայացվում է որպես բացառիկ պատմագիտական հայտնագործություն:

Ա. Եղիազարյանի վերը բերված «հիմնավորումները» անհնար է բնորոշել այլ կերպ, քան քարոզչական հնարքներով համեմված դասական սիրողականություն, պատմական արժեքավոր սկզբնաղբյուրի աղճատում և համապատասխան գիտական գրականության անտեսում:

1800 հոգուց բաղկացած ... «բանակ»

Կարևոր է անդրադառնալ նաև Կարբիի ինքնապաշտպանությանը և դրան հաջորդած որոշ դեպքերի, որոնք, ըստ Աբրահամ Երևանցու, նախորդել են Երևանի պաշարմանը: Պատմիչը հստակ շարադրել է իրադարձությունների հաջորդականությունը, որն ամփոփ ներկայացվել է 1991 թ. հրապարակված վերոհիշյալ հոդվածում⁴⁷: Այն արձանագրում է, որ, ըստ Աբրահամ Երևանցու, 1800-հոգանոց

⁴⁷ Այվազյան Ա., 1991, էջ 94-95:

թուրքական մի առաջամարտիկ զորագունդ, «Արգրումցի Եալուզ Հասանի» և «Ղոչ Ալիի» հրամանատարությամբ, 1724 թ. մարտի 6-ին իջևանում է «Արբայ-չայ» կոչված վայրում և (հավանաբար, մեկ կամ մի քանի օր անց) Եղվարդի մոտ ջարդում է Երևանի խանի ընդառաջ եկած 12000 հոգուց բաղկացած (դատելով ճակատամարտի ելքից) զինված խառնամբոխը, որը մեծ կորուստներ տալով, ցրվում է, իսկ Երևանի խանն իր հետ մնացած 800 զինվորներով վերադառնում է Երևան և ամրանում բերդում⁴⁸։ Այնուհետև, օսմանյան զորագնդի զինվորները «եկան հասան Կարբի, քրիստոնի գեղն»։ Կարբեցիները, սակայն, գյուղը չեն հանձնում՝ «իւրեանց գեղն լավ շինեցին, պատերն, դարբասներն, ըսկսեցին կովիլ օսմանցուն հետ։ ...կոիվ առին, մինչ ի մեծ փաշէն եկավ Խ (40) օրէն յետ»⁴⁹։ Պարզ է, որ «մեծ փաշէն» Երևանի ուղղությամբ գործող օսմանյան բանակի գլխավոր զորահրամանատարն էր (այն է՝ սերասքեր Արիֆի-Ահմեդ փաշան)։ Նա կարբեցիներին 10 օր ժամանակ է տալիս՝ առանց դիմադրության զենքերը վար դնելու համար։ 10 օր անց այդ պայմանը կատարվում է։ Այնուհետև 3 օրում օսմանյան բանակը Եղվարդից գալիս հասնում է Երևանի մատույցներում գտնվող «Սամբթէկի Դալմա» վայրը։ Անցնում է ևս 7 օր նախքան Երևանի պաշարման սկսվելը⁵⁰։ Այսպիսով, եթե նույնիսկ չհաշվենք հիշատակված անցքերի միջև հնարավոր չնշված օրերը, ստացվում է, որ Երևանի պաշարումը սկսվել է 1724 թ. մայիսի 5-ից ոչ շուտ (= մարտի 6-ին + 40 օր + 10 օր + 3 օր + 7 օր)։ Այնուհետև Ա. Երևանցին գրում է. «Երեւանայ խանն... հրայման ետ, քաղաքի թուրքն եկավ քրիստոնի մէջն մտավ, կոիվ արին օսմանցուն հետ՝ մինչ ի Կ (60) օրն»⁵¹։ Սակայն մայիսի 5-ից հետո կոիվները 60 օր շարունակվելու դեպքում Երևանի գրավումը հունիսի 7-ին անհնար է։

⁴⁸ **Աբրահամ Երևանցի**, էջ 23-24։ Ինչպես վերն արդեն նշել ենք, Երևանի խանը 1724 թ. Ալի-կուլին էր, այլ ոչ Միհրալին, ինչպես սխալվում է Աբրահամ Երևանցին։

⁴⁹ Նույն տեղում, էջ 24։

⁵⁰ Նույն տեղում, էջ 25։

⁵¹ Նույն տեղում։

Նույն հոդվածում, օսմանյան, ռուսական և եվրոպական աղբյուրներում միմյանց հաստատող տեղեկությունների վերհանման ու քննական համեմատության հիման վրա ճշտվել է, որ Երևանի (և՛ բերդի, և՛ «քաղաքի») պաշարումը սկսվել է 1724 թ. հունիսի 24-ին⁵²:

Ա. Եղիազարյանը մերժում է այս եզրակացությունները՝ պատճառաբանելով այսպես.

«Ինչ վերաբերում է Ա. Այվազյանի՝ մարտի 6-ից կատարած հաշվարկին, ապա այն այնքան միանշանակ չէ, քանի որ նա այդ մեկնակետից իր հաշվարկած 60 օրում հերթականության սկզբունքով ընդգրկել է Կարբիի կոիվների 40 օրը և փաշայի՝ կարբեցիներին ներկայացրած վերջնագրին հետևած 10 օրը: Մինչդեռ հաշվարկը հարկ էր կատարել զուգահեռության սկզբունքով՝ Կարբիի կոիվները և Երևանի վրա արշավանքն ու քաղաքի ինքնապաշտպանությունը դիտարկելով որպես զուգահեռաբար ընթացող իրադարձություններ: Դրանով իսկ Աբրահամ Երևանցու ժամանակագրական տեղեկությունները դառնում են հավաստի»⁵³:

Բայց ինչպե՞ս կարելի է «Կարբիի կոիվները և Երևանի վրա արշավանքն ու քաղաքի ինքնապաշտպանությունը դիտարկել որպես զուգահեռաբար ընթացող իրադարձություններ», երբ Աբրահամ Երևանցին վերը նկարագրված դեպքերն աներկբայորեն դրել է *մեկը մյուսից հետո՝ իրարահաջորդաբար, այլ ոչ՝ զուգահեռաբար ու միաժամանակ*, ինչպես փորձում է ներկայացնել Ա. Եղիազարյանը: Ըստ Աբրահամ Երևանցու, օսմանյան բանակը Կարբին գրավելուց հետո է միայն Եղվարդից արշավել Երևանի վրա, ապա երեք օր անց նոր սկսել է նրա պաշարումը⁵⁴: Փաստորեն, Ա. Եղիազարյանը, ձգտելով ամեն կերպ արդարացնել Աբրահամ Երևանցու «ամսաթվային» սխալները, միջոցների մեջ խտրություն չի դնում՝ իրարահաջորդ դեպքերը միաժամանակյա է հռչակում: Այնուհետև Ա. Եղիազարյանն իր հոդվածի 71-72-րդ էջերում հեղինակում է մի մտացածին ու խառնաշփոթ պատմություն, որն աղավաղում է և՛

⁵² Այվազյան Ա., 1991, էջ 95-96:

⁵³ Եղիազարյան Ա., 2022, էջ 71:

⁵⁴ Աբրահամ Երևանցի, էջ 23-25:

խրադարձությունների ժամանակագրական հաջորդականությունը, և՛ սկզբնաղբյուրի սահուն դիպաշարն ու բուն բովանդակությունը, որոնց հավաստիությանը կասկածելու հիմքեր գոյություն չունեն⁵⁵:

Ասվածն ակնհայտ է դառնում հարցն առավել առարկայական՝ ռազմապատմական տեսանկյունից դիտարկելիս: Ըստ Ա. Եղիազարյանի, Եղվարդի ճակատամարտից հետո «օսմանյան բանակի մի մասը այնտեղ պարսկական բանակը ջախջախելուց հետո գնացել էր Կարբիի ուղղությամբ, իսկ մյուս մասը՝ Եղվարդում զորամասեր թողնելով՝ դեպի Երևան»⁵⁶: Բայց Աբրահամ Երևանցին հաղորդում է, որ այդ ճակատամարտին մասնակցել է 1800 հոգուց բաղկացած ընդամենը մեկ օսմանյան զորագունդ՝ «Արզրումցի Եաղուզ Հասանի» և «Ղոչ Ալիի» հրամանատարությամբ: Ներկայացնել այդ փոքրաթիվ գունդը որպես «օսմանյան բանակ» նշանակում է ոչ այլ ինչ, քան պատմական տեղեկությունների միտումնավոր աղճատում⁵⁷:

Ավելին, պարսկական զորքին Եղվարդի ճակատամարտում հաղթելով հանդերձ՝ այդ զորագունդն ինքն էլ, բնականորեն, կորուստներ էր կրել ու թվով պակասել: Ճակատամարտի ընթացքում

⁵⁵ Որպեսզի փոքր-ինչ պարզ լինի, թե պատմագիտական հստակության ու շարահյուսական մշակվածության տեսակետից ինչպիսի «ստեղծագործության» մասին է խոսքը, ահա Ա. Եղիազարյանի հոդվածի նշված էջերից ընդամենը մեկ նախադասություն. «Խնդիրն այն է, որ եթե Աբրահամ Երևանցու՝ «Պատմութիւն թագայորի Պարսից» ձեռագրում Կարբիի բնակիչների դեմ կռվող օսմանյան հրամանատարներին 40 օր անց օգնության եկած փաշայի անունը բացակայում է, և բացի այդ, Կարբիի դեպքերի նկարագրությունից հետո նշվում է այն մասին, թե Երևանի ուղղությամբ օսմանյան զորքի արշավանքը սկսվում է Եղվարդից, որը հուշում է, որ օսմանյան բանակի մի մասը այնտեղ պարսկական բանակը ջախջախելուց հետո գնացել էր Կարբիի ուղղությամբ, իսկ մյուս մասը՝ Եղվարդում զորամասեր թողնելով՝ դեպի Երևան» (Եղիազարյան Ա., 2022, էջ 71): Շարունակությունը շարադրված է նույն ոճով ու տրամաբանությամբ:

⁵⁶ Նույն տեղում, էջ 71:

⁵⁷ Թ. Հակոբյանը, օրինակ, սկզբունքորեն չէր սխալվում՝ բնորոշելով այդ գունդը որպես Երևանի կողմերը «հետախուզության նպատակներով» ուղարկված «զորաջոկատ» կամ նույնիսկ «ջոկատ» (Հակոբյան Թ. Խ., 1971, էջ 74-75):

երկու կողմերի բազմաթիվ վիրավորների մասին նշված է Աբրահամ Երևանցու երկի «խմբագիր օրինակում»։ «Ի դիմի հարան միմեանց երկոքին դիմամարտքն, եւ յայնմ վայրի բազում վիրատոք յերկոցունց կողմանց անկանէին»⁵⁸։ Ուրեմն, ինչպե՞ս կարող էր 1800 հոգուց էլ զգալիորեն պակաս թվակազմ ունեցող օսմանյան այդ զորքը և՛ Եղվարդում զորամասեր թողնել, և՛ Կարբին պաշարել, և՛ Երևանի վրա գրոհել։ Ըստ Ա. Եղիազարյանի, կարող էր, որովհետև իբր «բանակ» էր, ահա.

«Օսմանյան բանակը Ախուրյան գետի (Արփա-չայ) ափից շարժվեց և հասավ Եղվարդ։ Այստեղ նրա դեմ դուրս եկավ Երևանի Միհր-Ալի խանի 12 հազարանոց բանակը, որը պարտվեց և գրեթե լիովին ոչնչացվեց։ Օսմանյան բանակը Եղվարդից տեղաշարժվեց և պաշարեց Կարբի գյուղը» (ընդգծումը՝ Ա.Ա.)⁵⁹։

Պատահական չէ, որ Ա. Եղիազարյանը չի նշում ո՛չ օսմանցի զորահրամանատարներ Յալղուզ Հասանի ու Ղոչ Ալիի անունները, ո՛չ էլ նրանց գլխավորած զորագնդի թվաքանակը, որովհետև այդ դեպքում անհնար կլիներ խոսել օսմանյան «բանակի» և նրա տարբեր ուղղություններով իբր իրականացրած միաժամանակյա ռազմական գործողությունների մասին։ Մինչդեռ Եղվարդի ճակատամարտից հետո Յալղուզ Հասանն ու Ղոչ Ալին չէին կարող շարքում մնացած առավելագույնը 1200-1500 իրենց զինվորներին բաժանել երեք մասի և մոտավորապես 400-500 հոգով արշավել Երևանի վրա, 400-500 հոգով պաշարել Կարբին և 400-500 հոգով ճամբարել Եղվարդի մերձակայքում։ Այդպիսի գործողությունները ոչ միայն սոսկ աննպատակահարմար կլինեին, այլև՝ ինքնասպանական։ Հետևաբար, լիովին ինքնահնար են նաև Ա. Եղիազարյանի այն դրույթները, ըստ որոնց՝ իբր 1724 թ. «մարտի սկզբներից» եղել է «Եղվարդի և Կարբիի ուղղությամբ գործող օսմանյան բանակի» մի ինչ-որ «հրամանատար», որին Ա. Եղիազարյանը կամայականորեն նույնացնում

⁵⁸ Աբրահամ Երևանցի, էջ 96:

⁵⁹ Եղիազարյան Ա., 2022, էջ 55-56:

է Կարբիի պաշարման 40-րդ օրը այնտեղ հասած «մեծ փաշայի» հետ⁶⁰: Բայց, ինչպես վերը տեսանք, 1724 թ. գարնան ամբողջ ընթացքում Արարատյան երկրում ո՛չ օսմանյան «բանակ» է եղել, ո՛չ էլ, բնականաբար, այն գլխավորող «հրամանատար» (այսինքն՝ *սերասքեր*): Իսկ Յալդուզ Հասանի և Ղոչ Ալիի 1800-հոգանոց առաջապահ զորագունդն իրականում Եղվարդին է մոտեցել միայն 1724 թ. ապրիլի կեսերին:

Ըստ Աբրահամ Երևանցու հստակ ու տրամաբանական հաղորդումների, Եղվարդի ճակատամարտից հետո օսմանյան զորագունդը բավարարվել էր ընդամենը Կարբին պաշարելով, ընդ որում՝ 40 օրվա ընթացքում այն չէր կարողացել գրավել: Դատելով Աբրահամ Երևանցու տեղեկություններից՝ Կարբիի վրա վճռական գրոհներ չեն էլ ձեռնարկվել: Հետևաբար, Յալդուզ Հասանն ու Ղոչ Ալին իրենց ենթակայության տակ եղած ուժերը բավարար չեն համարել հարձակողական գործողություններ իրականացնելու համար: Եվ դա միանգամայն բացատրելի է. համընդհանուր ինքնապաշտպանության դիմելու դեպքում՝ 6000 բնակիչ ունեցող Կարբին ի վիճակի էր զինվորագրելու ընդհուպ 1200 ռազմիկ⁶¹, այսինքն՝ մոտավորապես այնքան (եթե ոչ՝ ավելի շատ), որքան այդ օսմանյան զորագունդը կազմել է Եղվարդի ճակատամարտում կորուստներ կրելուց հետո: Իսկ հաջող հարձակողական գործողությունների համար, ինչպես հայտնի է, պահանջվում է քանակական լուրջ (առնվազն կրկնակի կամ նույնիսկ եռապատիկ) գերակշռություն: Իրականում օսմանյան բանակի հիմնական ուժերը, Աբրահամ Երևանցու նշած «մեծ փաշայի» (իմա՝ սերասքեր Արիֆի-Ահմեդ փաշայի) գլխավորությամբ,

⁶⁰ Նույն տեղում, էջ 72:

⁶¹ Այվազյան Ա., 2022, էջ 220-221: Կարբին Չուխուր-Սա՛ղի վիլայեթի ամենահարուստ մահալն էր (տե՛ս Փափազյան Հ. Դ. Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺԷ դ.). – ԼՀԳ, 1977, № 1, էջ 38. Папазян А. Д. Аграрные отношения в Восточной Армении в XVI-XVII вв., Ереван, 1972, с. 114-151:

հասել էին Եղվարդ-Կարբի բնագծին Կարբիի պաշարման 40-րդ օրը՝ ինչպես և պարզել ենք՝ 1724 թ. մայիսի 25-ին⁶²:

Կան ռազմական բնույթի ևս մի քանի կարևոր հանգամանքներ, որոնց հետ Ա. Եղիազարյանի «կառուցած» պատմությունը ոչ մի կերպ չի համադրվում: Այսպես, իրենց գյուղաքաղաքի պաշարման ընթացքում կարբեցիները երկու անգամ բանագնացներ են ուղարկել Երևանի խանի մոտ՝ նրանից (ապարդյուն) զենք, զինամթերք և օժանդակ զորք խնդրելով⁶³: Հարց է առաջանում. եթե օսմանյան զորքերը պաշարել էին ոչ միայն Կարբին, այլև Երևանը, այդ դեպքում ինչպե՞ս կարող էին կարբեցիները երկու անգամ հանգիստ գնալ Երևան ու հետ դառնալ: Բացատրությունը շատ պարզ է. Երևանն այդ ժամանակ պաշարված չի եղել, իսկ Յաղուզ Հասանի ու Ղոչ Ալիի զորագունդը՝ իր փոքրաթվության պատճառով, չի կարողացել Կարբին վերցնել լիակատար և անթափանցելի օղակի մեջ, ինչն էլ հնարավորություն է ընձեռել կարբեցիներին գաղտնի սողոսկելու թշնամու պահակախմբերի միջով, հասնելու Երևան և վերադառնալու: Կարբեցիները կարող էին Երևանից ռազմական օգնություն ստանալու հույսեր փայփայել միայն այն ժամանակ, երբ Երևանն ինքը դեռևս պաշարված չէր, և այդ երկու բնակավայրերի միջև կապն ամբողջությամբ կտրված չէր:

Ավելին, Երևանը պաշարելու պատրաստվող օսմանյան բանակը չէր կարող իր անմիջական թիկունքում թողնել զինված դիմադրություն ցույց տվող մի ամբողջ ամրացված գյուղաքաղաք՝ հայկական զորաջոկատով հանդերձ: Ռազմական տեսակետից դա կլինեին անգրագետ որոշում, որը կվտանգեր Երևանի մերձավայրերում գտնվող օսմանյան զորքի մատակարարման կարևոր հաղորդուղիները⁶⁴:

⁶² Այվազյան Ա., 1991, էջ 100:

⁶³ Աբրահամ Երեանցի, էջ 24: Իսկ այն մասին, թե ինչո՞ւ խանը երկու անգամ էլ նրանց օգնություն չի տրամադրել, տե՛ս Այվազյան Ա., 2006, էջ 62-75:

⁶⁴ Թ. Հակոբյանը միանգամայն ճիշտ էր, երբ նկատում էր, որ հետագայում Կարբիին մոտեցած օսմանյան բանակի գլխավոր հրամանատարը՝ «թուր-

Վերոշարադրյալը գալիս է վերահաստատելու Աբրահամ Երևանցու հստակ հաղորդումն առ այն, որ Կարբիի 40-օրյա պաշարման ընթացքում օսմանյան բանակը Երևան չէր հասել: Իսկ Եղվարդի ճակատամարտի մոտավոր օրը որոշվել է դեռևս 2006 թ. հոդվածում. «Այն պետք է տեղի ունեցած լինի ոչ թե 1724 թ. մարտի 6-ին, այլ ապրիլի 25-ից՝ Կարբիի պաշարման սկսվելու պահից, ընդամենը մի քանի օր ավելի շուտ: Սա հետևում է ն՝ Երևանի պաշարումը միայն հունիսի վերջին սկսվելու հանգամանքից, ն՝ հարձակման թափը չկորցնելու օսմանցիների ռազմական տրամաբանությունից, որով պարտադիր էր համարվելու անմիջապես պաշարել դիմադրության անսպասելի ցանկությունն դրսևորած մոտակայքի հայաբնակ խոշոր գյուղաքաղաքը՝ Կարբին»⁶⁵: Եղվարդի ճակատամարտի օրը կարելի է գետեղել ապրիլի 20-ից մինչև 24-ն ընկած ժամանակահատվածում:

Նույն հոդվածում այս տեսակետը հիմնավորվել է նաև լրացուցիչ փաստարկներով.

«Այն, որ այս (Եղվարդի) ճակատամարտը տեղի է ունեցել 1724 թ. մարտի 6-ից շատ ավելի ուշ, հուշում է նաև մարտի 13-ին Ս. Էջմիածնից Ղարաբաղի հայոց Սղնախների հրամանատարությանը (Ավան, Թարխան և Միրզա յուզբաշիններին) կաթողիկոսի «աթոռակալ Յովասափ վարդապետի» գրած նամակը, որում այդ դեպքերի մասին որևէ տեղեկություն չկա»⁶⁶: Եթե Եղվարդի ճակատամարտում Երևանի խանի զորքի խայտառակ պարտությունը, փախուստն ու Երևանի բերդում փակվելն իսկապես մարտի 6-ին եղած լինեին, ապա Ս. Էջմիածնի անմիջական շրջակայքի ռազմաքաղաքական վիճակը կտրուկ փոփոխված այդ իրադարձությունը նամակում որևէ կերպ կար-

քական փաշան երկյուղ էր կրում կարբեցիների հետագա ընդվզումներից և թուրքական բանակին թիկունքից հարվածելուց» (**Հակոբյան Թ.**, 1971, էջ 77):

⁶⁵ **Այվազյան Ա.**, 2006, էջ 62:

⁶⁶ *Армяно-русские отношения в первой трети XVIII века. Сборник документов*, т. II, часть II, под ред. Аш. Иоаннисяна. Ереван: изд-во АН Арм. ССР, док. 228, с. 85-86.

տացովներ և այդ նամակն էլ այլևս հագիվ թե առաքվեր: Այնինչ նամակում ասվում է, թե «քանի որ [=քանի դեռ] թշնամեաց ձեռն չենք մատնվել, գերի և աւար չեն հարկաներ» ու «որքան որ թշնամեաց ձեռն տեղս չէ հասել»՝ ռուսական զորքերը պետք է շուտ մտնեն Արարատյան երկիր՝ «շուտով գայցեն»⁶⁷: Այսպիսի տողերը չէին գրվի, եթե օսմանյան զորքն արդեն Եղվարդում լիներ՝ Ս. Էջմիածնից մի քանի ժամվա հեռավորության վրա»⁶⁸:

Տեղին է հիշեցնել, որ 1724 թ. ապրիլին ռուսական զորքերը գտնվում էին Կասպից ծովի ափամերձ հատվածում, այսինքն՝ Արարատյան երկիր հասնելու համար նրանցից պահանջվելու էր, լավատեսական հաշվարկով, 15-20 օրից ոչ պակաս ժամանակ (առկա պատմական իրավիճակում այդպիսի ռազմարշավի իրական արագությունն է՛լ ավելի երկար էր լինելու): Ս. Էջմիածնում, անտարակույս, հասկանում էին այդ ամենը, ուստի, կրկնենք, Եղվարդում օսմանյան «բանակի» տարած հաղթանակից հետո, երբ յուրաքանչյուր պահ Մայր Աթոռի դռան առջև կարող էր օսմանյան զորք հայտնվել, ռուսներին նման նամակով դիմելն արդեն անիմաստ էր լինելու:

2006 թ. հրապարակված և Ա. Եղիազարյանի անճանաչ մնացած այդ ուսումնասիրությանում բացահայտվել են նաև 1724 թ. Երևանի պաշտպանությանը վերաբերող մի շարք այլ կարևոր փաստեր ու հանգամանքներ, ներառյալ կարբեցիների, երևանցիների և առհասարակ Արարատյան երկրի հայերի նկատմամբ Երևանի Ալիկուլի խանի վարած երկդիմի ու նենգ քաղաքականության մասին⁶⁹:

Անհարկի է Ա. Եղիազարյանի ևս մեկ պնդումը՝ իբր «Ա. Այվազյանը ժամանակագրական առումով լիովին անտեսում է Աբրահամ Երևանցու տվյալները»⁷⁰: Ժամանակակից հայոց լեզվում «անտեսել» բայը նշանակում է «ուշադրության չառնել, նկատի չառնել,

⁶⁷Նույն տեղում, էջ 86:

⁶⁸ Այվազյան Ա., 2006, էջ 63:

⁶⁹ Նույն տեղում, էջ 62-76:

⁷⁰ Եղիազարյան Ա. Երևանի 1724 թ. ինքնապաշտպանությունը, էջ 63-64:

հաշվի չառնել»⁷¹: Վերը շարադրված ամբողջ նյութն ավելի քան բավարար է համոզվելու համար, որ այդ տվյալները ոչ թե անտեսվել են (այն էլ՝ իբր «լիովին»), այլ ճիշտ հակառակը՝ ենթարկվել են մանրագնին քննական վերլուծության, իսկ որոշ դեպքերում՝ հիմնավոր պատճառներով հերքվել: Հերքելն ու անտեսելը տարբեր բաներ են: Ըստ այսմ, Ա. Եղիազարյանի պնդումը հիմնագուրկ է:

Ձորագյուղի մարտիկների առեղծվածային անհայտացումը

Հոդվածում կան նաև այլ կոպիտ սխալներ, որոնցից մի քանիսին արժե անդրադառնալ: Ա. Եղիազարյանը գրում է.

«Ձորագյուղում ապաստանած փախստականներից հավաքվել էր երեք հազար զինվոր: Այս զինվորները, ըստ Մ. Կարապետյանի, ձորագյուղիներ էին⁷², սակայն հազիվ թե նման կարծիքի կարելի է հանգել Աբրահամ Երևանցու «Ձորայգեղայ հօրքն (իմա՝ զորք – Ա. Ե.), որ է ԳՌ [3.000] պատվայկան գեղից մարդիք» տեղեկությունից⁷³: Վերջինս իրականում վկայում է այն մասին, որ զինվորները հավաքագրվել էին Երևանի շրջակա գյուղերից քաղաքում ապաստանածներից («պատվայկան գեղից մարդիք»)»⁷⁴:

Բայց եթե Ձորագյուղի 3000 աշխարհագորայինները հավաքագրվել էին «շրջակա գյուղերից քաղաքում ապաստանածներից» (Ա. Եղիազարյանի մեկ այլ ձևակերպմամբ էլ՝ զորահավաք էր կատարվել «Երևանում ապաստանած՝ շրջակա գյուղերի ժողովրդի շրջանում»)»⁷⁵, ապա այդ դեպքում ո՞ր էին անհայտացել իրենք՝ ձորագյուղիները (որոնց թիվն, ի դեպ, մեր հաշվարկներով, հասնում էր շուրջ 15 հազարի)⁷⁶: Այս տարրական ստուգողական հարցն ինքն

⁷¹ «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան». Հ. Ա: Երևան. ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969, էջ 140:

⁷² Կարապետյան Մ. Մ., 1987, էջ 95:

⁷³ Աբրահամ Երևանցի, էջ 28:

⁷⁴ Եղիազարյան Ա., 2022, էջ 56-57 (ծնթ. 4):

⁷⁵ Նույն տեղում, էջ 56:

⁷⁶ Այվազյան Ա., 2022, էջ 198-212:

իրեն չտալով՝ Ա. Եղիազարյանը չի նկատել, որ իր հապճեպ եզրակացության տրամաբանությամբ, ձորագյուղիները Երևանի պաշտպանությանը չեն մասնակցել, ինչը կատարյալ անհեթեթություն է: Այնինչ Աբրահամ Երևանցու «պատվայկան գեղից մարդիք» արտահայտության «գեղից» բառը վերաբերում է հենց ձորագետիներին. չէ՞ որ նրա ինքնագրում Ձորագյուղը միշտ Ձորագետի ձևով է հիշվում⁷⁷: XVII-XIX դդ. Երևանի այդ արվարձանը Ձորագետ էին անվանում նաև Ջաքարիա Ագուլեցին, Ջաքարիա Քանաքեռցին («...ի Խնկելոյ Ձոր գեղ, որ այժմ ասի Ձորագետ» և «ի Խնկելոյձոր, որ այժմ ասի Ձորագետ»), Խաչատուր Աբովյանը և ուրիշներ⁷⁸: Ձորագյուղը սկզբնապես առանձին գյուղ է եղել՝ հետագայում միայն ներառվելով Երևանի մեջ և ընկալվելով որպես նրա արվարձան կամ թաղամաս: Այն տակավին գյուղ էր անվանում կաթողիկոս Սիմեոն Երևանցին (1763-1780)՝ նշելով նաև նրա հին անունը՝ «Ի գետոս յայս Ձորագետ, որ կոչի Խնկաձոր»⁷⁹: Ահա այսպես է Ձորագետի «պատվայկան գեղից մարդիք» արտահայտությունն առաջացել նաև Աբրահամ Երևանցու երկում: Մեր պատմիչն իսկությամբ թվարկել է Երևանի տարբեր թաղամասերի բնակիչներից կազմված աշխարհագորային կազմավորումները՝ «Հին Երևանայ թաղի հզորքն»՝ 4000 մարտիկ, «Ձորագետայ հզորքն»՝ 3000 մարտիկ, «Ջուհայրենց թաղի հզորքն»՝ 955 մարտիկ, «Կունդի թաղի հզորքն» (թվաքանակը չի նշել, ենթադրաբար՝ 300-500 մարտիկ), Կոնդի հայ բռնանների «հզորքը»՝ 234 մարտիկ⁸⁰:

⁷⁷ **Աբրահամ Երևանցի**, էջ 26, 28, 29, 31:

⁷⁸ **Ջաքարիա Ագուլեցի**. Օրագրություն: Պատ. խմբ.՝ Ս. Վ. Տեր-Ավետիսյան: Երևան, 1938, էջ 143: **Ջաքարեայ Սարկաւագ**. Պատմագրություն: Հ. Բ, Վաղարշապատ, 1870, էջ 33, 51. **Աբովյան Խաչատուր**. Վերք Հայաստանի. – Երկերի լիակատար ժողովածու ութ հատորով: Հ. III, Երևան. ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1948, էջ 190-191:

⁷⁹ **Սիմեոն Երևանցի**. Ջամբո: Վաղարշապատ, 1873, էջ 204: Ձորագետի մասին ավելի մանրամասն տե՛ս **Հակոբյան Թ. Խ.**, 1971, էջ 337-340. հմմտ. **Շահազիզ Երվանդ**. Հին Երևանը (1931 թ. անդրանիկ հրատարակության լրամշակված վերահրատարակություն): Լրամշ. և ծնթ.՝ Ա. Սարգսյան և Լ. Ամիրջանյան: Երևան. «Սուրճի», 2003, էջ 179:

⁸⁰ Նույն տեղում, էջ 28: Կոնդի ջոկատին վստահված էր ինքնուրույնաբար պաշտպանել առանձին կարևոր ուղղություն՝ Դաբախանի ճանապարհը,

Հարկ է ավելացնել, որ, ըստ Աբրահամ Երևանցու, Երևանում կենտրոնացած հայոց աշխարհագորը կազմվել է ինչպես Երևան քաղաքի, այնպես էլ շրջակա ութ գյուղերի՝ Փարաքարի, Գոգումբեթի, Կավակերտի (այժմ՝ Արգավանդ), Առինջի, Ավանի, Գավանի, Ձագի, Նորագեղի ռազմունակ տղամարդկանցից⁸¹։ Մեր վերջին մենագրության մեջ մանրամասն վերլուծությամբ ճշտվել է, որ «օգոստոսի 15-ի դրությամբ Ձորագյուղում կենտրոնացած, ընդհանուր առմամբ, 9500 հոգուց բաղկացած հայ միասնական աշխարհագրում գյուղացի մարտիկները կազմել են մոտավորապես 10 տոկոսը՝ շուրջ 1000 հոգի»⁸², որոնք վերը թվարկված երևանյան թաղամասերի աշխարհագրայինների թվի մեջ, իհարկե, չէին մտնում։ Իսկ այդ 8 հայկական գյուղերի բնակիչների թիվը, համապատասխանաբար, կազմել է մոտավորապես 10000 շունչ⁸³, որոնցից կարելի էր հավաքագրել 1000 զինվոր («10 բնակչից մեկ զինվոր» հարաբերակցությամբ) կամ, ամենաշատը, ինչպես և, ըստ ամենայնի, եղել է⁸⁴, մոտ 2000 զինվոր («5 բնակչից մեկ զինվոր» առավելագույն հնարավոր հարաբերակցությամբ), բայց ոչ երբեք՝ 3000 զինվոր⁸⁵։

ուստի այն 300-500-հոգանոց թվակազմից ավելի փոքրաթիվ լինել չէր կարող (տե՛ս **Այվազյան Ա.**, 2022, էջ 201 (ծնթ. 477)):

⁸¹ Նույն տեղում, էջ 28: Այս ցուցակում Քանաքեռի և Նորքի (Չոլմաքչի) բացակայությունը, ամենայն հավանականությամբ, բացատրվում է նրանով, որ Երևանի պաշարման երրորդ օրը՝ 1724 թ. հունիսի 26-ին, այդ գյուղերն օսմանյան բանակի անսպասելի գրոհով գրավվել են՝ որոշ այլ արվարձանների հետ միասին (**Այվազյան Ա.**, 1991, էջ 95. հմմտ. «Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի...», հ. Ա, էջ 143):

⁸² **Այվազյան Ա.**, 2022, էջ 201 (առավել մանրամասն՝ էջ 198-206):

⁸³ Նույն տեղում, էջ 205-206:

⁸⁴ Երևանի պաշարման ամենասկզբում երևանցիներից հավաքագրվել է շուրջ 9500, իսկ նշված ութ գյուղերի բնակիչներից՝ 2000 զինվոր, ընդհանուր առմամբ՝ 11500 զինվոր, որոնցից երկու հազարը զոհվել է 1724 թ. օգոստոսի 14-ի ճակատամարտում, ենթադրաբար ու կլորացված թվերով՝ 1000 քաղաքացի և 1000 գյուղացի (նույն տեղում):

⁸⁵ «10 բնակչից 1 զինվոր» և «5 բնակչից 1 զինվոր» հարաբերակցությամբ գորահավաքային սկզբունքների մասին տե՛ս նույն տեղում՝ (առաջին սկզբունքի մասին) էջ 35, 38, 45, 85, 127, 231, 233, 282, 298, 405, 432, 435, 510, 511, 514, 517, 519, 521, 526, 534, (երկրորդ սկզբունքի մասին) 212, 217, 231, 298:

Գործածվել է հի՞ն, թե՞ նոր տոմարը

Ըստ Ա. Եղիազարյանի, օսմանյան մի սկզբնաղբյուրում՝ «Ռե-վանի (Երևանի – Ա. Ե.) գրավման մասին գրքում», որ գրվել է դեպքերի ժամանակակցի կողմից, ներկայացված է Երևանի բերդի պաշարման այլ թվագրում՝ 1724 թ. հուլիսի 6-ից հոկտեմբերի 7-ը»⁸⁶:

1970 թ. Ստամբուլում հրապարակված այդ աղբյուրը հասանելի չէ, բայց կարելի է վստահորեն եզրակացնել, որ թուրք հրատարակիչները Երևանի պաշարման առաջին ու վերջին օրվա ամսաթվերը Հիջրայից վերծանել են ոչ թե հին, այլ նոր տոմարի: 1700 թվականից ի վեր հուլյան և գրիգորյան օրացույցների տարբերությունը՝ Գրիգորիս Գ պապի 1582 թ. փառեփոխումից հետո, արդեն ավելացել էր մեկ օրով և կազմում էր 11 օր⁸⁷: Հետևաբար, հին տոմարով Երևանի բերդի պաշարման նշված ամսաթվերը՝ 1724 թ. հուլիսի 6-ից մինչև հոկտեմբերի 7-ը, այսպիսին են՝ 1724 թ. հունիսի 25-ից մինչև սեպտեմբերի 26-ը: Այսինքն՝ այդ տվյալները գրեթե ճշգրտորեն համընկնում են Չելեբի-զադեի տրամադրած առավել վստահելի տեղեկությունների հիման վրա *հին տոմարով* կատարված մեր հաշվարկներին, ըստ որոնց՝ Երևանի պաշարումը սկսվել է հունիսի 24-ին և ավարտվել սեպտեմբերի 23-ին (պաշարման սկիզբը տարբերվում է ընդամենը մեկ, իսկ ավարտը՝ երեք օրով)⁸⁸:

Այնինչ Ա. Եղիազարյանն ընդհանրապես չի անդրադառնում պարտադիր այն հարցին, թե իր հոդվածում հղված պատմիչներն ու պատմաբանները ո՞ր տոմարով են նշել Երևանի պաշարմանը վերաբերող ամսաթվերը՝ հի՞ն, թե՞ նոր: Ոչ էլ նշում է, թե իր առաջարկած (սխալ) ամսաթվերն այդ երկու տոմարներից ո՞ր մեկով են: Այս բացթողումն ինքնին շատ բան է ասում հեղինակի մասնագիտական պատրաստվածության մասին:

⁸⁶ Եղիազարյան Ա., 2022, էջ 59:

⁸⁷ Աբրահամյան Ա. Գ., *Հայոց գիր և գրչություն*: Երևան. ԵՊՀ հրատ., 1973, էջ 138. հմմտ. Աղայան Է. Բ. *Սկնարկներ հայոց տոմարների պատմության*: Երևան. ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1986, էջ 214:

⁸⁸ Այվազյան Ա., 1991, էջ 93-100:

Տոմարի կարևորությունն ակնբախ է բոլոր այն պատմագիտական հետազոտությունների համար, որոնք ձգտում են, բազմալեզու աղբյուրների օգտագործմամբ, ճշտել 1582 թ. մինչև 1920-ական թթ. հայոց պատմության այս կամ այն դրվագի ամսաթիվը: Չէ՞ որ եվրոպական պետություններում գրիգորյան օրացույցին անցել էին հիմնականում XVI-XVIII դարերում, Ռուսաստանում՝ 1918 թ., Հայաստանում՝ 1920 թ., իսկ Թուրքիայում՝ միայն 1926 թ.: Արդարև, անգամ 1720-ական թթ. գործող Եղիա Մուշեղյանն էր իրավացիորեն հարկ համարում հատուկ նշել նոր տոմարի գործածումը՝ հուլյան օրացույցը պահպանած հայկական կամ ռուսական շրջապատի հետ գրագրություն վարելիս⁸⁹: Ժամանակին այդ հարցին քանիցս անդրադառնալու առիթ եղել է, ներառյալ հետևյալ հատուկ նշումով.

«Եթե նկատենք, որ եվրոպացի հեղինակները գործածել են նոր՝ գրիգորյան տոմարը, որի տարբերությունը հուլյան տոմարից 1720-ականներին կազմում էր 11 օր, ապա պարզ կդառնա, որ Չելեբի-զադեի, Ի. Նեպլյունի (ռուսները պահպանել էին հին տոմարը) և Ջ. Հանվեյի հաղորդումները Երևանի բերդի գրավման ժամանակի մասին ճշգրիտ կերպով համընկնում են 1724 թ. սեպտեմբերի 22-23-ի հետ»⁹⁰:

Եզրույթների թյուրմեմբում և շփոթ («Մեծ արվարձանը»... «փոքրիկ արվարձանն» է)

Միջնադարյան և ուշմիջնադարյան քաղաքները բաղկացած էին երկու մասից՝ բերդից և նրա պարիսպներից դուրս գտնվող բնա-

⁸⁹ «Եղիա Կարնեցու դիվանը»: Առաջաբանը և ծանոթագրությունները՝ Ա. Գ. Աբրահամյանի: Երևան. «Միտք» հրատ., 1968, էջ 116, 137, 187, 198, 200, 201, 213, 257. հմմտ. **Այվազյան Արմեն**. «Դավիթ-բեկի Հայաստան գալու ժամանակն ու հանգամանքները». – ՊԲՀ, 1990, № 3, էջ 81 (ծնթ. 22):

⁹⁰ **Այվազյան Ա.**, 1991, էջ 96: 1722 թ. հուլյան և գրիգորյան օրացույցների տարբերությունը՝ Գրիգորիս Գ պապի 1582 թ. բարեփոխումից հետո, արդեն ավելացել էր մեկ օրով և կազմում էր 11 օր (**Աբրահամյան Ա. Գ.** Հայոց գիր և գրչություն: Երևան, 1973, էջ 138. հմմտ. **Աղայան Է. Բ.** Ակնարկներ հայոց տոմարների պատմության: Երևան, 1986, էջ 214):

կելի տարածքից, որը, սովորաբար, անվանվում էր «քաղաք» կամ «արվարձան» («արվարձաններ») և բնակչության թվով բազմապատիկ գերազանցում բերում ապրողներին: Սկզբնաղբյուրներում «քաղաք» բառը գործածվում էր բազմիմաստորեն՝ նշանակելով, կախված տվյալ պատմական հաղորդումից, ամբողջ քաղաքը (ներառյալ բերդը), բերդն առանձին կամ բերդն ու նրան կից որոշ «արվարձանները» միասին: Միաժամանակ այդ արվարձանները հաճախ նշվում էին հատուկ եզրույթներով, ինչպիսիք են, օրինակ՝ օսմաներեն «վարոշը» (բառը հունգարերենից է ծագում), ֆրանսերեն «fauxbourg»-ը, գերմաներեն «Vor-Stadt»-ը, անգլերեն «suburb»-ը, ռուսերեն «посад(а)»-ն, «предградье»-ն, «предместье»-ն և «слобода» («слободы»)։ «Բերդ» բառը ևս երբեմն, բացի բուն «բերդ» իր իմաստից, կարող էր վերաբերել բերդին ու նրան կից արվարձաններից ոմանց միասին վերցված: Եզրաբանական նման իրավիճակում հնարավոր թյուրըմբռումներից ու շփոթություններից խուսափելու անհրաժեշտության մասին պատմաբանները ժամանակին մանրամասն խոսել ու նախազգուշացրել են, այդ թվում՝ հե՛նց Երևանի XVII-XVIII դարերի պատմության կապակցությամբ⁹¹: Ընդ որում, «քաղաք»-«բերդ»-«արվարձան» եզրույթները տվյալ համատեքստում ճիշտ վերծանելու համար աղբյուրները, որպես կանոն, բավարար չափով հնարավորություններ տալիս են: Պարզապես այդ եզրույթների յուրաքանչյուր կիրառումը հարկ է գննել ամենայն ուշադրությամբ և զուգահեռ պատմական տեղեկությունների համեմատությամբ: Ցավոք, Ա. Եղիազարյանն այս աղբյուրագիտական հարցերի վերաբերյալ առկա մեթոդաբանությունն ու եզրաբանությունը չի կիրառել, ինչը հանգեցրել է լուրջ սխալների ու շփոթությունների: Այսպես, Ա. Եղիազարյանը գրում է, թե «այն իրողությունը, որ վարոշը գտնվում էր [Երևանի] բերդի պարսպի հարևանությամբ, ևս հաստատում է, որ այն քաղաքի հետ առնչություն չուներ և չպետք է շփո-

⁹¹ Կարապետյան Մ. Մ. Երևանի բնակչության էթնիկական կազմի և թվաքանակի փոփոխությունները 1600-1724 թթ. ՊԲՀ, 1986, 2, էջ 95-100 (ներառյալ հատկապես ծնթ. 2-4). հմմտ. Այվազյան Ա., 2022, էջ 208-212, 277-278, 418:

թել քաղաքի հետ, ինչպես արել է Ա. Այվազյանը»⁹²: Ուշագրավ է, որ Ա. Եղիազարյանն այդտեղ մեջբերում չի տրամադրում, որպեսզի պարզ դառնա թե հատկապես ինչն է ինքն այդպես ընկալում: Պետք է երեք էջ հետ գնալ, որպեսզի փոքր-ինչ առարկայական պատկերացում կազմվի, թե ինչ նկատի ունի Ա. Եղիազարյանը: Ահա. «Ա. Այվազյանը կարծում է, որ Չելեբի-գաղեի տեղեկությունը վարոշը գրավելու մասին վերաբերում է ոչ թե ամբողջ քաղաքի, այլ նրա որոշ թաղամասերի գրավմանը»⁹³:

Նախ, Երևանի բերդից դուրս գտնվող բոլոր թաղամասերն էլ «արվարձան» («վարոշ») էին և բոլորն էլ Երևանի մաս էին: Այդ արվարձաններն օսմանյան աղբյուրներում նշվում են թե՛ «քաղաք», թե՛ «վարոշ» (արվարձան) եզրույթներով: Այսպես, 1647 թ. Արարատյան երկիր այցելած Էվլիյա Չելեբին կիսում է Երևանը երկու մասի՝ «քաղաքի», որտեղ նա հաշվում է 2060 հողածածկ տուն, և «Հին քաղաքի» (*Էսքի շեհիր*), որը նա կոչում է նաև «մեծ արվարձան» («մեծ վարոշ») ու զարմանքով շեշտում, թե սա ևս «մի իսկական քաղաք է»⁹⁴, փաստորեն, ծանուցելով, որ «Հին քաղաքն» իր բնակչության թվով չէր զիջում «քաղաքին»: Իսկ «քաղաքի» տակ, նրա նկարագրությունից դատելով, Էվլիյա Չելեբին հստակ հատկանշում էր ինչպես բերդը (քանզի նա «քաղաքում» է նշում Երևանի խանի դղյակը, որ գտնվում էր բերդում)⁹⁵, այնպես էլ նրան կից որոշ արվարձանները, ներառյալ, ըստ ամենայնի՝ Չորագյուղն ու Կոնդը⁹⁶:

⁹² Եղիազարյան Ա., 2022, էջ 66:

⁹³ Նույն տեղում, էջ 63:

⁹⁴ Ըստ Էվլիյա Չելեբիի, այդ «Հին քաղաքը»՝ *Էսքի շեհիրը*, գտնվել է Երևանի բերդի «Յայլայի դռնից դուրս» (*Эвлия Челеби. Книга путешествия (извлечения из сочинения турецкого путешественника XVII века)*. Вып. 3: Земли Закавказья и сопредельных областей Малой Азии и Ирана. Сост. и отв. ред. А. Д. Желтяков. Москва: «Наука», 1983, с. 155. հմմտ. Էվլիյա Չելեբի. *Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Հ. 4: Թուրքական աղբյուրներ*, Հ. Գ., Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1967, էջ 85):

⁹⁵ Նույն տեղում: Ֆրանսիացի հռչակավոր ճանապարհորդ Ժան Շարդենը (1643-1713) հատուկ նշում էր, որ Երևանի խանի՝ «կուսակալի դղյակը գտնվում է բերդում» (տե՛ս [Шарден Жан]. Путешествие Шардена по Закавказью

1724 թ. հունիսի 26-ին օսմանյան զորքի կողմից Երևանի «վարոշը» գրավելու մասին Չելեբի-գադեի հաղորդումն իրոք վերաբերում է բերդից դուրս գտնվող *որոշ* (ոչ բոլոր) արվարձանների կամ թաղամասերի գրավմանը: Այս առումով 1991 թ. հրապարակված հոդվածում արձանագրվել է.

«Աբրահամ Երևանցին նկարագրում է բացառապես Ձորագեղի և Կոնդի «ճակատում» ընթացող մարտերը, քանիցս նշելով, որ հենց այդ թաղամասերում (հատկապես Ձորագեղում) էր կենտրոնացել Երևանի մյուս՝ Հին Երևանի և Ջուհարենց թաղերի, ինչպես նաև շրջակա 8 գյուղերի հայ ազգաբնակչությունը»⁹⁷:

Այսինքն՝ Աբրահամ Երևանցու նկարագրած կռիվների ընթացքում գրավված էին Երևանի թաղամաս «Հին Երևանը» (Էվլիյա Չելեբիի «Հին քաղաքը»՝ *Էսքի շեհիրը*), ինչպես նաև «Ջուհարենց թաղը», որոնց բնակչությունը 1724 թ. բաղկացած էր, համապատասխանաբար, մոտ 20000 և 5000 հայերից⁹⁸: Հետևաբար, Ա. Եղիազարյանի քննադատությունը՝ «վարոշը» «քաղաքի» կամ նրա որոշ թաղամասերի հետ իբր շփոթելու վերաբերյալ, իր անտեղյակության և սխալների վկայություն է:

Կարևոր է հստակեցնել, որ և՛ Էվլիյա Չելեբու նշած «Հին քաղաքը» (*Էսքի շեհիր*, որը նա կոչում է նաև «մեծ վարոշ»), և՛ Աբրահամ Երևանցու «Հին Երևանը» ուշմիջնադարյան Երևանի «Շահար» (=քաղաք) հայտնի թաղամասի հոմանիշային անվանումներն են:

в 1672-1673 гг., Тифлис: Скоропечатня М. Мартиросянца, 1902, с. 242. **Հակոբյան Թ. Խ.**, 1971, էջ 334. հմմտ. [Chardin, John]. *The Travels of Sir John Chardin through Mingrelia and Georgia into Persia*. Dublin, 1815, p. 385):

⁹⁶ 1640-ական թվականներին Երևանում Չելեբիի նշած «2060 հողածածկ տներում», այսինքն՝ Ձորագյուղ, Կոնդ և Ջուհարենց թաղերում ապրել է 20-25 հազար մարդ: Մոտավորապես նույնքան էլ հայություն բնակվել է «Հին Երևանում»: Հետևաբար, Երևանի բնակչությունը 1640-ական թվականներին պետք է հաշվել 40-50 հազար մարդ, բացարձակ մեծամասնությամբ՝ հայեր (մանրամասն՝ **Այվազյան Ա.**, 2022, էջ 209-211):

⁹⁷ **Այվազյան Ա.**, 1991, էջ 96-97. հմմտ. **Աբրահամ Երևանցի**, էջ 26, 28-31:

⁹⁸ Մանրամասն տե՛ս **Այվազյան Ա.**, 2022:

Սա Երևանի ամենամեծ ու ամենահին թաղամասն էր, որը բնակեցված էր բացառապես կամ գրեթե բացառապես հայերով⁹⁹: Այն զբաղեցրել է Երևանի հյուսիս-արևելյան մասը՝ «այժմյան Մոսկվա կինոթատրոնի և նրան հարող տարածքը»՝ սկսվելով «Երևանի պետական համալսարանի շենքից մի փոքր ներքև, հասել մինչև Երևանի բերդի պարիսպները՝ ընդգրկելով Աբովյան, Նալբանդյան և Հանրապետություն փողոցների միջև ընկած տարածքները»¹⁰⁰: Այսպիսով, աղբյուրներում այս թաղամասին տրվել են հետևյալ անունները՝ «Հին քաղաք» (*Հսքի շեհիր*) = «Շահար» (այն է՝ «քաղաք») = «Հին Երևան» = «մեծ վարոշ» (այն է՝ «մեծ արվարձան»): Պարզ է նաև, որ Էվլիյա Չելեբին այդ թաղամասը «մեծ վարոշ» է կոչել, որովհետև մյուս արվարձանների (թաղամասերի) համեմատ այն ամենամարդաշատն էր:

Էվլիյա Չելեբիի և Չելեբի-գադեի վերոնշյալ տեղեկություններում Երևանի տարբեր մասերին վերաբերող եզրույթները ճիշտ չհասկանալով՝ Ա. Եղիազարյանը կատարել է մի շարք հակասական հետևություններ՝ դրանք ցրելով իր հոդվածի տարբեր էջերում: Այսպես, ըստ նրա՝ 1724 թ. օսմանյան բանակը Ձորագյուղ և Կոնդ թաղամասերը գրավելուց հետո է միայն հարձակվել ու գրավել Երևանի այն վարոշը, որն Էվլիյա Չելեբին անվանում էր «մեծ վարոշ» (=«մեծ արվարձան») կամ «Հին քաղաք» (*Հսքի շեհիր*)¹⁰¹: Ա. Եղիազարյանը չի նկատել, որ Էվլիյա Չելեբիի նշած «մեծ վարոշը» կամ «Հին քաղաքը» (*Հսքի շեհիր*) Աբրահամ Երևանցու «Հին Երևան» թաղամասն է, որի բնակչությունն ամբողջությամբ կենտրոնացել էր Ձորագյուղ և Կոնդ թաղամասերում ու տվել երևանյան հայկական աշխարհագրի տեսակարար առումով (մյուս թաղամասերի համեմատ) ամենամեծ զորաբաժինը՝ 4000 մարտիկ¹⁰²: Իսկ դա նշանակում է, որ «Հին Երևան» թաղամասը գրավվել էր ավելի վաղ, քան Ձորագյուղն ու

⁹⁹ Հակոբյան Թ. Խ., 1971, էջ 338: Շահարը գործածվում էր նաև Շհար ձևով (տե՛ս Աբովյան Խ. Վերք Հայաստանի, էջ 191):

¹⁰⁰ Շահազիզ Ե. Հին Երևանը, էջ 265 (ծնթ. 55):

¹⁰¹ Եղիազարյան Ա., 2022, էջ 66:

¹⁰² Աբրահամ Երևանցի, էջ 28:

Կոնդը, այլ ոչ հակառակը, ինչպես կարծում է Ա. Եղիազարյանը: Այլապես հին երևանցիները կմնային իրենց թաղամասում:

Ավելին, Ա. Եղիազարյանը չի նկատել նաև, որ այդ «մեծ վարոշն» իր եզրակացություններում «հրաշքով» դարձել է «Երևանի բերդի փոքրիկ արվարձան՝ վարոշ»¹⁰³:

Այսքանով Ա. Եղիազարյանի արտառոց մտահանգումները չեն ավարտվում: Նա գրում է, թե խնդրո առարկա «վարոշը»՝ «դատելով այն իրողությունից, որ Երևանի քաղաքային հատվածի ինքնապաշտպանության ժամանակ պարսիկների կողմից լքված հայությունը խմբվել էր Ձորագյուղի և Կոնդի հատվածում, բնակեցված էր մուսուլմաններով»¹⁰⁴: Այդպես չէ, իհարկե: Ինչպես վերը ցույց է տրվել, այդ վարոշն իրականում «Հին Երևան» կամ «Հին քաղաք» թաղամասն էր, որն ամբողջությամբ բնակեցված էր հայերով: Այս առումով պետք է հիշեցնել նաև, որ, ինչպես ընդգծում են XVII դարի երկրորդ կեսի – XVIII դարի սկզբի սկզբնաղբյուրները (Տավերնիեն, Յան Սթրեյսը, Իսրայել Օրին, Գասպար Շիլինգերը), Երևանի բոլոր արվարձանները (ներառյալ «Հին քաղաքը») բնակեցված էին գրեթե բացառապես հայերով¹⁰⁵: Օրինակ, Ժան Բատիստ Տավերնիեն (1605-1689)՝ ամփոփելով իր երեք այցելությունները Երևան 1632, 1655 և 1668 թվականներին և նկատի ունենալով քաղաքի սակավամարդ բերդից դուրս ընկած մեծագույն մասը, գրել է. «Երևանը բնակեցված է բացառապես հայերով» [*«Comme Erivan n'est habité que par des Arméniens»*]¹⁰⁶: 1670-ական թթ. սկզբներին Երևան այցելած հոլանդացի ճանապարհորդ Յան Սթրեյսը (1630-1694) իր հերթին արձանա-

¹⁰³ Եղիազարյան Ա., 2022, էջ 74:

¹⁰⁴ Նույն տեղում, էջ 66:

¹⁰⁵ Կարապետյան Մ. Մ., 1986, էջ 100-101, 104-106. հմմտ. Այվազյան Ա., 2022, էջ 197-220:

¹⁰⁶ Կարապետյան Մ. Մ., 1986, էջ 101 (հղված է Տավերնիեի գրքի մեզ անհասանելի 1679 թ. հրատ., էջ 623): Այն, որ Տավերնիեն խոսում է Երևանի բերդից դուրս գտնվող հատվածի մասին, պարզ երևում է նրա գրքի այլ հրատարակություններում տրված մեկ ուրիշ նկարագրությունից (տե՛ս **Tavernier, Jean-Baptiste**. *Les six voyages de Jean-Baptiste Tavernier...* (Paris, 1676), էջ 46. **Tavernier**. *The Six Voyages of John Baptista Tavernier*, I, p. 14):

գրում էր, որ «Երևանի բնակչության մեծամասնությունը կազմում են չունևոր հայերը»¹⁰⁷: 1699-1701 թթ. Երևանի (բերդից դուրս գտնվող) արվարձաններում ապրում էր, ըստ Իսրայել Օրու արժանահավատ հաղորդման, ընդամենը 200 մահմեդական «տուն» (ընտանիք)¹⁰⁸, այն է՝ շուրջ 1000 հոգի¹⁰⁹: Այսինքն, Աբրահամ Երևանցու նշած Երևանի թաղամասերը՝ «Հին Երևանը», Ձորագյուղը (Ձորագեղ), Ջուհարենց թաղը և Կոնդը բոլորն էլ հայաբնակ էին, իսկ Կոնդի բոշաների փոքրաթիվ՝ շուրջ 1000-հոգանոց¹¹⁰, համայնքն արդեն հայացած էր թե՛ լեզվական, թե՛ կրոնական առումներով:

Առհասարակ, ըստ 1640-ական թթ. գրող կարմեյան միաբան պատեր Ֆիլիպի՝ ինչպես Արևմտյան, այնպես էլ Արևելյան Հայաստանում «հայ քրիստոնյաներն ապրում են հիմնականում արվարձաններում, քանզի բերդերում բնակվում են տարբեր ուղղությունների մահմեդականները, որոնցից և բաղկացած են կայազորներն ու իշխանությունը»¹¹¹: Հետևաբար, անհիմն պետք է համարել նաև «մեծ վարոշի» (այն է՝ «Հին քաղաքի» կամ «Հին Երևանի»)՝ իբր մուսուլմաններով բնակեցված լինելու Ա. Եղիազարյանի «հայտնագործությունը»: 1700 թ. Երևան քաղաքում բնակվող մուսուլմանների թիվը կազմել է շուրջ 4000 հոգի (3 հազարը՝ բերդի տարածքում, հազարը՝ քաղաքի պարիսպներից դուրս բնակելի հատվածում՝ «արվարձաններում»): Իսկ Երևանն այդ ժամանակ ունեցել է մոտավորապես 45-50 հազար բնակիչ, բացարձակ մեծամասնությամբ՝ հայեր¹¹²:

Ա. Եղիազարյանի մտացրությունը բերել է նրան, որ նույն հոդվածում նա մի տեղ՝ «հայերի ինքնապաշտպանության անկումից հետո» Երևանի բերդում ամրացած կայազորի դիմադրության տևողու-

¹⁰⁷ **Стрейс Ян.** Три путешествия. Москва: ОГИЗ-Соцэкгиз, 1935, с. 224.

¹⁰⁸ *Армяно-русские отношения в первой трети XVIII века. Сборник документов, т. II, часть I, под ред. Аш. Иоаннисяна.* Ереван: Изд. АН Арм. ССР, 1964, док. 85, с. 213.

¹⁰⁹ **Այվազյան Ա.,** 2022, էջ 206-208:

¹¹⁰ Նույն տեղում, էջ 204:

¹¹¹ **Каратегян Гоар.** *Нахичеван в записках европейских путешественников (XIII-XVII вв.).* Ереван: изд-во «Гитутюн» НАН РА, 2019, с. 74-75.

¹¹² **Այվազյան Ա.,** 2022, էջ 208:

թյունը հաշվում է երկու ամիս, մեկ ուրիշ տեղ (հոդվածի ամփոփման մեջ)՝ երեք ամիս¹¹³.

«Հայերի ինքնապաշտպանության անկումից հետո՝ հունիսի երկրորդ կեսին, գրավվել է *բերդի վարոշը* կամ շրջակայքն այդ ուղղությամբ ձեռնարկած գրեթե առաջին իսկ գրոհով, *որից հետո բերդը պաշտպանվել է շուրջ երկու ամիս*»¹¹⁴.

«Քաղաքը թալանելուց և բնակչությանը կոտորելուց կամ գերեվարելուց հետո օսմանյան բանակը հարձակվել է *Երևանի բերդի փոքրիկ արվարձանի՝ վարոշի* վրա, գրավել ու ոչնչացրել այն, *որից հետո երեք ամիսների ընթացքում բերդը պաշարված է եղել*»¹¹⁵:

Ընդ որում, սխալ է թե՛ առաջին, թե՛ երկրորդ պնդումը: Իրականում, բերդից դուրս գտնվող հայկական վերջին թաղամասերը՝ Ձորագյուղն ու Կոնդը, գրավվել են 1724 թ. սեպտեմբերի 8-ին, որից հետո բերդում նստած կայագործը շարունակել է զինված դիմադրությունն ընդամենը ութ օր՝ մինչև սեպտեմբերի 16-ը, ապա մի քանի օր տևած բանակցություններից հետո՝ սեպտեմբերի 23-ին, բերդն ամբողջությամբ հանձնել է օսմանյան բանակին:

Այսպիսով, Ա. Եղիազարյանը, չկարողանալով ճիշտ վերծանել աղբյուրներում գործածվող «վարոշ», «արվարձան», «քաղաք», «բերդ» եզրույթները, խճճվել է մեթոդաբանական ու փաստական սխալներում, այդ թվում՝

ա) իր հոդվածում չի բացատրել տվյալ դարաշրջանի սկզբնաղբյուրներում «քաղաք» եզրույթի բազմանշանակությունը, մասնավորաբար՝ սխալմամբ միանշանակ տարանջատել է «քաղաք» և «վարոշ» եզրույթները, այնինչ դրանց իմաստներն աղբյուրներում հաճախ համընկնում են,

¹¹³ Նմանատիպ մի անփութություն էլ Ա. Եղիազարյանը թույլ էր տվել, ինչպես արդեն նշվել է (տե՛ս վերը, ծնթ. 43), Երևանի պաշարման սկիզբը ճշտելու նպատակով արած իր սխալ հաշվարկներում՝ մի տեղ այն թվագրելով 1724 թ. ապրիլի 9-ին, մեկ ուրիշ տեղ՝ ապրիլի 7-ին:

¹¹⁴ Եղիազարյան Ա., 2022, էջ 69:

¹¹⁵ Նույն տեղում, էջ 74:

բ) նշված եզրույթները խառնիխուռն օգտագործելուն զուգահեռ տեղ է թողել, որպեսզի ընթերցողը «քաղաքը» որոշ դեպքերում ընկալի մերօրյա նշանակությամբ¹¹⁶,

գ) Երևանի ամենամեծ թաղամասը՝ «մեծ վարոշը», այսինքն՝ «մեծ արվարձանը» (=«Հին Երևան»=«Հին քաղաք» (*Հսքի Շեհիր*)=«Շահար») ներկայացրել է որպես «Երևանի բերդի փոքրիկ արվարձան»,

դ) խախտել ու գլխիվայր է շրջել դեպքերի հաջորդականությունը՝ օսմանյան բանակի կողմից «վարոշի» (այն է՝ «մեծ վարոշի») գրավումը դնելով Ձորագյուղի և Կոնդի անկումից հետո, այնինչ ճիշտը հակառակ հերթականությունն է:

Կարդալով Ա. Եղիազարյանի հոդվածը՝ ընթերցողը հայտնվելու է եզրաբանական, աղբյուրագիտական և պատմափաստական սխալների անանցանելի մի լաբիրինթոսում, որից ճիշտ էլք գտնել կարելի է միայն նեղ մասնագիտական օգնությամբ՝ ի դեմս տվյալ քննական գրախոսության:

Եզրակացություն

XVIII դարի 20-ական թվականների պատմահետազոտական դաշտ առաջին անգամ ոտք դնելու Ա. Եղիազարյանի ինքնավստահ փորձը չի ուղեկցվել աղբյուրագիտական, պատմագիտական և մեթոդաբանական պատշաճ պատրաստվածությամբ, այդ իսկ պատճառով լիովին ձախողվել է: Գրախոսվող հոդվածում Երևանի 1724 թ. հերոսամարտի պատմության վերաբերյալ առաջարկված բոլոր փոփոխություններն ու «նորամուծություններն» անհիմն են և սխալ: Մասնավորապես, լիովին աղավաղված է խնդրո առարկա պատմական իրադարձությունների ժամանակագրությունը: Հիասթափեցուցիչ է հատկապես այն, որ խիստ պատասխանատու գործ ստանձնելով՝ Ա. Եղիազարյանը պահանջված ծավալով ու մակարդակով չի ուսումնասիրել քննվող խնդրին վերաբերող սկզբնաղբյուրներն ու պատմագիտական գրականությունը՝ չյուրացնելով անգամ այն նյու-

¹¹⁶ Նույն տեղում, էջ 65-67, 74:

թերը, որոնք օգտագործել է: Նրա կիրառած մեթոդաբանությունը ապապատմագիտական է, «հիմնավորումները»՝ կամայական, եզրակացությունները՝ բռնազբոսիկ և անտրամաբանական: Վերը կատարված քննությունը վերահաստատում է 1724 թ. Երևանի պաշտպանության և հարակից իրադարձությունների ժամանակագրությունն ու ընթացքն այնպես, ինչպես դրանք որոշվել են դեռևս 1991 թ. հրապարակված վերլուծական հոդվածում¹¹⁷, լրացվելով ու հավաստվելով 2006 և 2022 թթ. հրապարակված հաջորդական ուսումնասիրություններում¹¹⁸: Այդ ժամանակագրությունը ներկայացված է ստորև:

1724 թ. ապրիլի կեսերին օսմանյան բանակը ներխուժում է Արարատյան երկիր:

Ապրիլի 20-ից մինչև 24-ը ընկած օրերից մեկին տեղի է ունենում Եղվարդի ճակատամարտը՝ Երևանի Ալի-կուլի խանի 12000-անոց անկազմակերպ զորքի և օսմանյան 1800-հոգանոց առաջապահ զորագնդի միջև, որն ավարտվում է օսմանցիների հաղթանակով:

Ալի-կուլի խանը նահանջում է և ամրանում Երևանի բերդում:

Ապրիլի 25-ից հունիսի 4-ին տեղի է ունենում Կարբի գյուղաքաղաքի 40-օրյա ինքնապաշտպանությունը:

Հունիսի 14-ին՝ 10-օրյա բանակցություններից հետո Կարբին հանձնվում է օսմանցիներին:

Հունիսի 24-ին օսմանյան բանակն սկսում է Երևանի պաշարումը:

Հունիսի 26-ին օսմանցիները գրավում են Երևանի բերդին կից գտնվող որոշ թաղամասեր, ներառյալ Հին Երևան թաղամասը: Քաղաքի և շրջակա ութ գյուղերի հայության մեծ մասը, կենտրոնանալով Ձորագյուղ (Ձորագեղ) և Կոնդ թաղամասերում, մոտ 11500 զինյալ մարտիկներ տրամադրելով, կազմակերպում է ուժեղ ինքնապաշտպանություն: Երևանի բերդը և «քաղաքը» ենթարկվում են ընդհանուր միասնական պաշարման: Բերդում ամրացած Երևանի

¹¹⁷ Այվազյան Ա., 1991:

¹¹⁸ Այվազյան Ա., 2006. Այվազյան Ա., 2022, էջ 198-228:

խանի հրամանով «քաղաքի» (այն է՝ այդ պահին չգրավված մնացած Ձորագյուղ և Կոնդ թաղամասերի) պաշտպանությանը մասնակցում են նաև Երևանի մուսուլմանական ուժերը (անհայտ է մնում՝ դրանք կայազորի ստորաբաժանումն են՞, թե՞ քաղաքի մահմեդականներից կազմված աշխարհագորայինները):

Ապրիլ-հունիսին կտրուկ սրվում են նախիջևանահայության և պարսկական իշխանությունների փոխհարաբերությունները:

Հուլիսի երկրորդ կեսին նախիջևանահայության պարագլուխները որոշում են ապստամբել պարսկական իշխանությունների դեմ և անցնել օսմանցիների կողմը:

Հուլիսի 30-ին օսմանյան զորաբանակը գրավում է Նախիջևանը:

Հուլիսի երկրորդ կես-օգոստոսի 27-ին պարսկական ստվարաթիվ զորաբանակով՝ պաշարված Երևանին օգնության շտապող սիփահալար Մանսուր-խանը հանգրվանում է Օրդուբադում և, կայուն թիկունք ապահովելու նպատակով, միջոցներ ձեռնարկում տեղական մուսուլմանական ուժերին՝ Դավիթ-բեկի (Սյունյաց) իշխանապետության մեջ գտնվող մեղրեցիների հետ հաշտեցնելու ուղղությամբ:

Օգոստոսի 14-ին օսմանյան զորքերը ձեռնարկում են ընդհանուր գրոհ Երևանի վրա: Ըստ ամենայնի, այդ գրոհը բերդի վրա չէր տարածվում և ուղղված էր միայն պաշտպանության մեջ համեմատաբար թույլ օղակ համարվող «քաղաքի» դեմ: «Քաղաքում» գտնվող մահմեդականները, լքելով պաշտպանական դիրքերը, փախչում են և ապաստանում Երևանի բերդում: Այդ օրվանից ի վեր հայերը միայնակ են իրականացնում «քաղաքի», այն է՝ Ձորագյուղ-Կոնդի պաշտպանությունը:

Օգոստոսի 18-ին չորս օր առաջ Ձորագյուղի համար սկսված կատաղի մարտերը ավարտվում են Երևանի հայ պաշտպանների հաղթանակով և օսմանցիների ծանր պարտությամբ: Մասնավորապես, միայն այդ օրը սպանվում է 6000 օսմանցի զինվոր: Հայկական աշխարհագորից զոհվում է 1300 հոգի:

Օգոստոսի 19-24-ի միջև օսմանցիները նոր կատաղի գրոհ են ձեռնարկում Կոնդի վրա: Հայերը հաջողությամբ հետ են մղում նաև այդ հարձակումը:

Օգոստոսի 27-ին Նախիջևանի հայկական զորաջոկատների օժանդակությամբ օսմանցիները ջախջախում են Երևանի խանի եղբայր Մանսուր-խանի պարսկական զորաբանակը և գրավում են Օրդուբադը:

Սեպտեմբերի 7-ին Սարը-Մուստաֆա փաշայի՝ Թիֆլիսից դուրս եկած բանակը միանում է Երևանը պաշարած օսմանյան զորախմբին:

Սեպտեմբերի 8-ին օսմանցիները գրավում են Երևանի «քաղաքի» վերջին զանգվածը՝ Ձորագյուղը: Շուրջ 30000 հայ կոտորվում է, հազարներ քշվում են գերության:

Սեպտեմբերի 16-ին Երևանի բերդում պատսպարված պարսկական կայազորը, Աստվածատուր Ա Համադանցի կաթողիկոսի միջնորդությամբ, սկսում է օսմանցիների հետ բանակցություններ վարել՝ հանձնվելու պայմանների մասին:

Սեպտեմբերի 23-ին Երևանի բերդը հանձնվում է օսմանցիներին:

Against historical distortion of the epic defense of Yerevan in 1724

ARMEN M. AYVAZYAN

“Matenadaran” Mesrop Mashtots Scientific Research Institute of Ancient Manuscripts

The critical review analyzes the article by A. Yeghiazaryan, titled “The Self-Defense of Yerevan in 1724”. It is concluded that A. Yeghiazaryan's attempt to enter, for the first time, the field of historical research of the 1720s has utterly failed, because it is not accompanied by a proper source study and historiographical preparation, as well as lacks an adequate methodological preparation. All the changes and “innovations” proposed in the reviewed article on the history of the defense of Yerevan are baseless and incorrect. It is particularly disappointing that, having taken on a very responsible task, Yeghiazaryan has failed to master the relevant historiographic sources and literature sufficiently, including the materials that he has used and cited. The methodology utilized in his article is unhistorical, the “validations” he puts forward are arbitrary, the conclusions are erroneous and illogical. This review reconfirms the chronology of the defense of Yerevan and related events in 1724 in accordance with and as established in our previous studies. The Ottoman army began the siege of Yerevan on June 24, 1724. On June 26, the Turks captured some of the suburbs of Yerevan adjacent to the fortress. The majority of the Armenian population of the city and the eight surrounding villages concentrated in Dzoragyugh and Kond, the then suburbs of Yerevan, which had an advantageous defensive position. The siege of the “city” and the fortress was conducted simultaneously. On the orders of the Yerevan Khan, a few Muslims of Yerevan also participated in the defense of the “city”, but on August 14 — the day the Turkish troops launched another assault — they left their positions and took refuge in the fortress. From that day on, the defense of Dzoragyugh and Kond was carried out by the Armenians only, who successfully repelled both this five-day attack (August 18) and the subsequent furious attack of the Janissaries on Kond (between August 19 and 24). On September 8, 1724, with the approach of large new reinforcements, the city was completely captured by the Turks. The fighting with the Persian garrison in the fortress continued until September 16. The negotiations that began on that day ended with the surrender of the fortress on September 23, 1724.